ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

ԱՄԱԼՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ¹, ՏԱԹԵՎԻԿ ՄԿՐՏՉՅԱՆ¹

¹Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Զբոսաշրջային ծառայությունները Հայաստանում ի հայտ են եկել վաղուց, երբ ճանապարհորդներն այցելել են Հայաստան, կատարել տարբեր ուսումնասիրություններ, ծանոթացել հայ ժողովրդի կյանքին և կենցաղին, մշակույթին: Զբոսաշրջությունը նոր ձևաչափով զարգացել է նաև Խորհրդային Հայաստանում, որտեղ ձևավորվել են զբոսաշրջության տարբեր տեսակներ:

Բանալի բառեր. միջնադարյան Հայաստան, Խորհրդային Հայաստան, զբոսաշրջություն, զբոսաշրջային ծառայություններ, տեղաբաշխման միջոցներ, հյուրատներ, քարավանատներ, պանդոկներ:

Զբոսաշրջության սաղմերը Հայաստանում ի հայտ են եկել հնագույն ժամանակներից, երբ օտարերկրացի գիտնականները, ճանապարհորդներն այցելել են Հայաստան, կատարել տարբեր ուսումնասիրություններ, իսկ արտասահմանյան առևտրական քարավանները հանգրվանել են մեր մայրաքաղաքներում ու առևտրական ճանապարհների վրա գտնվող իջևանատներում:

Մ. թ. IV դարում ստեղծված Պևտինգիյան քարտեզը (Tabula Peutingeriana), որի կազմումը վերագրվում է հռոմեական աշխարհագրագետ Կաստարիոսին, Հայաստանին վերաբերող մասում ցույց է տալիս հայ Արշակունիների ժամանակներից գոյություն ունեցող ճանապարհները և դրանց վրա եղած հանգրվանակետերը [9, էջ 11]: Հ. Մանանդյանի հավաստմամբ Պևտինգիյան քարտեզում Արշակունյաց Հայաստանի հին ճանապարհներին նշված են եղել կայարանատեղեր [12, էջ 11], որոնք հավանաբար եղել են հանգրվաններ, կամ էլ ճանապարհների սպասարկման համար կառույցներ:

Միջնադարում, երբ զարգանում են քաղաքները, աշխուժանում էր քարավանային առևտուրը, երկրով անցնող ճանապարհների ուղղությամբ սկսվում է իջևանատների մասսայական շինարարություն: XII - XIV դարերում քաղաքներում կառուցվում էին **հյուրանոցներ կամ հյուրատներ, պանդոկներ կամ փնդոկներ, խանապարներ** (վերջին երկուսը վերաբերում են քաղաքային հյուրատներին) [9, էջ 11], որոնք միջնադարյան Հա-

յաստանի աշխարհիկ կառույցներ էին: **Քարավանատները** (միջնադարյան հյուրանոցներ) կառուցվում էին խոշոր քաղաքներին մերձ, ինչպես՝ Ջրափի քարավանատունն Անի քաղաքին մոտ՝ Ախուրյան գետի ձախ ափին, կամ էլ քաղաքից դուրս, օրինակ՝ Թալինի քարավանատունը, որպեսզի մեծ քարավանները քաղաք չմտնեին: **Հյուրատների** անհրաժեշտությունն զգացվում էր նաև վանքերում, որոնք սպասարկում էին ինչպես ուխտավորներին, այնպես էլ վանքերի մոտով անցնող քարավաններին: Հաղպատի, Սանահինի, Տաթևի, Նորավանքի վանքերին կից եղել են հյուրատներ [1, էջ 50]: Վանքերի հյուրատները հյուրանոցային բնույթ ունեին, նրանք պետք է հյուրընկալեին եկած կրոնավորներին, հյուրերին, ապահովեին օթևանով և սննդով:

Քարավանատների կառուցումն համարվում էր պետական միջոցառում և իրականացվում պետական գանձարանի կամ, առանձին իշխանների, իսկ քաղաքներում նաև մեծահարուստների միջոցներով: Ճանապարհների բարեկարգությունը կատարվում էր այդ ճանապարհների վրա կամուրջներ, իջևաններ կառուցելով, հոգ էր տարվում ճանապարհների վերանորոգման ուղղությամբ: Ճանապարհների վրա քարավանատները դասավորվում էին որոշ հեռավորությամբ, երբեմն էլ կառուցվում էին դժվար անցանելի լեռնանցքի վրա, ինչպես Սելիմի քարավանատունը*։ Սելիմ հյուրատունը Հայաստանի միջնադարյան այն եզակի քարավանատներից է, որ մեզ է հասել կանգուն վիճակով [8, էջ 130, 3]:

Քարավանատներն արձանագրություններում կոչվել են նաև հոգետուն «Հոգո տուն» [9, էջ 12], որը բաղկացած է «հոգի-շունչ» և «տուն» բառերից, և նշանակում է կանգնելու, «շունչ քաշելու» տեղ կամ հանգրվան:

Պանդոկները կամ փնդոկները նման էին խոշոր հյուրանոց-իջևանների, իսկ խանապարները՝ իջևան-վաճառատների, փակ շուկաների: Փնդոկները նախատեսված էին մարդկանց իջևանելու, նրանց սննդի և այլ կարգի սպասարկության համար, իսկ խանապարները վաճառատներ էին՝ ներքին բակով և առևտրական գործարքներ կատարելու համար կառուցված հարմարություններով:

Հյուրանոցները հիմնականում կառուցվում էին այն վանքերի բակերում կամ մերձակա տարածքում, որոնք ապահովված էին ջրով, ունեին ջրամբար-ավազաններ, քանի որ հյուրանոցներում հյուրընկալվում էին բազմաթիվ ուխտավորներ, առևտրականներ, որոնց վանքը պետք է

* Սելիմի քարավանատունը կառուցվել է 1332 թ. Չեսար Օրբելյանի իշխանության օրոք: Գտնվում է Սելիմի լեռնանցքի հարավային լանջին: Քարավանատան երկարությունը 35,5 մ է: Սելիմի հյուրատան համալիրը բաղկացած է երեք մասից՝ տանավ մեծ դահլիճից, արևելյան կողմից կցված նախասրահից ու սրահ կողքին գտնվող կիսով չափ պահպանված թաղածածկ մատուռից

ապահովեր գիշերելու, սնվելու և շատ ուրիշ միջոցներով: Նման դեպքերում ուխտավորները փոխհատուցում էին վանքերին:

Միջնադարյան Հայաստանում կատարվել են մի շարք ճանապարհորդություններ, որոնց հիմնական նպատակն էր ծանոթանալ հայկական բնության գաղտնիքներին, կենցաղին, մշակույթին և այն:

Հնագույն ժամանակներից Արարատ լեռը հետաքրքրել է մարդկանց, նրա գագաթին գտնվող Նոյյան տապանը շարժել հատկապես քրիստոնյա աշխարհի հետաքրքրությունը [10, էջ 18]: Հին և միջին դարերում սրբազան լեռ բարձրանալու նպատակով գործադրված բոլոր փորձերը ձախողվել են բնակլիմայական խիստ ցրտաշունչ պայմանների և անմատչելի տեղանքի պատճառով, քանի որ լեռը «...մեջտեղից մինչև կատարը կատարելապես զառիվայր է և ծածկված սառույցով» [10, էջ 28]:

Հայաստանը հետաքրքիր էր նաև ռուս և եվրոպացի ճանապարհորդների համար, ովքեր գալիս էին գիտական զանազան ուսումնասիրություններ անելու: 1828 թ. փետրվարի 10-ի Թուրքմենչայի պայմանագրով Երևանի խանության՝ Ռուսաստանին անցնելուց հետո ռուս գիտնականներն անմիջապես ձեռնամուխ եղան ինչպես ողջ Արևելյան Հայաստանի, այնպես էլ Արարատի գիտական հետազոտությանը: Ֆ. Պարրոտի արշավախումբը, 1829 թ. սեպտեմբերին ժամանելով Հայաստան, ապա Ս. Էջմիածնում հանդիպելով Մայր Աթոռի թարգմանիչ Խ. Աբովյանին և հաշվի առնելով վերջինիս «հայերենի, ռուսերենի, պարսկերենի ու թուրքերենի իմացությունը և Արարատ բարձրանալու բուռն ցանկությունը» [6, էջ 18]՝ նրան ևս ընդգրկել է իր խմբի կազմում: Մեկ տասնյակից ավելի անդամներ ունեցող արշավախումբում էին կայսերական ուսանողներ, զինվորականներ, ինչպես նաև Ակոռի գյուղից մի քանի տեղաբնիկ ուղեկցորդներ: Ֆ. Պարրոտի արշավախումբը, սեպտեմբերի 12-ին և 18-ին երկու անհաջող վերելքներ իրականացնելուց հետո, սեպտեմբերի 27-ին կարողացել է հասնել Արարատի կատարին: Իր տեսածը նա հետևյալ կերպ է նկարագրել. «Գտնվում էի թեթևակի ուռուցիկ, համարյա թե խաչածե մակերեսի վրա՝ երկու հարյուր քայլ պարագծով, որի եզրերը գահավեժ իջնում էին ամեն կողմ, առանձնապես արևելք և հյուսիս-արևելք: Հավերժական կարծր սառույցից, առանց որևէ ընդհատող ժայռի կամ քարի, այդպիսին էր ծեր Արարատի արծաթե գագաթը» [7, էջ 187]: Ֆ. Պարրոտի և Խ. Աբովյանի վերելքով բացվեց Արարատի պատմության նոր դարաշրջանը: Հ. Երանոսյանի կարծիքով նաև Հայաստանում ալպինիզմի և տուրիզմի զարգացման նոր սկիզբն է [4, էջ 10]:

Նշենք նաև, որ XIX դարի վերջերից Երևանում կառուցվել են եվրոպական տիպի մի քանի փոքր հյուրանոցներ՝ «Գրանդ օթել», «Օրիանտ»,

«Լիոն», «Երկաթուղի», «Մարսել», «Կովկաս», «Վիեննա» և այլն, ճանապարհորդների գիշերակացն ապահովելու համար [2, էջ 389]:

Զբոսաշրջության ծնունդը Խորհրդային Միությունում համարվում է 1930թ.: Դեռևս 1926թ. հիմնադրվել էր «Խորհրդային զբոսաշրջիկ» բաժնետիրական ընկերությունը, որն ուղեգրերով էքսկուրսիաներ էր կազմակերպում: 1930թ. ստեղծվում է «Համամիութենական պրոլետարական զբոսաշրջության և էքսկուրսիայի կամավոր ընկերություն»: Զբոսաշրջության կառավարման և զարգացման վերահսկողությունը դրվում է Ֆիզկուլտուրայի բարձրագույն խորհրդի, իսկ գործնական աշխատանքները՝ Համամիութենական արհեստակցական միության կենտրոնական խորհրդի վրա:

Հայաստանում զբոսաշրջությունը պետական մակարդակով սկսել է զարգանալ խորհրդային իշխանության տարիներին: Այդ ժամանակաշրջանում հանրապետությունում գործում էին 110 առողջարանային և հանգստի տներ, գործում էին զբոսաշրջային 30 հանգրվան՝ 6000 տեղով: Դեռևս 1933 թ. արտասահմանից Խորհրդային Հայաստան են այցելել 19, 1934 թ.՝ 67, իսկ 1935 թ. 255 մարդ [11, էջ 244-245]:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1949-ին, զբոսաշրջությունը, որպես մարզաձև, մտցվում է համամիութենական մարզական միասնական դասակարգման մեջ: 60-ական թվականներից զբոսաշրջային աշխատանքները ղեկավարում էր Զբոսաշրջության կենտրոնական խորհուրդը: Յուրաքանչյուր հանրապետություն, մարզ, երկրամաս ուներ իր զբոսաշրջային խորհուրդը, որը կազմված էր զբոսաշրջային, մարզական, տնտեսական, գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Զբոսաշրջային խորհուրդներն իրականացնում էին զբոսաշրջային կադրերի պատրաստում, զբոսաշրջության հրահանգիչների որակավորման բարձրացման ուղղությամբ դասընթացների, սեմինարների, արշավների կազմակերպում:

ԽՍՀՄ տարիներին զբոսաշրջային աշխատանքների կազմակերպումը դարձրեց սերունդների դաստիարակության կարևոր միջոցներից մեկն էր, որն ուներ նաև ճանաչողական նշանակություն [13, էջ 22]: Յուրաքանչյուր դարձրեց կար զբոսաշրջային խմբակ կամ ակումբ, որոնց անդամները հանձնում էին «Պատանի զբոսաշրջիկ», «ԽՍՀՄ զբոսաշրջիկ» կրծքանշանի նորմաները, այն է կարողանալ հաղթահարել ճանապարհին բնական խոչընդոտները, տեղ գտնել հանգստի համար, վրան խփել, խարույկ վառել տարվա բոլոր եղանակներին, կերակուր եփել, կարողանալ առաջին բուժօգնություն ցուցաբերել և այլն:

1930 թվականներից Հայաստանում գործում էր ՊԱՊ (Պատրաստ աշխատանքի և պաշտպանության) համալիրը, որտեղ իր արտացոլումն է գտել նաև զբոսաշրջությունը: Զբոսաշրջային արշավներ կազմակերպելիս

պետք է կատարվեն որոշակի տեսական և գործնական առաջադրանքներ, որոնք արշավները դարձնում էին ավելի հետաքրքիր և բովանդակալից [14, էջ 70]: ՊԱՊ համալիրի զբոսաշրջային արշավների չափանիշները հաստատում էր Զբոսաշրջության և էքսկուրսիաների կենտրոնական խորհուրդը:

Խորհրդային Հայաստանում զբոսաշրջության ինքնագործ և պլանավորված ուղևորություններին մեծ տեղ է հատկացվել: Զբոսաշրջային ուղևորությունների հիմնական նպատակն է՝ պարբերաբար կազմակերպել աշխատավորության լայն զանգվածների ակտիվ հանգիստը: Բուհերում զբոսաշրջային արշավանքները կազմակերպելու, ղեկավարելու և կոորդինացնելու նպատակով ստեղծվել էին զբոսաշրջային ակումբներ, որոնք իրենց գործունեությամբ օգնում, հսկում և կազմակերպում էին նպատակային էքսկուրսիաներ, մեկօրյա և բազմօրյա արշավներ, զբոսաշրջության հետ առնչվող այլ աշխատանքներ [15, էջ 44]: Կազմակերպությունն առաջնորդվում էր 1972թ. նոյեմբերի 28-ի Զբոսաշրջության և էքսկուրսիաների կենտրոնական խորհրդի նախագահության որոշմամբ՝ «ԽՍՀՄ տարածքում ինքնագործ զբոսաշրջային արշավների ու ճանապարհորդությունների կազմակերպման ու անցկացման կարգի մասին», ինչպես նաև Զբոսաշրջային հսկիչ-փրկարար ծառայության կանոններով: ԽՍՀՄ տարածքում ինքնագործ զբոսաշրջային արշավների ու ճանապարհորդությունների կազմակերպման ու անցկացման կանոնները որոշում են ԽՍՀՄ տարածքում ինքնուրույն արշավների և ճանապարհորդությունների կազմակերպման և անցկացման կարգը: Նրանց կատարումը պարտադիր է արշավներին և ճանապարհորդություններին մասնակցող բոլոր կազմակերպությունների և զբոսաշրջիկների համար:

Զբոսաշրջային հսկիչ-փրկարար ծառայությունն ստեղծվում է Զբոսաշրջության և էքսկուրսիաների հանրապետական, երկրամասային, մարզային խորհուրդներին առընթեր՝ տարբեր միջոցառումներ անցկացնելու նպատակով, ուղղված զբոսաշրջային ճանապարհորդություններին, արշավներին, մրցումներին, էքսկուրսիաներին, ուսումնական հավաքներին մասնակցող զբոսաշրջիկների և էքսկուրսիաների անվտանգության ապահովմանը, ինչպես նաև անհրաժեշտ օգնություն ցույց տալու աղետի ենթարկված մարդկանց: Զբոսաշրջության և էքսկուրսիաների հանրապետական, երկրամասային և մարզային խորհուրդները յուրաքանչյուր կիսամյակ ներկայացնելու են առաջակություններ զբոսաշրջային միջոցառումների անցկացման մասին [7, էջ 35]:

1969 թ. ընդունվում է «Երկրում Զբոսաշրջության և էքսկուրսիաների հետագա զարգացման միջոցառումների մասին» որոշումը, որը կարևոր

նշանակություն ունենալու միայն զբոսաշրջության զարգացման և էքսկուրսիաների կազմակերպման, այլև միջազգային զբոսաշրջային կապերի հաստատման համար: Այն կարելի է համարել որպես զբոսաշրջության պլանավորման կարևոր փաստաթուղթ: Խորհրդային միությունը միջազգային զբոսաշրջության զարգացման գործում համագործակցում էր ԱՄՆ-ի, Իտալիայի, Անգլիայի, Ֆրանսիայի, ԳՖՀ-ի և այլ երկրների հետ:

ԽՍՀՄ-ի կազմում ձևավորվել և զարգանում էր հայկական զբոսաշրջությունը: 1920-ական թթ. վերջերից վերացվեցին քարվանսարա-հյուրանոցները և դրանց փոխարեն կառուցվեցին ժամանակակից հյուրանոցներ («Երևան», «Սևան», «Արմենիա», «Անի», «Դվին» և այլն): Ներքին զբոսաշրջության ծնունդը Հայաստանում համարվում է 1923թ., երբ Ալեքսանդրապոլի 30 դպրոցական անցնում են Ալեքսանդրապոլ-Արագած-Աշտարակ-Էջմիածին-Երևան երթուղով Ա. Բզնունու և Հ. Գարգալոյանի ղեկավարությամբ:

Զբոսաշրջային ճանապարհորդություններն աստիճանաբար կրում են կազմակերպված բնույթ և ընդգրկում են մեծ թվով մարդիկ: Նշենք, որ Հայաստանում ձևավորվել և հաջողությամբ զարգանում էր դահուկային արշավները: Այսպես, 1936-1937թթ. Ապարանի բնակիչները մի շարք դահուկային արշավներ են կատարել և բարձրացել Արագած լեռը (4095 մ): Նմանատիպ արշավներ են կազմակերպվել նաև Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1948, 1951, 1963 թթ.: 1948 թ. զբոսաշրջությունը մտնում է Համամիութենական մարզական միասնական դասակարգման մեջ: 1960 թ. ՀԱՄԿԽ-ի նախագահության որոշմամբ Հայաստանում ստեղծվում է Զբոսաշրջության հանրապետական խորհուրդը, որը համակարգելու էր զբոսաշրջային աշխատանքները: Մասսայական բնույթի տեղական զբոսաշրջային երթուղիներով արշավներն սկսվում են 1963 թ.: Իրականացվում է դահուկային արշավ Երևան-Հանքավան-Ապարան երթուղով, որն անցնում է Գեղամա լեռնաշղթայով: Սկսած 1965 թ. Հայաստանում սկսում է զարգանալ զբոսաշրջության նոր ձև՝ մոտոտուրիզմը: Զ. Մարիկյանի գլխավորությամբ առաջին երթուղին անցնում է Միության բոլոր հանրապետություններով:

Միջազգային զբոսաշրջությունը ԽՍՀՄ-ում համակարգում և կազմակերպում էր ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Արտասահմանյան զբոսաշրջության վարչությունը: Մասսայական զբոսաշրջության զարգացման համար հանրապետությունում կարևոր աշխատանք է կատարել Զբոսաշրջության և էքսկուրսիաների հայկական հանրապետական խորհուրդը: Խորհրդային տարիներին զբոսաշրջությունը դիտվում էր ոչ թե շահույթի աղբյուր, այլ աշխատավորների համար նախատեսված ակտիվ հանգիստը

կազմակերպելու ձև: Այս ժամանակաշրջանում արդեն ձևավորվել էին սոցիալական զբոսաշրջության տարրերը: Միջազգային զբոսաշրջությունը կազմակերպում և իրականացվում էր «Սպուտնիկ» և «Ինտուրիստ» կազմակերպությունների միջոցով: 1986թ. այս կազմակերպությունների միջոցով Հայաստան է այցելել 80 հազար զբոսաշրջիկ, որոնց սպասարկման ոլորտում ընդգրկված էին 12 հյուրանոցներ:

ԽՍՀՄ փլուզումից հետո 1990-ական թվականներից հանրապետություն այցելող զբոսաշրջիկների թիվը կրճատվել է, և 1996թ. այն կազմել է ընդամենը 13 հազար, 1999թ.՝ 40 հազար զբոսաշրջիկ: Խորհրդային Միության փլուզումը, երկրում պատերազմական վիճակը, շրջափակումը, էներգետիկ շրջափակումը 1991-1995թթ. առաջ բերեցին ոչ միայն զբոսաշրջության, այլև տնտեսության մյուս ոլորտներում սուր ճգնաժամ: Զբոսաշրջությունը, որպես երևույթ, անկում ապրեց: Դադարեցվեց զբոսաշրջության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումն ու ամփոփումը: Միայն 1997-ի հոկտեմբերի 19-ին Ստամբուլում կայացած ՄԱԿ ՀԶԿ-ի XII գլխավոր վեհաժողովում Հայաստանը դարձավ Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության լիիրավ անդամ: ՀԶԿ անդամակցելուց հետո Հայաստանն սկսեց օգտագործել համապատասխան ստանդարտներ, որոնց կիրառումը թույլ տվեց համաշխարհային զբոսաշրջության հարթակում ներկայանալու հնարավորություններ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. **Առաքելյան Բ.**, Քաղաքները և արհեստները 9-13 դարերում, հ 2, Եր., 1964:
2. **Ավագյան Գ.**, Հայաստանը 1920-1990թթ., Եր., 1997:
3. **Բաբաջանյան Ա., Զաքյան Ա.**, Սելիմի քարավանատան պեղումների արդյունքները: ՎԷՄ համահայկական հանդես, 2014, հոդոտեմբեր-դեկտեմբեր, <http://vemjournal.org/?p=2016>
4. **Երանոսյան Հ.**, Տուրիզմ, Եր., 1976:
5. **Պարրոպ Ֆրիդրիխ**, Դորպատից Արարատ,; Խմբ. Կնյազյան Գ.Ռ., Եր., Հայաստան, 1990:
6. **Պարրոպ Ֆրիդրիխ**, Ճանապարհորդություն դեպի Արարատ, Խմբ. Թորոսյան, Ս., Եր., Նաիրի, 2006:

7. Կանոնադրություն տուրիզմի մասին, Եր., 1974:

8. **Հարությունյան Ա.**, Դիտարկումներ միջնադարյան Հայաստանի հյուրանոց-հյուրատների և դրանց վիճակների շուրջ. Էջմիածին. Պաշտոնական ամսագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, 2010:

9. **Հարությունյան Վ.**, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Եր., 1960:

10. **Մելքոնյան Ա.**, Արարատ. Հայոց անմահության խորհուրդը, Եր., 2008 թ.:

11. **Մելքոնյան Ս.**, ՀՀ և ԼՂՀ տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Եր., Զանգակ-97, 2005:

12. **Մանանդյան Հ.**, Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պետերսբերգի քարտեզի ՀՍԽՀ ԼՈՒՍԺՈՂԿՈՄՍՏ: Հրատարակություն Մելքոնյան ֆոնդի, Գիտհրատի տպարան: Երևան 1936.
<http://serials.flib.sci.am/Founders/H.Manandyan-Hin%20Hayastani%20glxavor%20chanaparner@/book/content.html>

13. Տուրիստական աշխատանքները դպրոցում (Մեթոդական ձեռնարկ), Եր., 1971:

14. Տուրիզմը ՊԱՊ համալիրում (Մեթոդական ցուցումներ), Եր., 1974:

15. Տուրիզմը ԲՈՒՀ-ում (Մեթոդական ձեռնարկ), Եր., 1978:

ИСТОРИЧЕСКИЙ ОБЗОР РАЗВИТИЯ ТУРИСТИЧЕСКИХ УСЛУГ В АРМЕНИИ

АМАЛИЯ МАНУКЯН¹, ТАТЕВИК МКРТЧЯН¹

¹Армянский государственный экономический университет

Туристические услуги появились в Армении давно, когда путешественники побывали в Армении и провели различные исследования. Туризм также развивался в Советской Армении, где были сформированы различные виды туризма.

Ключевые слова: средневековая Армения, Советская Армения, туризм, туристические услуги, средства размещения, гостевые дома, каравансарай, таверны.

HISTORIC REVIEW OF TOURIST SERVICES DEVELOPMENT IN ARMENIA

AMALYA MANUKYAN¹, TATEVIK MKRTCHYAN¹

¹Armenian State University of Economics

Tourism services have appeared in Armenia long ago when travelers used to visit Armenia, make different studies and get acquainted with everyday life, household and culture of the Armenian nation. Tourism also went on developing in Soviet Armenia, where different types of tourism have been formed.

Keywords: Armenia of middle ages, Soviet Armenia, tourism, tourism services, means of allocation, guest houses, caravanserais, taverns.

Ներկայացվել է խմբագրություն 22.01.2019
Երաշխավորվել է տպագրության 13.05.2019

ՀՏԴ 352

**ՄԻՋՄՈՒՆԻՑԻՊԱԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ
ՏԱԹԵՎ ՀԱԿՈՐՅԱՆ¹**

¹Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Վերջին տարիներին Հայաստանում իրականացվող վարչատարածքային բարեփոխումների երկու հիմնական ուղղություններից մեկը միջհամայնքային համագործակցության զարգացումն է, որի իրականացման ժամանակ շատ կարևոր է հաշվի առնել երկրին բնորոշ առանձնահատկությունները: Հոդվածում ներկայացված են տարբեր երկրներում միջմունիցիպալ համագործակցության փորձն ու ստացված արդյունքները, որի ուսումնասիրությունը հնարավորություն կընձեռի պարզել ինչպես են տարբեր երկրներ զարգացրել մունիցիպալիտետների միջև համագործակցությունը և ինչ արդյունքներ են գրանցել:

Բանալի բառեր. տեղական ինքնակառավարում, մունիցիպալիտետ, տեղական ինքնակառավարման մարմիններ (այսուհետև՝ ՏԻՄ) լիազորություն, միջմունիցիպալ համագործակցություն:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո եվրոպական երկրներն սկսեցին իրականացնել տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումներ: Բարեփոխումներն ունեին երկու հիմնական ուղղություն՝ մունիցիպալիտետների միաձուլումն ու միջմունիցիպալ համագործակցությունը, սակայն միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նույնիսկ խոշորացման ուղին ընտրած երկրներում մունիցիպալիտետները համագործակցում են՝ գիտակցելով համագործակցության կարևորությունն ու արդյունավետությունը:

Միջմունիցիպալ համագործակցության առաջնային տարբերությունը խոշորացումից մունիցիպալիտետի անկախության պահպանումն է, և եթե եվրոպական երկրներում խոշորացման արդյունքում մունիցիպալիտետները կամավոր կամ օրենքի ուժով կորցնում էին անկախությունը, Ֆրանսիան միակ երկիրն էր, որտեղ խոշորացումը ձախողվեց, երկիրն ընտրեց միջմունիցիպալ համագործակցության ճանապարհը, և նրա փորձը համարվում է ամենահայտնին և ամենատպալորիչը: 2014 թվականի տվյալներով Եվրամիության անդամ երկրների 106,600 մունիցիպալիտետների մոտ 35%-ը՝ 36,681-ը Ֆրանսիայի մունիցիպալիտետներն են [1]: Ամենամեծը Փարիզն է, իր 2,2 միլիոն բնակչությամբ, մինչդեռ համայքների

32%-ի բնակչության թիվը չի հատում 2000-ը [2]: Միջմունիցիպալ համագործակցությունն աչքի է ընկնում ոչ միայն միավորումների բազմազանությամբ, այլև դրանց մանրամասն կարգավորմամբ՝ օրենքի կողմից: Համայնքների անհավասարության մեղմմանն ուղղված առաջին քայլերն արվել են դեռևս մեկ դար առաջ: Այդ ժամանակահատվածից մինչև հիմա ձևավորվել են միջմունիցիպալ համագործակցության տարբեր ձևեր, որոնք բաժանվում են երկու մեծ խմբի՝ սեփական հարկահավաքմամբ և անդամ համայնքների բյուջետային հատկացումներով միություններ: Այն միությունները, որոնք չունեն հարկահավաքման սեփական համակարգը, ստեղծվում են միջմունիցիպալ ծառայությունների մատուցման համար՝ սարքավորումների ձեռքբերման, մասշտաբից տնտեսման, ծառայությունների որակի բարձրացման համար: Սեփական հարկահավաքման ռեժիմով միությունների նպատակը կարող է լինել տարածքային պլանավորումը, միավորման անդամ մունիցիպալիտետներում միասնական ծրագրի իրականացումը: Այս միություններն ունենում են ինչպես պարտադիր, այնպես էլ կամավոր լիազորություններ, որոնց իրականացման համար ֆինանսական պաշարները ձևավորվում են հարկավաճառումից և պետական դրամաշնորհներից: Սեփական հարկահավաքման միություններն ավելի բազմատեսակ են՝ մունիցիպալիտետների, ագլոմերացիաների, քաղաքային միություններ, մետրոպոլիսներ, բլեռային մետրոպոլիսներ, որոնք իրարից հիմնականում տարբերվում են անդամ մունիցիպալիտետների բնակչության թվի նկատմամբ նվազագույն պահանջով:

Ոլորտը կարգավորող հիմնական՝ Շևենմանի օրենքը նպատակ ուներ խթանել ավելի խոշոր միջմունիցիպալ մարմինների ստեղծմանը՝ առաջարկելով ֆինանսական խթաններ, որոնք համեմատական էին համագործակցող մունիցիպալիտետների թվին, և տալով միջմունիցիպալ մարմնին որոշ ֆինանսական անկախություն:

2017 թվականին 2016 թվականի համեմատ սեփական հակավաճառման միավորումների թիվը կտրուկ կրճատվել է 2063-ից մինչև 1267, ինչը պայմանավորված է միայն մունիցիպալ միությունների թվի նվազմամբ 1842-ից 1018: Սա պայմանավորված է 2015 թվականին ընդունված պետության տարածքային նոր կազմակերպման մասին օրենքով, ըստ որի՝ միջմունիցիպալ համագործակցության հանրային մարմինը պետք է միավորի նվազագույնը 15000 բնակիչ, նախկին 5000-ի փոխարեն:

Աղյուսակ 1

Սեփական հարկահավաքմամբ միջմունիցիալ համագործակցության հանրային մարմինների թիվը 2010-2018 թթ. [3]


Իրավական կարգավիճակ	01/01/10	01/01/11	01/01/12	01/01/13	01/01/14	01/01/15	01/01/16	01/01/17	01/01/18
Լիոնի Մետրոպոլիս						1	1	1	1
Մետրոպոլիս			1	1	1	11	13	14	21
Քաղաքային	16	16	15	15	15	9	11	15	11
Ագլոմերացիոն	181	191	202	213	222	226	196	219	222
Համայնքային	2408	2387	2358	2223	1903	1884	1842	1018	1009
Ընդհանուր	2610	2599	2581	2456	2145	2134	2063	1267	1264
Համագործակցող համայնքների թիվը	34 756	35 041	35 305	36 049	36 615	36 588	35 858	35 411	35 353

Տեղական ինքնակառավարման բարեփոխումներ իրականացնելու համար միջմունիցիալ համագործակցությունը ընտրած Ֆրանսիայի փորձը բավական հաջող է ստացվել, չնայած օրենսդրական բարեփոխումները դեռևս շարունակվում են՝ առավել արդյունավետ համագործակցություն ապահովելու համար:

Իտալիայում միջմունիցիալ համագործակցության իրականացման հիմնական տնտեսական պատճառներից մեկն այն էր, որ երկիրն ունի ավելի քան 8000 շատ փոքր մունիցիպալիտետ, որոնց 72%-ի բնակչության թիվը չի հատում 5000-ը: 1990-ականների սկզբին իրականացրած բարեփոխումների արդյունքում մունիցիպալիտետների ղեկավարները ընտրվում էին անմիջապես բնակիչների կողմից, հետևաբար և հաշվետու էին հենց բնակիչներին: Ունենալով սահմանափակ ֆինանսական պաշարներ՝ նշանակում էր, որ նրանք ունեին երկու տարբերակ՝ չմատուցել ծառայությունները հասարակությանը կամ էլ համագործակցել մյուս մունիցիպալիտետների հետ [4]:

Ներկայում Իտալիայում միջմունիցիալ համագործակցությունն իրականացվում է ինչպես ոչ ֆորմալ համաձայնությունների, այնպես էլ մունի-

ցիպալ միությունների միջոցով: Արդեն 2018 թվականին Իտալիայում գործել է 537 [5] մունիցիպալ միություններ, որոնք ընդգրկում են 3094 մունիցիպալիտետ՝ երկրի մունիցիպալիտետների 38,89%-ը:



Գծապատկեր 1. Համայնքներում 1 շնչին բաժին ընկնող ընթացիկ ծախսերը մինչ համագործակցությունն ու համագործակցությունից հետո (ուղղահայաց գիծը ցույց է տալիս միավորման կազմում ընդգրկվելու տարին) [6]

Իտալիայում մունիցիպալ համագործակցության աճը պայմանավորված է նաև որոշ մարմինների համար պարտադիր լինելով, մասնավորապես 2009 թվականին ընդունված օրենքով մինչև 5000 բնակիչ ունեցող մունիցիպալիտետները (լեռնային մունիցիպալիտետ լինելու դեպքում՝ մինչև 3000 բնակիչ) 2014 թվականի հունվարի 1-ից սկսած պարտավորվում են իրենց հիմնական խնդիրները լուծել համագործակցելով՝ մունիցիպալ միավորման կամ համաձայնության միջոցով: Իտալիայի միջմունիցիպալ համագործակցության փորձը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է որոշ ժամանակ դրական արդյունքներ գրանցելու համար: Եթե համագործակցության առաջին տարում 1 բնակչին բաժին ընկնող ծախսերն աճել են, ապա միայն 4-5 տարի համագործակցությունից հետո նկատվում է ծախսերի էական անկում (տե՛ս **Գծապատկեր 1**):

Մունիցիպալիտետները կարող են համագործակցել և միասին մատուցել ծառայությունը, կամ մի մունիցիպալիտետ կարող է վաճառել կոնկրետ ծառայությունը մյուսին: Այս երկրորդ տարբերակն էլ տարածված է ԱՄՆ-ում, որտեղ իշխանության 90,056 տեղական մարմիններից 51,146-ը հատուկ նշանակության են և ընդգրկում են հատուկ մունիցիպալիտետներն ու անկախ դպրոցական մունիցիպալիտետները: Հատուկ նշանակության մարմինները կարող է ծառայություն մատուցել մեկ մեծ մունիցի-

պալի, կամ մի ողջ շրջանի մունիցիպալիտետների: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում անկախ դպրոցական մունիցիպալիտետները [7]: 2012 թվականին ԱՄՆ-ում 14,178 հանրային դպրոցների համակարգերից 12,880-ը անկախ դպրոցական մունիցիպալիտետներում են, իսկ մնացածը գտնվում են իրենց տարածքային միավորի կազմում: Անկախ դպրոցական մունիցիպալիտետները ձևավորվել են Տեխաս նահանգում նավթային բումի հետևանքով: Բնակչության թվի կտրուկ աճի արդյունքում դպրոցներն այլևս հնարավորություն չունեին աշակերտներ ընդունելու: Նավթային ընկերություններից ժամանակից շուտ հավաքեցին հարկերը, այդ միջոցներով ստեղծեցին դպրոցական մունիցիպալիտետներ, որոնք հավաքված հարկերով էին աշխատում, և արդյունքում այդ շրջանում հավաքված հարկերը մնում էին շրջանի ներսում [8]:

Միջմունիցիպալ համագործակցության հիմնական առավելությունն այն է, որ ՏԻՄ-երը պահպանում են իրենց անկախությունը: Սրա վառ օրինակն է Իսլանդիայի Սկորադալշրեպուր գյուղը: 1990-ականներից երկրում սկսեց խոշորացման գործընթացը, որն ուղղված էր փոքր մունիցիպալիտետների միավորմանը՝ համայնքային ծառայությունների մատուցման ապահովման համար: Մի քանի փոքր մունիցիպալիտետներ միավորվեցին Բորգարնես քաղաքի շուրջ, բայց փոքր մունիցիպալիտետներից մեկը՝ մոտ 50 բնակիչ ունեցող Սկորադալշրեպուր գյուղը, հրաժարվեց միավորումից: Այն շարունակում է մնալ առանձին տեղական ինքնակառավարման միավոր: Այս մունիցիպալը նաև տուրիստական կենտրոն է և այստեղ գտնվող 500 ամառանոցների սեփականատերերի կողմից վճարվող հարկերի շնորհիվ համարվում է հարուստ: Չնայած առկա ֆինանսական պաշարներին, մունիցիպալը փոքր է բնակիչներին բոլոր ծառայությունների ինքնուրույն մատուցման համար: Այս խնդրի լուծման համար էլ ակտիվ համագործակցում է հարևան Բորգարնեսի հետ(դպրոց, ծերանոց, հրշեջ ծառայություն): Արդյունքում այս փոքր մունիցիպալը կարողանում է ինքնուրույն վճարել ծառայությունների դիմաց, սակայն նրա բնակիչները ուղղակիորեն չեն ազդում այդ ծառայությունների վրա, քանի որ ծառայությունների մատուցման կարգը որոշվում է Բորգարնես խոշորացման համայնքը: Չնայած այս ամենին՝ Սկորադալշրեպուրը նախընտրում է պահպանել իր անկախությունն ավելի մեծ հարևանից [9]:


Որպես արդյունաբերական կենտրոնի զարգացման ուղի՝ միջմունիցիպալ համագործակցության կիրառման արդյունավետ օրինակ է Բրազիլիայի ABC կոնսորցիումը: Բրազիլիայում կոնսորցիումի դերը՝ որպես մունիցիպալիտետների միջև հորիզոնական համագործակցության գործիքի, մեծացավ Սան Պաուլո նահանգապետ Անդրե Ֆրանկո Մոնտորոյի իշխա-

նավարման տարիներին, որը հասկացավ, որ մունիցիպալիտետների համաձայնությունը շատ պարզ միջոց է միկրոշրջանային զարգացման համար [10]: Կոնսորցիումի կազմում սկսեցին ընդգրկվել նաև մեծ, քաղաքային մունիցիպալիտետներ: 1997 թվականից ի վեր կնքվել է տնտեսական, սոցիալական և տարածքային ավելի քան 20 համաձայնություն [11]:

Ուսումնասիրելով զարգացած երկրներում միջմունիցիպալ համագործակցության ներդրումն ու զարգացումը՝ կարևոր է հասկանալ, արդյոք, այս ուղին նույնքան արդյունավետ է նաև Հայաստանի համար: Քանի որ մեր երկրում այժմ իրականացվում են վարչատարածքային բարեփոխումներ, հետաքրքիր է ուսումնասիրել Լեհաստանի փորձը, որտեղ այդ բարեփոխումները բավական արդյունավետ են եղել, ինչի արդյունքում էլ մունիցիպալիտետները կարող են համագործակցել և հասնել նշանակալի արդյունքների: Բարեփոխումների արդյունքում Լեհաստանում ձևավորվեց եռամակարդակ վարչատարածքային կառուցվածք, ինչը հնարավորություն տվեց արդյունավետ բաշխել լիազորություններն ու ապահովել դրանց իրականացումը: Օրենսդրությունը մունիցիպալիտետներին հնարավորություն է տալիս ձևավորել միջմունիցիպալ միավորումներ՝ ասոցիացիաների և կոմունալ ձեռնարկությունների տեսքով: Այս միավորումները հիմնականում ստեղծվում են տարածքային զարգացման, մունիցիպալ ենթակառուցվածքների զարգացման, շրջական միջավայրի պահպանության ու կրթության ոլորտի խնդիրների լուծման նպատակով: 2011-2012 թվականներին երկար քննարկումներից հետո թափոնների կառավարման ողջ գործընթացը՝ արտադրությունից մինչև արդյունքների կառավարում, դրանց ծավալների կրճատման և հնարավորինս վերամշակումն ապահովման հարցերի լուծումը, անցավ մունիցիպալիտետների իրավասությունների ներքո, ինչն ապահովեց թափոնների կառավարմամբ զբաղվող միջմունիցիպալ մարմինների եկամուտների աճ՝ մոտ հինգ անգամ (տե՛ս **Գծապատկեր 2**):

Առաջին հայացքից կենտրոնական իշխանությունների իրավասությունների ներքո գտնվող այս խնդիրը բարեփոխումներից հետո փոխանցվեցին ՏԻՄ-երին, միգուցե ապացուցելու համար, որ նրանք ունենալու են անհրաժեշտ անկախությունն ու միջոցները լուծելու այդ հարցը: Իսկ մունիցիպալիտետներն էլ իրենց հերթին, բախվելով այս բարդ խնդրի հետ, օգտվեցին իրենց համագործակցության իրավունքից: Թափոնների կառավարման համար համագործակցությունն ունի մեկ այլ պատճառ ևս՝ NIMBY (not-in-my-backyard)՝ ոչ իմ բակում: Բոլորն էլ ընդունում են աղբանոցների, թափոնները վերամշակող սարքավորումների անհրաժեշտությունը, բայց ոչ մի մունիցիպալիտետ չի ցանկանում, որ այն տեղակայված լինի հենց իր տարածքում, քանի որ այն վնաս է առողջությանը, բացի այդ

պարզ է, որ իր տարածքում գտնվող աղբանոցից օգտվելու են նաև այլ մունիցիպալիտետներ ևս:



Գծապատկեր 2. Թափոնների կառավարմամբ զբաղվող միջմունիցիպալ մարմինների եկամուտները 2006-2013 թթ [12]

Ուսումնասիրելով միջմունիցիպալ համագործակցության միջազգային փորձը՝ կարող ենք կատարել երկու հիմնական եզրահանգում.

- Լեհաստանի փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Հայաստանում միջհամայնքային արդյունավետ համագործակցության կարելի է հասնել միայն ունենալով կայացած և արդյունավետ տեղական ինքնակառավարման համակարգ,

- համագործակցության այս կամ այն ձևը ընտրելիս պետք է հաշվի առնել տվյալ երկրին, բնակչությանը, պետական համակարգին, ՏԻՄ-երին բնորոշ առանձնահատկությունները, քանի որ համագործակցության մի եղանակ, որը շատ արդյունավետ է եղել որևէ երկրում, կարող է ձախողվել մյուսում: Ցանկացած երկրի փորձի ներդումը պետք է իրականացնել՝ հարմարեցնելով այն այդ երկրի առանձնահատկություններին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. *Ladner, A., Keuffer, N. and Baldersheim, H.* Local Autonomy Index for European countries (1990-2014). European Commission, Release 1.0. Brussels 2015, p.15.

2. **Ministère de l'intérieur, Ministère de la cohésion des territoires** Les collectives locales en chiffres 2017, Paris 2017, p. 8.

3. Le portail d'information de référence sur l'intercommunalité de la Direction générale des collectivités locales (DGCL) https://www.banatic.interieur.gouv.fr/V5/tableaux-synthese/tableaux-synthese.php#dial_tab_synth (վերջին մուտք 16.02.2019).

4. Enhancing inter-municipal cooperation for water supply and sanitation, European Union, Organisation for Economic Co-operation and Development, 2012, p. 36.

5. Իտալիայի համայնքների կայքէջ http://www.comuniverso.it/index.cfm?Dati_regionali_sulle_Unioni_dei_Comuni&menu=313 (վերջին մուտք 16.02.2019).

6. **di Stefano Manestra, Giovanna Messina e Anna Peta,** L'Unione (non) fa la forza? Alcune evidenze preliminari sull'associazionismo comunale in Italia, Questioni di Economia e Finanza, Numero 452 – Luglio 2018, p.26

7. **Carma Hogue,** Government Organisation Summary Report 2012, U. S. Department of Commerce Economics and Statistics Administration, U. S. Census bureau, 2013.

8. The Depot Museum: Oil Boom". Depot Museum, Henderson, Texas. Archived from the original on 5 May 2008.

9. **Paweł Swianiewicz Adam Gendźwił, Alfonso Zardi** Territorial reforms in Europe: Does size matter? Territorial Amalgamation Toolkit. Centre of Expertise for Local Government Reform, Council of Europe – 2017, p. 41.

10. **Peter Spink.** The inter-municipal consortia in Brazil: an institutional introduction, Santiago, Chile, 2005, p. 2.

11. **Enid Slack,** Managing the Coordination of Service Delivery in Metropolitan Cities: The Role of Metropolitan Governance. The World Bank Finance Economics and Urban Development Unit, 2007, p. 35

12. **Bartłomiej Kolsut,** Inter-municipal cooperation in waste management: The case of Poland. Quaestiones Geographicae 35(2), Poznań, 2016, p.99.

МЕЖДУНАРОДНЫЙ ОПЫТ МЕЖМУНИЦИПАЛЬНОГО СОТРУДНИЧЕСТВА

ТАТЕВ АКОПЯН¹

¹Армянский государственный экономический университет

Одним из двух основных направлений административно-территориальных реформ, проведенных в Армении в последние годы, является развитие межмуниципального сотрудничества, в ходе которого важно учитывать особенности страны. В статье представлен опыт и результаты межмуниципального сотрудничества в разных странах, что поможет выяснить, как в разных странах развивалось сотрудничество между муниципалитетами и какие результаты были зафиксированы.

Ключевые слова: местное самоуправление, муниципалитеты, полномочия органов местного самоуправления, межмуниципальное сотрудничество.

INTERNATIONAL EXPERIENCE OF INTER-MUNICIPAL COOPERATION

TATEV HAKOBYAN¹

¹Armenian State University of Economics

One of the two main directions of the administrative-territorial reforms implemented in Armenia in recent years is the development of inter-municipal cooperation, during which the peculiarities of the country should be taken into account. The article presents the experience of inter-municipal cooperation in different countries and their results, the study of which will help to find out how different countries have developed cooperation between municipalities and what results have been recorded.

Keywords: local self-government, municipality, authorities of the local self-government bodies, inter-municipal cooperation.

Ներկայացվել է խմբագրություն 27.02.2019
Երաշխավորվել է տպագրության 29.04.2019

ՀՏԴ 005.96:331.108:004

**ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ
ԱՆԱՀԻՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ՝ ԷՄԻԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ՝**

¹ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետև՝ SS) ոլորտը տնտեսության դինամիկ զարգացող ճյուղերից մեկն է, որում հատկապես ահռելի է մարդկային կապիտալի դերը: Նշված հանգամանքով պայմանավորված՝ SS ոլորտում մարդկային ռեսուրսի (ներուժի) կառավարման առանձնահատկությունների ուսումնասիրությունը, տվյալ բնագավառում առկա հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծման ուղղությամբ արտասահմանյան երկրների առաջավոր փորձի ներդրումը կենսական նշանակություն ունեն ինչպես առանձին կազմակերպությունների, այնպես էլ ողջ տնտեսության համար:

Բանալի բառեր. SS ոլորտ, մոտիվացիա, կազմակերպական մշակույթ, ադապտացիա, մարդկային ռեսուրսի կառավարում:

SS ոլորտը կանխորոշում է համաշխարհային տնտեսության շրջանակներում երկրի մրցունակության հեռանկարները: Որակյալ աշխատողների հասանելիությունը և նրանց արդյունավետ աշխատանքի կազմակերպումը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն SS ոլորտի, այլ երկրի տնտեսության համար: Գ. Հոֆստեդեի, Կ. Քեմերոնի և Ռ. Քուինի, Ֆ. Հարիսի ու Ռ. և Ս. Մորանների, Չ. Հենդիի, Ֆ. Քլաքհոնի, Ֆ. Ստրոտբեքի, Հ. Լեյնի և Դ.Դիստեֆանոյի կողմից տրված դասակարգումների օգնությամբ SS ոլորտի կազմակերպությունները կարելի է բնութագրել հետևյալ կերպ. դրանք զարգացած հետադարձ կապով, փոփոխուն շուկայում կայուն դիրքեր պահպանելու նպատակով նորարարությունների անընդհատ ներդրմանը ձգտող դինամիկ կազմակերպություններ են [1], [2], [3], [4], [5], [6], [7]:

SS ոլորտի համար մարդկային ռեսուրսի (HR՝ մարդկային ռեսուրս) կառավարումը հատկապես կարևոր է, քանի որ դրանք մարդիկ են՝ իրենց ունակություններով, շարժառիթներով և ձգտումներով: HR մենեջերներից են կախված տվյալ կազմակերպության հաջողությունները SS ոլորտում [8]:

Մարդկային ռեսուրսի կառավարման գործընթացում HR մենեջերի կողմից իրականացվում են հետևյալ գործառնությունները՝ մարդկային

ռեսուրսի պահանջունքի կանխատեսում, աշխատատեղերի վերլուծություն և նախագծում, անձնակազմի հավաքագրում, ընտրություն, աշխատողների հարմարում, աշխատանքի գնահատում և մոտիվացիա, անձնակազմի ուսուցում և մասնագիտական զարգացում, փաստաթղթաշրջանառության կազմակերպում:

Հայաստանում SS ոլորտում մարդկային ռեսուրսի կառավարումն ունի առանձնահատկություններ՝

- ոլորտում կազմակերպությունների մեծամասնությունը խորհրդային կազմակերպությունների վերակազմակերպման արդյունք չի հանդիսանում: Դրանք ստեղծվել են զրոյից, և դրանց վրա առավել քիչ ազդեցություն է թողնում անցյալի ժառանգությունը: Այս կազմակերպություններն ունեն յուրահատկություններ առաքելության, կազմակերպական մշակույթի, համատեղ արժեքների ձևավորման հարցերում,

- ոլորտի արտադրանքի շարժունության բարձր աստիճանը, որի արդյունքում այն արագ հատում է ազգային սահմանները, պայմանավորում է որակյալ կադրերին ներգրավելու հարցում մրցակցության բարձր աստիճանը: Դա նշանակում է, որ կազմակերպությունները պետք է մշակեն մարդկային ռեսուրսի կառավարման բավականին ճկուն համակարգ, որպեսզի կարողանան գործել արագ փոփոխվող պայմաններում և շարժվել շուկայի պահանջներին համընթաց,

- որպես մրցակցային առավելություն է հանդիսանում SS ոլորտի մասնագետների բարձր որակավորումը և զարգացած երկրների համեմատ հարաբերականորեն ցածր վարձատրությունը:

«Դիջիթեյնը» Հայաստանում SS ոլորտի խոշոր կազմակերպություններից է, որի աշխատողների թվաքանակը կազմում է մոտ 1100 մարդ կամ ողջ SS ոլորտում զբաղվածների թվի 5,5%-ը: Նշենք, որ կազմակերպությունում աշխատանքի արտադրողականության ցուցանիշը (53690 ԱՄՆ դոլար) գերազանցում է SS ոլորտի համապատասխան ցուցանիշը (50070 ԱՄՆ դոլար) 7,2%-ով [9]: Կիրառվում են աշխատողների հավաքագրման և՛ ներքին, և՛ արտաքին աղբյուրները: Կազմակերպությունն ակտիվ կերպով համագործակցում է բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, այդ թվում՝ Հայաստանի ամերիկյան համալսարանի, ֆրանսիական համալսարանի, Երևանի պետական համալսարանի հետ և այլն:

Տվյալ ոլորտի արտադրանքի ինովացիոն բնույթն իր ազդեցությունն է ունենում նոր աշխատողների ընտրության և հարմարման արագության վրա [10]: SS մասնագետը տվյալ պաշտոնի պահանջներին համապատասխանելու համար պետք է ունենա որոշակի դոմինանտ որակներ

(ստեղծագործ կամ կրեատիվ, նախաձեռնող, մոտիվացված լինելը, պատասխանատվություն, ինքնուրույնություն, թիմում աշխատելու կարողություն) [11]:

«Դիջիթեյն» կազմակերպությունում անձնակազմի ընտրությունն անցկացվում է երեք ենթափուլով՝ 1. հեռախոսային զրույց, 2. հարցազրույց և/կամ թեստավորում, 3. առաջադրանքների (task) լուծում: Հեռախոսային զրույցի ընթացքում թեկնածուին ներկայացվում են աշխատանքի պայմանները, որից հետո կազմակերպության աշխատակիցը պատասխանում է աշխատողին հետաքրքրող հարցերին, տեղի է ունենում քննարկում: արդյունքում թեկնածուն կարող է հրավիրվել կամ չհրավիրվել հարցազրույցի:

Ընդհանուր առմամբ անձնակազմի ընտրության փուլում հաշվի են առնվում թեկնածուների համապատասխանությունը կազմակերպական մշակույթին, այդ թվում՝ արժեքներին, ինչպես նաև մոտեցումները (հայացքներ, աշխատանքային պարտականությունների կատարում, ղեկավար-ենթակա և աշխատակիցների հետ հարաբերություններ, ինքնաիրացման և այլ հարցեր), սպասելիքները, մոտիվացիան և ձգտումները, որոնք բացահայտվում են հարցազրույցի փուլում: Թեկնածուների համար կիրառվում են Էփշտեյնի և Օուլովի մեթոդաբանությամբ մշակված թեստերը, որոնց միջոցով բացահայտվում է նրանց ներքին մոտիվացիան, նպատակասլացության աստիճանը: Կազմակերպություններում ուսուցման իրականացման մոտեցումները պայմանավորված են առաջին հերթին SS ոլորտի առանձնահատկություններով՝ զարգացման բարձր դինամիկա, մշտական փոփոխություններ, գիտելիքների արագ հնացում: Նշված հանգամանքով պայմանավորված՝ ենթադրվում է յուրաքանչյուր աշխատողի անհատական ուսուցում:

Ուսուցման ծախսերի տեսակարար կշիռը ($Y_{ուս.ծախս.}$) աշխատավարձի ֆոնդի կառուցվածքում կազմում է ընդամենը 0,3 %-ը ($13600/4538000*100$), այնինչ ընդունված է համարել, որ լրիվ բավական է ուսուցման վրա ծախսել աշխատավարձի ֆոնդի մի քանի տոկոսը կամ կազմակերպության ընդհանուր բյուջեի 1-2 %-ը [12]. տվյալ ցուցանիշը «Դիջիթեյն» կազմակերպությունում կազմում է կազմակերպության ընդհանուր բյուջեի 0,06 %-ը:

Կազմակերպությունում այժմ մշակման փուլում է գտնվում և մոտ ապագայում ներդրվելու է աշխատողների ուսուցման համակարգ, որը թույլ կտա կազմակերպությունն ապահովել սեփական պահանջներին համապատասխան բարձր որակավորմամբ մասնագետներով:

«Դիջիթեյն» կազմակերպությունում աշխատողների հարմարման արագացման համար փորձաշրջանի առաջին օրվա ընթացքում աշխատողին պատմում են կազմակերպության, նրա արժեքների մասին: Մեկ

ամիս անց աշխատողը հանդիպում է HR մենեջերին, որի ընթացքում քննարկվում են նրա գրանցած արդյունքների, առաջացած խնդիրների հետ կապված հարցեր: Ուսուցչի (mentor) հսկողության ներքո փորձաշրջանի ժամկետը լրանալուց երկու շաբաթ առաջ իրականացվում է աշխատողի գնահատում՝ ըստ մի շարք հատկանիշների (հաճախումներ, աշխատանքային կարգապահություն, ներգրավում թիմային աշխատանքում):

Հարմարումը չանցնելու դեպքում HR մենեջերը փորձում է գտնել հավանական պատճառները. աշխատողների հարմարման վրա առավել շատ ազդող գործոններից կազմակերպության մասնագետները նշում են նոր աշխատողների անձնական որակները և ղեկավարների վերաբերմունքը:

Մոտիվացիան անմիջականորեն կապված է գործունեության ակտիվության և նպատակներին հասնելու ձգտման հետ: Գիտնականներ Ռայանը և Դեսին հստակ ընդգծել են «մոտիվացիան արտադրում է» արտահայտության նշանակությունը [13], [14]: ՏՏ ոլորտի կազմակերպությունում անձնակազմի մոտիվացիայի համակարգը պետք է ներառի հետևյալ տարրերը՝ միջոլորտային մակարդակին չզիջող նյութական խրախուսում, գնահատում, խրախուսում ցուցաբերած նախաձեռնության, առաջադրանքների արդյունավետ և որակյալ կատարման համար, խրախուսում աշխատանքի ընթացքում ծախսերի կրճատման համար, կարիերային աճ [15], [16], [17]:

Կազմակերպություններում կիրառվող անձնակազմի մոտիվացիայի բոլոր միջոցները պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ կատեգորիաների.

- նյութական խրախուսում (դրամական պարգևատրում),
- պաշտոնի բարձրացում,
- արտոնությունների տրամադրում (օրինակ՝ լրացուցիչ արձակուրդի տրամադրում),
- շնորհակալագրերի տրամադրում [18]:

«Դիջիթեյն» կազմակերպությունում կիրառվում են աշխատողների մոտիվացիայի միայն առանձին տարրեր: Կազմակերպությունում նախատեսվում է ներդնել աշխատանքի վարձատրության գրեյդինգային համակարգ, ըստ որի՝ աշխատողները միավորվելու են հետևյալ խմբերում՝ փորձնակներ, տեխնիկական աշխատողներ, մասնագետներ, ավագ մասնագետներ, թիմի ղեկավարներ, բաժնի ղեկավարներ, ղեկարտամենտի ղեկավարներ, գործադիր տնօրեն, հիմնադիր տնօրեն. պաշտոնային դրույքաչափերի տարբերությունը տարակարգերի միջև կազմելու է մոտ 30%: Աշխատողների պարգևատրումն իրականացվում է նախագծերի իրականացման շրջանակներում՝ դրանց ավարտից հետո: Պարգևատր-

ման ֆոնդը սահմանվում է նախագծի գնի նկատմամբ տոկոսներով. թերությունն այն է, որ աշխատողներից յուրաքանչյուրի մասնակցության աստիճանի և չափի հստակ գնահատման կառուցակարգ չկա. այն սուբյեկտիվ բնույթ է կրում: Կազմակերպությունում ծրագրավորողների համար կարող են նախատեսվել պարգևներ բոնուսների տեսքով. այն տրվում է, եթե տվյալ աշխատողի խորհրդով կազմակերպությունում աշխատանքի են անցել բարձր որակավորմամբ մասնագետներ: Տվյալ բոնուսի չափը տատանվում է 200-500 հազար դրամի սահմաններում:

Խրախուսման ոչ նյութական ձևերի վերաբերյալ կարելի է նշել, որ «Դիջիթեյն» կազմակերպությունում ծրագրավորողների և ղեկավարների համար գործում է առողջության ապահովագրություն: Աշխատողներին տրամադրվում է նաև 4 օր լրացուցիչ վճարովի արձակուրդ: Կազմակերպությունում չի կիրառվում ճկուն աշխատանքային գրաֆիկ: 1 ժամ տևողությամբ ընդմիջումից բացի աշխատողների համար չկա հանգստի սահմանված ժամանակ, և աշխատողները կարող են այդ ժամանակը տնօրինել իրենց հայեցողությամբ:

Արտասահմանյան պրակտիկայում SS ոլորտի կազմակերպություններում մանրակրկիտ կերպով մշակվել է անձնակազմի, առանցքային աշխատողների ներգրավման և նրանց պահելու տեխնոլոգիան: Աշխատողի տարեկան վարձատրությունը բաղկացած է պաշտոնային տարակարգերի վրա հիմնված աշխատավարձից, որակավորման մակարդակի համար տրվող հավելավճարներից, սահմանված ցուցանիշների կատարման համար տրվող տարեկան պարգևատրումից, կարևոր առաջադրանքների կատարման համար տրվող միանվագ վճարներից և առանցքային աշխատակիցների համար երկարաժամկետ պարգևատրումից: Հավելավճարի մեծությունը կախված է աշխատողի լրացուցիչ հավաստագրերից, գիտական աստիճանից և տվյալ բնագավառում աշխատանքային փորձից. այն սահմանվում է պաշտոնային դրույքաչափի նկատմամբ և կազմում է նրա 10-15 %-ը: Պարգևատրման համակարգերը կիրառվում են ինչպես ծրագրավորողների, այնպես էլ ղեկավարների, օժանդակ և իրացման կազմակերպման ստորաբաժանումների աշխատողների համար: Պարգևի պլանային չափը կարող է փոխվել՝ կախված աշխատողների աշխատանքի արդյունավետության ցուցանիշներից: Ծրագրավորողների պարգևի չափը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Omega = \Phi_{\text{պ}} \times \Phi_{\text{բարդ}} \times \Phi_{\text{ժամկ}} \times \Phi_{\text{որակ}} \times \Phi_{\text{բավ}} \times \Phi_{\text{աշխ.մաս.}}, \text{ որտեղ՝}$$

Ω - ն՝ աշխատողին տրվող պարգևի չափն է,

$\Phi_{\text{պ}}$ -ն՝ ըստ նախագծի պարգևատրման ֆոնդի մեծությունը,

$\Phi_{\text{բարդ}}$ -ը՝ նախագծի բարդության գործակիցը,

Գժամկ. -ը՝ նախագծի կատարման ժամկետների պահպանման գործակիցը,

Գորակ. -ը՝ նախագծի որակի գործակիցը,

Գբավ. -ը՝ հաճախորդների բավարարվածության գործակիցը,

Գաշխ.մաս. -ը՝ աշխատողի՝ աշխատանքային մասնակցության գործակիցն է:

Առանցքային աշխատակիցների երկարաժամկետ պարզևատրման ծրագրերը տևում են 3 տարի: Պարզևատրման ծրագրի ընդհանուր ֆոնդից 3 տարվա ընթացքում վճարվում են համապատասխանաբար 50, 30 և 20 %: Պարզևատրման այս ձևը կիրառվում է ինչպես նեղ պրոֆիլի մասնագետների, այնպես էլ միջին և վերին օղակի ղեկավարների համար: Աշխատանքի կատարման ընթացքում ծախսերի կրճատման համար կարող են կիրառվել խրախուսումներ տնտեսված պաշարների գումարից տոկոսային վճարների տեսքով [19]:

SS ոլորտի կազմակերպության գործունեության առանձնահատկությունների վերաբերյալ պատկերացում կարելի է կազմել նրա կազմակերպական մշակույթն ուսումնասիրելու միջոցով: Կազմակերպական մշակույթի վրա գերակշիռ ազդեցություն են ունենում տարբեր գործոններ. դրանք կարող են լինել կառավարման մասին ավանդական պատկերացումները, ճյուղային առանձնահատկությունները, ինչպես նաև SS ոլորտի կազմակերպությունների արտասահմանյան փորձը [20]:

Հարիս-Մորանի, Լեյն-Դիստեֆանոյի և Հոֆսթեդեի մեթոդների սինթեզի միջոցով «Դիջիթեյն» կազմակերպությունում իրականացվել է կազմակերպական մշակույթի ուսումնասիրություն: Արդյունքում պարզվել է, որ աշխատողների մեծ մասն իրենց զգում են կազմակերպության կարևոր մասը, աշխատատեղում դրես կողը բացակայում է, աշխատաժամանակը հստակ կանոնակարգված է: Աշխատակիցները մարդկային հարաբերություններում նշում են համերաշխ կոլեկտիվի, ինչպես նաև «ղեկավար-ենթակա» հարաբերությունների ապակենտրոնացված լինելու, ղեկավարության հանդեպ ունեցած հավատի մասին: Կազմակերպությունում վերահսկողության համակարգը չափավոր կամ ոչ խիստ է գնահատվում, իսկ գործունեության ռազմավարության մշակումը կարճաժամկետ կողմնորոշում ունի:

Ներկայում ողջ աշխարհում SS ոլորտի կազմակերպությունների լրջագույն հիմնախնդիրներից է մարդկային ռեսուրսի կառավարման արդյունավետության գնահատումը: Կազմակերպություններից շատերը հենվում են կադրերի հոսունության գործակցի վրա [9, c. 24]: Հարկ է նշել, որ «Դիջիթեյն» կազմակերպությունում այս ցուցանիշը բավականին բարձր է՝ 19 % (SS կազմակերպություններում կադրերի հոսունության

նորման կազմում է 8-10 % [21]): Կազմակերպությունում հաշվի է առնվում նաև թափուր հաստիքը փակելու ժամանակահատվածը, որը կազմում է մոտ 1 ամիս:

Այսպիսով, Հայաստանի համար տնտեսության զարգացման գերակա ճյուղերից մեկը ճանաչված SS ոլորտի կազմակերպություններում մարդկային ռեսուրսի կառավարման արդյունավետ համակարգի մշակումն ու կիրառումն ունեն կենսական նշանակություն: Կարելի է փաստել, որ՝

- մարդկային կապիտալը հատկապես մեծ դեր է խաղում SS ոլորտում: Կազմակերպության՝ որակյալ կադրերով ապահովելու խնդիրը կարող է լուծվել՝ SS կազմակերպություններում ներդնելով ուսուցման ծրագրեր և ավելացնելով աշխատավարձի ֆոնդում ուսուցման ծախսերի տեսակարար կշիռը՝ այս գործընթացում ներգրավելով հնարավորինս շատ թվով աշխատողներ,

- SS կազմակերպություններում մշակել և կիրառել աշխատանքի վարձատրության նոր համակարգ որով աշխատողների համար կնախատեսվեն տարբեր հավելավճարներ, պարգևատրումներ. վերջիններիս հաշվարկը կիրականացվի յուրաքանչյուր աշխատողի ունեցած անձնական ներդրման օբյեկտիվ գնահատման հիման վրա: Նման կերպով «Դիջիթեյն» կազմակերպությունում հնարավոր կլինի նվազեցնել կադրերի հոսունության ցուցանիշը և արդյունքում պահել կազմակերպության գործունեության ցուցանիշների բարելավման տեսանկյունից այդքան կարևորվող մարդկային կապիտալը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Hofstede G.**, Culture's Consequences: Comparing Values, Behaviors, Institutions and Organizations Across Nations, 2001., pp. 1-15

2. **Кэмерон К., Куинн Р.**, Диагностика и изменение организационной культуры / Пер. с англ. под ред. И. В. Андреевой. — СПб: Питер, 2001. — 320 с: ил. — (Серия «Теория и практика менеджмента»).— С. 24-50

3. **Philip R. Harris, Robert T. Moran, Sarah V. Moran**, Managing cultural differences: Global leadership strategies for the 21ST Century // Elsevier Inc., 2007, pp. 6-11

4. **Эванс Ф., Верстеп Т.С.**, Реальный взгляд на виртуальную коммерцию // Искусство управления. 2000. URL: <http://www.cfin.ru/press/management/2001-4/04.shtml>.

5. **Handy C.**, Understanding Organizations. Oxford University Press, 1993.

6. **Kluckhohn R.R., Strodtbeck F.L.**, Variations in value orientations // Evanston, IL: Row Paterson, 1961, 437 p.

7. **Henry W. Lane, Martha Maznevski, Joerg Dietz, Joseph J. DiStefano**, International Management Behavior: Leading with a Global Mindset. 2009.

8. **Лось, Л. А.**, HR-менеджмент в IT-сфере / Л. А. Лось, А. Н. Павлович // Компьютерное проектирование и технология производства электронных систем : сб. материалов 52-ой науч. конф. аспирантов, магистрантов и студентов учреждения образования «Белорусский государственный университет информатики и радиоэлектроники» (Минск, 25 - 30 апреля 2016 года). - Минск : БГУИР, 2016. – С. 50.

9. SCS Իրրարը Հաշիւտաշինութիւն, Enterprise incubator foundation, 2018:

10. **Кабалина В. И., Мондрус О. В.**, Контекстуализация управления талантами в российских IT-компаниях // Российский журнал менеджмента. 2018. №1. С. 21-24

11. **Насейкина Л. Ф.**, Автоматизация подбора персонала IT-отдела // Вестник ОГУ. 2014. №9 (170), С. 190-192

12. **Варфоломеева И. В.**, Как сформировать бюджет на обучение и развитие персонала – Режим доступа: <https://sdo-regional.ru/prof-post/kak-sformirovat-byudzhet-na-obuchenie-i-razvitie-personala>

13. **Ерофеев Е. В.**, Разработка инструментария для мотивации работников организации информационных технологий // Интернет-журнал Науковедение. 2014. №1 (20), С. 3

14. **Ryan, R., Deci, E.**, Self-determination theory and the facilitation of intrinsic motivation, social development, and well-being. American psychologist. 1, pp. 68-78 (2000)

15. **Мерманн Э.**, Мотивация персонала. Инструменты мотивации для успеха организации: пер. с нем. Харьков: Гуманитарный Центр, 2007. 182 с.

16. **Самоукина Н.В.**, Эффективная мотивация персонала при минимальных финансовых затратах. М.: Вершина, 2008. 224 с.

17. **Тютюник А. В.**, Информационные технологии в банке / А. В. Тютюник, А. С. Шевелев. – М.: БДЦ-пресс, 2003. – 368 с.

18. **Пономарёва О. В.**, Особенности организации работы персонала для компаний в сфере it // ПУСС. 2009. №2., С. 41.

19. **Виноградова О. Ю., Блюденова О.В.**, IT компании в системе управления персоналом // Молодежь и наука. 2008, С. 3-4.

20. **Филатова О. В., Аникина Е. О.**, Управление в IT-секторе в России и Китае: опыт построения организационной культуры // Вестник Российского университета дружбы народов. Серия: Государственное и муниципальное управление. 2015. №2., С. 72.

21. **Самоукина Н. В.**, Эффективная мотивация персонала при минимальных затратах, или Как платить меньше, но чтобы работали лучше? Ростов н/Д: Феникс, 2014.– 238 с.

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ ЧЕЛОВЕЧЕСКИМИ РЕСУРСАМИ В ИТ-СЕКТОРЕ

АНАИТ МЕЛКУМЯН¹, ЭМИЛЬ ГРИГОРЯН¹

¹Армянский государственный экономический университет

Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարը պաշտոնապես հռչակվեց 2000-ական թվականներին, երբ տնտեսական, քաղաքական և սոցիալական բարեփոխումների իրականացմանը զուգընթաց կոռուպցիան համարվեց որպես չափազանց լուրջ խոչընդոտ: Սա հաստատվեց մի շարք միջազգային կազմակերպությունների կողմից իրականացրած ուսումնասիրությունների արդյունքում, որոնցից առավել հիմնավոր են Համաշխարհային բանկի, «Թրանսփերենսի Ինթերնեշնլի» փաստարկներն ու հիմնավորումները [6]: Հայաստանում կոռուպցիային առնչվող առաջին պաշտոնական փաստաթուղթը «Պաշտոնի չարաշահման և կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացում» հրամանագիրն է [7]: Այնուամենայնիվ, միջոցառումների ոչ հետևողական ընթացքը հանգեցրեց նրան, որ հրամանագիրը չտվեց զգալի արդյունքներ: Ավելի ուշ՝ ՀՀ Նախագահի 2004 թվականի հրամանագրով ստեղծվեց կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ և փորձագիտական հանձնախումբ [10]: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի ստեղծումը նպատակ էր հետադնդում աջակցել Հայաստանի կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության իրականանցմանը: Ընդհանուր առմամբ, ավելի քան 50 օրենքներ և ենթօրենսդրական ակտեր

են ընդունվել որպես հակակոռուպցիոն միջոցառումների բաղկացուցիչներ, որոնք ներառվել են Կոռուպցիայի դեմ պայքարի 2003-2007 թվականների գործողությունների ծրագրում [8], կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական մարմիններ են ստեղծվել, ստորագրվել և վավերացվել են միջազգային հակակոռուպցիոն համաձայնագրեր և պետությունն անդամակցել է մի շարք կազմակերպությունների, որոնք հնարավորություն են ընձեռել իրականացնել միջազգային համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարում:

2009-2012 թվականների երկրորդ հակակոռուպցիոն ծրագիրը Կառավարության կողմից ընդունվել է 2009 թվականին [10]: 2015-2018 թվականների երրորդ և ընթացիկ հակակոռուպցիոն ռազմավարությունը հաստատվել է 2015 թ. սեպտեմբերին [11]:

Հարկ է նկատել, որ «Թավշյա հեղափոխությամբ» և 2019 թ. հունվարից գործող նոր Ազգային ժողովով ու նոր Կառավարությամբ առաջին իրական քայլեր է կատարում անցնելու կոռուպցիայի դեմ իմիտացիոն պայքարից հետևողական պայքարի: Չնայած արդեն սկսած բարեփոխումներին՝ կան բազմաթիվ չլուծված խնդիրներ և բացթողումներ, որոնցից առավել կարևորվում են հետևյալները.

- մինչև օրս հաշվի չեն առնվել 2016թ. նոյեմբերի 4-ին CEDAF-ի պահանջները և չի մշակվել միջոցառումների համապատասխան ծրագիր,
- հաշվի չեն առնվել հանրային կառավարման բարեփոխումների սոցիալական ասպեկտները, ինչը բացասական կարծիք է ձևավորում հանրության շրջանում,
- չնայած էլեկտրոնային կառավարման համակարգի մասին ՀՀ կառավարության հռչակած դրույթների՝ չկա դրա իրականացման հիմքերը մարզերում և հեռավոր համայնքներում, ինչը ևս դժգոհություն է առաջացնում,
- չնայած «Ազդարարի մասին» ՀՀ օրենքի ընդունմանը, ոչ քաղաքացիական հանրությունը, ոչ էլ կառավարման միջին օղակները բավարար չափով իրազեկված չեն դրա վերաբերյալ,
- բավարար չափով հաշվի չեն առնվում «Transperency International» կազմակերպության ուսումնասիրությունները ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարում,
- ցածր է մնում ՀՀ Ազգային ժողովում կանանց ներկայացվածությունը. 2009 թ. այն կազմում էր 9%: 2011թ. ՀՀ ընտրական օրենսգրքում ամրագրվեց խորհրդարանական ընտրություններում համամասնական

ընտրակարգով առաջադրվող կուսակցությունների ցուցակներում 20-տոկոսանոց գենդերային քվոտա, սակայն 2012թ. ընտրությունների արդյունքում այն կազմեց ընդամենը 11%¹,

– գենդերային անհավասարակշռությունը պահպանվում է գործադիր իշխանության բարձր մակարդակներում: 2009-2014թթ. գործադիր իշխանության քաղաքական պաշտոններում, որոնք մասնակցում են քաղաքական որոշումների ընդունմանը, միայն երկու կին է եղել, որոնք գլխավորել են ՀՀ մշակույթի նախարարությունը և ՀՀ սփյուռքի նախարարությունը: 2015-2016թթ. 18 նախարարներից 3-ն էին կին (16,7%): Ներկայում 18 նախարարներից միայն մեկն է կին²:

Ամփոփում

Կոռուպցիայի դեմ պայքարում առաջարկում ենք հետևյալ միջոցառումների իրականացումը.

– նվազագույնի հասցնել առօրյա կյանքում պետական կառավարման մարմինների հետ անհարկի շփումները,

– ավելացնել պետական կառավարման մարմինների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը, ինչպես նաև կատարելագործել նրանց և քաղաքացիների ու տնտեսվարող սուբյեկտների միջև հետադարձ կապը,

– կրճատել պետական կառավարման համակարգի ծախսերը՝ հիմք ընդունելով իրականացվող գործառույթների անհրաժեշտությունն ու փաստացի իրականացումը,

– հրաժարվել պետական կառավարման մարմիններում կրկնվող կամ անարդյունավետ գործառույթներից,

– ընդլայնել «մեկ պատուհանի» սկզբունքով քաղաքացիներին և ներդրողներին մատուցվող ծառայությունների որակը,

¹ Հասարակական կազմակերպությունների հետևողական ջանքերի շնորհիվ 2016թ. մայիսին ընդունված «Ընտրական օրենսգիրք» Սահմանադրական օրենքում ոչ միայն գենդերային քվոտան բարձրացվեց մինչև 30%, այլև ամրագրվեց դրույթ, համաձայն որի մանդատից հրաժարված պատգամավորին պետք է փոխարինի նույն սեռի հաջորդ թեկնածուն: 2017թ. ընտրությունների արդյունքում կանանց ներկայացվածությունը Ազգային ժողովում կազմեց 18%*:

² Փոխնախարարի հայեցողական պաշտոններում, որոնք որոշակի ազդեցություն ունեն քաղաքական որոշումների վրա, 2009թ. ներկայացված էին ընդամենը 3 կին, 2012-2014 թթ. նրանց թիվը հասավ 7-ի, որը կազմում էր 11,5%: Իսկ 2015-2016թթ. կանանց թիվը փոխնախարարի պաշտոններում նվազեց մինչև 6,7%: ՀՀ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում կանանց թիվը 2009-2016թթ. բարձրացել է 10%-ից մինչև 17%:

– ներդնել հանրային ծառայողների մասնագիտական ունակությունների, ինչպես նաև աշխատանքային պարտականությունների կատարման աստիճանի գնահատման կատարողականության հստակ չափանիշներ,

– ստեղծել մասնագիտացված օղակ, որը միասնական տեսլականի հիման վրա կհամակարգի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման էլեկտրոնային համակարգերի զարգացման քաղաքականությունը,

– հիմնել պետական և տեղական ՏՀՏ-ի համակարգերի փոխգործելիության պլատֆորմ, որը թույլ կտա պետական կառավարման և 12 ՏԻՄ-երի համակարգերում հասանելի դարձնել ցանկացած տեղեկատվություն,

– կյանքի կոչել «Ազդարարների վերաբերյալ» օրենսդրական փաթեթը, որը լուրջ բեկում կարող է մտցնել հակակոռուպցիոն պայքարի շրջանակներում,

– վերացնել բարձրորակ կադրերի պակասուրդը, որն ուղղակի ազդեցություն ունի պետական կառավարման համակարգի և տնտեսության զարգացման վրա: Պետք է հաշվի առնել այն իրողությունը, որ բարձրակարգ մասնագետները մեծ դեր ունեն Հայաստանի հանրային կառավարման համակարգի կատարելագործման և տնտեսական առաջընթացի գործում: Պետական կառավարման համակարգ բարձրորակ մասնագետների ներհոսք ապահովելու համար անհրաժեշտ է մշակել և կիրառել առաջընթացի և եկամուտների ավելացման շահադրդման ու խրախուսման հստակ կառուցակարգեր:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն, <http://www.president.am/hy/constitution-2015>:
2. **Թ. Մանասերյան**, Տնտեսական անվտանգություն. Ռազմավարության ուրվագծեր, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, է, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ, էջ 36-224:
3. “Эффективность государственного управления” М. изд-во АО “кон-салтбанмир” 1998г., с.48.
4. Атаманчук В. “Теория государственного управления” Москва, изд. Омега-Л 2004г.с. 12-13.
5. ՀՀ կառավարության ծրագրի տեսլականը և նպատակները http://parliament.am/draft_docs6/K-23.pdf
6. Թրանսպերենսի ինթ., Օրինականության ազգային համակարգի գնահատում, <https://transparency.am/files/publications/1418657623-0-191960.pdf>
7. 1992 թվականի սեպտեմբերի 1-ին ընդունված Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի թիվ ՆՀ-151 «Պաշտոնի չարաշահման և կոռուպցիայի դեմ պայքարի ուժեղացում» հրամանագիր
8. ՀՀ Նախագահի հրամանագիրը Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդ ստեղծելու մասին, 1 հունիսի 2004 թ. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=30815>
9. Հայաստանի Հանրապետության 2003-2007 թվականների հակակոռուպցիոն ռազմավարություն, Երևան, 2003թ. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=11547>
10. Հայաստանի Հանրապետության 2009-2012 թվականների հակակոռուպցիոն ռազմավարություն, Երևան, 2009թ. http://www.gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/430.pdf
11. Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարություն, Երևան 2015 թ. <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=100900>

ПРИОРИТЕТЫ ГОСУДАРСТВА ПРИ ПЕРЕХОДЕ К ПАРЛАМЕНТСКОЙ СИСТЕМЕ УПРАВЛЕНИЯ

ТАТУЛ МАНАСЕРЯН¹

¹Академия государственного управления Республики Армения

На этом этапе реформы системы государственного управления важно разработать законодательную базу для выработки эффективной системы управления. В частности, в процессе перехода к парламентской системе управления особое внимание уделяется мероприятиям в области законодательной поддержки, включая законы и решения правительства, нормативные акты, цифровизацию системы государственного управления и местного самоуправления. Переход к электронному управлению призван повысить уровень эффективности системы государственного управления.

Ключевые слова: общественное управление, социальная рыночная экономика, система управления, эффективность управления, укрупнение общин

PRIORITIES OF THE STATE DURING THE TRANSITION TO A PARLIAMENTARY SYSTEM OF GOVERNMENT

TATUL MANASERYAN¹

¹ Public Administration Academy of the Republic of Armenia

At this stage of public administration reform, it is important to work out a legislative framework for developing an effective management system. In particular, during the transition to the parliamentary system of governance, special attention is paid to legislative support activities, including laws and government decrees, regulations, digitalization of the system of state administration and local self-government. The transition to e-government is designed to improve the efficiency of the public administration system.

Keywords: public administration, social market economy, management system, management effectiveness, consolidation of communities.

Ներկայացվել է խմբագրություն 24.09.2018
Երաշխավորվել է փպագրության 22.01.2019

ՀՏԴ 336.77

ՀՀ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԵՎԻԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ¹

¹Արցախի պետական համալսարան

Հոդվածում ներկայացված են Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հիփոթեքային վարկի շուկաների ձևավորումը և զարգացումը, հիփոթեքային վարկի շուկաների ձևավորված մակարդակները, հիփոթեքային վարկի շուկաների մասանկիցները, ինչպես նաև այն հիմնախնդիրները, որոնք խոչընդոտում են հիփոթեքային վարկի շուկաների կատարյալ զարգացմանը:

Բանալի բառեր. հիփոթեքային վարկ, պետական ֆինանսական աջակցություն, ֆինանսավորված հայտեր, բաց հատյալ ձևաչափ, բաց ընդլայնված միամակարդակ ձևաչափ:

ՀՀ-ում և Արցախի Հանրապետությունում (այսուհետև՝ ԱՀ) պետության առջև դրված գերխնդիրներից մեկը բնակչությանը բնակարանային պայմաններով ապահովելն է: Պետական բյուջեի սուղ պայմաններում անհնար է ամբողջությամբ ֆինանսավորել բնակարանների ձեռքբերումը կամ առանձնատների կառուցումը, ուստի ստիպված ենք փնտրել այլընտրանքային ուղիներ, որոնցից ամենահիմնավորվածը հիփոթեքային վարկերն են:

Հիփոթեքային վարկի շուկաները ՀՀ-ում և ԱՀ-ում ձևավորվել են առավելապես պետական ֆինանսական օժանդակության պայմաններում և ունեն զարգացման միտում:

Հիփոթեքային վարկի շուկաների զարգացման կարևորությունը հիմնավորելու նպատակով ներկայացնենք ՀՀ և ԱՀ բնակչության բնակարանային պայմաններով ապահովվածությունը: 2017թ. հունվարի 1-ի դրությամբ ԱՀ բնակչության թվաքանակը կազմել է 146.1 հազ. մարդ, որից քաղաքային բնակչության մասնաբաժինը կազմել է 56.6%, իսկ գյուղականը՝ 43.4 % [1, էջ 14]: Աղքատ բնակչության մակարդակը կազմել է 23,3 %, իսկ ծայրահեղ աղքատ բնակչության մակարդակը՝ 6,2%: Դիտարկվող ժամանակաշրջանում բնակչության 1%-ը՝ 1461 մարդ, ապրում էր հանրակացարաններում, ժամանակավոր և այլ տեսակի կացարաններում: Բացի այդ, լուրջ հիմնախնդիր է նաև բնակարանների ծանրաբեռնվածությունը: Այսպես՝ 2016թ. մեկսենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունը


կազմել է 1,7 մարդ: Բնակչության միջին ապահովվածությունը, մեկ բնակչի հաշվով, կազմել է 26,1 քառ.մ., ընդ որում՝ քաղաքներում 22,7 քառ.մ., իսկ գյուղերում՝ 30,6 քառ.մ.: ՀՀ-ում բնակչության միջին ապահովվածությունը մեկ բնակչի հաշվով դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 31,4 քառ.մ.: Համեմատության համար նշենք, որ եվրոպական երկրներում մեկ մարդու համար նախատեսված բնակարանի միջին մակերեսը կազմում է 45 քառ.մ., իսկ ՌԴ-ում՝ 17 քառ.մ.: Ըստ ՀՀ վիճակագրության կոմիտեի՝ 16 և բարձր տարիքի անդամների շրջանակներում կատարված ուսումնասիրությունների՝ բնակչության 23,7 %-ի համար առաջնային խնդիր է բնակարանային հիմնահարցը: Վերոնշյալ փաստերը վկայում են, որ հայկական երկու հանրապետությունում բնակչության մի ստվար զանգված կարիք ունի բնակարանային պայմանների բարելավման, և, հիփոթեքային վարկավորման մատչելի առաջարկների դեպքում վերոնշյալ անձինք կարող են լինել պոտենցիալ վարկառուներ:

ՀՀ-ում հիփոթեքային վարկավորումը, որպես ֆինանսական գործիք, սկսել է կիրառվել 2004-ից, երբ ՀՀ կառավարությունն ընդունեց «Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային վարկավորման շուկայի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» որոշումը: Արդեն 2005 թ. ՀՀ բանկերը և վարկային կազմակերպություններն սկսեցին տրամադրել հիփոթեքային վարկեր ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով: Որպես հիփոթեքային վարկերի ֆինանսավորման աղբյուր՝ հանդես են գալիս բանկերի ընդհանուր կապիտալը, հաճախորդների դեպոզիտային հաշիվները, միջբանկային ու պետական վարկերը և այլն: Հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում 2008-ի մայիսի 26-ին ընդունվեցին երկու օրենք՝ «Ապահովված հիփոթեքային պարտատոմսերի մասին» և «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին», որոնց նպատակն էր հիփոթեքային վարկավորման բաց ընդլայնված ձևաչափի ներդրումը:

ՀՀ-ում հիփոթեքային վարկի շուկայի մասնակիցներն են 17 առևտրային բանկեր և մեկ տասնյակից ավել վարկային կազմակերպություններ: Տրամադրվող հիփոթեքային վարկերի ընդհանուր պայմանները հետևյալն են.

1. վարկի նպատակները՝ անշարժ գույքի ձեռքբերում, կառուցում և վերանորոգում.
2. վարկի արժույթը՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո,
3. վարկի ժամկետը՝ վերանորոգման դեպքում՝ մինչև 6 տարի, իսկ գնման կամ կառուցման դեպքում ամենատարածված պայմանները՝ 10-15 տարի:


ՀՀ-ում վարկերի միջին տոկոսադրույքները՝ ըստ ՀՀ դրամի և արտարժույթի, ներկայացված են **Գծապատկերում 1-ում** [2]:



Գծապատկեր 1. ՀՀ-ում ֆիզիկական անձանց տրամադրված հիփոթեքային վարկերի միջին տոկոսադրույքները (%)

Ինչպես պատկերված է **Գծապատկերը 1**-ում, արտարժույթով տրամադրվող հիփոթեքային վարկի տոկոսադրույքն ավելի ցածր է, որը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարկատու կազմակերպությունները իրենց ֆինանսավորման ռեսուրսներն առավելապես ձեռք են բերում արտարժույթով, հետևաբար՝ արտարժույթային ռիսկերից խուսափելու համար նախընտրում են վարկեր տրամադրել նույն արժույթով:


ՀՀ-ում տրամադրված հիփոթեքային վարկերի դինամիկան 2005-2017 թթ. ներկայացված է **Գծապատկեր 2**-ում [3]:



Գծապատկեր 2. ՀՀ-ում 2005-2017 թթ. տրամադրված հիփոթեքային վարկերի գումարներն ըստ արժույթի (մլն ՀՀ դրամ)

Գծապատկեր 2-ից երևում է, որ հիփոթեքային վարկերի ծավալները կտրուկ աճեցին 2012-ից, երբ նորից արձանագրվեց տնտեսական աճ, և ՀՀ տնտեսությունը սկսեց վերականգնվել համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հասցրած վնասներից հետո:


Հիփոթեքային վարկերի տեսակարար կշիռներն արտացոլված են հաջորդ գծապատկերում:



Գծապատկեր 3. 2005-2017թթ. ՀՀ-ում հիփոթեքային վարկեր/ընդամենը վարկեր դինամիկան


ԱՀ-ում հիփոթեքային վարկի շուկան սկսել է ձևավորվել 2008-ից, երբ Կառավարությունն ընդունեց որոշում, որով սահմանեց բանկերի կողմից հիփոթեքային վարկավորմամբ բնակարաններ և բնակելի տներ ձեռք բերելու պետական աջակցության ապահովման կարգը: Վարկեր են տրամադրում ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված 4 առևտրային բանկեր և 2 վարկային կազմակերպություններ: Հիփոթեքային վարկավորման պետական ֆինանսական աջակցության ծրագրի շրջանակներում ֆինանսավորված հայտերի քանակի և գումարի դինամիկան ներկայացված է **Գծապատկեր 4**-ում:

2015 թ. ֆինանսավորված վարկերի քանակների ու գումարների կտրուկ նվազումը պայմանավորված է համագործակցող բանկերի կողմից (մասնավորապես «Արցախբանկ» ՓԲԸ-ի), վարկավորման գործընթացի ժամանակավոր դադարեցմամբ: 2016թ.-ին, կապված ապրիլյան պատերազմի հետ, մի քանի ամիս շարունակ կտրուկ նվազեց բանկերի և առևտրային կազմակերպությունների կողմից ֆինանսավորումը, ինչպես նաև՝ հիմնադրամ դիմող շահառուների թիվը: Սակայն չնայած դրան, տարվա կտրվածքով արձանագրվել է աճ նախորդ տարվա համեմատ. ֆինանսական աջակցություն ստացած շահառուների քանակն աճել է 8%-ով, տրամադրված վարկային միջոցները՝ 26%-ով: Իսկ 2017թ. 71%-ով աճել է հիփոթեքային աջակցության ծրագրից օգտված ընտանիքների քանակը, 18%-ով՝ տրամադրված վարկային միջոցները:



Գծապատկեր 4. ԱՀ-ում 2009-2017 թթ. հիփոթեքային վարկերի ֆինանսավորված հայտերի քանակը և գումարը [4, էջ 17]

2017 թ. ԱՀ-ում հիփոթեքային վարկավորման պորտֆելը կազմել է 1307,9 մլն դրամ, որի 85%-ը ապահովվել է «Արցախբանկ ՓԲԸ»-ի և «Ֆիդես հիփոթեքային ընկերություն ՈՒՎԿ» ՓԲԸ-ի կողմից տրված վարկերի շնորհիվ: Տրամադրված վարկերի գումարը, ըստ ֆինանսավարկային կազմակերպությունների, ներկայացված է **Գծապատկեր 5-ում** [4, էջ 19]:



Գծապատկեր 5. 2017 թ. ԱՀ-ում տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալներն ըստ վարկատուների

Այս հանգամանքը բացատրվում է նրանով, որ առավել բարենպաստ պայմաններ են առաջարկում վերոնշյալ կազմակերպությունները, բացի

այդ, «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ-ն որպես ֆինանսավորման աղբյուր օգտագործում է առավելապես սեփական միջոցները, որոնք ՀՀ դրամով են, քանի որ վերջինիս միակ հիմնադիրը ԱՀ ներդրումային հիմնադրամն է, որը պետական կառույց է:

Ինչպես ցույց են տալիս վերոնշյալ գծապատկերները, հիփոթեքային վարկավորման ծավալները ՀՀ-ում և ԱՀ-ում գնալով աճում են, աճում են նաև հիփոթեքային վարկավորման պետական օժանդակության ծրագրերը: Այնուհանդերձ, կան խորքային հիմնախնդիրներ, որոնք խոչընդոտում են, որ շուկաներն ավելի ընդլայնվեն և հիփոթեքային վարկերը հասանելի լինեն բոլոր խավերին: Այդ հիմնախնդիրներն են՝

1. Բնակչության եկամուտների ցածր մակարդակը: ԱՀ-ում 2017թ. միջին ամսական աշխատավարձը կազմել է 155,4 հազ. դրամ: ՀՀ-ում նույն ցուցանիշը 2017թ. կազմել է 194,3 հազ. դրամ: Ներկայում գրեթե անհնար է հիփոթեքային վարկ վերցնել «ոչ նորակառույց» շենքերից բնակարան ձեռք բերելու համար: Իսկ նորակառույց շենքերում 1 քառ.մ արժեքը միջինում կազմում է 350-420 հազար: Ստացվում է, որ բնակարան ձեռք բերելու համար անհրաժեշտ է մոտ 25-34 մլն դրամ, ինչը բավականին մեծ գումար է միջին խավի բնակչության համար:

2. Հիփոթեքային վարկերի տրամադրման անհամաչափությունը: Արցախում նկատվում է խիստ բևեռացում հիփոթեքային վարկերի տրամադրման տեսանկյունից՝ ըստ վարկառուների բնակության վայրի: Տրամադրվող վարկերի բացարձակ մեծամասնությունը պատկանում է Երևանի և Ստեփանակերտի բնակիչներին:

3. ԱՄՆ դոլարով վարկերի տրամադրման նախապատվությունը: Չնայած, որ պետությունը խթանում է ՀՀ դրամով տրամադրվող հիփոթեքային վարկերի տրամադրմանը, այնուամենայնիվ վարկատու կազմակերպությունները նախընտրում են վարկեր տրամադրել արտարժույթով:

4. Կանխավճարի մեծ չափը: Հիփոթեքային վարկերի ստացման համար վճարվող կանխավճարի միջին չափը կազմում է 30%:

5. Երիտասարդների համար նախատեսված ծրագրերի բացակայությունը ԱՀ-ում: ՀՀ-ում այս ծրագրերը գործում են, ինչը հանգեցրել է ՀՀ-ից երիտասարդների արտահոսքի թվի նվազմանը: Խոսքը վերաբերում է ոչ միայն երիտասարդ ընտանիքներին, այլև երիտասարդ գիտնականներին, բժիշկներին, մասնագետներին և այլն:

6. Հիփոթեքային վարկերի դժվարամատչելիությունը և անշարժ գույքի գների արհեստական բարձրացումները: Այսօր անշարժ գույքի շուկայում բնակարան «արտադրողները» արհեստականորեն և փոխհամաձայնեցված կարգով բարձրացնում են անշարժ գույքի գները: Արդյունքում նորակառույց շենքերում 1 քառ.մետրի արժեքը կազմում է 350-420

հազար ՀՀ դրամ և միջին բնակարան ձեռք բերելու (օրինակ 80 քառ.մ) համար բնակարանի արժեքը կկազմի 32 մլն ՀՀ դրամ, ինչը բավականին մեծ գումար է միջին աշխատավարձ ունեցող քաղաքացիների համար:

7. Պետական ֆինանսական աջակցության սահմանափակությունը: Այն նախատեսված է միայն զոհված ազատամարտիկների ընտանիքի անդամների, փախստականների, բազմազավակ ընտանիքների համար, ինչպես նաև առաջնային շուկայից բնակարաններ ձեռք բերող ընտանիքների համար:

8. Հիփոթեքային վարկավորման գործիքների և ձևաչափերի սահմանափակություն: ՀՀ և ԱՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները տրամադրում են հիմնականում անուփոփոխային և մայր գումարի հավասարաչափ մարումներով, ինչպես նաև հաստատուն և փոփոխուն տոկոսադրույքով հիփոթեքային վարկեր: Իսկ որպես հիփոթեքային վարկավորման ձևաչափ՝ ԱՀ-ում կիրառվում է միայն բաց հատյալ ձևաչափը, իսկ ՀՀ-ում՝ նաև բաց ընդլայնված ձևաչափը:

Հիփոթեքային վարկի շուկաների զարգացման նպատակով անհրաժեշտ է համակարգային լուծումներ՝ վերոնշյալ հիմնախնդիրների լուծման նպատակով: Անհրաժեշտ է միջոցառումներ իրականացնել, որի արդյունքում կշահեն հիփոթեքային վարկի շուկայի բոլոր մասնակիցները՝ պետությունը, բնակչությունը և վարկատու կազմակերպությունները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. «ԼՂՀ Սոցիալական պատկերը և աղքատությունը», Վիճակագրական-վերլուծական զեկույց, ԼՂՀ ազգային վիճակագրական ծառայություն, Ստեփանակերտ 2017թ.,

2. Ազգահին հիփոթեքային ընկերության պաշտոնական տվյալներ, <http://www.nmc.am/>

3. ՀՀ ԿԲ 2005-2015 թթ տարեկան վիճակագրական տեղեկագրեր, ՀՀ ԿԲ 2016-2017 թթ. վիճակագրական տեղեկագրերը (ըստ ամիսների),

4. «Արցախի Ներդրումային հիմնադրամի 2017թ. գործունեության հաշվետվություն», Ստեփանակերտ 2018 թ.

5. ՀՀ վիճակագրության կոմիտե՝ <https://www.armstat.am/am/>,

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ РЫНКОВ ИПОТЕЧНОГО КРЕДИТОВАНИЯ В АРМЕНИИ И В АРЦАХЕ И ПРОБЛЕМЫ, ПРЕПЯТСТВУЮЩИЕ РАЗВИТИЮ РЫНКОВ ИПОТЕЧНОГО КРЕДИТА

АРЕВИК АЛЕКСАНЯН¹

¹ Арцахский государственный университет

В данной статье представлены формирование и развитие рынков ипотечного кредитования в Армении и в Арцахе, уровень сформированных рынков ипотечного кредитования, участники рынков ипотечного кредита, а также те проблемы, которые препятствуют развитию рынков ипотечного кредитования.

Ключевые слова: ипотечный кредит, государственная финансовая поддержка, финансируемые заявки, открыто усеченная модель, открыто одноуровневая модель.

COMPARATIVE ANALYSIS OF MORTGAGE LENDING MARKETS IN ARMENIA AND ARTSAKH AND PROBLEMS IMPEDING THE DEVELOPMENT OF MORTGAGE LOAN MARKETS

AREVIK ALEKSANYAN¹

¹ Artsakh State University

This article presents the emergence and development of mortgage lending markets in Armenia and Artsakh, the fixed level of mortgage loans markets, participants in the mortgage loan markets, as well as problems that hinder the development of mortgage lending markets.

Keywords: mortgage loan, state financial support, financed applications, openly truncated model, open single-level model.

Ներկայացվել է խմբագրություն 14.12.2018
Երաշխավորվել է տպագրության 07.05.2019

ՀՏԴ 338.2

ՀԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎՐԱ
ԱՐՏԱԿ ՇԱԲՈՅԱՆ¹, ԱՐՄԱՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ²

¹ Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

² ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով

Հոդվածում ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է հարկային համակարգի ազդեցությունը Հայաստանում մի շարք սպիրտային խմիչքների շուկաներում մրցակցության միջավայրի ձևավորման վրա: Դիտարկված ընկերությունների ցուցանիշներով ներկայացվել են այն խնդիրները, որի արդյունքում առաջանում են անհավասար մրցակցային պայմաններ միևնույն գործունեությամբ զբաղվող ընկերությունների համար: Ուսումնասիրության հիման վրա կատարված են առաջարկություններ հարկման կառուցակարգերի կատարելագործման ուղղությամբ:

Բանալի բառեր. մրցակցություն, սպիրտային խմիչքների շուկա, հարկում, հարկման կառուցակարգեր, անհավասար հարկում:

Մրցակցային միջավայրի ձևավորումը հանդիսանում է կարևոր նախադրյալ ապրանքային շուկաների զարգացման, ապրանքների գների նվազման և իրացվող տեսականու որակի բարձրացման գործում [1, c. 31]: Առհասարակ՝ դեռևս XIII դարից, Ադամ Սմիթի կողմից շրջանառության մեջ դրված ազատ շուկայական տնտեսության ձևաչափը դեմ էր պետական կարգավորումների անհրաժեշտությանը և տնտեսությունում պետության խնդիրն էր համարում բիզնեսի գործունեության համար համապատասխան խոչընդոտների վերացումը [2, p. 2]: Այս կապակցությամբ պետք է նշել, որ հարկային համակարգից է կախված նաև տնտեսական և սոցիալական բարենպաստ միջավայրի ձևավորումը, որն իր հերթին հանգեցնում է ներդրումների աճին և հնարավորություն ստեղծում նորարարության համար [3, p. 168]: Ընդ որում՝ էական նշանակություն ունի նաև այն հարկային համակարգը, որի պայմաններում գործելու հավասար հնարավորություն են ստանում շուկայի բոլոր մասնակիցները: Ըստ էության՝ թերի կամ ոչ արդյունավետ հարկային համակարգը կամ հարկային վարչարարությունը կարող են ոչ միայն նպաստել, այլ նաև հանգեցնել շուկաներում կենտրոնացվածության մեծացմանը: Ընդ որում՝ առանձնակի կարևորվում են լայն սպառման ապրանքների գծով կատարվող ուսումնասիրությունները, որոնց թվին են դասվում սպիրտային խմիչքները: Սույն

վերլուծության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ակցիզային հարկի հաշվարկման և վճարման գործընթացում առկա օրենսդրական բացերի պայմաններում ոլորտում ներգրավված որոշ ընկերությունների գործողություններ կարող են հանգեցնել անհավասար մրցակցային միջավայրի ստեղծմանը: Տվյալ դեպքում կատարված ուսումնասիրության հիմնական նպատակն է եղել բացահայտել որոշ ապրանքային շուկաներում հարկման գործընթացում մրցակցությանը վերաբերող հնարավոր ռիսկերը և դրանց նվազեցման ուղղությամբ մշակել համապատասխան առաջարկություններ:

Վերլուծության խնդիրներից ելնելով՝ ուսումնասիրվել են սպիրտային խմիչքներ ներմուծող և արտադրող ընկերությունների արտադրության, ներմուծման և իրացման մանրամասները: Վերլուծությունը կատարվել է հիմնականում շուկայի մասնակիցների և պետական մարմինների վիճակագրական տվյալների հիման վրա:

Ուսումնասիրության շրջանակներում որպես խնդիր է դիտարկվել ակցիզային հարկի հաշվարկման բազաների տարբերությամբ պայմանավորված ներմուծող և արտադրող ընկերությունների միջև անհավասար մրցակցային միջավայրի գնահատումը, որի հետևանքով ստեղծվում են անհավասար մրցակցային պայմաններ:

Մասնավորապես խնդիրը վերաբերում է Հարկային օրենսգրքին, որով ներմուծվող և արտադրվող ապրանքների հարկման բազաների տարբերությունը կարող է հանգեցնել անհավասար մրցակցային պայմանների [4]: Ըստ այդմ՝ ներմուծվող ապրանքների համար, որպես հարկման բազա, ընդունվում է ապրանքների մաքսային արժեքը, իսկ տեղական արտադրության դեպքում հարկումը տեղի է ունենում բացթողման գնից: Պետք է նկատել, որ ի տարբերություն մաքսային արժեքի, որը ձևավորվում է բացառապես կատարված ծախսերի արդյունքում, բացթողման գինը ներառում է նաև ընկերությունների շահույթը: Այսինքն՝ մի դեպքում հարկումը կատարվում է ինքնարժեքի հիման վրա, մեկ այլ դեպքում հարկվում է նաև ընկերության շահույթը: Արդյունքում ներմուծող ընկերությունները ստանում են էական առավելություն տեղական արտադրողների նկատմամբ:

Այսպես՝ օղու շրջանառության բնագավառում դիտարկվել են հինգ՝ այդ թվում՝ «N 1C», «N 2C», «N 3C», «N 4C» և «N 5C» ընկերությունները, որոնց շրջանում ակցիզային հարկի պակաս վճարվող գումարը դիտարկվող ապրանքատեսակների գծով տատանվում է 11-ից մինչև 120 տոկոսի սահմաններում: Մասնավորապես «N 1C» ընկերության կողմից ներմուծվող օղու գինը կազմում է 3 175 դրամ, որի նկատմամբ ակցիզային հարկի հաշվարկման պարագայում պետական բյուջե վճարվող գումարը կազմում է 1 274 դրամ: Բայց քանի որ ներմուծվող ապրանքների համար հարկումը կատարվում է մաքսային արժեքի հիման վրա, պետական բյուջե վճարվող

գումարը կազմում է ընդամենը 628 դրամ¹: Արդյունքում դիտարկվող միավոր արտադրանքի գծով գրեթե կիսով չափ թերի է վճարվում ակցիզային հարկի գումարը՝ արժեքայնորեն կազմելով 646 դրամ: Ներկայացված խնդիրը դիտարկվող ապրանքատեսակների գծով ակցիզային հարկի մասով հանգեցնում է պետական բյուջե կատարվող վճարների թերհավաքագրմանը «N 2C» ընկերության դեպքում 33 տոկոսի չափով, «N 3C» ընկերության դեպքում՝ 13 տոկոսի չափով, «N 4C» ընկերության դեպքում՝ 120 տոկոսի չափով, «N 5C» ընկերության դեպքում 11 տոկոսի չափով (տե՛ս **Աղյուսակ 1**):

Աղյուսակ 1

Օղու շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից վճարվող ակցիզային հարկի վերաբերյալ²

N	Ընկերության անվանում	«N 1C»	«N 2C»	«N 3C»	«N 4C»	«N 5C»	
1	Ապրանքի ծավալ	0.7լ	0.7լ	0.7լ	0.7լ	0.7լ	
2	Չափման միավոր	դրամ					
3	Միավորի գին (առանց ԱԱՀ)	3,175	1,279	1,150	2,730	3,380	
4	Ըստ ներմուծման	Ակց հարկ՝ ըստ հաստատագրված դրույքաչափի (500*0.7)	350	350	350	350	350
5	տվյալների	Ակց. հարկ՝ ըստ արժեքային դրույքաչափի (1 256*0.5) ³	628	339	353	506	1,020
6	Ակց. հարկ՝ ըստ ընկերության իրացման գնի՝ արժեքային դրույքաչափով ((3 175-628)*0.5)	1,274	465	399	1,112	1,127	
7	Պակաս վճարվող ակց. հարկ՝ արժեքայնորեն (1 274-628)	646	115	46	605	107	
8	Պակաս վճարվող ակց հարկ՝ տոկոսով (1 274/628-1)	103%	33%	13%	120%	11%	

¹ Տվյալ պարագայում հաշվարկներում դիտարկված է ուսումնասիրվող ժամանակահատվածում ընկերության կողմից ներմուծված խմբաքանակի(ների) համար մաքսային սահմանին վճարված ակցիզային հարկի գումարը:

² Իրացման գնի հիման վրա ձևավորվող ակցիզային հարկի հաշվարկներում (6-րդ տող) միայն «N 5C» ընկերության դեպքում է, որ իրացման գնից նվազեցված է նաև մաքսային սահմանին վճարված մաքսատուրքը, քանի որ մնացյալ դիտարկվող ընկերությունների ներմուծումները կատարվում են ԱՊՀ երկրներից, որոնց նկատմամբ սահմանված է մաքսատուրքի գծով արտոնություն: Վերը նշվածը վերաբերում է նաև N 2 աղյուսակում կատարված հաշվարկներին:

³ Հաշվարկներում 1 256 դրամը հանդիսանում է միավոր ապրանքի մաքսային արժեքը:

Դիտարկված հաջորդ ապրանքախումբը ներմուծված գարեջուրն է, որի շրջանակներում ներկայացված են ներմուծմամբ զբաղվող երկու խոշոր ընկերությունները: Համաձայն կատարված հաշվարկների՝ «N 2C» ընկերության կողմից գարեջրի ներմուծման ժամանակ վճարվող ակցիզային հարկի գումարը կազմում է 53 դրամ: Պետք է նկատել, որ այս դեպքում կիրառվում է հարկի հաստատագրված դրույքաչափը, որի պարագայում հարկի գումարը գերազանցում է արժեքային դրույքաչափով հաշվարկվելիք հարկի մեծությանը 8 դրամով: Մինչդեռ այն դեպքում, եթե հարկումը կատարվեր ոչ թե մաքսային արժեքից, այլ ապրանքի իրացման գնից, ապա կիրառելի կլինեին հարկի արժեքային դրույքաչափը, իսկ հարկի գումարը կկազմեր 70 դրամ: Արդյունքում ակցիզային հարկի թերի վճարման չափը դիտարկվող ապրանքատեսակի գծով կազմում է 33 տոկոս: «N 6C» ընկերության կողմից ներմուծվող գարեջրի դեպքում ևս ակցիզային հարկը հաշվարկվում է հաստատագրված դրույքաչափով, որը կազմում է 53 դրամ: Մինչդեռ 279 դրամ իրացման գնի պայմաններում ակցիզային հարկի գումարն աճում է 17 դրամով, որն արժեքայնորեն կազմում է 32 տոկոս (տե՛ս **Աղյուսակ 2**):

Աղյուսակ 2

Գարեջրի շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող ընկերությունների կողմից վճարվող ակցիզային հարկի վերաբերյալ

N	Ընկերության անվանում	«N 2C»	«N 6C»	
1	Ապրանքի ծավալ	0.5 լ	0,5 լ	
2	Չափման միավոր	դրամ		
3	Միավորի գին (առանց ԱԱՀ)	285	279	
4	Ըստ ներմուծման տվյալների	Ակցիզային հարկ՝ ըստ հաստատագրված դրույքաչափի (105*0.5)	53	53
5		Ակցիզային հարկ՝ ըստ արժեքային դրույքաչափի (149 *0.3) ¹	45	49
6	Ակցիզային հարկ՝ ըստ ընկերության իրացման գնի՝ արժեքային դրույքաչափով ((285-53)*0.3)	70	69	
7	Պակաս վճարվող ակց. հարկն արժեքայնորեն (70-53)	17	17	
8	Պակաս վճարվող ակցիզային հարկ՝ տոկոսով (70/53-1)	33%	32%	

¹ Տվյալ դեպքում 149 դրամը հանդիսանում է միավոր ապրանքի մաքսային արժեքը:

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկվել է նաև գինիների ներմուծման և իրացման բնագավառը: Մասնավորապես «N 4C» ընկերության կողմից ներմուծվող երկու տեսակի գինիների գծով կատարված հաշվարկների համաձայն ակցիզային հարկը վճարվում է հաստատագրված դրույքաչափից ելնելով, որը կազմում է 75 դրամ: Մինչդեռ պետական բյուջե պակաս վճարվող հարկի գումարն ավելի քան կրկնապատիկի չափով գերազանցում է փաստացի վճարվող մեծությունը՝ տատանվելով 124-ից 154 տոկոսի սահմաններում (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Գինիների շրջանառության բնագավառում գործունեություն իրականացնող ընկերության կողմից վճարվող ակցիզային հարկի վերաբերյալ

N	Ընկերության անվանում		«N 4C»	
			Գինի 0.75լ	Գինի 0.75լ
1	Ապրանքի ծավալ		Գինի 0.75լ	Գինի 0.75լ
2	Չափման միավոր		դրամ	
3	Միավորի գին (առանց ԱԱՀ)		2053	1833
4	Ըստ ներմուծման տվյալների	Ակց. հարկ՝ ըստ հաստատագրված դրույքաչափի (100*0.75)	75	75
5		Ակց. հարկ՝ ըստ արժեքային դրույքաչափի (607*0.1) ¹	61	57
6	Ակց. հարկ՝ ըստ ընկերության իրացման գնի՝ արժեքային դրույքաչափով ((2 053-75-75)*0.1) ²		190	168
7	Պակաս վճարվող ակց. հարկ՝ արժեքայնորեն (190-75)		115	93
8	Պակաս վճարվող ակց. հարկ՝ տոկոսով (190/75-1)		154%	124%

¹ Տվյալ դեպքում 607 դրամը հանդիսանում է միավոր ապրանքի մաքսային արժեքը:

² Հաշվարկներում իրացման գինը նվազեցված է 75 դրամի չափով՝ վճարված ակցիզային հարկի մասով և 75 դրամի չափով՝ վճարված մաքսատուրքի մասով:

Եզրակացություն

Ուսումնասիրության շրջանակներում դիտարկված խնդիրը վերաբերում է ներմուծման և տեղական արտադրության միջև հավասար մրցակցային պայմանների ստեղծմանը՝ ներմուծվող ու արտադրվող ապրանքների հարկման բազաները համադրելի դարձնելու միջոցով: Այս առումով դիտարկվել են օդու, գարեջրի և գինիների շրջանառության բնագավառները, որոնցից օդու շրջանառության բնագավառում դիտարկվող ապրանքատեսակների մասով ակցիզային հարկի գծով հանգեցնում է պետական բյուջե կատարվող վճարների թերհավաքմանը «N 1C» ընկերությունում 103 տոկոսի չափով, «N 2C» ընկերության դեպքում՝ 33 տոկոսի չափով, «N 3C» ընկերության դեպքում՝ 13 տոկոսի չափով, «N 4C» ընկերության դեպքում՝ 120 տոկոսի չափով, «N 5C» ընկերության դեպքում՝ 11 տոկոսի չափով, գարեջրի շրջանառության բնագավառում «N 2C» ընկերության դեպքում՝ 33 տոկոսի չափով, «N 6C» ընկերության դեպքում՝ 32 տոկոսի չափով և գինիների շրջանառության բնագավառում «N 4C» ընկերության դեպքում՝ 124-ից 154 տոկոսի սահմաններում: Ըստ էության՝ գործող իրավական կարգավորումների արդյունքում ստեղծվում է մի իրավիճակ, որի պարագայում ներմուծող ընկերությունները հայտնվում են նպաստավոր պայմաններում տեղական արտադրողների համամատ: Անհավասար հարկային պարտավորություններ ունենալու արդյունքում տեղական արտադրողներն ունեն ավելի մեծ հարկային պարտավորություններ, ինչը նրանց թույլ չի տալիս գնային առումով մրցակցել համադրելի ապրանքներ ներմուծող ընկերությունների հետ: Վերջնարդյունքում՝ նշված անհավասար հարկումը հանգեցնում է շուկայում տեղական արտադրողների դիրքերի թուլացմանը և ստեղծում նախադրյալներ կենտրոնացվածության աստիճանի մեծացման համար:

Նշված խնդրի կապակցությամբ կարծում ենք, որ ինչպես տեղական արտադրության պարագայում, ներմուծման դեպքում ևս հարկումը պետք է կատարվի բացթողման գնից ելնելով: Այսինքն՝ ի լրումն ներմուծման ժամանակ արդեն իսկ վճարված ակցիզային հարկի՝ ներմուծող ընկերությունները դիտարկվող հարկատեսակի գծով պետական բյուջե վճարում պետք է կատարեն իրացման փուլում ևս՝ ելնելով իրացման գներից:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Антимонопольное право Европейского союза, Тихамир Тот, Будапешт 2014,
2. EU Competition Law, Alison Jones and Brenda Sufrin, Oxword university press, Fifth edition,
3. Competitiveness and Private Sector Development, Competitiveness in South East Europe, A Policy Outlook 2018, OECD,
4. ՀՀ հարկային օրենսգիրք, <https://www.arlis.am>

ВЛИЯНИЕ МЕТОДОЛОГИЧЕСКИХ ОСОБЕННОСТИ НАЛОГООБЛОЖЕНИЯ НА УСЛОВИЯ КОНКУРЕНЦИИ НА НЕКОТОРЫХ ТОВАРНЫХ РЫНКАХ

АРТАК ШАБОЯН¹, АРМАН МАНАСЕРЯН²

¹ *Кандидат экономических наук, доцент*

² *Государственная комиссия по защите экономической конкуренции Республики Армения*

В статье, в рамках исследований было рассмотрено влияние налоговой системы в Армении на формирование конкурентной среды ряда рынков спиртных напитков. В этом смысле важна налоговая система, в которой действуют участники рынка. На основе показателей изученных компаний были выявлены проблемы, которые приводят к неравным условиям конкуренции для компаний, осуществляющих деятельность на рынке. На основе исследования были сделаны предложения по совершенствованию механизмов налогообложения.

Ключевые слова. конкуренция, рынок алкогольных напитков, налогообложения, механизмы налогообложения, неравномерное налогообложение.

THE IMPACT OF METHODOLOGICAL FEATURES OF TAXATION ON THE CONDITIONS OF COMPETITION IN SEVERAL COMMODITY MARKETS

ARAK SHABOYAN¹, ARMAN MANASERYAN²

¹ *PhD in Economics, assistant professor*

² *The State Commission for the Protection of Economic Competition of the Republic of Armenia*

Within the framework of study, this article considers the impact of tax system on the formation of competitive environment in the markets of several alcoholic beverages in Armenia. On the basis of the indicators of the companies studied, problems were identified that lead to unequal conditions of competition for the companies with same activities. Study-based suggestions were made to improve the mechanisms of taxation.

Keywords. competition, market of alcoholic beverages, taxation, taxation mechanisms, unequal taxation.

*Ներկայացվել է խմբագրություն 26.12.2018
Երաշխավորվել է տպագրության 20.02.2019*

ՀՏԴ 339.9

**ԱՇԽԱՏՈՒԺԻ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐՊԵՏԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԻՍԱԿ ԱՎԱԳՅԱՆ¹**

¹ Եվրոպական համալսարան

Անկախությունից ի վեր Հայաստանի արտաքին միգրացիոն հոսքերի զգալի մասը բաժին է ընկնում Ռուսաստանին: Հաշվի առնելով, որ Ռուսաստանը Եվրասիական տնտեսական միության (այսուհետև՝ ԵԱՏՄ) անդամ է, կարևորվում է այդ խմբավորման շրջանակներում աշխատուժի միջազգային միգրացիայի կարգավորման կառուցակարգերի արդյունավետության գնահատումը: Հոդվածում ներկայացված են աշխատանքային միգրացիայի ոլորտում ԵԱՏՄ տնտեսական ինտեգրման հիմնական ուղղությունները, ԵԱՏՄ տարածքում միության անդամ պետությունների քաղաքացիների և նրանց ընտանիքի անդամների ազատ տեղաշարժի վերազգային կարգավորման հիմնական առանձնահատկությունները, աշխատանքային իմիգրանտների ներգրավման պայմանները, ԵԱՏՄ-ում աշխատանքի միասնական շուկայի՝ աշխատուժի միգրացիայի կարգավորման ոլորտում ընձեռած հնարավորությունները:

Բանալի բառեր. միգրացիոն քաղաքականություն, ինտեգրման գործընթաց, բնակչության տեղաշարժ, աշխատանքի թույլտվություն, արտոնագիր, միգրանտ, սոցիալական երաշխիք, գործարար միգրացիա:

Ինտեգրացման գործընթացների շրջանակներում աշխատուժի միջազգային միգրացիայի կարգավորումն իրականացվում է վերազգային, ազգային և միջպետական մակարդակներում, որոնց շարքում կարևորվում են հատկապես վերազգային կարգավորման գործընթացները: Աշխատանքային միգրացիայի ոլորտում ԵԱՏՄ տարածքում անդամ պետությունների քաղաքացիների և նրանց ընտանիքի անդամների ազատ տեղաշարժի վերազգային կարգավորումն իրականացվում է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրով, որի 26-րդ բաժնով սահմանված են հետևյալ հիմնական դրույթները [1].

- ԵԱՏՄ որևէ անդամ պետության քաղաքացիները մյուս անդամ պետության տարածք մուտք գործելիս օգտագործում են միգրացիոն քարտեր (թերթիկներ), բացառությամբ, եթե քաղաքացիները մյուս անդամ պետության տարածք մուտք են գործում սահմանային վերահսկողության մարմնի կողմից պետական սահմանը հատելու վերաբերյալ նշում կատարելու իրավունք սովորված փաստաթղթերից որևէ մեկով: Այդ դեպքում

նրանց գտնվելու ժամկետը չի կարող գերազանցել մուտք գործելու ամսաթվից հաշվարկված 30 օրը,

- ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացին կարող է մեկ այլ անդամ պետության տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնել առանց աշխատանքի թույլտվության՝ աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա,

- ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացիները, որոնք աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ժամանում են ԵԱՏՄ մյուս անդամ պետություն, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամները, կարող են աշխատանքի տեղավորման պետության տարածքում մուտք գործելու ամսաթվից հաշվարկված 30 օր մնալ առանց գրանցման, իսկ 30 օրից ավելի ժամկետով մնալու դեպքում պետք է գրանցվեն մուտքի պետության օրենսդրությանը համապատասխան,

- ԵԱՏՄ անդամ բոլոր պետությունների կողմից ճանաչվում են անդամ պետությունների կրթական կազմակերպությունների կողմից տրված կրթության մասին փաստաթղթերը՝ առանց վերջիններիս ճանաչման ընթացակարգերի անցկացման: Բացառություն են կազմում մանկավարժական, իրավաբանական, բժշկական կամ դեղագործական գործունեության տեսակները, որոնց դեպքում քաղաքացիներն անցնում են աշխատանքի տեղավորման պետության օրենսդրությամբ սահմանված կրթության մասին փաստաթղթերի ճանաչման ընթացակարգը,

- ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից ճանաչվում են այլ անդամ պետությունների կողմից տրված գիտական աստիճանների և գիտական կոչումների մասին փաստաթղթերը,

- ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում աշխատանքային գործունեության ընթացքում աշխատանքային ստաժը հաշվարկվում է ընդհանուր աշխատանքային (ապահովագրական) ստաժում՝ սոցիալական ապահովության (սոցիալական ապահովագրության) նպատակներով:

Ըստ էության՝ ԵԱՏՄ տարածքում կառույցի անդամ երկրների քաղաքացիներին աշխատելու նպատակով տրվող արտոնությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում աշխատանքային միգրացիոն հոսքերի աճի համար: Անկասկած, ԵԱՏՄ ձևավորումից հետո և նաև ապագայում կմեծանա այդ խմբավորման անդամ երկրներից հատկապես դեպի Ռուսաստան մեկնող միգրանտների քանակը, ի տարբերություն ԵԱՏՄ անդամ չհանդիսացող ԱՊՀ երկրների քաղաքացիների, որոնց համար պահպանվել են Ռուսաստանի տարածքում աշխատանքային գործունեություն ծավալելու հետ կապված սահմանափակումները: ԵԱՏՄ և ԱՊՀ երկրների՝ Ռուսաստանում մնալու և աշխատելու պայմանների և պահանջների միջև առկա տարբերությունները ներկայացված են **Աղյուսակ 1**-ում:

Աղյուսակ 1

**ԱՊՀ և ԵԱՏՄ երկրների աշխատանքային իմիգրանտների՝
Ռուսաստանում մնալու և աշխատանքային գործունեություն
ծավալելու համեմատական վերլուծություն [2]**

Պայմաններ, պահանջներ	Աշխատանքային միգրանտներ ԱՊՀ երկրներից	Աշխատանքային միգրանտներ ԵԱՏՄ երկրներից
Մուտք	Առանց վիզայի	Առանց վիզայի
Աշխատանքի թույլտվություն	Պահանջվում է (արտոնագիր)	Չի պահանջվում
Քննությունների հանձնում (ռուսաց լեզու, պատմություն և օրենսդրություն)	Պահանջվում է	Չի պահանջվում
Միգրացիոն ծառայություններում հաշվառվելու ժամկետ	Մուտք գործելուց հետո 7 օր	Մուտք գործելուց հետո 30 օր
Ժամանակավոր մնալու թույլատրելի ժամկետ	Արտոնագրի գործողության ժամկետին համապատասխան	Աշխատանքային կամ քաղաքացիաիրավական պայմանագրի ժամկետին համապատասխան
Դիպլոմների և որակավորման հավաստագրերի հաստատում (ճանաչում)	Պահանջվում է	Չի պահանջվում
Եկամտահարկ	Աշխատանքային գործունեության 1-ին 6 ամսվա ընթացքում՝ 30%, հետագայում՝ 13%	13%՝ սկսած աշխատանքային գործունեության 1-ին օրվանից
Սոցիալական երաշխիքներ	Համաձայն աշխատանքային պայմանագրի պայմանների	Ռուսաստանի քաղաքացիներին համանման
Բժշկական ապահովում	Կամավոր բժշկական ապահովագրության պարտադիր ձեռքբերում	Պարտադիր բժշկական ապահովագրության անվճար ձևակերպում

Ընդհանուր առմամբ, ԵԱՏՄ շրջանակներում աշխատանքի միասնական շուկայի ստեղծումն աշխատուժի միգրացիայի կարգավորման առումով առաջ է բերում մի շարք հնարավորություններ: Դրանք են.

- կախված անդամ պետությունների տնտեսությունների պահանջներից՝ առկա ընդհանուր աշխատանքային պաշարների առավել ռացիոնալ բաշխում,
- ԵԱՏՄ մասնակից երկրների քաղաքացիների համար զբաղվածության և սոցիալական շարժունության առավել լայն հնարավորությունների ընձեռում,
- Ժամանման երկրում սոցիալական ապահովության համակարգի նկատմամբ աշխատանքային միգրանտների հասանելիության ապահովում,

• անօրինական միգրացիայի և աշխատանքային միգրանտների չգրանցված զբաղվածության մակարդակի նվազեցման համար նախադրյալների ստեղծում,

• միգրանտների մասնագիտական ներուժի կիրառում,

• ԵԱՏՄ անդամ երկրներում աշխատանքի իրավունք ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակական կրճատման շնորհիվ կոռուպցիոն բաղադրիչի նվազում,

• ընդունող երկրների աշխատաշուկաներում աշխատանքի տեղավորվելու հարցում քաղաքացիների և միգրանտների միջև խտրականության վերացում [3, c. 34]:

Վերազգային մակարդակում ԵԱՏՄ միգրացիոն քաղաքականությունն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) աշխատանքային միգրացիայի և սոցիալական պաշտպանության դեպարտամենտի կողմից, որը, ղեկավարվելով Տնտեսության և ֆինանսական քաղաքականության գծով Հանձնաժողովի վարչանու (կոլեգիայի) անդամի կողմից, գործունեություն է ծավալում աշխատանքային միգրացիայի և միգրացիոն քաղաքականության, ԵԱՏՄ անդամ պետությունների աշխատավորների սոցիալական, կենսաթոշակային ու բժշկական ապահովության, կրթության և մասնագիտական գործունեության, ինչպես նաև ԵԱՏՄ շրջանակներում միջազգային պայմանագրերով սահմանված այլ ոլորտներում:

Աշխատանքային միգրացիայի ոլորտում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիային առընթեր գործում են Միգրացիոն քաղաքականության հարցով և ԵԱՏՄ անդամ պետությունների աշխատավորների սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքների պահպանման, բժշկական օգնության ցուցաբերման և մասնագիտական գործունեության հարցերով խորհրդատվական կոմիտեները, որոնց հիմնական գործառույթներն են միգրացիոն քաղաքականության, ինչպես նաև անդամ պետությունների աշխատավորների սոցիալական ապահովության, կենսաթոշակային իրավունքների պահպանման, բժշկական օգնության ցուցաբերման և մասնագիտական գործունեության ոլորտներում ԵԱՏՄ իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի և ակտերի, ինչպես նաև մյուս անդամ պետությունների օրենսդրության վերլուծությունը, անդամ պետությունների օրենսդրության ներդաշնակեցումը, արդյունավետ կառուցակարգերի ձևավորումը և անդամ պետությունների կողմից համաձայնեցված քաղաքականության անցկացման սկզբունքների մշակումը, անդամ պետությունների լիազորված մարմինների, միջազգային կազմակերպությունների և Հանձնաժողովի միջև համագործակցության կազմակերպումը, ԵԱՏՄ իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի և ակտերի դրույթների կատարման մշտադիտարկման անցկացման և հսկողության իրականացման կարգի կատարելագործումը [4, cc. 2-3], [5, c. 2]:

Այսպիսով, կարելի է նշել, որ վերազգային մակարդակում ԵԱՏՄ աշխատանքային միգրացիայի կարգավորումն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից, որի հիմնական կառուցակարգը հանդիսանում է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիրը:

Հաշվի առնելով ԵԱՏՄ շրջանակներում աշխատանքային միգրացիայի ոլորտում առկա խնդիրների լուծման և աշխատանքի միասնական շուկայի գործունեության արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը՝ Հանձնաժողովի կողմից սահմանվել են ԵԱՏՄ հետագա ինտեգրման հետևյալ հիմնական ուղղությունները [6, c. 42].

- ԵԱՏՄ շրջանակներում մարդկային ռեսուրսի ազատ ճանապարհին առկա արգելքների բացահայտում և դրանց վերացմանն ուղղված առաջարկությունների մշակում,

- աշխատանքային միգրացիայի ոլորտում անդամ պետությունների օրենսդրությունների կատարելագործման, ներդաշնակեցման և (կամ) նույնականացման գծով առաջարկությունների մշակում,

- որակավորման ճանաչում, որակավորման ստանդարտների մշակում,

- անդամ պետությունների աշխատավորների մասնագիտական կրթության և որակավորման բարձրացման վերաբերյալ ընդհանուր մոտեցումների մշակում,

- միգրանտների ձեռնարկատիրական գործունեություն, գործարար միգրացիա, միգրացիա և առևտուր,

- աջակցություն անդամ պետությունների քաղաքացիների կազմակերպված հավաքագրման իրականացմանը՝ ԵԱՏՄ տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով,

- ծագման երկիր վերադարձող աշխատանքային միգրանտներին աջակցության ուղղությամբ միջոցառումների մշակում,

- անօրինական աշխատանքային միգրացիայի դեմ պայքարի գծով համաձայնեցված միջոցառումների մշակում,

- ԵԱՏՄ անդամ պետությունների տարածքում երրորդ երկրների քաղաքացիների համար ընդհանուր չափորոշիչների մշակում,

- երրորդ երկրների քաղաքացիների ռեադմիսիայի (հետընդունման) հարցերի գծով ընդհանուր մոտեցումների մշակում:

ԵԱՏՄ շրջանակներում աշխատուժի միգրացիայի վերաբերյալ կարգավորման կառուցակարգերի շարքում առանձնահատուկ նշանակություն ունի երրորդ երկրներից անօրինական աշխատանքային միգրացիայի հակազդեցության ոլորտում կողմերի համագործակցությունը, որի մասին համաձայնագիր կնքվել է դեռևս 2010թ. նոյեմբերի 19-ին Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի կողմից և որին հետագայում «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրին միանալու կապակցությամբ միացել են նաև Հայաստանն ու Ղրղըզստանը: Ըստ այդ

համաձայնագրի՝ կառույցի անդամ երկրները նշված խնդրի շուրջ համագործակցում են այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են.

- անօրինական աշխատանքային միգրացիայի հակազդեցության ոլորտում համաձայնեցված քաղաքականության մշակումը և իրականացումը,
- անօրինական կարգավիճակով միգրանտ աշխատողների, անօրինական աշխատանքային միգրացիա կազմակերպող և (կամ) դրան նպաստող ֆիզիկական և իրավաբանական անձանց նկատմամբ համաձայնեցված միջոցների իրականացումը [7]:

Այնուամենայնիվ, անօրինական աշատանքային միգրացիային հակազդելու համար իրականացվող համագործակցության դեռևս ոչ բարձր արդյունավետությունը պայմանավորված է ԵԱՏՄ որոշ երկրներում ապօրինի միգրանտների մեծ քանակով: Օրինակ, Ռուսաստանում տարեկան 3-5 մլն օտարերկրյա քաղաքացի աշխատանքային գործունեություն է իրականացնում առանց թույլտվության [8], ինչը մեծ դժվարություն է առաջացնում վերջիններիս բացահայտման, վերահսկման և նրանց նկատմամբ օրենսդրական միջոցառումներ իրականացնելու առումով: Բացի այդ, ապօրինի միգրացիայի դեմ պայքարը պահանջում է բավականին մեծ ֆինանսական ծախսեր. այսպես, ըստ հաշվարկների, Ռուսաստանում մեկ անօրինական միգրանտի հարկադիր արտաքսման համար անհրաժեշտ է մոտ 30-40 հազ. ռուբլի, ավելին, այդ երկրի բյուջեից վերջիններիս պահման եւ արտաքսման համար տարեկան կտրվածքով հատկացնում է մոտ 3 մլրդ ռուբլի գումար [9, c. 130]: Այս առումով, կարծում ենք, որ նշված խնդրի կարգավորման համար ԵԱՏՄ երկրների կողմից անհրաժեշտ է իրականացնել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են.

- միգրացիոն օրենսդրության փոխհամաձայնեցում և միգրացիոն քաղաքականության համակարգում,
- անօրինական միգրացիայի հակազդեցության հարցերով սահմանապահ և այլ իրավասու մարմինների համագործակցության վերաբերյալ համաձայնագրի կնքում,
- անօրինական աշխատանքային միգրացիայի դեմ պայքարի վերաբերյալ մարմնի ձևավորում և վերջինիս օժտում համապատասխան լիազորություններով և գործառույթներով,
- հատկապես աշխատուժի դոնոր երկրների հետ երկկողմ և բազմակողմ միգրացիոն համագործակցության խորացում:

Այնուամենայնիվ, ԵԱՏՄ-ում աշխատանքային միգրացիայի կարգավորման արդյունավետության բարձրացման ուղիներից պետք է լինի առավելապես որակյալ աշխատուժի միջպետական տեղաշարժի խթանումը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ «ԵԱՏՄ-ում աշխատանքի կայուն միասնական շուկայի ձևավորումը հնարավոր է շնորհիվ աշխատուժի ոչ թե քանակական, այլ որակական աճով և մասնագիտական որա-

կավորման մակարդակի բարձրացմամբ, ինչպես նաև միգրացիոն հոսքերի թափանցիկության ապահովմամբ, քանի որ մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը ոչ միայն կարող է սահմանափակել արտաքին աշխատաշուկայում աշխատանքային միգրանտների հնարավորությունները, այլև սրել վերջիններիս սոցիալ-տնտեսական խնդիրները: Այս կապակցությամբ կարևորվում է ԵԱՏՄ-ում նորարարական ենթակառուցվածքների զարգացման խթանումն ու միասնական կրթական տարածքի ստեղծումը, ինչն էլ կհանգեցնի բարձր որակավորում ունեցող մասնագետների աշխատանքի միասնական շուկայի ձևավորմանը» [10, շ. 9]:

Վերլուծելով աշխատանքային միգրացիայի ոլորտում ԵԱՏՄ շրջանակներում վերազգային կարգավորման գործընթացները՝ կարելի է ներկայացնել այն հիմնական արդյունքները, որոնք կարող են նպաստել կառույցի անդամ երկրների միջև աշխատուժի միգրացիոն հոսքերի՝ առավել կազմակերպված իրականացմանը.

- ներկայում ԵԱՏՄ շրջանակներում աշխատանքային միգրացիայի կարգավորման համակարգը և աշխատանքի միասնական շուկայի գործունեությունը դարձել է ավելի արդյունավետ և կանոնակարգված,

- ԵԱՏՄ տարածքում անդամ երկրների քաղաքացիների համար աշխատանքային թույլտվության նկատմամբ պահանջի վերացումը և գրանցման ընթացակարգերի պարզեցումը հանգեցրել է ինտեգրացիոն խմբավորման սահմաններում վերջիններիս անօրինական աշխատանքային միգրացիայի ծավալների կրճատմանն ու չփաստաթղթավորված աշխատանքային միգրացիայի մակարդակի նվազեցմանը, ինչը հանգեցնում է նաև կառույցի շրջանակներում բնակչության միգրացիայի շարժառիթների հարաբերակցության փոփոխությանը,

- աշխատանքի միասնական շուկայի ձևավորումը, որը բարենպաստ պայմաններ է ստեղծել միգրանտների կողմից ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և գործարար միգրացիան զարգացնելու համար, վեր է ածվել ԵԱՏՄ անդամ երկրների միջև կապիտալի հոսքերի ակտիվացման գործոններից մեկի,

- աշխատանքային միգրացիայի վերազգային կարգավորումը նպաստել է ԵԱՏՄ անդամ երկրների աշխատանքային միգրանտների սոցիալական երաշխիքների և բժշկական ապահովման մակարդակի բարձրացմանը՝ շնորհիվ սոցիալական ապահովման գործում ընդհանուր աշխատանքային (ապահովագրական) ստաժի հաշվարկման, անվճար հիմունքներով պարտադիր բժշկական ապահովագրության տրամադրման, անհետաձգելի և արտակարգ շտապ բժշկական օգնության անվճար հատկացման,

• ԵԱՏՄ անդամ պետությունների կողմից քաղաքացիների մասնագիտական կրթության դիպլոմների և որակավորման փաստաթղթերի փոխադարձ ճանաչումը բարելավել է ոչ միայն բարձր որակավորում ունեցող, այլև այլ մասնագետների «մրցակցային» դիրքերն այդ երկրների աշխատանքի շուկայում՝ նպաստելով վերջիններիս՝ աշխատանքի տեղավորվելու ժամանակատար գործընթացների դյուրինացմանն ու վճարվող աշխատավարձերի մակարդակի համեմատական բարձրացմանը:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով ԵԱՏՄ-ում աշխատանքի միասնական շուկայի զարգացման գործում աշխատանքային միգրացիոն գործընթացների հետագա կատարելագործման անհրաժեշտությունը՝ այդ ոլորտում վերպետական կարգավորման կառուցակարգերի արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով առաջարկում ենք.

• ընդլայնել աշխատանքային գործունեություն իրականացնելու նպատակով ԵԱՏՄ անդամ պետության քաղաքացիների կողմից այլ անդամ պետության տարածք մուտք գործելու դեպքում տվյալ երկրում առանց գրանցման (հաշվառման) մնալու 30-օրյա ժամկետը՝ այն սահմանելով մինչև 90 օր՝ հաշվի առնելով ներկայում սահմանված ժամկետում քաղաքացիների կողմից ժամանման երկրի աշխատանքի ներքին շուկայի վերաբերյալ հստակ պատկերացում կազմելու և մասնագիտական որակավորմանը համապատասխան աշխատանք գտնելու դժվարությունները,

• հաշվի առնելով ԵԱՏՄ շրջանակներում աշխատանքային էմիգրացիայի առավելապես միակողմանի (դեպի Ռուսաստան) բնույթը՝ ինչը պայմանավորված է կառույցի անդամ երկրների տնտեսական զարգացման տարբեր մակարդակներով՝ ստեղծել համակողմանի միգրացիոն գործընթացների զարգացմանն ուղղված գործուն կառուցակարգեր, որոնք կարող են իրենց հերթին նպաստել այդ երկրների տնտեսական զարգացմանը,

• ներդաշնակեցնել երրորդ երկրներից դեպի ԵԱՏՄ տարածք աշխատանքային միգրանտների ներգրավմանն առնչվող ԵԱՏՄ անդամ բոլոր երկրների օրենսդրությունը՝ սահմանելով միասնական մոտեցումներ և սկզբունքներ,

• ստեղծել բարձրորակ աշխատուժի հավասարակշռված միգրացիայի ապահովման արդյունավետ կառուցակարգեր՝ ԵԱՏՄ անդամ երկրներից «ուղեղների» արտահոսքի կանխարգելման և փոխհատուցման նպատակով,

• արագացնել ԵԱՏՄ-ում միասնական կենսաթոշակային ապահովման համակարգի ձևավորմանն ու ներդրման գործընթացները,

• ուժեղացնել ԵԱՏՄ անդամ երկրների համատեղ ջանքերը ծայրահեղականության և ահաբեկչության դեմ պայքարի գործում, որի անհրաժեշտությունն ավելի է մեծանում աշխատուժի միջպետային միգրացիոն գործընթացների խորացմանը զուգահեռ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՂՆԵՐ

1. «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագիր // <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=120371> (մուտք՝ 23.10.2018 թ.):
2. **Кузьмина Е.**, Зечем нужен рынок труда в ЕАЭС? // http://www.spbredcross.org/images/pr_grant/EAES.pdf (մուտք՝ 04.11.2018 թ.)
3. **Алексеевкова Е.**, ЕАЭС к 2025 г.: приоритеты и ожидания государств-членов. Перспективы развития проекта ЕАЭС к 2025 году. Рабочая тетрадь. Спецвыпуск. 2017; Российский совет по международным делам (РСМД). 2017, М.: НП РСМД, 92 с.
4. Положение о Консультативном комитете по вопросам социального обеспечения, соблюдения пенсионных прав, оказания медицинской помощи и профессиональной деятельности трудящихся государств – членов Евразийского экономического союза // http://www.eurasiancommission.org/ru/act/finpol/migration/social_security/Pages/pol.aspx (մուտք՝ 20.10.2018 թ.)
5. Положение о Консультативном комитете по миграционной политике // <http://www.eurasiancommission.org/ru/act/finpol/migration/tm/Pages/pol.aspx> (մուտք՝ 20.10.2018 թ.)
6. Трудовая миграция и социальное обеспечение трудящихся в Евразийском экономическом союзе. 2016, М.: Евразийская экономическая комиссия, 120 с.
7. «Երրորդ պետություններից անօրինական աշխատանքային մգրացիայի հակազդեցության ոլորտում համազործակցության մասին» համաձայնագիր // <https://www.arlis.am/> (մուտք՝ 02.05.2019 թ.):
8. Концепция государственной миграционной политики Российской Федерации на период до 2025 года // <https://legalacts.ru/doc/kontseptsija-gosudarstvennoi-migratsionnoi-politiki-rossiiskoi-federatsii-na/> (մուտք՝ 02.05.2019 թ.)
9. **Рубинская Э.Д.**, Международное миграционное сотрудничество в противодействии нелегальной миграции: анализ практики и система мер. Государственное и муниципальное управление. Ученые записки СКАГС. 2016. № 1, с. 278.
10. **Рязанцев С.В., Тер-Акопов А.А., Письменная Е.Е., Храмова М.Н.**, Сценарии развития миграционной ситуации в ЕАЭС в условиях усиления экономической интеграции. 2017, Аналитический вестник № 19 (676), 89 с.

МЕХАНИЗМЫ НАДНАЦИОНАЛЬНОГО РЕГУЛИРОВАНИЯ МИГРАЦИИ РАБОЧЕЙ СИЛЫ В ЕВРАЗИЙСКОМ ЭКОНОМИЧЕСКОМ СОЮЗЕ

МИСАК АВАГЯН¹

¹Европейский университет

После приобретения независимости большая часть потоков внешней миграции Армении принадлежит России. Учитывая тот факт, что Россия является членом Евразийского экономического союза (ЕАЭС), важно оценить эффективность регулирования механизмов международной миграции рабочей силы в этой группировке. В статье представлены основные направления экономической интеграции ЕАЭС в области трудовой миграции, основные особенности наднационального урегулирования свободного передвижения граждан государств-членов союза и членов их семей на территории ЕАЭС, условия привлечения трудовых иммигрантов, возможности, предоставляемые единым рынком в ЕАЭС в области регулирования миграции рабочей силы.

Ключевые слова: миграционная политика, интеграционный процесс, движение населения, разрешение на работу, патент, мигрант, социальное обеспечение, деловая миграция.

MECHANISMS OF SUPRANATIONAL REGULATION OF THE LABOR FORCE MIGRATION IN THE EURASIAN ECONOMIC UNION

MISAK AVAGYAN¹

¹ European University

After independence, most of the external migration flows of Armenia belong to Russia. Taking into consideration that Russia is a member of the Eurasian Economic Union (EAEU), it is important to assess the effectiveness of regulating the mechanisms of international migration of labor force in this group. The article presents the main directions of economic integration of the EAEU in the field of labor migration, the main features of a supranational regulation of free movement of citizens of the union member states and their family members on the territory of the EAEU, conditions for attracting labor immigrants, opportunities provided by a common market in the EAEU in the field of regulating labor force migration.

Keywords: migration policy, integration process, population movement, work permit, patent, migrant, social guarantee, business migration.

Ներկայացվել է խմբագրություն 15.01.2019
Երաշխավորվել է տպագրության 16.05.2019

UDC 338.48

DEFINING TOURISM DEVELOPMENT STRATEGY IN ARMENIA BASED ON INTERNAL AND EXTERNAL FACTOR EVALUATION ANALYSIS (SWOT) OF THE SECTOR

GAYANE TOVMASYAN¹

¹ *Public Administration Academy of the Republic of Armenia*

There are many types of tourism, which offer extraordinary possibilities for development in Armenia. To understand the main obstacles for tourism promotion, we applied internal and external factor evaluation analysis using a strategic planning tool commonly known as SWOT. Based on our analysis and scoring, we created a Space and Strategy matrix. Armenia with its score is in the aggressive quadrant. The best strategy is “grow and build” which means intensive and aggressive steps by focusing on market penetration, market development, and product development.

Keywords: tourism, IFE, EFE, SWOT, strategy.

INTRODUCTION

In the very fast developing world, it is remarkably significant to implement good strategy for tourism development and to offer superior market of services, for which a comprehensive analysis of internal and external environments is essential.

In Armenia, tourism is announced as the main sector of the economy. In recent years, the number of tourists visiting Armenia steadily increased. In 2018, 1,651,782 tourists visited Armenia (10,5% growth compared to the previous year) [1, p. 135]. The direct contribution of Travel & Tourism to GDP in Armenia in 2017 was AMD 231.7bn (USD 477.7mn), 4.4% of total GDP in 2017. The total contribution of Travel & Tourism to GDP was AMD 834.1bn (USD 1,719.7mn), 15.7% of Armenia's GDP in 2017. In 2017 Travel & Tourism directly supported 44,500 jobs (3.9% of total employment). Based on Armenia's existing touristic assets, the following types of tourism present development opportunities in Armenia: religious, historical-cultural, wellness, gastronomic, agri- and eco-, scientific and educational, adventure tourism, etc. [2, p. 1].

LITERATURE REVIEW

In the 21th century, sectoral development environments experience precipitous change. In the case of the hospitality sector, the analysis of development factors is vital for processing the best strategy for tourism.

Strategic planning is designed to identify long-term interests and the means to achieving them [3]. Strengths, weaknesses, opportunities and threats (SWOT) is one of the qualitative and quantitative methods of strategic planning. This method was first introduced in 1960's by Albert Humphrey during his research project at Stanford University using data from 500

companies [4]; [5]. The SWOT method provides a systematic analysis instrument for identifying internal and external factors and selecting the best fit strategy establishing the best concordance between the factors [6]. The combination of external and internal factors leads to four categories: external positive – opportunities; external negative – threats; internal positive – strengths; and internal negative – weaknesses [7]. Strengths are the most important resources, skills, which improve the competitive position (unique tourism resources, well-developed tourism infrastructure, highly qualified human resources, good tourism marketing, etc). Weaknesses are factors that hinder development (deficient financial resources in tourism, depraved infrastructures, flawed marketing, etc.). Opportunities are circumstances, which may be used to achieve success (positive changes in tourism legislation, statistical recording, growth in demand, increase of tourists' income, etc.). Threats are barriers, which hinder development and the achievement of objectives (aggressive competition, economic crisis, changes in the rates of currencies, terrorism, etc.).

METHODOLOGY

The main objective of the research is to do an internal and external factor evaluation analysis (SWOT) of tourism development in Armenia.

The methodology of SWOT analysis we use is the following:

✓ After listing the key internal and external factors as strengths and weaknesses, opportunities and threats, we give each factor a weight that ranges from 0.0 (not important) to 1.0 (very important). The sum of all weights assigned to the factors must equal 1.0.

✓ Then we assign a rating between 1 and 4 to each key internal and external factor (rating =1 means that the factor is fragile and rating =4 means that the factor is robust);

✓ By multiplying each factor's weight by its rating, we determine a weighted score.

✓ After we sum the weighted scores for each variable to determine the total weighted score, the highest possible total weighted score is 4.0 and the lowest possible total weighted score is 1.0. The average total weighted score is 2.5 (methodology by David, 2011) [8, pp. 60-191].

RESULTS AND FINDINGS

At the first stage of our analysis we investigated the internal environment of tourism by dividing the main factors into strengths and weaknesses. 14 strengths and 13 weaknesses were examined, which have been rated from 1 to 4, and weighted from 0 to 1 (see **Table 1**).


The total weighted score of strengths and weaknesses is **1.758+1.375=3.133**

$$\text{IFE} = 3.133$$

Subsequently, the factors of external environment were investigated by dividing them into opportunities (9) and threats (4), which were rated from 1 to 4 and weighted from 0 to 1 (see **Table 2**).

The total weighted score of opportunities and threats is $2+0.593=2.593$
EFE = 2.593

As we see, the EFE and IFE are above average 2.5. Figure 1 shows the IE matrix and the best strategy based on our weighted scores. Our score is in the aggressive quadrant (see **Figure 1**).




Source: Based on the research results of the author.

Figure 1. IE strategy space matrix

Aggressive quadrant of the SPACE Matrix is an excellent position to use its internal strengths to take advantage of external opportunities, overcome internal weaknesses and avoid external threats.

Placing our scores in **Figure 2**, we obtain the optimum strategic steps.



Source: Based on the research results of the author

Figure 2. The Internal-External Matrix

Table 1

Internal factor evaluation (weighted scores)

N	Factors of internal environment	Weight	Rating	Weighted score
Strengths				
1.	Religious tourism (Armenia as the first Christian Nation)	0.039	4	0.156
2.	Rich historical and cultural heritage	0.039	4	0.156
3.	Existence of all resort resources in all 10 resort zones	0.031	4	0.125
4.	Armenia was a resort region during the Soviet years	0.031	3	0.094
5.	Many hot springs in Armenia similar to high international standards	0.039	3	0.117
6.	Great number of hotel, food and beverage facilities	0.039	3	0.117
7.	Agri- and eco- touristic assets	0.039	4	0.156
8.	Gastronomy tourism assets	0.039	4	0.156
9.	Sport and adventure tourism assets	0.039	3	0.117
10.	Yerevan is 2800 years old (Urban tourism in Yerevan and other cities)	0.039	3	0.117
11.	Armenian wine and brandy, lavash and apricot are well known in the world	0.031	3	0.094
12.	Armenian well developed diaspora	0.039	4	0.156
13.	Great number of tourism agencies	0.039	3	0.117
14.	Assortment of inbound and domestic tours	0.039	2	0.078
Total		0.523		1.758

N	Factors of internal environment	Weight	Rating	Weighted score
Weaknesses				
1.	Low number of qualified hotels	0.039	2	0.078
2.	High prices of air transport	0.039	3	0.117
3.	Low number of direct flights	0.031	3	0.094
4.	Low usage of rail transport	0.031	2	0.063
5.	Armenia does not have access to a seashore	0.031	2	0.063
6.	Low level of tourism competitiveness of the country	0.039	3	0.117
7.	Low level of effectiveness of tourism marketing and branding	0.039	4	0.156
8.	Not complete legislation for the sector	0.039	3	0.117
9.	Not complete statistical recording for the sector	0.039	3	0.117
10.	Not fully developed infrastructures	0.039	4	0.156
11.	Low level of current situation and conservation of the environment and natural resources	0.039	3	0.117
12.	Low level of staff training and a lack of skilled labor	0.039	3	0.117
13.	Low number of incoming tourists who stay in hotels	0.031	2	0.063
Total		0.477		1.375

Source: Based on the research results of the author.

Table 2

External factor evaluation (weighted scores)

N	Factors of external environment	Weight	Rating	Weighted score
Opportunities				
1.	Implementation of marketing performance in and out of the country and as a result the possibility of increasing the number of tourists	0.085	4	0.339
2.	The possibility of developing tourism infrastructures	0.085	3	0.254
3.	Improvement of legislation for the sector	0.085	2	0.169
4.	Improvement of statistical recording for the sector	0.085	2	0.169
5.	Improvement of price and quality indicators of tourism services	0.085	3	0.254
6.	The possibility of reconstruction of roads in case of investments	0.085	3	0.254
7.	In case of Armenia's possible involvement in the new Silk Road, Armenia will be a bridge between the West and the East, which will contribute to the increase of tourist flows	0.068	2	0.136
8.	Application of Tourist Satisfaction Index	0.085	3	0.254
9.	Formation of a regional tourism package with neighbors Georgia and Iran	0.085	2	0.169
Total		0.746		2.000
Threats				
1.	Low income level of the population	0.085	3	0.254
2.	The possibility of conflict with neighboring countries influencing the number of incoming tourists	0.051	2	0.102
3.	Going abroad for vacation because of high prices of hotel facilities and the absence of a coastline	0.068	2	0.136
4.	The possibility of underdeveloped tourism infrastructures on the number of incoming tourists	0.051	2	0.102
Total		0.254		0.593

Source: Based on the research results of the author.

The Grow and build strategy signifies intensive and aggressive tactical strategies. This means focusing on market penetration, market development, and product development. It supposes to expand aggressively by capitalizing on strengths. Thus, the best steps for tourism in Armenia is to develop effective tourism products and make every effort to penetrate into new markets.

We also present our results in another score:

$$\frac{\text{(Strengths + Opportunities)}}{\text{(Weaknesses + Threats)}} = \frac{3.758}{1.968} \approx 1.91$$

This score signifies that sectoral Strengths and Opportunities are about 1.91 times larger than Weaknesses and Threats, which means that tourism in Armenia may be further developed by using Strengths and Opportunities to overcome the Weaknesses and Threats.

Table 3

SWOT Matrix for Tourism Development in Armenia

Weaknesses/Threats	Opportunities/Strengths
Current tourism marketing	Rich cultural and historic assets. First Christian Nation in the world. Oldest Christian art and architecture. Yerevan city is 30 years older than Rome.
Market limitations	Open new markets. Penetrate new markets through tour packages.
Legislative Impediments	New legislation protecting tourism and the natural environment
Statistical information	Quantitative data availability for future research and evaluation
Transportation infrastructure	Direct and timely flights. Improved signage and touristic information infrastructures. Deliver quality for a good price.
Human capital	Collaborate with universities to improve human capital in hospitality and general tourism sectors.
Territorial conflicts	Strengthen regional alliances with Georgia and Iran to improve regional tourism. Seek Armenian diaspora's help.

CONCLUSION

Internal and external factor evaluation through SWOT analysis is an effective method to identify the factors that enable or hinder development not only for organizations, but also for different sectors of the economy.

Based on our SWOT analysis, we examined the main strengths and weaknesses of the tourism sector in Armenia. We, also, charted the opportunities and threats for the further development of the sector. Based on our analysis, we offer few concluding suggestions.

The analysis reveals that sectoral marketing performance is less than efficient. We therefore conclude that it is necessary to increase the saturation of Armenia's marketing activities in order to promote Armenia's focused touristic assets and products in international markets to attract a larger number of tourists. Also, Armenia's tourism assets and products must be positioned in new and developing markets, thus accomplishing an aggressive penetration strategy to grow and build.

Our analysis also highlights a current challenge connected to air transportation, and ground tourism service infrastructures. Increasing the number of direct flights will enable the promotion of the entire sector. The price and quality indicators of touristic sectoral services will improve the overall development of the sector.

Legislation and quantitative statistical analysis of the sector needs improvement. Statistical data on the sector remains modest, which does not enable to explore challenges and opportunities. From a legislative perspective, increasing the level of conservation, and environmental stewardship to preserve natural resources remain crucial for touristic circulation.

Finding skilled labor in hospitality is also a challenge for Armenia. The private and public sectors must collaborate with universities to improve sectoral human capital in Armenia. This will track international best practices for the sector.

Finally, our analysis shows that Armenia, with its main intrinsic assets is positioned to develop many types of tourism. It is crucial to process and implement strategic development programs for the sector in order to grow and build on already existing structures. A collaborative and comprehensive approach will yield the desired results.

REFERENCES

1. Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2018թ. հունվար-դեկտեմբերին, էջ՝ 135 Առցանց՝ https://www.armstat.am/file/article/sv_12_18a_421.pdf, (Վերջին մուտքը՝ 05.02.2019):
2. Travel & Tourism Economic Impact Armenia, 2018, p. 1, World Travel and Tourism Council.
3. **Krajewski L. J., & Ritzman, L. P.**, (1996). Operations management strategy and analysis (4th ed.). Massachusetts: Addison-Wesley Publishing, pp. 878.
4. **Arslan O. and Er, I.D.** (2008) SWOT Analysis for Safer Carriage of Bulk Liquid Chemicals in Tankers. Journal of Hazardous Materials, 154, 901-913.
5. **Saaty R.W.**, (1987) The Analytic Hierarchy Process and SWOT Analysis What It Is and How It Is Used. Mathematical Modeling, 9, 161-178.
6. **Harrison J. and John K.**, (2007) Strategic Management. 4th Edition, Heyat Publications, Iran, pp. 196.
7. **Gierszewska G., Romanowska M.**, 2002, Analiza strategiczna przedsiębiorstwa, PWE, Warszawa, pp. 240.
8. **David Fred R.**, (2011). Strategic Management: Concepts (13th ed.). Prentice Hall, New Jersey, p. 191. pp. 60-191, URL: <http://irresearchers.ir/upload/docs/StrategicManagementDavid.pdf> (Accessed 10.01.2019)

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԶՔՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՈՒՋՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՈԼՈՐՏԻ ՆԵՐՔԻՆ
ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ (SWOT)
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

ԳԱՅԱՆԵ ԹՈՎՄԱՍՅԱՆ¹

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հայաստանում զբոսաշրջության շատ տեսակներ ունեն զարգացման մեծ ներուժ: Զբոսաշրջության զարգացման հիմնական խոչընդոտները պարզելու համար իրականացրել ենք ներքին և արտաքին գործոնների վերլուծություն (SWOT): Ստացված կշռային միավորի հիման վրա ձևավորվել է IE Space և ռազմավարության մատրիցաները: Հայաստանի ցուցանիշն ագրեսիվ վանդակում է: Լավագույն ռազմավարությունն է՝ աճել և կառուցել, ինչը նշանակում է ինտենսիվ և ագրեսիվ քայլեր՝ շուկաներ ներթափանցման, շուկայի և արտադրանքի զարգացման համար:

Բանալի բառեր: զբոսաշրջություն, արտաքին գործոնների գնահատում, ներքին գործոնների գնահատում, SWOT, ռազմավարություն:

ОПРЕДЕЛЕНИЕ СТРАТЕГИИ РАЗВИТИЯ ТУРИЗМА В АРМЕНИИ НА
ОСНОВЕ АНАЛИЗА ОЦЕНКИ ВНУТРЕННИХ И ВНЕШНИХ
ФАКТОРОВ (SWOT) СФЕРЫ

ГАЯНЕ ТОВМАСЯН¹

¹ Академия государственного управления Республики Армения

Есть много видов туризма, которые имеют высокий потенциал развития в Армении. Чтобы выяснить основные препятствия для продвижения туризма, мы применили анализ оценки внутренних и внешних факторов (SWOT). На основе взвешенного балла были сформированы IE Space и матрица стратегий. Армения со своим баллом находится в агрессивном секторе. Лучшая стратегия - расти и строить, что означает интенсивные и агрессивные шаги, направленные на проникновение на рынок, развитие рынка и разработку продукта.

Ключевые слова: туризм, оценка внешних факторов, оценка внутренних факторов, SWOT, стратегия.

Ներկայացվել է խմբագրություն 07.02.2019
Երաշխավորվել է տպագրության 22.05.2019

ՀՏԴ 005.93:658.5

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԼՈԳՈՍՏԻԿԱԿԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

**ԼԻԴԱ ԱՐԱՋԱՆՅԱՆ¹, ԳՐԻԳՈՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ¹, ԱՐՏԱԿ ԱՐԱՋԱՆՅԱՆ¹,
ԼԵՎԻԿ ԱՐԱՋԱՆՅԱՆ¹**

¹ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան

Դիտարկվում են ՀՀ արդյունաբերության ոլորտում լոգիստիկայի սկզբունքների կիրառման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը: Ներկայացված են արդյունաբերական լոգիստիկայի կառուցվածքների և կազմակերպական ձևերի բնութագրերը: Հիմնավորվել է լոգիստիկական համակարգի վերակազմակերպման ռեինժեներինգի մեթոդի կիրառման նպատակահարմարությունը և իրականացման ընթացակարգը:

Բանալի բառեր. լոգիստիկա, կառավարում, արդյունաբերական կազմակերպություն, տնտեսական հոսք, ռեինժեներինգ:

Հայաստանի ներկա տնտեսական իրավիճակի բարելավումը պահանջում է արդյունաբերական արտադրության կայունության ապահովման նոր, առավել արդյունավետ և ճկուն գործիքների կիրառում: Տնտեսական կապերի խզումը, վճարունակ պահանջարկի նվազումը, արտադրության տեխնիկական և տեխնոլոգիական առումներով հետ մնալը, անբավարար ֆինանսական միջոցներն այն խնդիրներն են, որոնք ներկայում բնութագրում են Հայաստանի արդյունաբերությունը: Դրանցով թելադրվում է արդյունաբերական արտադրության կայունության ապահովման նոր, արդյունավետ մոտեցումների գիտական մշակման անհրաժեշտությունը: Այդպիսի մոտեցման արդյունք կարող է լինել Հայաստանի տնտեսական պայմաններին համապատասխան լոգիստիկայի գործիքակազմի ձևավորումը:

Ներկայում լոգիստիկական մոտեցումները, բնութագրվելով նյութական, ֆինանսական, տեղեկատվական և այլ հոսքերի կառավարման կառուցակարգի ու կառուցվածքի մշակմամբ, ներթափանցում են տնտեսական կայունության ընթացակարգերը՝ իրականացնելով կառավարման ընթացիկ և ռազմավարական գործընթացներ: Լոգիստիկական մոտեցումները, ներազդելով արտադրական, տնտեսական, իրացման, կառավարչական գործընթացների վրա, նպաստում են մատակարարման, արտադրության և վաճառքի փոխգործակցության արդյունավետության

բարձրացմանը, ինչը հնարավորություններ է ստեղծում որակապես փոխելու կազմակերպությունների և դրանցում տեղի ունեցող գործընթացների կարգավորման նկատմամբ հայացքները, որոնք էլ նպաստելու շուկայական պայմաններին կազմակերպությունների արդյունավետ հարմարեցմանը:

Հայաստանի Հանրապետության նման փոքր, ծովային սահմաններից զուրկ և պատմաաշխարհագրական յուրահատուկ դիրք ունեցող երկրում արդյունաբերության զարգացման համար լոգիստիկան ունի կենսական կարևոր նշանակություն:

Հայաստանը, 2015թ. դառնալով ԵՎրասիական տնտեսական միավորման անդամ, զգալիորեն վատացրել է իր դիրքերը: Լոգիստիկայի արդյունավետության չափանիշի (LPI) 2007-2016թթ. ուսումնասիրության արդյունքում Եվրասիական տնտեսական միության երկրներից ամենացածր արդյունավետությունն ունեն Հայաստանը (141-րդ տեղ) և Ղրղզստանը (146-րդ տեղ): Մաքսային և սահմանային ձևակերպումների արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 2016 թ. 2,07 վարկանիշով 2014 թ. 75-րդ տեղից (վարկանիշը՝ 2,63) իջել է 135-րդ տեղը, առևտրային և տրանսպորտային ենթակառուցվածքների որակի ցուցանիշով 107-րդ տեղից իջել է 144-րդ տեղը, իսկ լոգիստիկական ծառայությունների որակի ցուցանիշով՝ 79-րդ տեղից 147-րդ տեղը [1]: Վարկանիշի այդպիսի ցածր մակարդակը կարելի է բացատրել տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացման և լոգիստիկական ծառայությունների որակի ցածր մակարդակով, ինչպես նաև անբարենպաստ աշխարհագրական դիրքով, օրինակ, ջրային ուղիների բացակայությամբ:

Արտասահմանյան երկրների հետ սերտ համագործակցության հնարավորություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում առավել լրիվ օգտագործել հանրապետության տրանսպորտային-աշխարհագրական դիրքի առավելությունները: Բայց դրա համար անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ և, առաջին հերթին, տրանսպորտային գործընթացները համապատասխանեցնել միջազգային ստանդարտների պահանջներին:

Տրանսպորտային ծախսերի կրճատման նպատակով կարևորագույն նախադրյալ կարող է հանդիսանալ միջտարածաշրջանային լոգիստիկական կենտրոնի կազմակերպումը, որի հնարավորություններից կարող են օգտվել նաև այլ երկրներ: Այդպիսի կենտրոնների ստեղծման որոշակի փորձ կա մի շարք երկրներում (Ռուսաստան, Եվրոպական երկրներ, Ճապոնիա): Դրանցում իրականացվում են մարքեթինգային հետազոտություններ և ընդգրկում են բեռնատար կայաններ, տերմինալներ, որոնք փոխգործակցում են տրանսպորտային հանգույցի սահմաններում:

Նշված միջոցառումների արդյունավետ իրականացմանը ՀՀ արդյունաբերության ոլորտում մեծապես կարող է նպաստել արդյունաբերական լոգիստիկայի համակարգի մշակումը և ներդրումը:

Ժամանակակից տնտեսական համակարգում, ուժեղացող մրցակցության պայմաններում, լոգիստիկան դարձել է ռազմավարական հզոր գործոն, որն արդյունաբերական կազմակերպությանը թույլ է տալիս սահմանված առաքելության շրջանակներում իրականացնել իր նպատակները և խնդիրները, ամրապնդել դիրքերը շուկայում՝ առավելագույնս բավարարելով սպառողների պահանջները [2]:

Արդյունաբերական լոգիստիկայի կիրառման նպատակահարմարությունը և արդյունավետությունն արտահայտվում է հետևյալում,

առաջին՝ արդյունաբերական լոգիստիկան ձևավորում է արտադրության սպասարկման գործուն համակարգ, նպաստում է կառավարման կենտրոնացմանը և տնտեսական արդյունավետության բարձրացմանը,

երկրորդ՝ արդյունաբերական լոգիստիկան նպաստում է ծախսերի իջեցմանը՝ ի հաշիվ նյութական ռեսուրսների պաշարների փոքրացման և ապրանքների մատակարարման ժամանակի կրճատման,

երրորդ՝ արդյունաբերական լոգիստիկայի շրջանակներում ստեղծվում է նյութական, աշխատանքային, ֆինանսական և սպասարկման հոսքերի համալիր կառավարման համակարգ, որն ապահովում է լոգիստիկական գործընթացների առավելագույն արդյունավետություն:

Արդյունաբերական լոգիստիկայի իրականացումն առանձին կազմակերպության շրջանակներում պետք է ունենա միանգամայն հստակ և որոշակի կազմակերպական ձևեր:

Կարելի է առանձնացնել կառավարման հետևյալ հիմնական կազմակերպական կառուցվածքները.

- գործառույթային,
- դիվիզիոնալ,
- ծրագրանպատակային:

Գործառույթային կազմակերպական կառուցվածքը բնորոշ է արդյունաբերական փոքր կազմակերպությունների համար, որոնք արտադրում են համեմատաբար սահմանափակ անվանացանկի արտադրանք, գործում են բավականաչափ կայուն արտաքին պայմաններում: Արդյունաբերական լոգիստիկան այդպիսի կազմակերպությունում կողմնորոշված է ներուժի հոսքի ներհամակարգային կարգավորման ավանդական խնդիրների լուծմանը:

Դիվիզիոնալ կառուցվածքը ձևավորվում է որպես արդյունաբերական կազմակերպության զարգացման արդյունք: Արդյունաբերական լոգիստիկայի տեսանկյունից այն հատկապես արդյունավետ է փոխկապակցված

արտադրական ստորաբաժանումների տարածքային տարակենտրոնացման դեպքում: Այդպիսի կառուցվածքներում լոգիստիկական ստորաբաժանումների առանձնացումը կարող է իրականացվել ըստ ապրանքների տեսակների, սպառողների խմբերի կամ աշխարհագրական շրջանների:

Արդյունաբերական արտադրության կազմակերպման ծրագրանպատակային կառուցվածքն արդյունավետ է ներքին և արտաքին միջավայրի բարձր դինամիկ փոփոխությունների պայմաններում, երբ բավականաչափ անհրաժեշտություն է առաջանում լուծելու տեղական, հատուկ խնդիրներ որոշակի ժամկետներում՝ սահմանված սահմանափակ պաշարներով: Այդպիսի կառուցվածքներն անվանում են հարմարողական և ունեն մի շարք տարատեսակներ՝ նախագծային, խմբային (շտաբային), խառը, մատրիցային: Արդյունաբերական լոգիստիկայի համար սկզբունքային նշանակություն ունի նպատակային ծրագրերի իրականացումը և դրանց հարմարեցումը ներհամակարգային ռեսուրսային հոսքերին: Այդ պատճառով էլ այսպիսի կառուցվածքը նպատակահարմար է ժամանակակից ներքին և արտաքին միջավայրերի բարձր դինամիկ փոփոխությունների պայմաններում:

Տնտեսական կայունության արդյունավետ նախադրյալներից է լոգիստիկական ռեինժեներինգի՝ որպես գործարարության վերակազմակերպման գործընթացների կարևորագույն նորամուծական տարրի իրականացումը: Այս մեթոդի հիմնական նպատակը գործունեության ինտեգրման մակարդակի բարձրացումն է՝ ճյուղային լավագույն արդյունքների ձեռքբերման ուսումնասիրության հիման վրա:

Ռեինժեներինգը կառավարման ժամանակակից համակարգի առավել արդյունավետ նորամուծություններից է: Ներկայում այն արդեն լայնորեն օգտագործվում է տարբեր երկրների տնտեսական համակարգերում՝ դառնալով գործարարության նոր ձևերի և մեթոդների որոնման և կիրառման անհրաժեշտ հիմք[3]:

Ռեինժեներինգն անհրաժեշտ է էական բարելավումների իրականացման դեպքում, ինչն այնքան բնութագրական է այսօրվա հայկական իրականության համար: ՀՀ տնտեսական համակարգում կարելի է առանձնացնել ռեինժեներինգի կիրառման երեք հիմնական իրավիճակներ:

1. Երբ կազմակերպությունը գտնվում է ճգնաժամի մեջ, որն արտահայտվում է բարձր ծախսերով, իսկ սպառողները չեն ընդունում կազմակերպության արտադրանքը: Այդպիսի իրավիճակը բնութագրական է հայկական տնտեսության ավանդական ճյուղերում՝ մեքենաշինության և տեքստիլ արդյունաբերության կազմակերպություններում և այլն: Այստեղ ճգնաժամը խորանում է այնպիսի գործոնների ազդեցությամբ, ինչպիսին են՝ հումքի ավանդական շուկաների կրճատումը, կայուն կառուցվածքների

բացակայությունը, ֆինանսական կառավարման ցածր մակարդակը, իրացման խոչընդոտները և այլն:

2. Երբ կազմակերպության ընթացիկ դրությունը թեև բավարար է, սակայն նրա գործունեության մեջ առաջիկայում կարող են առաջանալ անբարենպաստ իրավիճակներ: Դրանք կարող են կապված լինել մրցունակության թուլացման, եկամտաբերության և պահանջարկի նվազեցման հետ և այլն: Այսպիսի իրավիճակները բնութագրական են հայկական առևտրային և ֆինանսական ընկերություններին, բանկային համակարգին: Կազմակերպություններն արձագանքում են իրադրության բացասական փոփոխություններին՝ քանի դեռ դրանք իրենց համար ճակատագրական բնույթի չեն:

3. Երբ կազմակերպությունը գտնվում է զարգացման փուլում և իրականացնում է բարեհաջող գործունեություն: Այստեղ կազմակերպության հիմնական խնդիրը մոտակա մրցակիցներից ձեռքբազատվելն ու մրցակցային առավելությունների ստեղծումն է: Այսպիսի պայմաններում ռեինժեներինգի կիրառումը գործարարության իրականացման լավագույն տարբերակն է: Շատ կազմակերպություններ համարում են, որ գտել են գործարարության լավագույն մոդելը և անհրաժեշտություն չկա գնալ էական փոփոխությունների: Այդպիսի մոտեցումը ժամանակի ընթացքում բերում է նրան, որ մրցակիցները հասնում և անցնում են իրենց՝ լավագույնս հարմարվելով շուկայական իրավիճակների և պահանջարկի փոփոխություններին: Այդ պատճառով էլ ռեինժեներինգը ժամանակակից պայմաններում կազմակերպությունների շուկայում գոյատևման կարևոր միջոց է:

Լոգիստիկական ռեինժեներինգի կիրառումը պահանջում է կազմակերպական վերակառուցումներ, որոնք անցնում են մի քանի փուլերով [3]:

Առաջին՝ նպատակների որոշման փուլում անհրաժեշտ է որոշել վերակառուցման ենթակա գործունեության ձևերն ու գործառույթները և սահմանել հնարավոր բարելավումների սահմանները:

Երկրորդ՝ վերակառուցման ենթակա լոգիստիկական գործառույթությունների բացահայտման և գնահատման ցուցանիշների մշակման փուլում անհրաժեշտ է կազմել վերակառուցման ենթակա առանձին գործառույթությունների ցանկ՝ ընտրել գնահատման ցուցանիշները:

Երրորդ՝ ներքին վերլուծության և **չորրորդ՝** արտաքին համեմատական վերլուծության փուլերում անհրաժեշտ է իրականացնել ընթացիկ իրավիճակի գնահատում և մրցակիցների առաջավոր փորձի համեմատական վերլուծություն:

Հինգերորդ՝ գնահատման փուլում անհրաժեշտ է գնահատել պլանավորված վերակազմակերպման արդյունքները:

Վեցերորդ՝ ներդրման փուլում իրականացվում է պլանավորված միջոցառումների ներդրումը:

Վերջում պետք է կազմվի համակարգի վերակառուցման մանրամասն ծրագիր, նշվի կատարման ժամկետը և սահմանվի կատարողների պատասխանատվությունը:

Լոգիստիկական ռեինժեներինգի համար չկան տեխնիկական փոփոխությունների իրականացման սահմանափակումներ: Լոգիստիկական գործառույթների և գործառույթունների բազմազանությունը ենթադրում է, որ միշտ հնարավորություններ կգտնվեն դրանց լրացուցիչ բարելավման համար: Իսկ այդպիսի հնարավորություններն անհրաժեշտ է մշտապես բացահայտել և իրացնել:

Այժմ տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործումը նոր հնարավորություններ է բացում լոգիստիկական համակարգի ինտեգրման խորացման համար: Լոգիստիկական ռեինժեներինգը կիրառելի է դառնում լոգիստիկական համակարգի բոլոր տեսանկյունների համար՝ առանձին գործառույթուններից մինչև ամբողջական համակարգի կառուցումը:

Սակայն գործնականում հայկական տնտեսական իրականության մեջ արդյունաբերական լոգիստիկան դեռևս լիովին պահանջարկված չէ: Անհրաժեշտ է մշակել նյութական արտադրության կառավարման ոլորտում լոգիստիկական գործիքակազմի կիրառման հստակ ալգորիթմ, լոգիստիկայի կազմակերպման տեսական և մեթոդական դրույթների ներդրման գործնական ձևեր: Միաժամանակ արդյունաբերական կազմակերպության տնտեսական հոսքերի արդյունավետ կառավարումը հնարավոր չէ առանց կառավարչական գործընթացի համապատասխան տեխնիկական և տեղեկատվական ապահովման, առանց արդյունաբերական լոգիստիկայի անհրաժեշտ կադրային ներուժի ստեղծման:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Чибухчян С.**, Состояние и перспективы развития логистики в странах ЕАЭС: Итоги двух лет. ЛОГИСТИКА. Специализированный научно-практический журнал.: Издатель: Агентство Маркет Гайд, 2017, №11.- С. 23.

2. **Аникин Б.А. и др.**, Логистика.-М.; Проспект, 2015.- 408 с.

3. **Доналд Дж. Бауэрсокс, Дейвид Дж. Клосс**, Логистика: интегрированная цепь поставок. 2-е изд. /Пер. с англ./.- М.: издательство Олимп-Бизнес, 2017.- 640 с.

ЛОГИСТИЧЕСКИЕ ПОДХОДЫ К ЭКОНОМИЧЕСКОЙ УСТОЙЧИВОСТИ В ПРОМЫШЛЕННЫХ ОРГАНИЗАЦИЯХ

ЛИДА АГАДЖАНЯН¹, ГРИГОРИЙ БАГРАМЯН¹, АРТАК АГАДЖАНЯН¹,
ЛЕВИК АГАДЖАНЯН¹

¹ Армянский национальный политехнический университет

Рассматриваются необходимость и целесообразность применения принципов логистики в области промышленности Республики Армения. Представлены характеристики структур и организационных форм промышленной логистики. Обоснована целесообразность и алгоритм реализации применения метода реинжиниринга реорганизации логистической системы.

Ключевые слова: логистика, аспект, управление, промышленная организация, экономический поток, реинжиниринг.

LOGISTIC APPROACHES OF ECONOMIC STABILITY IN INDUSTRIAL ORGANIZATIONS

LIDA AGHAJANYAN¹, GRIGORI BAGHRAMYAN¹, ARTAK AGHAJANYAN¹,
LEVIK AGHAJANYAN¹

¹ National Polytechnic University of Armenia

The necessity and expediency of logistics principles application in the industry of the Republic of Armenia are being considered. The characteristics of industrial logistics structures and organizational forms are presented. The expediency of the use and the implementation procedure of the reengineering method of the reorganization of logistics system has been substantiated.

Keywords: logistics, aspect, management, industrial organization, economics flow, reengineering.

Ներկայացվել է խմբագրություն 15.02.2019
Երաշխավորվել է տպագրության 18.05.2019

ՀՏԴ 338 (479.25)

**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ¹, ԱՇՈՏ ԶԱԼԻՆՅԱՆ²

¹ Երևանի պետական համալսարան

² Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Տնտեսական առաջընթացի ապահովման հիմնական աղբյուրներից կարևորներն են իրավական համակարգը, մրցակցային շուկաների առկայությունը և, իհարկե, պետական կարգավորման սահմանները կամ, ինչպես ընդունված է ասել, կարգավորման քաղաքականությունը: Տնտեսության պետական կարգավորման համակարգի ձևավորումը պետք է պատասխանի տնտեսության վրա պետության ներգործման աստիճանի, այդպիսի ներգործման բնագավառների և ուղղվածության, ինչպես նաև տնտեսության վրա պետական ներգործության բնույթի (ներառյալ՝ գործիքակազմի) մասին հարցերին:

Դիտարկելով ժամանակակից աշխարհում կիրառվող տնտեսության պետական կարգավորման համակարգերն ու դրանց էությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ տնտեսության դիրիժիստական կարգավորման համակարգն առավել ընդունելի է ՀՀ ներկայիս տնտեսության համար:

Բանալի բառեր. տնտեսության պետական կարգավորում, կարգավորման համակարգ, մասնավոր նախաձեռնություն, դիրիժիստական կարգավորում, կարգավորման գործիքակազմ:

Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը

Տնտեսական առաջընթացի ապահովման հիմնական աղբյուրների շարքում ազատական տնտեսագիտական դպրոցի կողմնակիցներն առանձնացնում են՝ (1) իրավական համակարգը, որը համարվում է տնտեսական առաջընթացի հիմքը (պաշտպանելով մասնավոր սեփականության իրավունքը և հարկադրելով պայմանագրերի անվերապահորեն կատարումը), (2) մրցակցային շուկաների առկայությունը, որոնք նպաստում են պաշարների արդյունավետ օգտագործմանը և մշտական խթաններ են ապահովում նորարարական առաջընթացի համար, ինչպես նաև (3) պետական կարգավորման սահմանները կամ կարգավորման քաղաքականությունը [1]:

Դիտարկելով տնտեսության պետական կարգավորման էությունը՝ նախ պետք է նշել, որ պետությունը սահմանում է տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի անբաժան մասը կազմող որոշակի կանոններ (օրենքներ), որոնք հասարակության մեջ գոյություն ունեցող, սակայն

չգրված (չամրագրված) սկզբունքների (կանոնների) հետ մեկտեղ, հանդիսանում են հանրային վարքագծի կառավարման միջոցները: Սակայն պետությունը, այդ կանոնների պահպանման ու իրագործման գործառույթի հետ մեկտեղ, հանդես է գալիս որպես երկրում տնտեսական միջավայրը ձևավորող հիմնական մասնակից:

Պետության առջև կանգնած սոցիալ-տնտեսական և քաղաքական հիմնախնդիրների բարդությունից և դժվարությունից՝ առանձին ժամանակահատվածներում փոփոխվում են պետության գործառույթներն ու դրանց ուղղվածությունը, որոնք էլ այս կամ այն ժամանակահատվածում առանձնահատուկ են դարձնում պետության գործառույթները և կիրառվող գործիքակազմը: Այսպես, ՀՀ կառավարության 2019-2023 թվականների ծրագրում խնդիր դրվեց հանրապետությունում իրականացնել տնտեսական հեղափոխություն [2], ինչը պայմանավորված էր այն առանձնահատուկ հիմնախնդիրների լուծմամբ, որոնք կարևորվում են ներկա ժամանակահատվածի համար: Դրանք են՝ արտաքին և ներքին անվտանգության ապահովումը, պայքարը կոռուպցիայի դեմ, ազատ, արժանապատիվ և երջանիկ քաղաքացու վարքագծի ձևավորումը, տնտեսության շարունակական զարգացումը, ներառյալ՝ տնտեսական մրցակցության ապահովումը, պայքարը մենաշնորհների ու ստվերի դեմ, պետական եկամուտների ավելացումը, տնտեսական զարգացման սոցիալական էֆեկտի ապահովումը, զբաղվածության աճը, աղքատության հաղթահարումը, ինչպես նաև տնտեսական զարգացման առաջնահերթությունների նախանշումը [3]:

Տնտեսության պետական կարգավորման անհրաժեշտությունը հատկապես արդիական դարձավ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները հաղթահարելու գործում, ինչը ենթադրում է տնտեսական պատշաճ աճ ապահովելու համար պետական միջամտության անխուսափելիությունը: Ըստ որում՝ այդպիսի միջամտության աստիճանը պայմանավորված է, առաջին հերթին, տնտեսության պարբերաշրջանային զարգացման հետ, և հատկապես փուլային զարգացման այնպիսի դեպքերում, երբ տնտեսական աճի տեմպերը դանդաղում են, ինչն էլ վտանգում է թե՛ զարգացող, և թե՛ զարգացած երկրների սոցիալ-տնտեսական առաջընթացը: Այլ կերպ ասած, պետության տնտեսական միջամտությունը դառնում է տնտեսական աճի խթանման կարևոր միջոց և համապատասխան կառուցակարգերի ու գործիքակազմերի ընտրության և կիրառման գործընթաց: Այսպես, 1990-2000 թվականներին ՀՆԱ-ի միջին տարեկան հավելածն աշխարհում կազմել է 2.9 %, 2000-2017-ին՝ 2.8 %, իսկ առանձին երկրներում նույն ժամանակահատվածների համար

ՀՆԱ-ի հավելածի ցուցանիշների խզումը եղել է էական. ԱՄՆ-ում՝ համապատասխանաբար՝ 3.6% և 1.7%, Գերմանիայում՝ 1.7% և 1.2%, Ֆրանսիայում՝ 2.0% և 1.1%, Իտալիայում՝ 1.6% և -0.1%, Միացյալ Թագավորությունում՝ 2.7% և 1.5%, Ճապոնիայում՝ 1.2% և 0.7%, Կանադայում՝ 3.0% և 1.9%, Ռուսաստանի Դաշնությունում՝ -4.7% և 3.5%, Վրաստանում՝ -7.1% և 5.6%, Ադրբեջանում՝ -6.3% և 10.2%, Թուրքիայում՝ 3.9% և 5.4%, ԻԻՀ-ում՝ 2.3% և 3.0%, իսկ Հայաստանում՝ -1.9% և 5.8%: Ընդ որում՝ նշված ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ ցածր եկամուտներով երկրներում՝ 2.2% և 5.1%, միջինից ցածր եկամուտներով երկրներում՝ 3.4% և 5.8%, միջինից բարձր եկամուտներով երկրներում՝ 3.1% և 5.8%, իսկ բարձր եկամուտներով երկրներում՝ 2.8% և 1.6% [4]:

Ակներև է, որ ինչպես առանձին երկրներում, այնպես էլ տարածաշրջանային խումբ կազմող երկրների միությունում իրականացվող տնտեսական քաղաքականության գործիքակազմը և ուղղվածությունը եղել են տարբեր [5]:

Հայաստանի Հանրապետության պարագայում պետական կարգավորման ինչպես աստիճանը, այնպես էլ կիրարկվող գործիքակազմը մեծապես պայմանավորված է այն հանգամանքով, որ տնտեսության մեջ էականորեն փոփոխվել է պետական և մասնավոր հատվածների հարաբերակցությունը: Թերևս այդ պատճառով է նաև, որ ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) մեջ նշված է. «Հայաստանի Հանրապետության տնտեսական կարգի հիմքը սոցիալական շուկայական տնտեսությունն է, որը հիմնված է մասնավոր սեփականության, տնտեսական գործունեության ազատության, ազատ տնտեսական մրցակցության վրա և պետական քաղաքականության միջոցով ուղղված է ընդհանուր տնտեսական բարեկեցությանը և սոցիալական արդարությանը»: [6, հոդված 11]: Այլ կերպ ասած, ՀՆԱ-ի կազմում մասնավոր և պետական հատվածների հարաբերակցությունը (80 / 20) ենթադրում է, որ պետություն / մասնավոր հատված հարաբերակցության հաշվի առնելը պայմանավորում է ինչպես պետական կարգավորման հնարավորությունների ընդլայնումը (հատկապես՝ արտապատվիրման (աուֆսորսինգի) կիրառման), այնպես էլ մասնավոր հատվածի ներուժի օգտագործման միջոցով:

Հայտնի է, որ ՀՀ տնտեսության վրա էական ազդեցություն են թողնում ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրներից մուտք եղած փոխանցումները, որոնք տարբեր տարիներին ունեցել են տարբեր մեծություններ: Այսպես, 2004-ին նշված գումարների զուտ ներհոսքը կազմել է 266.2 մլն ԱՄՆ դոլար, 2012թ.-ին՝ 1377.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2018թ.-ին՝ 597.2 մլն ԱՄՆ դոլար [7]:

Հարևան պետության հետ հակասությունը զգալի ռեսուրսներ են խլում ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի Հանրապետության անվտանգությունն ապահովելու համար: Այսպես, 2018-ին ՀՀ պաշտպանության ծախսերը կազմել են 608.9 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ ավելի է 37%-ով (այդ ցուցանիշով Հայաստանը մտնում է ռազմական ծախսերի ամենաբարձր աճ ապահոված 10 երկրների ցանկի մեջ) և կազմում է ՀՀ ՀՆԱ-ի 4.8%-ը, իսկ պետական ծախսերի 20.9%-ը [8]:

Պետական կառավարման մարմինները իրենց ամենօրյա աշխատանքներում, այլ գործառույթների շարքում, կատարում են տնտեսական բարեփոխումների օրակարգի ձևավորման և ներդրման, հեռանկարային զարգացման ու ճյուղային տնտեսական քաղաքականությունների մշակման, մյուս երկրների հետ համագործակցության շրջանակի և ծրագրերի կազմման, մակրոտնտեսական և բյուջետային քաղաքականությունների մշակման աշխատանքները, ստեղծում են երկրի տնտեսության զարգացման, պետական և մասնավոր ներդրումային ծրագրերի համար իրավական դաշտը, ինչպես նաև իրականացնում են բազմաթիվ այլ բնույթի գործառույթներ, որոնք միասին վերցրած ներկայանում են որպես տնտեսության պետական կարգավորման գործիքակազմ [9]:

Անվիճելի է, որ տնտեսության զարգացման համար կարևոր է ճիշտ կիրառել պետության կողմից հաստատված կանոնները, քանի որ նույնիսկ դրանց մի մասի ոչ ճիշտ իրագործումը հանգեցնում է տնտեսական ու սոցիալական ճգնաժամերի: Հետևաբար, պետության դերը հասարակության տնտեսական ու սոցիալական զարգացման գործում առանձնահատուկ է և հանգում է այնպիսի խոշորացված նախապայմանների ապահովմանը, ինչպիսիք են՝ օրինականության հիմքերի հաստատումը, քաղաքական հավասարակշռության և մակրոտնտեսական կայունության ապահովում, սոցիալական ապահովության և ենթակառուցվածքային ոլորտներում ներդրումների իրականացումը, բնակչության առանձին խմբերին օժանդակության ցուցաբերումը, շրջակա միջավայրի պաշտպանությունը:

Հասարակության զարգացման որոշակի փուլում պետությունը բախվում է առանձնահատուկ (բացառիկ) խնդիրների հետ, որոնք պայմանավորված են պետական ծառայողների կողմից իրենց գործունեության նպատակների ոչ ճիշտ ընկալմամբ ու սեփական գործառույթների տապալմամբ: Այդպիսի խնդիր, օրինակ, առաջանում է, երբ քաղաքացիների (նրանց խմբերի) հարցադրումները շարունակաբար անտեսվում են, երբ որևէ ազդեցիկ խմբավորում, ելնելով իր հետաքրքրություններից ու հնարավորություններից, սեփական շահերի իրականացման նպատակով ներգործում է կառավարության գործունեության վրա: Մեկ այլ դեպքում,

տնտեսության մի շարք ոլորտներում (կրթության, գիտության, շրջակա միջավայրի պահպանության, առողջապահության և այլ) պետության գործունեության արդյունավետության վերահսկումը դառնում է դժվար իրականացվող և մեծ ջանքեր պահանջող գործառույթ:

Նշված երկու խնդրի գոյությունը հաճախ հասցնում է նրան, որ պետական կառավարման վարչական ապարատի ներկայացուցիչները ստանում են գործունեության լրացուցիչ՝ մեծ մասամբ չարդարացված ազատություն, ինչն էլ, մեղմ ասած, միշտ չէ, որ ծառայեցվում է պետության գործառույթների արդյունավետ իրականացմանը: Այս պատճառով էլ պետության առջև խնդիր է դրված՝ օգտագործել շուկայի «ուժեղ» կողմերը և տնտեսական ներուժը, միաժամանակ զգալի ուշադրություն դարձնելով և ուժեղացնելով ողջ պետական կառավարման համակարգի, այդ համակարգի մեջ մտնող առանձին մարմինների հնարավորությունները:

Վերը շարադրվածից հետևում է, որ պետության առաջնահերթ խնդիրներից մեկը ինստիտուցիոնալ կանոնների և նորմերի մշակումն է, ինչն իրական կդարձնի պետության գործառույթներն իր իրական հնարավորություններին համապատասխանեցնելու խնդրի լուծումը:

Երկրորդ խնդրի լուծումը նպատակ է հետապնդում ամրացնելու պետության ներուժը կանոնների, պայմանագրային հարաբերությունների, ինչպես նաև ներքին և արտաքին մրցակցության ուժեղացման հաշվին: Պետության հնարավորությունները և կառավարման գործառույթները նրա ներուժի հետ համապատասխանեցման ժամանակ պետք է հաշվի առնել ոչ միայն այն, թե ինչ է անում պետությունը, այլ նաև այն, թե ինչպե՛ս է դա անում:

Թեև ազատ շուկան լավ կազմակերպված կառուցակարգ է, որն ընդունակ է լուծել երկրում առաջացող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները, սակայն դրանց մի մասի լուծման համար տնտեսական կառուցվածքի իդեալական մոդելը նախատեսում է նաև պետական կարգավորման լծակների օգտագործում, որոնք կատարվում են մի շարք գործառույթների միջոցով: Պետության առաջին գործառույթը հիմքային խնդիրների ճիշտ լուծումն է, առանց որոնց հնարավոր չէ հասարակության բազմակողմանի զարգացումը և կայունությունը: Դրանք այն խնդիրներն են, որոնց լուծմամբ ապահովվում է տնտեսության կայուն զարգացումը և երկրի բնակչության բարեկեցության բարձրացումը:

Տնտեսության վրա պետության ներգործության աստիճանը

Տնտեսության պետական կարգավորման համակարգի ստեղծման գործում տնտեսագիտության «թուլությունը» պայմանավորված է մեթոդաբանական հիմքերի ոչ ամբողջական և լիարժեք մշակվածությամբ: Այդ իսկ

պատճառով նպատակահարմար ենք գտնում որոշակի առմամբ պարզաբանել մեթոդաբանական հիմնահարցերը: Մեր կարծիքով, տնտեսության պետական կարգավորման համակարգի ձևավորման հարցը պարզված կարելի է համարել, եթե որոշված են հետևյալ հարցերը՝

- տնտեսության վրա պետության ներգործման աստիճանը,
- այդպիսի ներգործման բնագավառները և ուղղվածությունը,
- տնտեսության վրա պետական ներգործության բնույթը, ներառյալ՝ գործիքակազմը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ տնտեսության զարգացման ժամանակակից փուլում կիրառվել ու կիրառվում են պետական կարգավորման մի քանի ձևի համակարգեր, որոնց պայմանական դասակարգումը՝ ըստ տնտեսության վրա պետության ներգործման աստիճանի հետևյալն է.

1. Տնտեսության կենտրոնացված պլանավորման համակարգ

Նման դեպքում պետության ներգործման աստիճանը հասցված է առավելագույնի: Այս համակարգի հիմքում ընկած է սեփականության (հիմնականում՝ արտադրության միջոցների նկատմամբ) պետական ձևը, իսկ համակարգի կառավարման տեսական հիմքը պլանավորման մասին գիտությունն է՝ հիմնված մարքս-լենինյան վերարտադրության ուսմունքի վրա:

Կենտրոնացված պլանավորման համակարգը համատարած կիրառում է ունեցել նախկին ԽՍՀՄ-ում և սոցիալիստական ճամբարի մյուս երկրներում, որոշակիորեն օգտագործվել է սոցիալիստական կողմնորոշում ունեցող երկրներում (Սիրիա, Ալժիր և այլն), ինչպես նաև զարգացած առանձին Եվրոպական պետություններում՝ հիմնականում պետական ոլորտի նկատմամբ՝ ձևափոխված տեսքով:

2. Տնտեսության դիրիժիստական կարգավորման համակարգ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո (1939-1945թթ. ժամանակաշրջանում), երբ պատերազմից տնտեսապես քայքայված եվրոպական պետությունները ձեռնարկեցին ծավալուն վերականգնողական աշխատանքներ: Խառը (մասնավոր և պետական) սեփականության և շուկայական հարաբերությունների առկայության պայմաններում ամենակոշտ պետական կարգավորման համակարգն է, որտեղ, ըստ էության, շուկայական տնտեսության վրա (ի տարբերություն առաջին համակարգի, որի հիմքում պլանային տնտեսությունն է) պետության ներգործման աստիճանն ամենաբարձրն է:

Դիրիժիստական տնտեսական քաղաքականության ցայտուն օրինակներն են XX դարի 50-60-ական թվականների Ֆրանսիայի, Գերմանիայի, Ճապոնիայի պետական կարգավորման համակարգերը: Ընդ

որում՝ տարբեր երկրներում այդ համակարգերը ունեցել են տարբեր անվանումներ (մենք օգտվել ենք Ֆրանսիայում այդպիսի քաղաքականության անվանումից): Օրինակ՝ Գերմանիայում պետական կոշտ կարգավորման համակարգը կոչվել է «սոցիալական շուկայական տնտեսություն», իսկ Ճապոնիայում՝ «վարչական ղեկավարման համակարգ»:

Դիրիժիստական համակարգի հիմնադրույթները ծնունդ են առել Զ.Մ.Քեյնսի հանրահայտ տեսությունից, որի համաձայն պետությունը պետք է ակտիվորեն մասնակցի մակրոտնտեսական խնդիրների լուծմանը: Նա, մասնավորապես, գրում էր. «Մի քանի այլ առումներով վերը շարադրված տեսությունը, ըստ իր եզրահանգումների, չափավոր պահպանողական է: Թեև այն կարևորում է կենտրոնացված վերահսկողություն ստեղծելու կենսական անհրաժեշտությունը հարցերում այն, որոնք այժմ հիմնականում տրված են մասնավոր նախաձեռնությանը, այնուամենայնիվ, գործունեության շատ լայն ոլորտներ մնացել են անձեռնամխելի: Պետությունը պետք է իր ազդեցությունը ունենա սպառման նկատմամբ հակվածության վրա մասամբ համապատասխան հարկային համակարգի, մասամբ էլ տոկոսի նորման արձանագրելու ճանապարհով: Դեռ ավելին, քիչ հավանական է թվում, որ բանկային քաղաքականության ազդեցությունը տոկոսի նորմայի վրա ինքնին բավարար է ներդրումների օպտիմալ չափ ապահովելու համար: Ուստի, ես պատկերացնում եմ, որ ներդրումների բավականին լայն սոցիալական ուղղվածությունը լրիվ զբաղվածությամբ մոտենալու միակ միջոցը կլինի: Միաժամանակ դա չպետք է բացառի մասնավոր նախաձեռնության հետ պետության կողմից բազմատեսակ փոխզիջումները և համագործակցության եղանակները: Սակայն, բացի այդ, չկան ակնհայտ հիմքեր պետական սոցիալիզմի համակարգի համար, որը կընդգրկեր հասարակության տնտեսական կյանքի մեծ մասը: Արտադրության գործիքների սեփականությունը չէ՛, որ էական է պետության համար: Եթե պետությունը կարողանար որոշել արտադրության գործիքների և դրանք տիրապետողների պարզևատրման հիմնական դրույքաչափերի ավելացման համար նախատեսված պաշարների ընդհանուր ծավալը, ապա դրանով կհասնեինք այն ամենին, ինչ անհրաժեշտ է: Բացի այդ, սոցիալական ուղղվածություն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումները կարելի է ներմուծել աստիճանաբար՝ չխախտելով հասարակության մեջ հաստատված ավանդույթները:» [10, Գլուխ 24]:

3. *Տնտեսության ազատական (լիբերալ) պետական կարգավորման համակարգ*

Այս համակարգը բնորոշվում է տնտեսության վրա պետության ներգործման համեմատաբար ցածր աստիճանով, սակայն բարձր է բաշխման (սոցիալական) բնագավառում պետության դերը: Նշված համակարգը համապատասխանում է լիարժեք շուկայական տնտեսակարգին և սկսած

1970-ական թվականներից արդյունավետ գործում է գրեթե բոլոր եվրոպական պետություններում: Ազատական տնտեսական քաղաքականությունը գիտականորեն սնվում է ժամանակակից «նեոքեյնսիական» տեսական ուղղություններից:

4. *Տնտեսության պահպանողական (կոնսերվատիվ) կարգավորման համակարգ*

Այս համակարգում պետության դերը տնտեսական հարցերի լուծման և կարգավորման գործում հասցված է նվազագույնի՝ պահպանելով ազատ շուկայական հարաբերությունների բնականությունը (այստեղից էլ տնտեսական քաղաքականության անվանումը):

Պահպանողական պետական կարգավորման համակարգը նախատեսում է մասնավոր սեփականության գերիշխումը տնտեսության մեջ և հենվում է այսպես կոչված «պահպանողական բնույթի» տնտեսագիտական տեսությունների վրա: Դրանցից ամենահանրահայտը «մոնետար» տեսությունն է: «Պահպանողական բնույթի» տեսություններից են նաև ռացիոնալ սպասումների, հարմարեցվող սպասումների, առաջարկի, նոր դասական տնտեսագիտության և այլ տեսությունները [11]:

Բերված դասակարգումից կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական, սոցիալական և տնտեսական պայմաններին ամենաշատը համապատասխանում է պետական կարգավորման դիրիժիստական համակարգը: Վերջինիս օգտին են վկայում թե՛ անհրաժեշտ և թե՛ բավարար գործոնների առկայությունը:

Անհրաժեշտ գործոններից կարող ենք նշել ազգային շահի՝ ուժեղ պետության հաստատման իրականացումը, դարաբաղյան պատերազմից քայքայված տնտեսությունում վերականգնողական աշխատանքների ծավալումը, պոտենցիալ իրադրությունում տնտեսության ճկունության և դիմակայունության ապահովումը, ինչպես նաև նոր շուկայական հարաբերություններին հնարավորին չափ անցավ անցումը:

Բավարար պայմաններից կարևորներն են՝ հանրապետության տնտեսությունում դեռևս պետական ոլորտի զգալի դիրքը, շուկայական հարաբերությունների անկատարությունն ու ոչ լիարժեքությունը, շուկայական ենթակառուցվածքների թերզարգացվածությունը կամ դրանց մի զգալի մասի սաղմնային վիճակը և տնտեսական բնագավառում իրավական դաշտի ոչ լիարժեք ձևավորումը:

Այս ամենը թելադրում է պետության կողմից տնտեսական հարցերի կարգավորման մեթոդների կիրառման և ներգործության որոշակի գործիքակազմի ներդրում:

Միաժամանակ, դիրիժիստական ձևի պետական կարգավորման համակարգի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ ներգործումը կատարվում է գլխավորապես տնտեսության մակրոմակարդակում, հնարա-

վորին քիչ չափով միջամտելով տնտեսակարգի ստորին օղակների կառավարման հարցերին: Սակայն այդպիսի համակարգի գործարկումը չի բացառում պետության միջամտությունը նաև միկրոտնտեսական մակարդակում, հատկապես պետական մենաշնորհի հանդիսացող բնագավառներում և ոլորտներում: Այն, իհարկե, ելնում է նաև ռազմաարդյունաբերության ճյուղի զարգացման, որոշակի ապրանքների ու ծառայությունների մրցունակության ապահովման, արտաքին շուկաների նվաճման և մյուս կարևոր խնդիրների լուծման անհրաժեշտությունից, որոնք նշված են ՀՀ կառավարության գործող ծրագրում:

Կարծում ենք, ՀՀ կառավարության ծրագրում ամրագրված չորս կարևորագույն խնդիրները (դրանք են՝ 1) տնտեսական գործունեության հնարավորությունների ընդլայնումը, 2) պետական կառավարման արդյունավետության բարձրացումը, 3) մարդկային ռեսուրսի զարգացումը և 4) հուսալի ենթակառուցվածքների զարգացումը ու հասանելիության ընդլայնումը) և դրանցում ներառված ենթախնդիրները իրենցից ներկայացնում են մասնավոր նախաձեռնության և պետական կարգավորման միախառնության ձև [2]:

Այսօր, խորացող գլոբալացման այս դարաշրջանում, յուրաքանչյուր երկրի պետական կարգավորման (կառավարման) մոտեցումների ձևը՝ պետական կարգավորման գործընթացը ուղղակիորեն բնութագրում է այդ պետության «կառավարման մշակույթը», բնութագրում է պետական կարգավորման առանձնահատկությունները: «Մեր ապագան մեր բոլորի ճիգերի արդյունքն է. ինչպիսին մեր ճիգերն են, այնպիսին էլ մեր ապագան է: Ինչպիսին գերակայող արժեքներն են, այնպիսին էլ մարդիկ են և հասարակությունը: Ցանկացած քաղաքակրթություն կարող է դիմակայել նյութական կորստին ու վերականգնվել, եթե պահպանված են նրա ակունքներում գտնվող մշակութային արժեքները: Կառավարման մշակույթը համամարդկային մշակութային նվաճումների կիրառումն է կառավարման ոլորտում և հանրային մշակույթի բաղկացուցիչ մասը: Այսօր մարդկությանն անհրաժեշտ են ոչ այնքան նոր տեսակետներ, որքան աշխարհի նոր ընկալում, նոր մտածողություն» [12]:

Այսպիսով, ներկայում, և առաջիկա 4-5 տարիների ընթացքում, համաշխարհային տնտեսական աճի տեմպերը դանդաղում են, ինչն էլ վտանգում է ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների տնտեսական աճն ու սոցիալ-տնտեսական առաջընթացը: Նման պայմաններում տնտեսական աճի հիմնախնդիրն արդիական է, և յուրաքանչյուր երկրում կարևոր է տնտեսական աճի խթանման արդյունավետ մեխանիզմների և գործիքակազմի ընտրությունը: Բացի այդ, համաշխարհային տնտեսությունում ծավալվող տնտեսական երևույթների պայմաններում ՀՀ տնտեսությունը ենթարկվել է և դեռ կենթարկվի բազմաթիվ արտաքին ցնցումների, որոնք տարբեր ուղիներով փոխանցվում և խաթարում են

հանրապետության մակրոտնտեսական կայունությունը: Ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկերի նկատմամբ ՀՀ տնտեսության խոցելիության նվազմանն ուղղված անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումն օբյեկտիվ անհրաժեշտություն են, և մեր կարծիքով առաջիկայում ՀՀ կառավարության կողմից ընտրված պետական կարգավորման հիմնական եղանակը պետք է լինի դիրիժիստականը, որն անհրաժեշտ է զուգակցել տնտեսության ազատական կարգավորման համակարգի հետ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Ջեյնս Դ. Գորթնի, Ռիչարդ Լ. Սթրուսի, Դվայթ Ռ. Լի, Թաունի Հ. Ֆերարինի**, «Ընդհանուր տնտեսագիտություն (թարգմանություն անգլերենից)», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2013թ., 288 էջ:
2. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2019թ. փետրվարի 8-ի N 65-Ա որոշում, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2019թ.-ի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ:
3. «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» ՀՀ կառավարության 2018թ.-ի հունիսի 1-ի N 581-Ա որոշում, <http://www.gov.am/files/docs/2782.pdf>
4. **World Development Indicators**, Growth of Output. Publication date – 13.05.2019. <http://wdi.worldbank.org/table/4.1#>
5. **Սարգսյան Հ., Մարկոսյան Ա.**, «Հայաստանի տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները», Եր., «Ձանգակ» հրատ., 2014թ., 552 էջ:
6. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններ», ընդունվել է 2015 թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայք:
7. ՀՀ կենտրոնական բանկի տվյալներով՝ <https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx>
8. SIPRI Military Expenditure Database, Publication date – 01.05.2019 <https://www.sipri.org/databases/milex>
9. «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքը, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թ. մարտի 23-ին, ՀՕ-260-Ն, Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգի պաշտոնական՝ www.arlis.am կայք:
10. **Քեյնս Զ. Մ.**, «Զբաղվածության, տոկոսի և փողի ընդհանուր տեսություն», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2006թ., 392 էջ:
11. **Մարկոսյան Ա. Խ.**, «Պետությունը և շուկան. գիրք առաջին», Եր., «Տիգրան Մեծ» հրատ., 2000 թ., 560 էջ:
12. **Ջալինյան Ա., Եղիզարյան Վ.**, «Կառավարման և ինքնակառավարման մշակույթ» (ուսումնամեթոդական ձեռնարկ), Եր., «ԱՍՈՂԻԿ» հրատ., 2017թ., 176 էջ:

МЕТОДЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ ЭКОНОМИКИ И ИХ ОСОБЕННОСТИ В РА

АШОТ МАРКОСЯН¹, АШОТ ЗАЛИНЯН²

¹ *Ереванский государственный университет*

² *Академия государственного управления Республики Армения*

Основными источниками экономического прогресса являются правовая система, наличие конкурентных рынков и, конечно, границы государственного регулирования или, как принято говорить, политика регулирования. Формирование системы государственного регулирования должно дать ответ на следующие основные вопросы: о степени влияния государства на экономику, об областях и направлениях такого воздействия, а также о характере влияния государства на экономику (включая инструменты регулирования).

Анализируя системы государственного регулирования экономики, применяемые в современном мире, а также сущность этих систем, авторы пришли к выводу о том, что дирижистские методы регулирования экономики являются наиболее приемлемыми в нынешних экономических условиях в Республике Армения.

Ключевые слова: государственное регулирование экономики, система регулирования, частная инициатива, дирижистские методы регулирования, инструментарий регулирования.

METHODS OF STATE REGULATION OF ECONOMY AND THEIR PECULIARITIES IN RA

ASHOT MARKOSYAN¹, ASHOT ZALINYAN²

¹ *Yerevan State University*

² *Public Administration Academy of the Republic of Armenia*

The main sources of economic progress are the legal system, the existence of competitive markets and, of course, the boundaries of state regulation or, as they say, regulation policy. Formation of the state regulation system should answer the following main questions: the extent of state influence on the economy, the areas and directions of such influence, as well as the nature of the state influence on the economy (including regulatory instruments).

Analyzing the systems of state regulation of the economy applied in the modern world, as well as the essence of these systems, the authors concluded that the dirigisme methods of regulating the economy are most acceptable for the current economic conditions in the Republic of Armenia.

Keywords: state regulation of the economy, the regulatory system, private initiative, dirigisme methods of regulation, regulatory instruments.

*Ներկայացվել է խմբագրություն 04.03.2019
Երաշխավորվել է տպագրության 24.04.2019*

ՀՏԴ 339.138:004

**ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԹՎԱՅԻՆ ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԷՎՈԼՅՈՒՑԻՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԵՎ ԴՐԱ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ
ՎԱՇԵ ԹՈՒՄԱՆՅԱՆ¹**

¹ Հայաստանում ֆրանսիական համալսարան հիմնադրամ

Հոդվածում դիտարկվում է թվային մարքեթինգի էվոլյուցիոն զարգացումը և դրա կարևորությունը մարքեթինգային հաղորդակցություններում, թվային մարքեթինգի երկու հիմնական տեսակները՝ անցանց ու առցանց, և դրանց տարբերությունները: Առաջարկվում է օգտագործել անցանց թվային մարքեթինգը և առցանց թվային մարքեթինգը համատեղ ապրանքների և/կամ ծառայությունների առաջխաղացման ու գովազդային արշավների իրականացման մեջ առավելագույն արդյունքի և արդյունավետության հասնելու համար:

Բանալի բառեր. թվային մարքեթինգ, առցանց թվային մարքեթինգ, անցանց թվային մարքեթինգ, թվային հեռուստատեսություն, որոնման համակարգեր:

«Թվային մարքեթինգ» տերմինն իրենից ներկայացնում է ցանկացած տեսակի ու ձևի մարքեթինգային հաղորդագրության փոխանցումը՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված կամ ձևավորված ուղիները, սարքերը և հարթակները, անկախ նրանից, թե դրանք փոխանցվում են համացանցի միջոցով, թե ոչ: Այսինքն՝ թվային մարքեթինգը կարող է լինել 2 տեսակի՝


1. առցանց,
2. անցանց:

Առցանց թվային մարքեթինգը համացանցի միջոցով թվային մարքեթինգի իրականացումն է, իսկ անցանց թվային մարքեթինգը՝ առանց համացանցի օգտագործման միջոցով իրականացվող թվային մարքեթինգն է:

Մինչ «Թվային հեղափոխություն»-ը, որը հայտնի է նաև «Արդյունաբերական երրորդ հեղափոխություն» անվամբ, գովազդային արշավներն իրականացվում էին հիմնականում մեխանիկական և/կամ անալոգային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված կամ ձևավորված ուղիներով և հարթակներով [1]: Որպես մեխանիկական և/կամ անալոգային տեխնոլոգիաների միջոցով ստեղծված

կամ ձևավորված ուղիներով և հարթակներով մարքեթինգի պարզ օրինակ ծառայում են տպագիր թռուցիկները, տպագիր գովազդային վահանակները, անալոգային հեռուստատեսությամբ ցուցադրվող գովազդային հոլովակները և այլն: «Թվային հեղափոխություն»-ը սկսվեց 1950-ական թվականների վերջից մինչև 1970-ական թվականների վերջը, երբ սկսվեց թվային համակարգիչների լայնամասշտաբ տարածումը, և շարունակվում է մինչ օրս: Եթե 1980-ականների վերջին տեխնոլոգիայի միջոցով պահվող տեղեկատվության 1%-ից քիչն էր միայն պահվում թվային տարբերակով, ապա 2007 թվականին արդեն այդ ցուցանիշը դարձավ 94%, իսկ 2014 թվականին՝ 99%: Բացի այդ, 2002 թվականը համարվում է այն տարին, երբ մարդկությունը կարողացավ պահել ավելի շատ տեղեկատվություն թվային տարբերակով, քան անալոգային, որն էլ դարձավ «Թվային դարաշրջանի» սկիզբը:

Ստորև ներկայացված է տեխնոլոգիայի միջոցով պահվող տեղեկատվության բաշխվածությունն անալոգային և թվային տարբերակներով 1983-ից 2007 թվականների ընթացքում [2]:



Գծապատկեր. Անալոգային և թվային տարբերակներով պահվող տեղեկատվության բաշխվածությունը 1983- 2007 թթ.

«Թվային դարաշրջան»-ի սկիզբը նոր էջ բացեց տեղեկատվության ստեղծման, փոփոխման և հատկապես տարածման ու պահպանման համար: Թվային տեխնոլոգիաների զարգացումն ու տարածումը նաև վերափոխեց գովազդային արշավների պլանավորումն ու իրականացումը: Մինչ 1991 թվականը, երբ համացանցը

դարձավ հանրության համար հասանելի [3], մարքեթինգի մասնագետներն ու գովազդային գործակալներն օգտագործում էին հիմնարդեն հանրությանը հայտնի որպես անցանց թվային մարքեթինգը, որն իրենից ներկայացնում է թվային տարբերակով ինքնուրույն աշխատող սարքերի կիրառմամբ գովազդային արշավների իրականացումը: Իհարկե, այդ ժամանակահատվածում մարքեթինգի շատ մասնագետներ օգտագործում էին նաև տպագիր և անալոգային տարբերակով գովազդային կրիչները, բայց թվային տարբերակը կամաց-կամաց դառնում էր նրանց նախընտրելի տարբերակը: Անցանց թվային մարքեթինգի օգտագործման ամենահայտնի օրինակներից մեկը թվային գովազդային վահանակների միջոցով գովազդային հաղորդագրությունների փոխանցումն է: Ի տարբերություն տպագիր գովազդային վահանակների՝ թվային գովազդային վահանակները հնարավորություն են տալիս ստանալ պատկերի ավելի բարձր որակ, ապահովում են գովազդային հաղորդագրությունը փոփոխելու և թարմացված տարբերակով կամ նորով փոխարինելու ճկունություն և արագություն: Բացի այդ, թվային գովազդային վահանակները հնարավոր է կառավարել հեռահար տարբերակով՝ պարզապես համակարգչի միջոցով հեռացնելով հին տարբերակը և ներբեռնելով նորը, իսկ տպագիր գովազդային վահանակների դեպքում անհրաժեշտ է վարձել համապատասխան տպագիր կազմակերպություն՝ նոր կամ թարմացված տարբերակը տպագրելու համար (կամ ունենալ սեփական տպագրական մեքենաները), այնուհետև գովազդային գործակալության միջոցով ուղարկել համապատասխան աշխատողների՝ այդ փոխարինումը ֆիզիկապես իրականացնելու համար: Թվային տեխնոլոգիան նման դեպքում խնայում է ինչպես ժամանակը, այնպես էլ ծախսերը և ապահովում հնարավոր ամենաբարձր արդյունավետությունը թե՛ մարքեթինգի մասնագետների, թե՛ հենց կազմակերպության համար: Անցանց թվային մարքեթինգի կրիչի մյուս հայտնի օրինակը թվային հեռուստատեսությունն է, որը հանրությանը հասանելի դարձավ 1990 թվականին [4]: Թվային հեռուստատեսության հիմնական տարբերությունն անալոգային հեռուստատեսությունից այն է, որ դիտորդին կարողանում է փոխանցել պատկերի ավելի բարձր ու մանրակրկիտ որակ, պատկերի ավելի լայն “Aspect ratio”, որն իրենից ներկայացնում է պատկերի երկարության և լայնության հարաբերակցությունը,

ինչպես նաև նրանում, որ թվային տեխնոլոգիան հնարավորություն է տալիս միևնույն հաճախականության համար փոխանցելու ավելի շատ տեղեկատվություն, քան անալոգային տեխնոլոգիայի կիրառման պարագայում: Թվային հեռուստատեսության այս բոլոր առավելությունները հնարավորություն տվեցին մարքեթինգի մասնագետներին և գովազդային գործակալներին նկարահանելու ու ցուցադրելու ավելի որակյալ գովազդներ հեռուստատեսությամբ հեռարձակվող հաղորդումների միջև ընկած ժամանակահատվածում, իրականացնելու իրենց ապրանքների և/կամ ծառայությունների ավելի արդյունավետ առաջխաղացում հենց հաղորդումներում և այլն: Հեռուստատեսության այս առաջընթացը կարևոր էր հատկապես մարքեթինգի մասնագետների և գովազդային գործակալների համար, քանի որ հեռուստատեսությունը համարվել և մինչ օրս էլ համարվում է առաջխաղացման ամենատարածված ու ամենարդյունավետ միջոցը: Օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում չափահաս մարդը միջինում հատկացնում է 4 ժամ 10 րոպե հեռուստատեսությանը՝ ըստ 2018 թվականի առաջին եռամսյակի համար իրականացված հետազոտության [5]: Իհարկե, ներկայում հեռուստատեսություններն անցում են կատարում կաբելային հեռարձակումից դեպի համացանցային հեռարձակում, որի ժամանակ պատկերի ու ձայնի փոխանցումը դիտորդին իրականացվում է համացանցի միջոցով, սակայն այս պարագայում նույնպես այդ ամենն իրականացվում է թվային տարբերակով: Այսինքն՝ թվային հեռուստատեսության նշված բոլոր առավելությունները գործում են թե՛ կաբելային, թե՛ համացանցային հեռարձակման դեպքում:

Երբ 1992 թվականի դեկտեմբերի 2-ին առաջին տեքստային կարճ հաղորդագրությունն ուղարկվեց բջջային ցանցի միջոցով [6], այն նշանավորեց գովազդային արշավի իրականացման մի նոր ձևի զարգացման սկիզբը: Բջջային հեռախոսների տարածումն էլ ավելի նպաստեց անցանց թվային մարքեթինգի այս կրիչի կիրառման անհրաժեշտությունը և բարձրացրեց վերջինիս արդյունավետությունը: 2017 թվականի չորրորդ եռամսյակի տվյալներով արդեն 5 միլիարդ մարդ օգտվում է բջջային կապի ծառայություններից, այդ թվում՝ կարճ հաղորդագրություններ ստանալու: Այս ցուցանիշը կազմում է աշխարհի բնակչության երկու երրորդը, և կանխատեսումները ցույց են տալիս, որ այն կդառնա 75% 2020 թվականին [7]:

Այս բարձր ցուցանիշը հնարավորություն է տալիս մարքեթինգի մասնագետներին իրենց ապրանքների և/կամ ծառայությունների առաջխաղացմանն ուղղված հաղորդագրությունները հասցնել սպառողների ավելի լայն զանգվածին: Ներկայում համացանցի միջոցով հաղորդագրությունների փոխանակման միջոցներն ավելի մեծ տարածում են գտնում հանրության շրջանում, ինչպես օրինակ՝ “Messenger”, “WhatsApp”, “Viber”, “Skype”. “Telegram” հարթակները, բայց միևնույն է բոլորն աշխատում են բջջային հեռախոսների վրա և թվային տարբերակով:

Ինչ վերաբերում է առցանց թվային մարքեթինգի կրիչներին, դրանց հիմնական տեսակներն են՝

1. **Որոնման համակարգերի օպտիմալացում.** որոնման այնպիսի համակարգերը, ինչպես, օրինակ՝ “Google”, “Bing”, “Yahoo”, “Baidu” և այլն, համացանցում օգտագործման մակարդակով զբաղեցնում են առաջատար դիրքեր: Մասնավորապես, “Google”-ի միջազգային կայքէջը՝ “www.google.com”-ը հանդիսանում է ամենաշատ օգտագործվող կայքէջը ոչ միայն որոնման համակարգերի շրջանում, այլ նաև ողջ համացանցում [8]: Համացանցի օգտատերերը սովորաբար գտնում են իրենց ուզածը համացանցում՝ օգտվելով որոնման համակարգերի ծառայություններից: Այդ իսկ պատճառով, մարքեթինգի մասնագետների համար կարևոր է օպտիմալացնել իրենց կազմակերպության և/կամ ապրանքների և/կամ ծառայությունների կայքէջը որոնման համակարգերի համար, որպեսզի համապատասխան բանալի բառերը մուտքագրելուց հետո այն հայտվի որոնման արդյունքների սկզբնամասում:

2. **Սոցիալական ցանցերի մարքեթինգ.** սոցիալական ցանցերը նույնպես հանդիսանում են համացանցում ամենաշատ օգտագործվող հարթակները: Մասնավորապես, “Facebook”-ը երրորդ ամենաշատ օգտագործվող կայքէջն է համացանցում, “Twitter”-ը՝ տասնմեկերորդ, “Vk”-ն՝ տասնհինգերորդ, իսկ “Instagram”-ը՝ տասնվեցերորդ [9]: Այդ իսկ պատճառով շատ կարևոր է իրականացնել ապրանքների և/կամ ծառայությունների գովազդային արշավներ և առաջխաղացման ծրագրեր նաև սոցիալական ցանցերում, որտեղ տեղեկատվության շրջանառությունը բարձր է:

3. **Դիսփլեյ գովազդ.** առցանց թվային մարքեթինգի այս գործիքը իրենից ներկայացնում է առցանց որևիցե կայքէջում կամ բջջային հեռախոսի որևիցե հավելվածում գովազդային հաղորդագրության տեղադրումը տեքստի, նկարի, տեսանյութի տեսքով կամ այս երեքի համադրությամբ: Սովորաբար, երբ գովազդային համապատասխան հաղորդագրությունն ստանում է քլիք, ապա այն կայքէջի կամ հավելվածի սեփականատերը,

որն իր մոտ տեղադրել էր հաղորդագրությունը ստանում է վճար գովազդատուից յուրաքանչյուր նմանատիպ քլիքի համար: Հնարավոր է նաև սահմանվի հաստատուն վճար կայքէջի կամ հավելվածի որևէ հատվածում որոշակի ժամանակահատվածում գովազդը տեսանելի դարձնելու համար: Այս մեթոդը մարքեթինգի մասնագետների կողմից հիմնականում օգտագործվում է այն կայքէջերում և/կամ հավելվածներում, որոնք ունեն բազմաթիվ այցելուներ և/կամ օգտատերեր: Նմանատիպ գովազդներ տեղադրվում են հատկապես որոնման համակարգերի և նորությունների կայքէջերում, սոցիալական ցանցերի հավելվածներում և տեսանյութերի տեղադրման հարթակներում: Օրինակ՝ որոնման համակարգերում դիսփլեյ գովազդի տեղադրումը որոնման համակարգերի օպտիմալացումից տարբերվում է նրանով, որ նախ և առաջ առաջին տարբերակը վճարովի է, երկրորդը՝ ոչ, իսկ հետո նաև նրանով, որ առաջինի պարագայում գովազդը տեսանելի է օգտատերերին առանց իրենց կողմից հետաքրքրություն ցուցաբերելու (իհարկե, մասնագետները փորձում են գովազդները տեղադրել օգտատերերի հետաքրքրություններին համապատասխան), իսկ օպտիմալացման դեպքում կայքէջը բնական ճանապարհով հայտնվում է որոնման արդյունքների սկզբնամասում և դառնում տեսանելի օգտատերերի համար:

4. Էլեկտրոնային փոստի մարքեթինգ. գովազդային արշավի այս տեսակն էլ օգտագործում է էլեկտրոնային փոստի ծառայությունների մատուցող ընկերությունների միջոցով օգտատերերի էլեկտրոնային հասցեներին գովազդային իրենց հաղորդագրություններն ուղարկելու համար: Գովազդային այդ հաղորդագրությունները սովորաբար լինում են տեքստի և/կամ նկարի տեսքով. կարող են նաև ներառել որոշ կայքէջերի հղումներ:

5. “Big Data”, որն իրենից ներկայացնում է մեծ ծավալի տեղեկատվության վերլուծության և դրա հիման վրա կայացվող եզրակացությունների համակարգ, որը ստեղծվեց թվային տեխնոլոգիայի զարգացմանը զուգընթաց: Այս համակարգի միջոցով մարքեթինգի մասնագետները հնարավորություն ստացան կատարելու այնպիսի վերլուծություններ այնպիսի կարճ ժամանակահատվածում, ինչը հնարավորություն է տալիս նախագծել և իրականացնել հնարավորինս արդյունավետ գովազդային արշավներ առաջխաղացման իրենց ծրագրերում:

Այսպիսով՝ «Թվային հեղափոխություն»-ը նպաստեց թվային մարքեթինգի ստեղծմանն ու զարգացմանը, որն իր հերթին ներառում է անցանց և առցանց տեսակները: Թվային հեռուստատեսության և բջջային հեռախոսների լայն տարածման շնորհիվ անցանց թվային մարքեթինգը դարձավ գովազդային արշավների իրականացման շատ կարևոր կրիչ: Համացանցի ստեղծումն ու լայնածավալ

օգտագործումն էլ նպաստեց առցանց թվային մարքեթինգի կիրառման կարևորության բարձրացմանը: Ուստի, մարքեթինգի այսօրվա մասնագետներին ու արդի գովազդային գործակալներին անհրաժեշտ է համատեղել թվային մարքեթինգի այս երկու տարատեսակներն իրենց ապրանքների և/կամ ծառայությունների առաջխաղացման ու գովազդային արշավների իրականացման մեջ առավելագույն արդյունքի և արդյունավետության հասնելու համար՝ ապահովելով ապրանքների և/կամ ծառայությունների վաճառքների աճ, հայտնիության մակարդակի բարձրացում ու շահույթի օպտիմալացում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. "The Digital Revolution", Steven E. Schoenherr, 5 May 2004.
2. "The World's Technological Capacity to Store, Communicate, and Compute Information", Martin Hilbert and Priscila López, 10 February 2011.
3. "World Wide Web Timeline", Pew Research Center, 11 March 2014 հասանելի www.pewinternet.org կայքէջում:
4. "The Origins and Future Prospects of Digital Television", Benton Foundation հասանելի www.benton.org կայքէջում:
5. "The Nielsen Total Audience Report: Q1 2018", "Nielsen" global information and measurement company, 31 July 2018 հասանելի www.nielsen.com կայքէջում:
6. "15 years of text messages, a 'cultural phenomenon'", Victoria Shannon, 5 December 2007 հասանելի www.nytimes.com կայքէջում:
7. "Global Mobile Trends 2017", GSMA Intelligence, September 2017.
8. "The top 500 sites on the web", Alexa Internet, 17 March 2019 հասանելի www.alexa.com կայքէջում:
9. "The top 500 sites on the web", Alexa Internet, 19 March 2019 հասանելի www.alexa.com կայքէջում:

ЭВОЛЮЦИОННОЕ РАЗВИТИЕ ЦИФРОВОГО МАРКЕТИНГА И ЕГО ЗНАЧЕНИЕ В МАРКЕТИНГОВЫХ КОММУНИКАЦИЯХ

ВАГЕ ТУМАНЯН ¹

¹ *Фонд французского университета в Армении*

Статья посвящена эволюционному развитию цифрового маркетинга и его значению в маркетинговых коммуникациях, двум основным типам цифрового маркетинга - офлайн и онлайн, и их отличиям друг от друга. рекомендуется использовать офлайн цифровой маркетинг и онлайн цифровой маркетинг вместе для достижения максимальной производительности и эффективности в продвижении и рекламных кампаниях продуктов и/или услуг.

Ключевые слова: цифровой маркетинг, онлайн цифровой маркетинг, офлайн цифровой маркетинг, цифровое телевидение, поисковые системы.

THE EVOLUTIONARY DEVELOPMENT OF DIGITAL MARKETING AND ITS IMPORTANCE IN MARKETING COMMUNICATIONS

VAHE TUMANYAN ¹

¹ *“French University in Armenia” Foundation*

The article is dedicated to the evolutionary development of digital marketing and its importance in marketing communications, two main types of digital marketing - offline and online, and their difference from each other. It is recommended to use offline digital marketing and online digital marketing together to achieve maximum productivity and efficiency in products and/or services promotion and advertising campaigns.

Keywords: digital marketing, online digital marketing, offline digital marketing, digital television, search engines.

*Ներկայացվել է խմբագրություն 14.03.2019
Երաշխավորվել է տպագրության 29.05.2019*

ՀՏԴ 378.046

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ԳՈՐԻՈՒՆ ԱԴԱՄՅԱՆ¹, ՆՈՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ²

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

² Երևանի պետական համալսարան

*Պահանջվեց 38 տարի, որպեսզի ռադիոն դառնար
հասանելի երկրագնդի 50 մլն բնակչության համար,
13 տարի՝ որպեսզի հեռուստացույցից օգտվեր շուրջ
60 մլն բնակչություն, և ընդամենը 4 տարի, որպեսզի
համացացանցը հասանելի լիներ արդեն 80 մլն մարդու [1]:*

Հեռավար ուսուցումը նոր մոտեցումներ է պահանջում համալսարանական կրթության կազմակերպման ոլորտում: Նախ և առաջ անհրաժեշտություն է ծագում ձևավորելու WEB լսարանի և էլեկտրոնային կրթական միջավայրի ձևավորման հստակ հայեցակարգ: Բացի այդ, հեռավար ուսուցումը պահանջում է մանկավարժական նորամուծական մոտեցումներ և ուսանողների ու դասախոսների միջև արդյունավետ հետադարձ կապի և հաղորդակցման ապահովում: Եվ ի վերջո, հեռավար ուսուցման պարագայում անհրաժեշտություն է առաջանում ձևավորելու էլեկտրոնային դեկանատներ և կազմակերպել էլեկտրոնային վարչարություն:

Բանալի բառեր. հեռավար ուսուցում, էլեկտրոնային կրթական պաշարներ, WEB լսարան, ուսանողակենտրոն ուսուցում, կրթության արդյունավետություն, ավանդական կրթություն:

Հեռավար ուսուցման պահանջն առաջացավ դեռևս երկու դար առաջ, երբ մասնագիտական կրթական ծառայությունները խիստ կենտրոնացած էին խոշոր քաղաքներում և երկրի ծայրամասերում բնակվող ազգաբնակչությանը մատուցվում էր դասավանդում՝ պարզապես օգտագործելով համընդհանուր թղթակցային փոստը: Այգեք Փիթմանն առաջինն էր, որ դեռևս 1840 թ. կազմակերպեց թղթակցային հեռուսուցման դասընթաց, երբ ուսանողը փոստով առաջդրանք էր ստանում դասավանդողից, և այնուհետև, լուծելով այն՝ նորից փոստով հետ էր ուղարկում առաջադրանքի պատասխանը [2]: Բնականաբար, դասավանդման խմբային ձևաչափն այստեղ կիրառելի չէր, և գործում էր «ուսանող-դասավանդող» անհատական կապը:

Լոնդոնի թագավորական համալսարանը 1856 թ. թույլ տվեց ուսանողներին էքստեն ճանապարհով, առանց լիարժեք դասերին հաճախե-

լու, պաշտպանել ավարտական ատենախոսություններ: Սակայն, հաջողության հասնելու համար, ուսանողները պարբերաբար կարճաժամկետ դասընթացների էին մասնակցում, որն այնուհետև համակարգային բնույթ ստացավ մի շարք բուհերում: Այսպես, 1874 թ. ԱՄՆ-ի Իլիանոյիսի համալսարանն առաջին անգամ կիրառեց մասնագիտական կրթության հեռակա և հեռավար ուսուցման համակցված տարբերակ, որն արագորեն իր զարգացումը գտավ մի շարք առաջավոր բուհերում:

Հատկապես նշանավորվեց Բրիտանական բաց համալսարանը, որը մասնագիտացավ հեռավար ուսուցման համակարգում և ունեցավ այդ ժամանակների համար ուսանողների ամենամեծ թվաքանակը [3]: Համալսարանը 1877 թ. արդեն թույլ էր տալիս բոլոր մասնագիտությունների գծով (բացի բժշկությունից) ուսանողներին հանձնելու ավարտական քննություններ, անգամ եթե նրանք ինքնաուսուցմամբ կամ հեռավար ուսուցմամբ էին գիտելիքներ ձեռք բերել: Սակայն, հեռաուսուցումն այս պարագայում լիովին հիմնված էր փոստային հաղորդակցման վրա:

Այնուամենայնիվ, հեռաուսուցման շրջանակների ընդլայնմանը զուգահեռ, ակադեմիական միջավայրում սկսեցին շրջանառվել այնպիսի տերմիններ, ինչպիսիք էին. home study (տնային դասավանդում), external student (էքստեռն ուսանող), independent study (անկախ ուսուցում) extension (հիմնական դասընթացի լրացուցիչ կուրսեր):

Արդեն 1930-ական թթ. որպես հեռաուսուցման գործիք, սկսեցին կիրառել ռադիոն, իսկ 1950-ական թվականներից՝ հեռուստատեսությունը: Ուիլսոնն իր հետազոտության արդյունքերով բացահայտեց, որ հեռուստադասընթացները որոշ մասնագիտությունների գծով առավել արդյունավետ են, քան ավանդական դասընթացները [4]: Սակայն նաև ընդգծվեց, որ անհրաժեշտ է կազմակերպել ոչ թե միակողմանի դասընթաց «դասախոսից դեպի ուսանող» ձևաչափով, այլև երկխոսության վրա հիմնված ուսուցում՝ կրթության շահառուների միջև:

Տեղեկատվական սարքերի զարգացմանը զուգընթաց, XX դարի վերջին քառորդում սկսեցին հիմնադրվել ոչ ավանդական համալսարաններ, որոնք հիմնականում ֆինանսավորվում էին հանրային միջոցներով և իրականացնում էին հեռաուսուցում: Բրիտանական բաց համալսարանի գործունեության մոդելով ոչ ավանդական համալսարաններ հիմնադրվեցին Իսրայելում, Գերմանիայում, Ավստրալիայում, Հնդկաստանում, Կանադայում և ԱՄՆ-ում: Միայն, 1970-1984 թթ. ընթացքում մոլորակի վրա սկսեցին գործել 187 ոչ ավանդական համալսարաններ, որոնց հիմնական մասը վերագրային կրթական ծառայություններ էին մատուցում:

1969 թ. Փարիզում կայացավ «Հեռավար ուսուցման միջազգային համաժողովը», որտեղ տարբեր երկրներ ներկայացնելով իրենց փորձը, կարողացան ընդհանուր հայտարարի գալ հեռավար կրթության մեթոդների, չափանիշների, կառուցակարգերի ընդունելի տարբերակների գծով: Միաժամանակ արձանագրվեց, որ դեռևս դանդաղ էր գործում հետադարձ կապն ուսումնառողների ու դասավանդողների միջև, և դեռ չէին ձևավորվում լսարանային ու խմբային ուսումնառության ձևավաչափերը, որոնք հանդիսանում էին հեռավար ուսուցման մեթոդաբանական չլուծված խնդիրներ:

Այդ խնդիրները լուծվեցին XX դարի վերջին տասնամյակում համացանցի (ինտերնետ) ձևավորման և բնակչության շրջանում համակարգիչների մատչելիության շնորհիվ: Ստացվեց այնպես, որ հեռուսուցման ոլորտում համացանցի մուտքն ավելի բեկումնային եղավ, քան ռադիոյի և հեռուստատեսության պարագայում: Հնարավոր դարձավ հաղորդակցություն և հետադարձ կապ ապահովել յուրաքանչյուր սովորողի համար՝ անկախ նրա գտնվելու վայրից: ՅՈՒՆԵՍԿՕ-ի կանխատեսումների համաձայն՝ XXI դարում սովորողները լսարանում անցկացնելու են ուսումնառության համար հատկացված ժամանակի ընդամենը 30-40%-ը: Մյուս 40%-ը ծախսելու են հեռավար ուսուցման վրա՝ ժամանակակից հաղորդակցական միջոցների կիրառմամբ, իսկ մնացած ժամանակը տրամադրելու են ինքնակրթությանը: Դա նշանակում է, որ տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցների կիրառումը կմեծանա առցանց ուսուցման գործընթացում և՛ դպրոցական, և՛ համալսարանական, և՛ որակավորման բարձրացման ոլորտներում, այսինքն՝ անընդհատ ուսուցման բոլոր օղակներում [5]:

Նաև ակնառու դարձավ, որ առցանց ուսուցումը էականորեն տարբերվում է նախկինում գործող ավանդական հեռավար ուսուցումից մի շարք հատկանիշներով: Նախ՝ համացանցի միջոցով հեռավար ուսուցման դեպքում սովորողը.

- ինքն է ընտրում ամենահարմար ուսուցման ժամանակը,
- կարող է սովորել «իր սեփական արագությամբ» և իրեն հարմար ռեժիմով,
- կարող է կենտրոնանալ ուսումնական նյութի որոշակի մասերի վրա,
- կարող է ավելի շատ համագործակցել դասախոսի հետ,
- կարող է ավելի արագ ստանալ անհրաժեշտ տեղեկությունները:

Բացի այդ, առցանց ուսուցումն սկզբունքորեն տարբերվում է ավանդական հեռավար (թղթակցային) ուսուցումից նրանով, որ ստեղծվում է նոր կրթական տեղեկատվական միջավայր, որտեղ սովորողը հստակ գիտակցում է, թե ինչպիսի գիտելիքներ, հմտություններ և ունակություններ

են իրեն անհրաժեշտ: Սովորողները հնարավորություն են ունենում ինքնուրույն ստանալու անհրաժեշտ գիտելիքները, օգտվելու զարգացած տեղեկատվական ռեսուրսներից (տվյալների և գիտելիքների բազաներ, համակարգչային, այդ թվում՝ մուլտիմեդիա, ուսուցանող և ստուգիչ թեսթային համակարգեր, էլեկտրոնային վարժանքներ, տեսագրություններ, ձայնագրություններ, էլեկտրոնային գրադարաններ, ինչպես նաև էլեկտրոնային դասագրքեր ու մեթոդական ձեռնարկներ):

Համալսարանները երբեմն կանգնում են «ավանդական, թե հեռավար ուսուցում» որոշման կայացման առջև, երբ խնդիր է դրվում համեմատելու երկու համակարգով կազմակերպող կրթության ֆինանսական արդյունքները: Բնականաբար, առցանց ուսուցման դեպքում հնարավորություն է ստեղծում կրթության վիրտուալ շուկայում ձևավորելու համեմատաբար մեծ լսարաններ, քան թույլ կտար ավանդական ուսուցումը: Բայց մյուս կողմից, հեռավար դասավանդվող կրթական ծրագրերն ուսանողներից պահանջում են ինքնակազմակերպման առավել մեծ աստիճան, որը ոչ բոլորին է հաջողվում, և արդյունքում առցանց ուսուցման համակարգից ուսանողական հեռացումները համեմատաբար ավելին են, որոնք իրենց հերթին բերում են հեռաուսուցման եկամուտների կրճատման [6]:

Մասնագիտական գրականությունում վերլուծություններ են արվում համալսարանում ձևավորված կրթավաճարների և կրթական ծախսերի կոնկրետ իրավիճակում «հեռավար թե ավանդական դասավանդում» որոշում կայացման ոլորտում: Այսպես, Ադյուսակ 1-ում տվյալները վկայում են, որ համալսարանը կընտրի առաջին տարբերակը, քանի որ հեռավար ուսուցման կազմակերպման դեպքում դրամական զուտ հոսքերն առաջիկա հինգ տարիներին կլինեն ավելին, քան կրթական նույն ծրագրի ավանդական դասավանդման դեպքում (1582,34>855,23): Փորձը ցույց է տալիս, որ հեռաուսուցման կազմակերպման մեկնարկային ծախսերը շատ անգամ գերազանցում են ավանդական ուսուցման ծախսերը (տես՝ **Ադյուսակ 1**): Սակայն, ուսուցման կազմակերպման մեկնարկից հետո հեռաուսուցման ծախսերը սկսում են նվազել, և ի վերջո մեկնարկային ծախսատարությունը փոխհատուցվում է հետագա տարիներին դրամական հավելյալ զուտ հոսքերով, որն էլ տնտեսական առումով հեռաուսուցումը դարձնում է նպատակահարմար և արդյունավետ:

Աղյուսակ 1

Մասնագիտական ծրագրի իրականացման ֆինանսական հոսքերի համեմատումը հեռավար և ավանդական ուսուցման դեպքում (մլն դրամ) [7]

Ֆինանսական հոսքեր	Տարիներ						Ընդամենը
	0	1	2	3	4	5	
Ավանդական ուսուցում							
Տարեկան զեղչված կրթավճարների մուտքեր (480x1.0)	480	480x0,909 =436,32	480x0,826 =396,48	480x0,751 =360,48	0	0	1673,28
Այլընտրանքային եկամուտներ	20			150x0,751 =112,65			132,65
Ընթացիկ ծախսային հոսքեր	0	300x0,909 =(272,7)	300x0,826 =(247,8)	300x0,751 =(225,3)	300x0,683 =(204,9)	0	(950,7)
Զույգ հոսքեր	500	163,62	148,68	247,83	(204,9)	0	855,23
Հեռուսուցում							
Տարեկան զեղչված կրթավճար (500x1.0)	500	500x0,909 =454,5	500x0,826 =413	500x0,751 =375,5	500x0,683 =341,5	0	2084,5
Այլընտրանքային եկամուտներ		50x0,909= 45,45	50x0,826= 41,3	50x0,751= 37,55	50x0,683= 34,15	50x0,621= 31,05	189,5
Մեկնարկային կապիտալ ծախսեր	800/4 =(200)						(200)
Ընթացիկ ծախսային հոսքեր (70+30)		100x0,909 =(90,9)	100x0,826 =(82,6)	100x0,751 =(75,1)	100x0,683 =(68,3)	100x0,621= (62,1)	(379)
SS սարքերի արդիականացում				150x0,751 =(112,65)			(112,65)
Զույգ հոսքեր	300	409,05	371,7	225,3	307,35	(31,05)	1582,35

Ամփոփում

Առցանց դասավանդումը տեսանելի ապագայում կրթական շուկայում գերիշխող դիրք է գրավելու և ունենալու է կազմակերպական հեռանկարային առանձնահատկություններ.

առաջին՝ WEB լսարանի նոր հայեցակարգի նախագծում, որը հնարավորինս կտեղափոխի ավանդական ուսուցման մոտեցումները էլեկտրոնային միջավայր: Այս դեպքում, հնարավոր կդառնա վիրտուալ միջավայրում կիրառելու ավանդական լսարանային ուսումնառությանը հատուկ դասախոսություններ, սեմինար-քննարկումներ, խմբային շնորհանդեսներ, բանավիճային ակումբներ, կլոր սեղաններ, որոնք հնարավոր կլինի կազմակերպել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներով,

երկրորդ՝ մանկավարժական նորամուծությունների ներմուծում, որոնք կապահովեն ակտիվ և սպառիչ հետադարձ կապը դասավանդողների ու ուսանողների միջև, ինչպես նաև՝ ակադեմիական համագործակցությունն ուսանողական խմբերի միջև: Բացի այդ, մանկավարժական նորամուծությունները կթիրախավորվեն ուսանողակենտրոն ուսուցմանը, երբ ուսանողն ակտիվ մասնակցություն կունենա ինքնակրթության գործընթացին, էլեկտրոնային վարժանքներով կզարգացնի իր մասնագիտական կարողությունները, էլեկտրոնային թեստերով կանցնի ինքնագնահատման համակարգով,

երրորդ՝ էլեկտրոնային վարչարարության ընդլայնում, երբ առցանց համակարգում ընդգրկված ուսանողի ակադեմիական վարքագիծն ամբողջովին իր թվայնացումը կունենա և կվերահսկվի էլեկտրոնային դեկանատի կողմից: Նման պարագայում, էապես կբարձրանա դեկանատների, ամբիոնների վարչակառավարչական գործունեության արդյունավետությունը և հեռավար դասընթացների նպատակամետությունը՝ ուղղված կրթության շահառուների պահանջների բավարարմանը և առցանց կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Учителя, педагогическая деятельность и новые технологии: Всемирный доклад по образованию. Париж: ЮНЕСКО, 1998, с.129.

2. **Baath J.**, Correspondence education in the light of a member of contemporary teaching models. – Malmo: Liber-Hermods, 1979, p. 45.

3. **Обсянников В.И.**, Основные этапы развития дистанционного обучения и его теоретическое сопровождение // Дистанционное образование в России: Постановка проблемы и опыт организации. – М., 2001., с. 7-11.

4. **Reiser R.A.**, Instructional technology: A history // Instructional technology: Foundations. Hillsdale: Lawrence Erlbaum, 1987., p. 23.

5. **Բեգիրջան Խ., Խաչատրյան Վ., Հովհաննիսյան Գ., Բաբայան Ս.**, Հեռավար ուսուցման կազմակերպումը և իրականացումը կանոնակարգող փաստաթղթերի ժողովածու, // ՀՀ պետական կառավարման ակադեմիա, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն, 2017, էջ 13:

6. **Top E.**, (2012). Blogging as a social medium in undergraduate courses: sense of community best predictor of perceived learning. The Internet and Higher Education , 15 (1), pp. 24-28.

7. **Սարգսյան Ս.**, Հեռուսուցման տնտեսական շարժառիթները, // Ֆինանսներ և էկոնոմիկա, 2018, #3-4, էջ 138:

ПРОБЛЕМЫ УПРАВЛЕНИЯ ДИСТАНЦИОННЫМ ОБУЧЕНИЕМ

ГОРИУН АДАМЯН¹, НОННА ХАЧАТРЯН²

¹ Академия государственного управления Республики Армения

² Ереванский государственный университет

Дистанционное обучение требует новые подходы в области организации университетского образования. Прежде всего, необходимо сформировать четкую концепцию WEB-аудитории и электронной образовательной среды. Кроме того, дистанционное обучение требует применение педагогических инновационных подходов и обеспечения эффективности обратной связи между преподавателями и студентами. И, наконец, в случае дистанционного обучения возникает необходимость сформировать электронные деканаты и организовать электронное администрирование.

Ключевые слова: дистанционное обучение, ресурсы электронного обучения, веб-аудитория, обучение, ориентированное на студента.

ISSUES OF DISTANCE LEARNING MANAGEMENT

GORIUN ADAMYAN¹, NONNA KHACHATRYAN²

¹ Public Administration Academy of the Republic of Armenia

² Yerevan State University

Distance learning requires new approaches in organization of university education. Firstly, it is necessary to design a clear concept of a WEB audience and e-learning environment. Moreover, distance learning requires the use of pedagogical innovative approaches, and ensuring the effective feedback and communication between teachers and students. And finally, distance learning obliges the use of electronic Dean's offices and the establishment of e-administration.

Keywords: distance learning, e-learning resources, web audience. student-oriented teaching.

Ներկայացվել է խմբագրություն 18.03.2019
Երաշխավորվել է տպագրության 22.05.2019

ՀՏԴ 336:338.24

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱԶԴՈՂ
ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԶԱՓԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

ԳՐԻԳՈՐ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ¹, ՎԱՀԱԳՆ ՏԵՓՈՅԱՆ¹, ՎԱՐՍԵՆԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ¹

¹ Երևանի պատմական համալսարան

Կազմակերպությունների սնանկացման գլխավոր պատճառներից է ֆինանսական կայունության բացակայությունը: Հոդվածում ներկայացված է Հայաստանի Հանրապետությունում սնանկ կազմակերպությունների դինամիկան՝ 2010-2017թթ. ժամանակահատվածում: Իրականացվել է ՀՀ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատում տնտեսաչափական (էկոնոմետրիկ) պրոբիթ ձևաչափի (մոդելի) միջոցով: Գործոնային վերլուծության արդյունքում բացահայտվել են վիճակագրորեն նշանակալի փոփոխականները, որոնք էապես կանխորոշում են կազմակերպությունների սնանկացումը:


Բանալի բառեր. ֆինանսական կայունություն, կազմակերպությունների սնանկացում, տնտեսաչափական վերլուծություն, սնանկացման հավանականության որոշում:

Ֆինանսական կայունության դերը ՀՀ առևտրային կազմակերպություններում

ՀՀ-ում կարևոր լուծումներ պահանջող տնտեսական հիմնախնդիրների թվին է դասվում կազմակերպությունների ֆինանսական կայունությունը: Վերջինիս բացակայությունը կարող է հանգեցնել կազմակերպություններում ընթացիկ գործունեության ֆինանսավորման միջոցների սղության, ոչ իրացվելիության, անվճարունակության: Աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը ՀՀ առևտրային կազմակերպություններն են, նպատակը՝ *տնտեսաչափական պրոբիթ ձևաչափի և գործոնային վերլուծությամբ* այն հիմնական գործոնների բացահայտումը, որոնք ազդում են կազմակերպությունների սնանկացման վրա:


Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ իրավաբանական անձինք իրենց գործունեության տեսակով լինում են շահույթ հետապնդող (առևտրային) կամ շահույթ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպություններ [1, հոդված 51]: Պետք է փաստել, որ 2017թ. դրությամբ ՀՀ առևտրային կազմակերպությունների թիվը կազմել է ավելի քան 180 հազար [12]: Նկատենք,

որ 2010 թ. սնանկ կազմակերպությունների թիվն ընդամենը 79 էր, իսկ 2017 թ. արդեն՝ 972 [2], որոնք, ըստ ոլորտների, տեղաբաշխված են հետևյալ համամասնությամբ՝ առևտուր՝ 51%, արդյունաբերություն՝ 20%, շինարարություն՝ 12%, հանրային սնունդ՝ 9%, փոխադրումներ՝ 8%:




Գծապատկեր 1. Սնանկացած կազմակերպությունների դինամիկան ՀՀ-ում 2010-2017 թթ. [2]

Բաշխվածությունը հիմնականում պայմանավորված է նշված ոլորտների կազմակերպությունների կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկների և հարկային այլ հաշվետվությունների տվյալներով: Վերլուծությունները ցույց են տվել, որ կազմակերպությունների սնանկացման գեներացման աղբյուրը վարկային պարտավորությունների մարման անկարողությունն է [3]: Հատկանշական է նաև այն փաստը, որ բանկերի ժամկետային պարտավորությունները վերջին տարիներին 20%-ով ավելացել են, որից կարելի է ենթադրել, որ բանկերի կողմից առաջարկված պայմանների և գործարար միջավայրի շահութաբերության միջև առկա է անհամաչափություն:



Գծապատկեր 2. Վարկերի կառուցվածքը՝ ըստ վարկառուների 2017 թ. դրությամբ (%) [3, էջ 26]

Գծապատկեր 2-ից երևում է, որ վարկերի ընդհանուր գումարի 56 %-ը տրամադրվել է կազմակերպություններին, 36%-ը՝ տնային տնտեսություններին, և միայն փոքր մասն է տրամադրվել շահույթ չհետապնդող ընկերություններին, պետական ձեռնարկություններին ու այլ ֆինանսական կառույցներին:



Գծապատկեր 3. Վարկերի կառուցվածքը՝ ըստ ՀՀ տնտեսության ոլորտների 2017 թ. դրությամբ [3, էջ 26]

Մասնավոր հատվածը գերազանցապես բաղկացած է փոքր (այդ թվում՝ գերփոքր) և միջին ձեռնարկություններից, որոնք վերջին տարիներին հանդիսանում են տնտեսական աճի և աշխատատեղերի ստեղծման հիմնական շարժիչը: Մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտի ընկերությունների սնանկացման գերակշռումը հիմնականում պայմանավորված է ոլորտում հայտնվող սուբյեկտներով: Հայաստանում խոշոր սուբյեկտի բացումը հանգեցնում է շրջակայքում գործող որոշ օբյեկտների փակման: Վերոնշյալ **Գծապատկեր 3**-ից պարզ է դառնում, որ վարկերի խոշոր մասը բաժին է ընկել առևտրին և սպառողական վարկերին, ինչն էլ հիմնականում ուղղվում է գերակշիռ համարվող մասնավոր հատվածին (տե՛ս **Գծապատկեր 2**):

ՀՀ առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող գործոնները

Կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդում են ներքին և արտաքին մի շարք գործոններ: Արտաքին գործոնների շարքին են դասվում տնտեսական իրավիճակը, քաղաքական, սոցիալական, տեխնոլոգիական, օրենսդրական կարգավորումները կամ փոփոխությունները և սեփականատերերից, վարկատուներից, մատակարարներից և հաճախորդներից կախվածությունը: Ներքին գործոնները ներառում են

կազմակերպական կառուցվածքը (կենտրոնացված կամ ապակենտրոնացված), հաշվապահական հաշվառման և ֆինանսական քաղաքականությունը, մարդկային և կապիտալ ռեսուրսները, գործառնական արդյունավետությունը և նորարարությունը: Գնահատման գործակալությունների «Մեծ եռյակը»՝ Moody's-ը, Standard & Poor's-ը և Fitch-ը իրականացնում է կազմակերպությունների վարկունակության վարկանիշավորում տնտեսվարող այն սուբյեկտներին, որոնք թողարկում են պարտքային գործիքներ (հիմնականում պարտատոմսեր, հետգնման պայմանագրեր, պարտքային հանձնառություններ) [9]: Վարկանիշները հիմնված են ապագա սպասումների վրա, որոնք կարող են տարբերվել պատմական արդյունքներից: Օրինակ՝ Moody's-ը տալիս է վարկանշման կշռված գնահատականներ՝ հիմնված հետևյալ չորս գործոնների վրա, որոնք ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

**Moody's-ի կողմից գնահատվող գործոնները
և դրանց կշիռները (%) [9]**

№	Գործոն	Կշիռ
1	Մասշտաբ	20 %
2	Գործարարության (Բիզնես) հարթակ	30 %
3	Լևերիջ	20 %
4	Ֆինանսական քաղաքականություն	30 %


Նշենք, որ Moody's-ի, Standard & Poor's-ի և Fitch-ի գործունեությունը չի սահմանափակվում տարբեր ոլորտների և տեսակների կազմակերպություններ վերլուծությամբ: Տարատեսակ գնահատումների առարկա կարող են հանդիսանալ նաև զարգացած և զարգացող երկրները:

«Առևտրային կազմակերպությունների ֆինանսական կայունության վրա ազդող գործոնների գնահատում բինարական պրոբիթ ձևաչափի միջոցով»:

2017-ի ՀՀ-ում սնանկացած կազմակերպությունների դինամիկայի և սնանկության գործերի ծանրաբեռնվածությունը¹ տարաբնույթ ուսումնասիրությունների անհրաժեշտություն է առաջացնում: Կարևորվում է ՀՀ առևտրային կազմակերպությունների սնանկության վրա ազդող գործոնների ռեգրեսիոն վերլուծությունը, որի նպատակով ընտրվել են 83 ՀՀ առևտրային կազմակերպություն, որից 46-ը՝ գործող, իսկ 37-ը՝ սնանկ:


¹ 2013-2017 թթ.-ին ՀՀ-ում արձանագրվել է դատարան դիմած սնանկության գործերի կտրուկ աճ, ինչն էլ սնանկության գործերով դատարանի ստեղծման հիմք հանդիսացավ: 2013 թ. սնանկության գործերի թիվը կազմել է 3376, իսկ 2017-ին արդեն 9218 էր:

Գործող կազմակերպությունների համար ձեռք են բերվել 2017-ին ավարտվող տարվա արտաքին հաշվետուցում (աուդիտ) անցած ֆինանսական վիճակի և շահույթի և վնասի մասին հաշվետվությունները (տե՛ս ստորև՝ ըստ ոլորտների):



Գծապատկեր 4. ՀՀ գործող կազմակերպությունները՝ ըստ ոլորտների 2017 թ.¹

Մնանկ կազմակերպությունների տվյալները հավաքվել են 2017-ին ավարտվող տարվա կազմակերպությունների կողմից ներկայացված շահութահարկի հաշվարկի և հարկային այլ հաշվետվություններից: **Գծապատկեր 5-ում** ներկայացված են ՀՀ սնանկ կազմակերպությունները՝ ըստ ոլորտների:



Գծապատկեր 5. ՀՀ սնանկ կազմակերպությունները՝ ըստ ոլորտների 2017 թ.²

¹ Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ նշված ոլորտների կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների (տե՛ս azdarar.am):

² Գծապատկերը կազմվել է հեղինակների կողմից՝ ըստ նշված գերակա ոլորտների կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների (տե՛ս azdarar.am):

Ռեգրեսիոն վերլուծությունն իրականացվել է Eviews [11] փաթեթի օգնությամբ: Քանի որ բինարական լոգիթ և պրոբիթ ձևաչափերը միմյանցից քիչ են տարբերվում, ապա դրանց անվանում են բինարական պատահական ձևաչափեր (BRM): Հաճախ կարելի է հանդիպել նաև դիսկրետ կամ որակական ընտրության ձևաչափ եզրը ևս: Տնտեսագիտության մեջ բինարական մոդելը նկարագրում, բացատրում և կանխատեսում է նվազագույնը 2 վերջավոր այլընտրանքների միջև կատարված ընտրությունը և պատասխանում է «ո՞ր մեկը» հարցին: Վերջավոր ընտրության էմպիրիկ վերլուծության համար նպատակահարմար է օգտագործել կառուցակարգեր, ինչպիսիք են լոգիթ և պրոբիթ բինարական ռեգրեսիոն ձևաչափերը: Հետազոտության համար ընտրվել է *բինարական պրոբիթ* մոդելը, որը ցույց է տալիս ուսումնասիրվող կազմակերպությունների սնանկացման հավանականության առկայությունը (բացասական ելք) կամ բացակայությունը (դրական ելք): Ուսումնասիրվող գործոններից սնանկության հավանականության համար էապես նշանակալի են ստացվել ինքնավարության և կապիտալի շահութաբերության գործոնները, ինչը խոսում է սնանկության հավանականության վրա էական ազդեցություն ունենալու փաստի մասին՝ կապիտալի շահութաբերության դեպքում դրական, իսկ ինքնավարության դեպքում՝ բացասական:

Dependent Variable: BANKRUPTCY
 Method: ML - Binary Probit (Quadratic hill climbing)
 Date: 02/23/19 Time: 18:24
 Sample: 1 83
 Included observations: 83
 Convergence achieved after 7 iterations
 Covariance matrix computed using second derivatives

Variable	Coefficient	Std. Error	z-Statistic	Prob.
C	0.484529	0.226977	2.134704	0.0328
CAPITAL_TO_ASSET				
S	-7.982115	2.075745	-3.845421	0.0001
ROCE	1.959965	0.671811	2.917436	0.0035
McFadden R-squared	0.567919	Mean dependent var	0.445783	
S.D. dependent var	0.500073	S.E. of regression	0.317469	
Akaike info criterion	0.666190	Sum squared resid	8.062907	
Schwarz criterion	0.753618	Log likelihood	24.64688	
Hannan-Quinn criter.	0.701313	Restr. log likelihood	57.04230	
LR statistic	64.79085	Avg. log likelihood	0.296950	
Prob(LR statistic)	0.000000			
Obs with Dep=0	46	Total obs	83	
Obs with Dep=1	37			

Գծապատկեր 6. ՀՀ կազմակերպությունների սնանկացման հավանականության որոշումը բինարական պրոբիթ ձևաչափի օգնությամբ

Պրոբիթ վերլուծությունում դիտարկում ենք կազմակերպության սնանկացման հավանականությունը, որպես կախյալ փոփոխական: Գործոնային վերլուծության արդյունքում վիճակագրորեն նշանակալի ստացված գործոնները հետևյալն են՝ ինքնավարություն (գործոն 1) և կապիտալի շահութաբերություն (գործոն 2): Սա նշանակում է, որ տվյալ գործոնները նշանակալիորեն ազդել են ընկերությունների սնանկացման հավանականության վրա: Ընդ որում՝ ինքնավարության գործակիցն ազդել է բացասաբար, իսկ կապիտալի շահութաբերության ազդեցությունը դրական է եղել:

Դիտարկենք ինքնավարության գործակիցը:

$$\text{Ինքնավարության գործակից} = \frac{\text{Ընդամենը սեփական կապիտալ}}{\text{Ընդամենը ակտիվներ}}$$

Գործակիցը ցույց է տալիս՝ արդյոք կազմակերպությունն ունի բավարար կապիտալ իր ակտիվներն ապահովելու և շարունակական գործունեություն ծավալելու համար: Գործակիցը հատկապես կարևոր է ներդրողների համար, որոշելու՝ արդյոք արժե ներդրում անել տվյալ ընկերությունում: Բինարական պրոբիթ մոդելի արդյունքներով գործոնը նշանակալի է և ունի բացասական նշան, այն է, գործակցի աճը կրեթի կազմակերպությունների սնանկացման հավանականության նվազման և հակառակը:

Այժմ դիտարկենք կապիտալի շահութաբերությունը:

$$\text{Կապիտալի շահութաբերություն} = \frac{\text{Շահույթ/ վնաս նախքան հարկումը}}{\text{Ընդամենը ակտիվներ- Ընթացիկ պարտավորություն}}$$

Բինարական պրոբիթ ձևաչափի արդյունքներով կապիտալի շահութաբերությունը նույնպես նշանակալի է, սակայն դրական նշանով: Արդյունքը բացատրվում է հետևյալ երկու փաստարկներով.

1) վերլուծության ենթարկված ՀՀ առևտրային կազմակերպություններից մեծամասնության մոտ 2017-ին ավարտված տարվա արդյունքները բացասական են, այն է, կազմակերպությունները տարին փակել են զուտ վնասով: Առկա է ընթացիկ պարտավորությունների զգալի բարձր մակարդակ, որը գերազանցում է ընդամենն ակտիվներին՝ առաջացնելով իրացվելիության անբավարար մակարդակ: Արդյունքում ստացվում է դրական մեծ գործակից, որը համաչափ է կազմակերպությունների սնանկացման ռիսկի աճին,

2) 2017-ին ավարտված տարվա արդյունքները բացասական են, և ընդամենն ակտիվների առավելությունն ընթացիկ պարտավորությունների

նկատմամբ բերում է բացասական փոքր գործակցի, որը նույնպես համաչափ է սնանկացման ռիսկի նվազմանը:

Ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ, ըստ վերլուծության, ՀՀ-ում կազմակերպությունների սնանկացման հիմնական գործոններն են կապիտալի շահութաբերության և ինքնավարության գործակիցների ցուցանիշները: Համադրելով այս երկու ցուցանիշները՝ կարող ենք նշել, որ կազմակերպությունների սնանկացման հավանականությունը դիտարկված գործոնների շրջանակում հիմնականում պայմանավորված է *երկարաժամկետ պարտավորությունների, մասնավորապես՝ երկարաժամկետ վարկերի մարման անկարողությամբ*:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, 05 մայիս, 1998թ., www.arlis.am [մուտք՝ 19.03.2019 թ.],
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ, <http://www.petekamutner.am> [մուտք՝ 15.03.2019 թ.],
3. «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ, Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, 2017 թ.:
4. **Шеремет А.Д., Негашев Е.В.**, Методика финансового анализа деятельности 145 коммерческих организаций. - М.: ИНФРА-М, 2011,
5. **Мельник М.В.**, Организация системы внутреннего аудита и контроля в крупных организациях // Аудиторские ведомости. 2012,
6. Платежеспособность (Методика Д. Дюрана) [Электронный ресурс] / <http://investment-analysis.ru/metodFSA2/duran-solvency.html> [մուտք՝ 15.03.2019 թ.],
7. **Песелис А.А.** Оценка факторов риска внешней среды при реализации учебного оборудования // Российское предпринимательство. -2013. -№ 3 (225),
8. **Матевосян А.В.** Оценка и прогноз показателя экономической активности на основании потенциального ВВП РА. Современная наука: тенденции развития: Материалы X Международной научно-практической конференции. 26 августа 2015.: Сборник научных трудов. -Краснодар, 2015,
9. Moody's Investors Service, Rating Methodology, Trading Companies, New York, 2016,
10. azdarar.am [մուտք՝ 15.03.2019 թ.],
11. <https://www.eviews.com/home.html> [մուտք՝ 15.03.2019 թ.],
12. www.e-register.am [մուտք՝ 15.03.2019 թ.]:

МОДЕЛЬ ОЦЕНКИ ФАКТОРОВ ВЛИЯЮЩИХ НА ФИНАНСОВУЮ УСТОЙЧИВОСТЬ КОММЕРЧЕСКИХ ОРГАНИЗАЦИЙ АРМЕНИИ

ГРИГОР МНАЦАКАНЯН¹, ВААГН ТЕПОЯН¹, ВАРСЕНИК САРГСЯН¹

¹ *Ереванский государственный университет*

Одной из основных причин банкротства является отсутствие финансовой устойчивости. В статье представлена динамика обанкротившихся учреждений в Республике Армения за период 2010-2017 годы. Оценка факторов, влияющих на финансовую устойчивость коммерческих организаций РА, осуществлена посредством применения модели эконометрического моделирования. Факторный анализ выявил статистически значимые переменные, существенно предопределяющих банкротство организаций.

Ключевые слова: финансовая устойчивость, банкротство организаций, эконометрический анализ, определение вероятности банкротства.

ASSESSMENT MODEL OF FACTORS AFFECTING THE FINANCIAL STABILITY ON THE EXAMPLE OF COMMERCIAL COMPANIES OF THE REPUBLIC OF ARMENIA

GRIGOR MNATSAKANYAN¹, VAHAGN TEPOYAN¹, VARSENİK SARGSYAN¹

¹ *Yerevan State University*

One of the main reasons for bankruptcy of the organizations is the lack of financial stability. The article presents the dynamics of bankrupt organizations in the Republic of Armenia during the period 2010-2017. Assessment of the factors affecting the financial stability of Armenian commercial organizations through probit econometric model has been carried out. As a result of factor analysis statistically significant variables have been revealed that substantially predetermine the bankruptcy of organizations.

Keywords: financial stability, bankruptcy of organizations, econometric analysis, determination of bankruptcy probability.

*Ներկայացվել է խմբագրություն 20.03.2019
Երաշխավորվել է տպագրության 26.04.2019*

ՀՏԴ 342. 7

**ԴԱՏԱՐԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԱԶԱՌՈՒԹՅՈՒՆՆ
ՈՐՊԵՍ ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՇՈՒՇԱՆԻԿ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ¹**

¹ Եվրոպական համալսարան

Հոդվածը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադիպային որոշումների վրա: Հոդվածի հիմնական նպատակն է բացահայտել գործնական խնդիրները՝ հիմք ընդունելով Եվրոպական դատարանի նախադիպային այն որոշումները, որոնք առնչվում են դատարանի անկախության ու անաչառության գնահատմանը և տարբերակում են այն չափորոշիչները, որոնք բանալի են հանդիսանում նման գնահատումների համար:

Բանալի բառեր. դատարանի անկախություն և անկողմնակալություն, արդար դատաքննության չափորոշիչներ, անկախության գնահատման չափորոշիչներ, անկողմնակալության գնահատման չափորոշիչներ:

«Արդար դատաքննության իրավունք» եզրույթն իր արտացոլումն է գտել ՀՀ Սահմանադրության ինչպես 2015 թ. (հոդված 63), այնպես էլ 1995 թ. (հոդված 39) և 2005 թ. (հոդված 19) խմբագրություններով տեքստերում:

Որպես արդար դատաքննության իրավունքի երաշխիք՝ ՀՀ Սահմանադրությունն (2015 թ.) ամրագրում է՝ *յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:*

Դատարանի անկախ և անաչառ լինելու սահմանադրական երաշխիքը բխում է նաև 26/04/2002 թ. ՀՀ կողմից վավերացված Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական համաձայնագրի (կոնվենցիա) (այսուհետև՝ Համաձայնագիր) 6-րդ հոդվածից, ըստ որի *յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:*

Դատարանի անկախությունը և անկողմնակալությունն արդար դատաքննության իրավունքի հիմնարար բաղադրիչներն են, որը նշանակում է դատարանի անկախություն «իշխանություններից» և դատարանի պատրաստակամություն վեճը լուծել արդարացի և անաչառ մոտեցմամբ՝ ազատ ցանկացած տեսակի կանխակալ և կողմնակալ վերաբերմունքից: Սա նշանակում է կողմնակալ վերաբերմունքի ցանկացած անգամ չափավոր դրսևորման բացառում [1]:

Համաձայնագրի 6-րդ հոդված 1-ին մասի ուժով պաշտպանվող արդար դատաքննության իրավունքը, մասնավորապես դրա մաս կազմող «անկախ» և «անաչառ» դատարանի վերաբերյալ իրավական պահանջը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ Եվրոպական դատարան կամ Դատարան) կողմից արժանացել է մանրակրկիտ դիտարկման: Տասնյակ տարիների ընթացքում Եվրոպական դատարանի կողմից ընդունված բազմաթիվ որոշումների արդյունքում «անկախ» և «անաչառ» դատարանի վերաբերյալ իրավադրույթը մեկնաբանվել է խիստ տարբեր փաստերի և իրավական մշակույթների համատեքստում, որի արդյունքում ձևավորվել են հստակ մոտեցումներ և նշված նորմի պահանջի պահպանման վերաբերյալ գնահատողական ու դասակարգող ուղենիշներ:

Դատարանի անկախությունը

Ուսումնասիրելով Եվրոպական դատարանի նախադիպային որոշումները՝ կարելի է արձանագրել, որ տասնյակ տարիների ընթացքում նույն համաձայնագրային նորմի լույսի ներքո տարատեսակ փաստակազմերով գործեր քննելու և որոշումներ կայացնելու արդյունքում Դատարանի կողմից ձևավորվել է դատարանի անկախության գնահատման համար հիմք ծառայող չափանիշների շարք, որոնց դիտարկմամբ և փաստակազմերի հետ համադրման արդյունքում է Դատարանը հանգել կոնկրետ գործով դատարանի անկախության պահպանման իրավական պահանջի գնահատմանը: Այդ չափանիշներն են՝ *դատավորների նշանակման կարգը, պաշտոնավարման ժամկետը, արտաքին ճնշումներից պաշտպանության երաշխիքների առկայությունը, անկախության արտաքին հարկանիշներով օժտված լինելը:*

1) Եվրոպական դատարանը որոշումներից մեկում, անդրադառնալով **դատավորների նշանակման կարգին՝** որպես անկախության գնահատման չափանիշի, հարցը դիտարկել է դատավորի անփոփոխելիության տեսանկյունից, քանի որ դատավորի գործունեության համար էական կարևորություն ունեցող այդ սկզբունքը պետության կողմից ապահովված չի եղել: Մասնավորապես, նշվել է հետևյալը. այն դեպքում, երբ դատավորը նշանակվում և ազատվում է պաշտոնից արդարադատության նախարարի

որոշմամբ, համաձայնեցնելով այն տրանսպորտի և ծովային գործերով նախարարի հետ, չի կարող խոսք լինել անգամ դատավորի անփոփոխելիության մասին և փաստացի տվյալ դատավորը հանդիսանում են *vis-à-vis* նախարարի ստորադասը: Ուստի, տվյալ դատարանը չի կարող դիտարկվել նաև որպես անաչառ: Նման պայմաններում անձը կարող է ունենալ օբյեկտիվ կասկած դատարանի անկողմնակալության և անկախության հարցում [11, կետ 41]:

2) Որոշումներից մեկով քննարկման առարկա է հանդիսացել նաև գործի մակագրումը կոնկրետ դատավորի, որտեղ նշվել է, որ ներպետական դատարանները պետք է կազմակերպեն գործերի քննությունն այն կերպ, որ ապահովեն արդարադատության բավարար չափով կազմակերպվածությունը: Գործի մակագրումը կոնկրետ դատավորի հանդիսանում է ներպետական իրավասության (*margin of appreciation*) հարց: Սակայն առկա են մի շարք հանգամանքներ, որոնք ներպետական իշխանությունները գործը մակագրելիս պետք է հաշվի առնեն. օրինակ՝ ռեսուրսների հասանելիությունը, դատավորների որակավորումը, շահերի բախումը, դատական նիստ վարելու համար վայրերի հասանելիությունը: Չնայած Եվրոպական դատարանը չի ստանձնում դերակատարություն գնահատելու արդյոք եղել են բավարար հիմքեր տվյալ գործը կոնկրետ դատավորի մակագրելիս, սակայն Դատարանը պետք է համոզվի, որ մակագրումները կատարվում է Համաձայնագրի 6-րդ հոդված 1-ին մասին համապատասխան՝ ապահովելով օբյեկտիվ անկախություն և անաչառություն: Իսկ ինչ վերաբերում է գործերի վերամակագրմանը, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ անձը (գործի վերամակագրման դեպքում) պետք է անպայմանորեն տեղեկանա վերամակագրման պատճառների մասին և ունենա հնարավորություն իր կարծիքն արտահայտել այդ առնչությամբ [12, կետ 71-72]:

3) Մեկ այլ որոշմամբ Եվրոպական դատարանը քննության առարկա է դարձրել **դատավորի պաշտոնավարման ժամկետը**. որևէ կոնկրետ ժամկետ չի սահմանվել Դատարանի կողմից, սակայն հարցը դիտարկվել է դատավորի անփոփոխելիության դիտակետից: Այլ կերպ ասած, դատավորը պետք է լինի անփոփոխելի իր պաշտոնավարման ողջ ժամկետի ընթացքում, որը հանդիսանում է դատարանի անկախության անմիջական հետևանք: Սակայն օրենսդրությամբ դատավորի անփոփոխելիության մասին կարգավորման բացակայությունն ինքնին խնդիր չէ, թե փաստացի ճանաչված է և առկա են անհրաժեշտ այլ երաշխիքներ [13, կետ 67]:

4) Անկախության հաջորդ չափորոշիչը դատավորների ազատ լինեն է ինչպես **արտաքին**, այնպես էլ **դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից**: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում է, որ դատավորներն ազատ լինեն գործընկեր դատավորների կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից: Դատական համակարգի ներսում դատավորների անկախությունը և, մասնավորապես, դատական համակարգում իրենց վերադասերից անկախությունն ապահովող բավարար երաշխիքների բացակայությունը կարող է պատճառ լինել, որ Դատարանը հանգի այն եզրակացության, որ դիմումատուի կասկածները՝ կապված տվյալ դատարանի անկախության և անաչառության հետ, օբյեկտիվորեն հիմնավորված են [2]:

5) Արտաքին հատկանիշները (դատավորի կախվածությունը վկայող մի քանի փաստեր էին ներկայացվել դիմումատուի կողմի) դիտարկելով, Եվրոպական դատարանը հաստատել է, որ դրանք կարող են կարևոր նշանակություն ունենալ պարզելու համար, թե արդյոք տվյալ դատարանն անկախ է Համաձայնագրի 6-րդ հոդված 1-ին մասի լույսի ներքո [14, կետ 42]: Անկախության արտաքին հատկանիշները դիտարկելիս ցանկացած կողմի տեսակետ կարևոր է, բայց ոչ որոշիչ. որոշիչ է այն, թե արդյոք տվյալ կողմի մտավախությունը կարող է «օբյեկտիվորեն հիմնավորվել» [15, կետ 63]:

Դատարանի անաչառությունը

Այն դեպքում, երբ քննարկվում է դատարանի «անկախություն» եզրույթն ուսումնասիրման առարկա է լինում օրենսդրական և կառուցվածքային երաշխիքները դատական գործերի քննությանը իշխանության այլ ճյուղերի միջամտության տեսանկյունից, իսկ երբ քննարկվում է «կողմնակալություն» եզրույթը, ապա ուսումնասիրման առարկա է լինում դատարանի անկախությունը vis-a-vis կոնկրետ գործով կողմերի հետ հարաբերություններում: Գործը լսող կոլեգիալ կազմում դատավորներից **անգամ մեկի կողմնակալություն** կարող է հանգեցնել դատարանի անկողմնակալության խնդրին նույնիսկ այն դեպքում, երբ առկա չեն հիմքեր մյուս դատավորների (կամ նրանց մեծ մասի) անկողմնակալության վերաբերյալ [16, կետ 18-35]:

Եվրոպական դատարանի նախադիպային իրավունքը տարբերակում է անաչառության առկայության կամ բացակայության հարցի որոշման առնչությամբ երկու չափորոշիչներ՝

- **սուբյեկտիվ չափորոշիչ՝** դատավորի անձնական առնչությունը տվյալ գործին, այլ կերպ ասած դատավորի տվյալ գործում ունեցած անձնական համոզմունքը, վարքագիծը և վերաբերմունքը,

- **օբյեկտիվ չափորոշիչ՝** այդ հարցում ողջամիտ կասկածները բացառող բավարար երաշխիքների առկայություն կամ դատավորի կողմից բավարար երաշխիքների ապահովում՝ իր անաչառության առումով որևէ ողջամիտ կասկած բացառելու համար:

Մեծ մասամբ Եվրոպական դատարանն անկողմնակալության գնահատման հարցում հիմք է ընդունում օբյեկտիվ չափորոշիչը, քանի որ սուբյեկտիվ անկողմնակալության գնահատման համար անհրաժեշտ են բավարար ապացույցներ: Չնայած այդ սուբյեկտիվ և օբյեկտիվ անաչառությունը հստակորեն տարբերակված չեն, քանի որ դատավորի վարքագիծը ոչ միայն կարող է արտաքին դիտորդի մոտ օբյեկտիվ կասկածներ առաջացնել նրա անաչառության վերաբերյալ (օբյեկտիվ գնահատում), այլև կարող է վկայել դատավորի անձնական համոզմունքի մասին (սուբյեկտիվ գնահատում): Այդ իսկ պատճառով, որոշ դեպքերում, երբ դժվար է ձեռք բերել ապացույցներ, որոնցով հնարավոր կլինի մերժել դատավորի սուբյեկտիվ անկողմնակալության կանխավարկածը, օբյեկտիվ չափորոշիչը սկսում է հանդես գալ որպես դիտարկման լրացուցիչ կարևոր երաշխիք [17, կետ 95; 18, կետ 119]:

Դատարանի անկողմնակալության հարցը քննարկելիս էական են այն փաստերը, որոնք հիմք են հանդիսանում անկողմնակալության մասին կասկածի առաջացման համար: Որոշ դեպքերում անգամ դատարանի արտաքինը (դրսևորած վարքագիծը) կարող է ունենալ որոշ նշանակություն նման կասկածի առաջացման համար: Նշվածից հետևում է, երբ քննության առարկա է այն հարցը, թե կա արդյոք բավարար հիմք դատարանի անկողմնակալության մասին կասկածի համար, նման կասկածի մասին բարձրաձայնող կողմի դիրքորոշումը կարևոր է, բայց ոչ որոշիչ: Որոշիչ է այն, թե արդյոք նման կասկածը կարող է դիտվել որպես օբյեկտիվորեն արդարացի [19, կետ 58]: **Արդարադատությունը պետք է ոչ միայն իրականացվի, այլև իրականացումը պետք է լինի տեսանելի: Խաղասեղանին է դրված հասարակության վստահությունը, որը հենց դատարանները պետք է ձևավորեն հասարակության շրջանում:** Ուստի, դատավորը, ում առնչությամբ առկա է անկողմնակալության պակասի իրավաչափ հիմք, պետք է «հեռանա» գործի քննությունից [17, կետ 98; 20, կետ 45]:

Սուբյեկտիվ չափորոշիչ - Եվրոպական դատարանը սուբյեկտիվ չափորոշիչը կիրառելիս շեշտել է, որ «դատավորի անձնական անաչառությունը ենթադրվում է այնքան ժամանակ, քանի դեռ չկան հակառակն ապացուցող փաստեր» [21, կետ 58]: Եվրոպական դատարանի կողմից քննվող գործերից մեկով, որի շրջանակներում քննարկվում է դատավորի անկողմնակալության մասին հարցը, ներկայացված էր փաստական հանգամանք, ըստ որի ներպետական դատարանի դատավորի և դիմումատուի միջև կայացել է բուն դատական գործին չառնչվող վիճաբանական «զրույց», որի համար հարթակ էր հանդիսացել տեղական տպագիր լրատվամիջոցներից մեկը (տպագրվել էին փոխադարձ հոդվածներ): Դիմումատուն Եվրոպական դատարանի առջև բարձրացրել էր տվյալ դատավորի կողմնակալության հարցը իրեն վերաբերող դատական գործի քննության ընթացքում: Նշված գործով Եվրոպական դատարանը նշեց այն կարևոր մոտեցումը, ըստ որի՝ դատական իշխանության ներկայացուցիչները (judicial authorities) պարտավոր են իրենց կողմից քննվող գործերի հանդեպ դրսևորել առավելագույն խոհեմություն պահպանելու համար դատավորների անկողմնակալ կերպարը (image): Այդ խոհեմությունը պետք է գերծ պահի դատավորին լրատվամիջոցներից օգտվելուց և նույնիսկ այն դեպքում, երբ դրան հրահրում են. **սա բխում է արդարադատության վերաբերյալ բարձր պահանջներից և դատական մարմինների բարձր լինելու բնույթից, որոնք էլ պարտադրում են նմանատիպ վերաբերմունք** [22, կետ 67]:

Մեկ այլ գործով ներպետական դատարանի դատավորի կողմից դատավարության ընթացքում հնչեցված արտահայտությունների հիման վրա անկողմնակալության հարց քննարկելիս Եվրոպական դատարանը նշել է, երբ դատարանի նախագահը հրապարակայնորեն օգտագործել է արտահայտություններ, որոնցից բխում է, որ նա արդեն իսկ ձևավորվել է դիմումատուի գործի վերաբերյալ անբարենպաստ տեսակետ (մեղավոր ճանաչելու մասին դիրքորոշում) մինչ գործի քննության ավարտին դատարանի կողմից որոշում կայացնելը, նրա արտահայտությունները բավարար են օբյեկտիվորեն հիմնավորելու մեղադրյալի մտավախությունը դատավորի անաչառության վերաբերյալ [22, կետ 68]:

Օբյեկտիվ չափորոշիչ - Օբյեկտիվ չափորոշիչի դիտարկմամբ Եվրոպական դատարանն առանձնացրել է իրավիճակի գնահատման երկու եղանակ՝ **Ֆունկցիոնալ (գործառութային) և անձնական**:

1. Ֆունկցիոնալ (գործառութային) բնույթով դրսևորվող անաչառության պարագայում դատավորի անձնական վարքագիծը կասկածի տեղիք

չի տալիս, սակայն, օրինակ առկա են փաստեր, ըստ որոնց՝ վերջինս գործի քննության տարբեր փուլերում ունեցել է տարբեր դերակատարություն կամ ունեցել է հիերարխիկ կամ այլ կապեր վարույթի հետ առնչվող մեկ այլ դերակատարի հետ: Սրանից հետևում է, առկա է օբյեկտիվ հիմնավորում դատարանի անաչառության վերաբերյալ և նման պարագայում իրավիճակը չի համապատասխանում կոնվենցիոն օբյեկտիվ չափորոշիչին: Եվրոպական դատարանի կողմից քննվող գործերից մեկով դիտարկման է արժանացել այն հարցը, թե արդյոք կարող է հաստատվել դատավորի կողմնակալության փաստն այն դեպքում, երբ քրեական գործով մեղադրյալի դատավարությանը մասնակցող դատավորը մինչ դատավոր նշանակվելը եղել է դատախազության այն բաժնի աշխատակից, որի կողմից կատարվել է գործով նախաքննությունը: Դատարանն այդ դեպքով նշել է, որ զուտ այն փաստը, որ դատավորը նախկինում եղել է դատախազության այն բաժնի աշխատակից, որի կողմից կատարվել է նախաքննությունը, ինքնին չի կարող լինել անկողմնակալության պակասի մտավախության հիմք, սակայն միաժամանակ նշել է, որ պետք է ուսումնասիրել այն՝ արդյոք դատավորն իր նախկին աշխատանքային պարտականություններն իրականացնելիս կարող էր առնչվեր տվյալ գործի հետ: Այս կապակցությամբ էլ արդեն դատարանն անդրադառնում է դատավորի կողմից իր անկողմնակալության համար բավարար երաշխիքներ տրամադրելու հարցին [23, կետ 30-31]:

2. Անձնական բնույթով դրսևորվող անկողմնակալության դեպքում դիտարկվում է տվյալ գործով դատավորի վարքագծից, որը կարող է լինել իրավական առումով բավարար չափով հիմնավորված և օբյեկտիվորեն արդարացված, սակայն կրի այնպիսի բնույթ, որ չհամապատասխանի սուբյեկտիվ չափորոշիչին կամ բացահայտի անձնական կողմնակալության հարց: Ուստի, ցանկացած դեպքում, անկախ նրանից կիրառվում են երկու չափորոշիչները, թե դրանցից մեկը, անկողմնակալության հարցը կախված կլինի գործով ստույգ փաստերից [24, կետ 121]:

Այսպես՝ ուսումնասիրելով Եվրոպական դատարանի իրավաստեղծ պրակտիկան, կարող ենք արձանագրել, որ դատարանի անկախության և անաչառության պայմանները հանդիսանում են արդար դատաքննության իրավունքի էական հատկանիշներ: Երբ նշված հատկանիշները դիտարկում ենք այն տեսանկյունից, որ ներպետական դատարաններում գործի քննության ընթացքում դատավորի անկախության և անաչառության վերաբերյալ դատավարության մասնակցի կողմից բարձրացված հարցը քննվում է ինքնաբացարկ հայտնելու մասին միջնորդության քննության

շրջանակներում, ապա ուսումնասիրման առարկա է դառնում դատավորի կողմից ինքնաբացարկի հիմքերի օբյեկտիվ գնահատման հարցը և որ առավել կարևոր է դատավորի անկախության և անաչառության վերաբերյալ հիմքերի և փաստերի գնահատումն այն չափորոշիչների շրջանակում, որոնք մշակվել են Եվրոպական դատարանի կողմից: Սրանից էլ բխում է մեկ այլ հարց թե անկախության և անաչառության հարցի քննությունը ներպետական իրավական համակարգում կատարվում է արդյո՞ք Եվրոպական դատարանի կողմից մշակված չափանիշների դիտարկմամբ: Հայաստանյան իրավական համակարգում դատավորի անկախության և անաչառության հարցին անդրադառնալու միջոցը ինքնաբացարկի միջնորդություն ներկայացնելը կամ բացարկ հայտնելու դիմումով հանդես գալն է՝ կախված, թե որ դատավարական իրավակարգավորումներով է գործը քննվում: Սակայն խնդրո առարկա է այն, թե գործը քննող դատավորը որքանո՞վ է օբյեկտիվորեն քննում իր անկախության և անաչառության վերաբերյալ հարցը, և անձն ունենում է հնարավորություն ներպետական մակարդակում քննության առարկա դարձնել ինքնաբացարկի միջնորդության մերժման մասին որոշումը, որը, ըստ էության, որոշ դեպքերում ինքնաբացարկի հիմքերի օբյեկտիվ գնահատման միակ միջոցը կարող է լինել: Այս մասով ՀՀ իրավական համակարգում առկա է ոչ միանշանակ մոտեցում, մասնավորապես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ ինքնաբացարկի մասին դատական ակտերը ի թիվս այլ միջանկյալ դատական ակտերի ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Նման կարգավորում բացակայում է ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում: Գտնում ենք, որ դատավորի անկախության և անկողմնակալության մասին հանգամանքները նման պայմաններում չեն կարող օբյեկտիվ գնահատման առարկա հանդիսանալ քաղաքացիական և քրեական դատավարություն կարգերով գործերի քննության ընթացքում և առհասարակ տարօրինակ է իրավունքի ճյուղերի նկատմամբ օրենսդրի նման տարբերակված մոտեցումը: Հատկանշական է նաև, որ ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի ընդունմամբ կարգավորման այս դաշտից ևս դուրս մղվեց ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման հնարավորությունը սահմանող նորմը¹: ՀՀ Սահմանադրական դատարանը 28.09.2010թ. համար ՍԴ-918 որոշմամբ անդրադառնալով քրեական դատավարության շրջանակներում

¹ ՀՀ դատական օրենսգրքի (2007թ.) 91-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում էր ինքնաբացարկի մասին որոշման բողոքարկման իրավունքը:

ինքնաբացարկի մերժման մասին վերաքննության կարգով բողոքարկմանը՝ նշել է, որ իրավակիրառ պրակտիկան պետք է տանել այն ուղղությամբ, որպեսզի ինքնաբացարկի միջնորդությունը մերժելու մասին որոշման հետ կապված հանգամանքները քննության առարկա դառնան բուն դատական ակտի բողոքարկման շրջանակներում՝ «հետաձգված բողոքարկում»: Սակայն այս պարագայում հարց է առաջանում արդյոք դատարանի անկախության և անկողմնակալության հարցի գնահատումը չունի հրատապության խնդիր և արդարացված է արդյո՞ք դրան անդրադարձն այն ժամանակ, երբ արդեն գործի քննությունն ավարտվել է տվյալ դատարանում և առկա է վեճը լուծող դատական ակտ: Բարձրացված հարցի քննարկումն առանձին ուսումնասիրման առարկա է: Այդուհանդերձ, գտնում ենք, որ ինքնաբացարկի մասին դատական ակտերը՝ որպես առանձին կարևորություն ունեցող միջանկյալ դատական ակտեր, ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքերում սահմանելով որպես վերաքննության կարգով բողոքարկման ենթակա ակտեր, օրենսդիրը հնարավորություն կրնձեռեն անձին կասկածի առաջացման պահին դիտարկման առարկա դարձնել բացարկյալ ինքնաբացարկի համապատասխան հիմքերն և հիմնավորումները գործը քննող դատարանի վերադաս ատյանի կողմից՝ ապահովելով չափորոշիչների օբյեկտիվ կիրառման հնարավորություն:

Եզրափակելով հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրությունը՝ կարևոր ենք համարում, որ դատարանի անկախությունը և անաչառությունը որպես չափորոշիչներ հանդիսանում են հիմնային տարրեր արդար դատաքննության իրավունքի իրականացման համատեքստում: Դատարանի անկախությանն ու անաչառությանը ուղղված ցանկացած օբյեկտիվորեն հիմնավոր կասկած պետք է պատշաճ և լիարժեք գնահատման արժանանա ներպետական դատարանների կողմից՝ նվազագույնի հասցնելով արդար դատաքննության իրավունքի խախտման հնարավորությունը: Իսկ Եվրոպական դատարանի իրավաստեղծ գործունեության ճանապարհով տարիներով հղկված մոտեցումը (չափորոշիչները) անկախության ու անաչառության գնահատման հարցում հանդիսանում է կիրառելի բանաձև օբյեկտիվ դիրքորոշում ստանալու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. Forster Steve, Human Rights and Civil Liberties, Third Edition, Coventry University, London, 2011, p. 318-319

2. Ուղեցույց Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ, Արդար դատաքննության իրավունք (քաղաքացիաիրավական հայեցակետ), Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Եվրոպայի խորհուրդ, 2013 թ., էջ 40, կետ 140

Օգտագործված իրավական աղբյուրներ

3. ՀՀ Սահմանադրություն, 1995 թ., 2005 թ., 2015 թ.

4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Եվրոպական կոնվենցիա, 1950 թ.

5. ՀՀ Սահմանադրական դատարանի 28.09.2010 թ. թիվ ՍԴ-918 որոշում:

6. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք, 2013 թ.

7. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, 2018 թ.

8. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 1998 թ.

9. ՀՀ դատական օրենսգիրք, 2007 թ.

10. ՀՀ դատական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենք, 2018 թ.

Օգտագործված ՄԻԵԴ որոշումներ

11. Brudnicka and others v. Poland, March 3, 2005.

12. Bochan v. Ukraine, May 3, 2007.

13. Sacilor Lormines v. France, November 9, 2006.

14. Sramek v. Austria, October 22, 1984.

15. Sacilor Lormines v. France, November 9, 2006.

16. Sander v. The United Kingdom, September 21, 2010.

17. Micallef v. Malta, October 15, 2009.

18. Kyprianou v. Cyprus, December 15, 2005.

19. Gautrin and others v. France, May 20, 1998.

20. Castillo Algar v. Spain, October 28, 1998.

21. Le Compte, Van Leuven and De Meyere v. Belgium, June 23, 1981.

22. Buscemi v. Italy, September 16, 1999.

23. Piersack v. Belgium, October 1, 1982.

24. Rianou v. Cyprus, December 15, 2005.

НЕЗАВИСИМОСТЬ И БЕСПРИСТРАСТНОСТЬ СУДА КАК КРИТЕРИИ ПРАВ НА СПРАВЕДЛИВОЕ СУДЕБНОЕ РАЗБИРАТЕЛЬСТВО

ШУШАНИК ТАДЕВОСЯН¹

¹ *Европейский Университет*

Статья основана на прецедентном праве Европейского суда по правам человека. Основная проблема этой статьи заключается в том, чтобы поднять практические вопросы, основанные на прецедентном праве Европейского Суда, в отношении оценки беспристрастности и независимости суда, а также дифференцировать критерии, которые являются ключевыми для проведения этих оценок.

Ключевые слова: независимость и беспристрастность суда, критерии справедливого судебного разбирательства, критерии оценки независимости, критерии оценки беспристрастности

INDEPENDANCE AND IMPARTIALTY OF THE COURT AS CRITERIA OF THE RIGHT TO FAIR TRIAL

SHUSHANIK TADEVOSYAN ¹

¹ *European University*

The article is based on the case law of the European Court. The main issue of the article is to raise practical issues based on the case law of the European Court in relation with the assessment of impartiality and independence of the court and to differentiate criteria which are the keys for making those assessments.

Keywords: independence and impartiality of the court, criteria of the fair trial, criteria for assessing independence, criteria for assessing impartiality.

Ներկայացվել է խմբագրություն 30.01.2019
Երաշխավորվել է տպագրության 20.05.2019

ՀՏԴ 342.7

**«ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԳԵՐԱԿԱ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ»
ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՇԱՆԻԿ ԱՎԱԳԻՄՅԱՆ¹**

¹ Եվրոպական համալսարան

Հոդվածը նվիրված է հանրության՝ գերակա շահով պայմանավորված սեփականության օտարման հիմնախնդրի մեկնաբանությանը, ներկայացվել են ՀՀ Սահմանադրական դատարանի դիրքորոշումները քննարկվող խնդրի վերաբերյալ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետև՝ ՄԻԵԴ) դիրքորոշումները: Հոդվածում անդրադարձ է կատարվել նաև սույն իրավահարաբերությունը կարգավորող իրավական ակտերում առկա բացերին, առաջարկվել են հայեցակարգային լուծումներ:

Բանալի բառեր. Սեփականության իրավունքի պաշտպանություն, գերակա հանրային շահ, արդարացի փոխհատուցում:

2015 թվականի դեկտեմբերի 6-ին մեր հանրապետությունում տեղի ունեցած հանրաքվեի արդյունքներով ընդունվեց նոր Սահմանադրություն:

ՀՀ Սահմանադրությամբ սեփականության իրավունքի պաշտպանությանն են նվիրված 2՝ հոդված 10 և հոդված 60, սակայն քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ իրավական կարգավորումները տեղ են գտել վերջինում:

Սահմանադրության հոդված 60-ի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

2. Ժառանգելու իրավունքը երաշխավորվում է:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով՝:

¹ Նշվածի վերաբերյալ պետք է նշել, որ ՄԻԵԴ-ն իր նախադիպային որոշումներում արձանագրել է հետևյալը. Դատարանը, այնուհետև, կրկնում է, որ «օրենքով սահմանված պայմաններով». արտահայտությունն առաջին հերթին պահանջում է պատշաճ մակարդակի մատչելի և բավարար հստակ ներպետական իրավական նորմերի առկայություն և դրանց համապատասխանություն (տե՛ս, Lithgow and Others v. the United Kingdom, 8 հուլիս 1986թ., պարբ. 110, Սերսիա Ա համար 102):

4. Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

5. **Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված** բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:

6. Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի...» [1]:

Վկայակոչված իրավական նորմի վերլուծությամբ կարող ենք փաստել, որ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված են սեփականության իրավունքի սահմանափակման հետևյալ հանգամանքները.

1. *Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:*

2. *Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի, ըստ էության խոսքը վերաբերում է սեփականազրկմանը:*

3. *Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ:*

4. *Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի, նշվածն էլ վերաբերում է հողի սեփականության իրավունքի սահմանափակմանը օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար:*

ՀՀ Սահմանադրությամբ՝ որպես սեփականության իրավունքի իրականացման նախապայման, սահմանվում է սեփականատիրոջ հայեցողությունը: Սահմանադրական այս նորմում «իր հայեցողությամբ» ձևակերպման շեշտադրմամբ սեփականության իրավունքի իրականացման հիմքում դրվել է սեփականատիրոջ հստակ արտահայտված կամքը, վերջինս դիտարկվում է որպես սեփականության իրավունքի իրականացման պարտադիր նախապայման, և սեփականության իրականացման գործընթացում վճռորոշ դերակատարություն է հաղորդվում անձի կամաարտահայտությանը: Այս դրույթի բովանդակությունը հանգում է նրան, որ գույ-

քային իրավունքների իրականացումը պետք է լինի սեփականության անձեռնմխելիության և պայմանագրի¹ ազատության սկզբունքների հիման վրա, որոնք ենթադրում են, ի թիվս այլնի, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակիցների կամքի ինքնավարություն և գույքային ինքնուրույնություն: Սակայն ՀՀ Սահմանադրական դատարանը փաստել է նաև, որ այդ հայեցողությունն ունի սուբյեկտիվ բնույթ՝ պետք է դրսևորվի տվյալ անձի կամաարտահայտմամբ [10]:

Սույն հոդվածի շրջանակներում անդրադառնանք հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման իրականացմանը: Գաղտնիք չէ, որ մեր հանարպետությունում բազմաթիվ են նշված խնդրով պայմանավորված վեճերը, մի շարք գործեր արդեն իսկ քննվել են ՄԻԵԴ-ի կողմից և կայացվել են դատական ակտեր, սակայն այդպես էլ որևէ փոփոխության սույն իրավահարաբերությունների կարգավորման շրջանակներում առկա չէ:

ՀՀ Սահմանադրությամբ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մանրամասն կարգավորումը, ըստ էության, թողնվել է օրենքին: Մեր հանրապետությունում քննարկվող խնդրի վերաբերյալ միակ իրավական ակտը «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքն է [2] (այսուհետև՝ օրենք), որն ընդունվել է ՀՀ Սահմանադրական դատարանի համար 630 որոշումից հետո 2006 թվականի նոյեմբերի 27-ին, սակայն պետք է փաստել, որ օրենքն այժմ լրամշակման խիստ անհրաժեշտություն ունի, քանի որ իրավակիրառական պրակտիկայով սույն օրենքին տրված իրավական բովանդակությամբ հանդերձ սույն օրենքը չի ապահովում սեփականության իրավունքի պաշտպանության սահմանադրական երաշխիքների լիարժեք կիրառում, և սեփականության հարկադիր օտարման դեպքում իրավական պետության չափանիշներին համարժեք չի երաշխավորում արդարացի հավասարակշռություն անձի շահերի ու սեփականության իրավունքի և հանրային շահերի միջև:

¹ Հարկ ենք համարում նշել, որ վերը վկայակոչված ՀՀ Սահմանադրական դատարանի 24.02.2012 թ. թիվ ՍԴՈ-1009 որոշման 5-րդ կետում նշվում է «(...) պայմանագրային ազատության սկզբունքների հիման վրա(...)» ձևակերպումը, սակայն հաշվի առնելով այն, որ իրավաբան-գիտնականների կողմից ընդգծվել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի ճանաչում նման սկզբունք և փոխարենը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածում օգտագործվում և հետագա իրավակարգավորումներում էլ օրենսդիրն անդրադառնում է պայմանագրի ազատություն սկզբունքին՝ այն համարելով պայմանագրի կնքման ընթացքում ամենալայն կիրառություն ունեցող սկզբունքը, ուստի սույն գիտական հոդվածում օգտագործվում է «պայմանագրի ազատություն» ձևակերպումը:

Հաշվի առնելով նշվածը՝ սույն հոդվածում կներկայացնենք մեր առաջարկությունները:

Ըստ ՄԻԵԴ-ի՝ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումը պետք է բավարարի մի շարք նախապայմանների, մասնավորապես՝ օտարումը պետք է լինի **օրինական**, այինքն՝ օրենքի գերակայությունը, լինելով ժողովրդավարական հասարակության հիմնարար սկզբունքներից մեկը, ներհատուկ է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի (կոնվենցիա) (այսուհետև՝ Համաձայնագիր) բոլոր հոդվածներին [3], այնուամենայնիվ, ներպետական օրենսդրության մեջ իրավական հիմքերի առկայությունն ինքնին բավարար չէ օրինականության սկզբունքը կիրառելու համար: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն բավականաչափ ճշգրիտ ձևակերպված չէ, որպեսզի քաղաքացիները կարգավորեն իրենց գործելակերպը. նրանք պետք է, հարկ եղած դեպքում՝ պատշաճ խորհրդի միջոցով, կարողանան ստեղծված հանգամանքներում ողջամտության սահմաններում կանխատեսել, թե տվյալ գործողության հետևանքով ինչ հանգամանքներ կարող են ի հայտ գալ: Չկա այդ հանգամանքները բացարձակ հստակությամբ կանխատեսելու որևէ անհրաժեշտություն. փորձը ցույց է տալիս, որ դրան անհնար է հասնել: Ներպետական օրենսդրությամբ պահանջվող ճշգրտության մակարդակը, որն ամեն դեպքում չի կարող ապահովվել ցանկացած պարագայում, զգալիորեն կախված է տվյալ օրենքի բովանդակությունից, այն ոլորտից, որը կարգավորվում է դրանով, ինչպես նաև այն անձանց քանակից ու կարգավիճակից, որոնց այն հասցեագրված է [4]: Մասնավորապես, նորմը «կանխատեսելի է» այն դեպքում, երբ այն նախատեսում է պետական մարմինների կողմից կամայական միջամտության դեմ պաշտպանության միջոց [5]: Այսինքն՝ յուրաքանչյուր օրենք պետք է լինի կանխատեսելի և հնարավորություն ընձեռի անձին կանխատեսել հետագայում առաջանալիք հետևանքները, ինչպես նաև նախատեսի պետական մարմինների կողմից կամայական միջամտության դեմ պաշտպանվելու հնարավորություն, պաշտպանվելու կառուցակարգեր:

Հաջորդիվ օտարումը պետք է բխի հանրային շահից, ընդ որում՝ համաձայնագրով սահմանված պաշտպանության համակարգի համաձայն՝ ազգային իշխանությունները պետք է իրականացնեն հանրությանը մտահոգող խնդրի առկայության նախնական գնահատում՝ հիմնավորելով գույքից զրկելու միջոցառումները: Դատարանը, բնական համարելով այն փաստը, որ սոցիալական և տնտեսական քաղաքականությունների իրա-

կանացման համար օրենսդրի հայեցողական լիազորությունների շրջանակը պետք է լինի լայն, կհարգի օրենսդրի որոշումն այն մասով, թե որն է «հանրային շահը», եթե այդ որոշումն ակնհայտ անհիմն չէ [6]:

ՄԻԵԴ-ը իր որոշումներում սահմանել է, որ ցանկացած միջամտություն պետք է ողջամտորեն համաչափ լինի հետապնդվող նպատակին [7]: Անհրաժեշտ արդարացի հավասարակշռություն չի հաստատվի, եթե տվյալ անձը կրում է առանձին և ավելորդ բեռ [8]:

Ըստ էության ՀՀ Սահմանադրությամբ սեփականության իրավունքի թույլատրելի սահմանափակման ամրագրված դեպքերի համար բնորոշ ընդհանրական տարրն այն է, որ որոշակի դեպքերում սեփականատիրոջ հայեցողությունը, կամքն այլևս առաջնային և վճռորոշ չէ, քանի որ այսպիսի դեպքերում առաջնայնություն են ստանում տվյալ իրավիճակում պաշտպանության նախապատվություն ունեցող այլ շահեր, մասնավորապես հանրության գերակա շահերը:

Վերլուծելով վերոգրյալը և ՄԻԵԴ-ի դիրքորոշումների լույսի ներքո գնահատելով ՀՀ-ում առկա իրավական կարգավորումները՝ անհրաժեշտ ենք համարում նշել՝

1. անձի սեփականության իրավունքի իրականացման ապահովման տեսանկյունից կարևոր է, որպիսի օրենքով սահմանվի. յուրաքանչյուր դեպքում, երբ կայացվում է որոշում գերակա հանրային շահով պայմանավորված սեփականության օտարման մասին, ապա պետք է գնահատման առարկա դարձվի նաև այն, թե արդյոք նշված գույքը՝ (հողամասը և այլն) հանդիսանում է սեփականատիրոջ միակ եկամտի աղբյուրը, թե ոչ, այսինքն սեփականատիրոջը հատկացված փոխհատուցումը բավարար է լինելու, որպիսի վերջինս հնարավորություն ունենա ձեռք բերել իր գույքին համարժեք գույք թե ոչ, քանի որ այդպիսի սահմանման առկայությունը հատկապես կարևոր է սեփականատիրոջը տրվող փոխհատուցման պայմանների, արդարացի հավասարակշռությունը գնահատելու համար:

Ընդ որում՝ հարկ ենք համարում նշել, որ ՄԻԵԴ-ն իր դատական ակտերում¹, որպես համաձայնագրի հմ. 1 արձանագրության 1-ին հոդվածի խախտում, նշել է հենց վերը նշված հանգամանքը, մասնավորապես ՄԻԵԴ-ը ևս հստակ արձանագրել է, որ անձին փոխհատուցում տրամադրելու ժամանակ պետության կողմից անպայման պետք է դիտարկվի այն հարցը. «թե արդյոք տրամադրվող փոխհատուցումը կծածկի դիմումատուի՝ իր ապրուստը հոգալու միջոցներից զրկվելու հետ կապված փաստացի

¹ ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճիռներից, որպես օրինակ, կարող ենք նշել Լևոն Ամիրխանյանն ընդդեմ Հայաստանի 14.02.2019 թվականին կայացված վճիռը:

կորուստը, կամ արդյոք այն առնվազն բավարար էր, որպեսզի նա ձեռք բերեր համարժեք հող այն տարածքում, որտեղ նա ապրում էր» [11]:

Բոլոր դեպքերում իր գույքից անարգել օգտվելու իրավունքի նկատմամբ պետության միջամտությունը պետք է ենթադրի նաև արդարացի հավասարակշռություն քաղաքացիաիրավական շրջանառության բոլոր մասնակիցների միջև [9]:

Միջազգային պրակտիկայում նշված խնդիրը լուծվում է սեփականատերերին իրենց բնակության հատվածներում, վերջիններիս սեփականության իրավունքով պատկանող օբյեկտին համարժեք՝ այլ օբյեկտի տրամադրմամբ, մեր օրենսդրությամբ նման կարգավորման առկայությունն առավելապես առաջադիմական կարող է համարվել և էլ ավելի կարող է երաշխավորել անձի սեփականության իրավունքի իրականացումը:

Հարկ է նկատել, որ թեև «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով առկա են հանրության գերակա շահի որոշման սկզբունքները և նպատակները, սակայն հաշվի առնելով սույն իրավահարաբերությունների առանձնահատկությունները կարծում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրությամբ ամրագրել հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման բացառիկ դեպքերը: Սույն առաջարկությունն առաջին հերթին բխում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումներից, քանի որ վկայակառչված իրավական նորմով հստակ ընդգծվում է. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումն իրականացվում է օրենքով սահմանված բացառիկ դեպքերում և կարգով՝ միայն նախնական և համարժեք փոխհատուցմամբ» (ընդգծումը մերն է), իսկ ՀՀ օրենսդրությամբ առկա չէ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման բացառիկ դեպքերը, ինչն հղի է մի շարք վտանգներով, ընդ որում գերակա հանրային շահը բավականին լայն կատեգորիա է և յուրաքանչյուր դեպքում կարող է մեկնաբանվել տարբեր կերպ:

Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման բացառիկ դեպքերի օրենսդրական սահմանման կարևորությունն այն է, որ այդպիսի սահմանումը մեր երկրում ներդաշնակ կլինի ՀՀ սահմանադրական վերջին զարգացումների տրամաբանությանը և սեփականության իրավունքի պաշտպանության կարևոր նախադրյալ կհանդիսանա:

Հարկ ենք համարում նշել, որ հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման բացառիկ դեպքերի օրենսդրությամբ սահմանմանելու անհրաժեշտությունը ՄԻԵԴ-ը և ՀՀ

Սահմանադրական դատարանը ևս կարևորել են իրենց կողմից կայացված դատական ակտերում: Մասնավորապես ՀՀ Սահմանադրական դատարանը 18.04.2008 թվականին ընդունված ՍԴՈ-630 որոշման 12-րդ կետով ևս ընդգծել է գերակա հանրային շահի սահմանման անհրաժեշտությունը, նաև նույն որոշմամբ ներկայացվել է միջազգային փորձը, թե որ դեպքերում պետությունը կարող է ճանաչել գերակա հանրային շահ, միաժամանակ համանման դիրքորոշում արտահայտել է նաև ՄԻԵԴ-ը¹:

Այս առումով հարկ է նկատել, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում, որպես գերակա հանրային շահ է դիտվում բացառապես դպրոցների, հիվանդանոցների կառուցումը, ինչն ըստ էության կարևոր է, քանի որ կանխում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հասարակության որոշակի խմբի սեփականության իրավունքն այլ անձանց ծառայեցնելուն, այսինքն, երբ կայացվում է համապատասխան որոշում գերակա հանրային շահով պայմանավորված սեփականության օտարման մասին, ապա այն իսկապես բխում է հանրային նպատակներից, այլ ոչ թե կառուցվում են բնակարանային համալիրներ, որոնք վաճառվում են և գերակա հանրային շահը վերածվում է մասնավոր ձեռնարկատիրական գործունեության, ուստի կարծում ենք, որ գերակա հանրային շահ պետք է դիտել և ՀՀ օրենսդրությամբ ևս ամրագրել ճանապարհների, երկաթուղիների, խողովակաշարերի, օդանավակայանների, հանրային տարաբնույթ նշանակության այլ ենթակառուցվածքների, պաշտպանական նշանակության օբյեկտների շինարարությունը, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման, պատմամշակութային հուշարձանների պաշտպանության, բնակավայրերի կառուցապատումը:

¹ՄԻԵԴ-ի կողմից կայացված վճիռներից ի թիվս այլ վճիռների կարող ենք նշել՝ Վիստինշը և Պերեպոլկինսն ընդդեմ Լատվիայի [ՄՊ], *Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC], թիվ 71243/01, § 94, 2012 թվականի հոկտեմբերի 25:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. ՀՀ Սահմանադրություն փոփոխված 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով:
2. «Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին» ՀՀ օրենք ընդունված 27.11.2006թ.:
3. *Iatridis v. Greece* [GC], application no. 31107/96, judgment of 25 march 1999:
4. *Vistiņš and Perepjolkins v. Latvia* [GC], application no. 71243/01, judgment of 25 march 2014:
5. *Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC], application no. 38433/09, judgment of 7 june 2012:
6. *Beyeler v. Italy* [GC], application no. 33202/96, judgment of 5 january 2000:
7. *Jahn and Others v. 20 Germany* [GC], applications nos. 46720/99, 72203/01 and 72552/01, judgment of 30 june 2005 :
8. ***Stefanetti and Others*** v. Italy, applications nos. 21838/10, 21849/10, 21852/10, 21855/10, 21860/10, 21863/10, 21869/10 and 21870/10, judgment of 15 april 2014:
9. ՀՀ Սահմանադրական դատարանի 31.01.2017թ.թիվ ՍԴՈ-1340 որոշում:
10. ՀՀ Սահմանադրական դատարանի 24.02.2012թ. թիվ ՍԴՈ-1009 որոշում:
11. ***Levon Alikhanyan*** v. Armenia, Application no. 6818/10, judgment of 14 February 2019:

КОММЕНТАРИЙ К ВОПРОСУ «ОТЧУЖДЕНИЕ ИМУЩЕСТВА ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ ОБЩЕСТВЕННОГО ИНТЕРЕСА»

ШУШАНИК АВАГИМЯН¹

¹ *Европейский университет*

Данная статья посвящена трактовке вопроса об отчуждении имущества, что в первую очередь обусловлено общественными интересами. В статье представлены позиции Конституционного Суда РА по рассматриваемому вопросу, а также позиции Европейского Суда по правам человека. В статье также были затронуты пробелы в правовых актах, регулирующих эти правоотношения, и были предложены концептуальные решения.

Ключевые слова: защита права собственности, доминирующий общественный интерес, соразмерное возмещение.

INTERPRETATION OF THE ISSUE OF «ALIENATION OF PROPERTY FOR SUPREME PUBLIC INTEREST»

SHUSHANIK AVAGIMYAN¹

¹ *European University*

This article is devoted to the interpretation of the issue of alienation of property for supreme public interest. The article presents the policy of the Constitutional Court of the Republic of Armenia on the issue under consideration, as well as the attitude of the European Court of Human Rights. The article has also touched upon the gaps in the legal acts regulating these legal relations and proposed conceptual solutions.

Keywords: protection of property rights, supreme public interest, adequate compensation.

Ներկայացվել է խմբագրություն 30.01.2019
Երաշխավորվել է տպագրության 21.05.2019

ՀՏԴ 342.56

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԵՐԸ ԴԱՏԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ¹**

ՀԱՍՄԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ¹

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Կիսանախագահական կառավարման համակարգի փոխարինումը խորհրդարանական կառավարման ձևով ինքնին բավական լայն հնարավորություններ է ստեղծել ՀՀ դատական իշխանության գործառության օբյեկտիվության, արդյունավետության և իշխանության այդ թևի անկախության ապահովման համար:

Հոդվածում անդրադարձ է կատարվում դատական իշխանության անկախության ապահովման գործում Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետև՝ ԲԴԽ) դերին, ներկայացվում ԲԴԽ-ի կազմավորման կարգն ու լիազորությունները և հաստատվում այն դիրքորոշումը, որ ԲԴԽ-ում որոշումների կայացման գործընթացում կորպորատիվ շահերի բացառման համար անհրաժեշտ է օրենքով սահմանել ԲԴԽ-ի դատավոր անդամների լիազորությունների կասեցում, մինչդեռ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքը լիազորությունների կասեցում նախատեսում է միայն ԲԴԽ-ի նախագահ ընտրված դատավորի համար:

Բանալի բառեր. դատավոր, դատական իշխանություն, անկախության ապահովում, Բարձրագույն դատական խորհուրդ, իրավասություն:

Պետական կառավարման ցանկացած ձևի պարագայում կարևորագույն խնդիրներից է դատական իշխանության անկախության ապահովումը: Հատկանշական է նաև, որ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով), արձանագրելով, որ ցանկացած կառավարման համակարգ կարելի է համապատասխանեցնել ժողովրդավարական համակարգերին, միաժամանակ առանձնացնում է դատական իշխանության անկախության ապահովումը՝ որպես առանցքային նշանակություն ունեցող երեք խնդիրներից առաջինը [1, կետ 67]:

Եվրոպայի խորհրդի տնօրինության և Վենետիկի հանձնաժողովի համատեղ եզրակացությամբ, ընդգծվել է, որ դատական անկախությունը՝ դատավորի անկախությունն է, որով բացառվում է ցանկացած արտաքին

¹ Հոդվածը պատրաստվել է 18T-5E130 «խորհրդարանական կառավարման ձևի առկա հիմնախնդիրները» գիտական թեմայի շրջանակում:

ազդեցություն դատավորի որոշման կայացման վրա: Այսինքն՝ դատավորը և դատարանը պետք է պաշտպանված լինեն օրենսդիր և գործադիր մարմինների, այդ թվում՝ ՋՏՄ-ների, հասարակական կարծիքի և այլ ճնշումներից [2, 13-14 էջեր]:

Դատական իշխանության ամրապնդման հիմնական ուղղությունը դատավորների կարգավիճակի որակական ամրապնդումն է և, որպես այդ նպատակի իրականացման միջոց, դատավորների ընտրության և նշանակման, նրանց լիազորությունների դադարեցման, պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերում տարբեր պետական մարմինների միջև լիազորությունների այնպիսի տարանջատումը, որն առավելագույնս նպաստում է այդ մարմինների միջև զսպումների և հակակշիռների կառուցակարգի արդյունավետությանը:

2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում ամրագրվեցին դատավորների, դատարանների նախագահների, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների նշանակման (ընտրության) տարբեր ընթացակարգեր: Այդպիսի մոտեցման առավելությունը նախևառաջ այն է, որ դատական համակարգի ձևավորման լիազորությունների ամբողջ համակարգն այլևս ապակենտրոնացված է¹: Ընդ որում՝ այդ ընթացակարգերի առանձնահատկությունն այն է, որ կոնկրետ անձը չի կարող ընտրվել դատավոր կամ դատարանի (պալատի) նախագահ միայն մեկ պետական մարմնի կամարտահայտությամբ, կամ, ինչպես Վենետիկի հանձնաժողովն է մեկնաբանում, սահմանվել է նշանակման «խառը»

¹ Վճռաբեկ դատարանի դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ Ազգային ժողովի առաջարկությամբ: Ազգային ժողովն առաջարկվող թեկնածուին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ դատավորի յուրաքանչյուր տեղի համար ԲԴԽ-ի ներկայացրած երեք թեկնածուների թվից:

Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ, համապատասխան պալատի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ կարող է նշանակվել միայն մեկ անգամ:

Վճռաբեկ դատարանի նախագահին ընտրում է Ազգային ժողովը պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ, Վճռաբեկ դատարանի կազմից, վեց տարի ժամկետով: Նույն անձը Վճռաբեկ դատարանի նախագահ կարող է ընտրվել միայն մեկ անգամ:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների դատավորներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակում է Հանրապետության նախագահը՝ ԲԴԽ-ի առաջարկությամբ, համապատասխան դատարանի կազմից, երեք տարի ժամկետով: Դատարանի նախագահն իր պաշտոնավարման ժամկետի ավարտից հետո՝ երեք տարվա ընթացքում, չի կարող վերստին նշանակվել այդ պաշտոնում (<< Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-7-րդ մասեր):

համակարգ [1, կետ 164]: Պետք է հաշվի առնել, որ հատկապես դատական ատյանների կազմավորման ընթացակարգերով է առավելապես պայմանավորված դատական իշխանության անկախության աստիճանը: Հատկանշական է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կոնկրետ գործերի քննության արդյունքում (The Bryan v. the United Kingdom judgment of 22 November 1995, Series A no. 335-A, p. 15, para. 37), որպես դատական իշխանության անկախության չորս չափորոշիչներից մեկը, առանձնացրել է դատավորների նշանակման կարգը [3, par.73]:

«Հ սահմանադրության 162-րդ հոդվածում ամրագրված է՝ «Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Արդարադատության իրականացմանը որևէ միջամտություն արգելվում է»: Ինչպես նշում է պրոֆեսոր Գ. Ղազինյանը, դատական իշխանության անկախության պահանջի սուսկ իրավական ամրագրումը դեռևս բավարար չէ, և դրա գործնականում կիրառությունը ենթադրում է գործառական, ինստիտուցիոնալ, նյութական ու սոցիալական անկախության այնպիսի նախադրյալներ, որոնք անհրաժեշտ ու բավարար են դատարանների ու ողջ դատական իշխանության անկախությունն երաշխավորելու համար [4, էջ 43]:

2015թ. սահմանադրության փոփոխությունների նախագծի մեկնաբանություններով հիմնավորվում էր, որ սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտ են երկրում արդարադատության նկատմամբ վստահության բարձրացման և դատարանների անկախության, անաչառության ամրապնդման համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը փաստում է, որ դատական իշխանության անկախության ապահովման համար դատական խորհուրդների տեսքով ստեղծվում են այնպիսի մարմիններ, որոնք ապահովում են դատարանների և դատավորների անկախությունը: Մասնավորապես լուծում են դատավորների տեղափոխման, տարբեր օղակի և ատյանի դատարաններում դատավորների քանակի որոշման, դատավորների կարգապահական պատասխանատվության և նրանց լիազորությունների դադարեցման, դատավորների վերապատրաստման և այլ հարցեր:

«Հ-ում իրականացվող սահմանադրական բարեփոխումների առաջնահերթ խնդիրներից էր նաև դատական համակարգի կազմավորման այնպիսի ձևերի մշակումը, որոնք կապահովեն դատարանների և դատավորների անկախությունը: Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգով հատկապես շեշտադրվեց այն, որ միայն գործառութային, կառուցակարգային, նյութական ու սոցիալա-

կան անհրաժեշտ ու բավարար անկախությամբ օժտված դատական իշխանությունը կարող է երկրում իրավունքի գերակայության, արդյունավետ արդարադատության և արդար դատաքննության երաշխավոր լինել:

Սահմանադրական բարեփոխումների արդյունքում դատական իշխանության գործառույթային ամբողջականությունն ապահովելու համար դատական իշխանության առաքելությունը, հիմնական գործառույթները, այն մարմնավորող կառույցների կազմակերպման և գործունեության հիմքերն ստացան սահմանադրական ամրագրում:

Դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու նպատակով սահմանադրական մակարդակով ամրագրվեցին ԲԴԽ-ի՝ որպես դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող անկախ պետական մարմնի կազմավորման կարգն ու լիազորությունները:

«Սահմանադրության 174-րդ հոդվածի համաձայն՝ «1. Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է տասն անդամից: 2. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է դատավորների ընդհանուր ժողովը՝ դատավորի առնվազն տասը տարվա փորձառություն ունեցող դատավորների կազմից: Բարձրագույն դատական խորհրդում պետք է ընդգրկվեն դատավորներ բոլոր ատյանների դատարաններից: Դատավորների ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատարանի նախագահ կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: 3. Բարձրագույն դատական խորհրդի հինգ անդամներին ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայրերի առնվազն երեք հինգերորդով, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասնհինգ տարվա փորձառությամբ իրավաբան գիտնականների և այլ հեղինակավոր իրավաբանների թվից: Ազգային ժողովի կողմից ընտրված անդամը չի կարող լինել դատավոր»:

Վենետիկի հանձնաժողովը, «Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ հայտնած նախնական կարծիքում նշում է. «Հավասար թվով դատավորների և ոչ դատավոր անդամների կազմը, որը երաշխավորում է նաև հասարակության ներգրավումը, կկանխի ԲԴԽ-ի քաղաքականացումը և կորպորատիվիզմը» [1, կետ 179]: Դատավոր անդամների թվային ակնհայտ գերակշռության պայմաններում ԲԴԽ-ն, ըստ էության, դառնում է դատական իշխանության ներքին սպասարկման մարմին, որն առավելապես զբաղվում է դատական իշխանության ներքին նեղ խնդիրների լուծմամբ: Այնինչ ԲԴԽ գործունեության հիմնական նպատակը դատական իշխանության անկախության ապահովումն է: Ուստի պատահական չէ, որ սահմանադրական բարեփոխումների արդյունքում

ավելացվեց ոչ դատավոր անդամների, մասնավորապես՝ իրավաբան գիտնականների թիվը:

Միաժամանակ Վենետիկի հանձնաժողովն արձանագրում է, որ Ազգային ժողովի փոքրամասնությունը պետք է իր խոսքն ասելու հնարավորություն ունենա ԲԴԽ-ի անդամների ընտրության հարցում: Ուստի որակյալ մեծամասնության ընտրությունը կարևոր է [1, կետ 180]:

Հարկ է նշել, որ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի կողմից 2007 թվականի նոյեմբերի 23-ին ներկայացված հմ. 10 եզրակացության համաձայն՝ որպես Դատական խորհրդի ոչ դատավոր անդամներ պետք է ընտրվեն հեղինակավոր իրավաբանները, համալսարանների պրոֆեսորները, որոնք ունեն երկար տարիների մասնագիտական ստաժ: Ոչ դատավոր անդամները չպետք է լինեն ակտիվ քաղաքական գործիչներ, խորհրդարանի, գործադիր իշխանության անդամներ: Վերը նշված եզրակացության համաձայն, եթե ոչ դատավոր անդամներն ընտրվում են խորհրդարանի կողմից, ապա պետք է ընտրվեն որակյալ մեծամասնության կողմից, ընդ որում՝ կարող է պահանջվել նաև ընդդիմության զգալի աջակցությունը: Այդպիսով ԲԴԽ-ի կազմում կապահովվի նաև հասարակության բազմակողմանի ներկայացուցչությունը [5]:

Եվրոպական Միության երկրներում Դատական խորհուրդների ոչ դատավոր անդամները սովորաբար իրավաբանի մասնագիտություն ունեցող անձինք են: Օրինակ՝ Բելգիայում, Բուլղարիայում, Դանիայում, Ֆրանսիայում, Մալթայում, Իռլանդիայում, Սլովենիայում, Շվեդիայում այդպիսիք են փաստաբանները: Բուլղարիայում, Խորվաթիայում, Սլովենիայում ոչ դատավոր անդամներն ընտրվում են իրավագիտության ֆակուլտետների պրոֆեսորների կազմից: Բելգիայում ոչ դատավոր անդամներից չորս անդամները պետք է ունենան առնվազն տասը տարվա մասնագիտական փորձ:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակավոր իրավաբաններին առաջադրվող պահանջներն են՝

1. փաստաբան կամ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր լինելը,
2. մասնագիտական գործունեությամբ զբաղվելու տևական ժամանակահատվածը:

Վենետիկի հանձնաժողովը կարևորում է նաև ԲԴԽ-ի նախագահի ընտրությունը՝ մատնանշելով, որ Խորհուրդը պետք է նախագահի այնպիսի անձ, ով անկողմնակալ է և կաշկանդված չէ կուսակցական քաղաքականությամբ: Միաժամանակ Վենետիկի հանձնաժողովն անդրադարձել է կորպորատիվ շահի խնդրին՝ նշելով, որ կորպորատիվ շահերից զերծ

մնալու համար անհրաժեշտ է հավասարակշռում իրականացնել՝ նախատեսելով, որ ԲԴԽ-ի նախագահն ընտրվի խորհրդի կողմից՝ խորհրդի ոչ դատավոր անդամների թվից [6, p. 35]:

«Սահմանադրության 174-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ ԲԴԽ-ն իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ՝ հաջորդաբար Ընդհանուր ժողովի և Ազգային ժողովի կողմից ընտրված անդամներից¹: Նույն հոդվածի 6-րդ մասով սահմանված է. «Դատական օրենսգրքով կարող է սահմանվել Բարձրագույն դատական խորհրդում պաշտոնավարման ընթացքում դատավոր անդամների լիազորությունների կասեցման պահանջ»: Սակայն Դատական օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով ամրագրվեց, որ դատական գործերի հավասարաչափ բաշխման չափանիշներից սահմանվում է 75 տոկոս նվազեցում՝ ԲԴԽ-ի դատավոր անդամների համար: Լիազորությունների կասեցման պահանջ սահմանվեց միայն ԲԴԽ-ի նախագահ ընտրված դատավորի համար²:

Հավասար թվով դատավորների և ոչ դատավոր անդամների կազմով, թերևս, հնարավոր է ապահովել դատարանների և դատավորների անկախությանը, ինչպես նաև դատավորների հնարավոր նեղ շահերի ազդեցության չեզոքացումը: Սակայն մեր դիտարկմամբ, ԲԴԽ-ում որոշումների կայացման գործընթացում կորպորատիվ շահերի բացառման համար անհրաժեշտ է օրենքով սահմանել ԲԴԽ-ի դատավոր անդամների լիազորությունների կասեցում:

ԲԴԽ-ի լիազորությունները սահմանված են «Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ Բարձրագույն դատական խորհուրդը՝

1) կազմում և հաստատում է դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները.

2) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա, ներառյալ առաջխաղացման կարգով նշանակման ենթակա դատավորների թեկնածուներին.

3) Հանրապետության նախագահին առաջարկում է նշանակման ենթակա դատարանների նախագահների և Վճռաբեկ դատարանի պալատների նախագահների թեկնածուներին.

4) Ազգային ժողովին առաջարկում է Վճռաբեկ դատարանի դատավորների և նախագահի թեկնածուներին.

¹ Նշված նորմն իր արտացոլումն է գտել «Դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածում:

² ԲԴԽ-ի նախագահ ընտրված դատավորի անուն-ազգանունը հանվում է գործերի բաշխման ցուցակից ԲԴԽ-ի նախագահի պաշտոնավարման ժամկետով (45-րդ հոդվածի 3-րդ մաս):

5) լուծում է դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու հարցը.

6) լուծում է իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու հարցը.

7) լուծում է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը.

8) լուծում է դատավորների լիազորությունների դադարեցման հարցը.

9) հաստատում է իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները և ներկայացնում Կառավարություն՝ օրենքով սահմանված կարգով պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար.

10) օրենքին համապատասխան ձևավորում է իր աշխատակազմը:

ԲԴԽ-ի լիազորությունների ուսումնասիրությունից հանգում ենք այն եզրակացության, որ ընդհանուր առմամբ խորհրդարանական կառավարման ձևի անցման հանգամանքով պայմանավորված, ԲԴԽ-ին են փոխանցվել մի շարք լիազորություններ, որոնք կիսանախագահական կառավարման համակարգում վերապահված էին Հանրապետության նախագահին: Մասնավորապես, դատավորների թեկնածուների, ներառյալ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակների հաստատումը (կետ 1), ինչպես նաև դատավորներին մեկ այլ դատարան գործուղելու (կետ 5), իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու (կետ 6), դատավորի լիազորությունների դադարեցման (կետ 8) հարցերի լուծումը:

ԲԴԽ-ին է վերապահվել նաև իր, ինչպես նաև դատարանների ծախսերի նախահաշիվները հաստատելու և ՀՀ կառավարություն ներկայացնելու լիազորությունը, ինչը թերևս էական նշանակություն ունի և ևս մեկ երաշխիք է դատական իշխանության անկախության ապահովման համար:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի 2001 թվականի նոյեմբերի 23-ի հմ. 2 կարծիքով փաստվել է, որ դատական համակարգի և այդ համակարգի անկախության ապահովման մարմնի ինքնուրույնության ապահովման համար պետությունը պարտավոր է դատական իշխանությանը հատկացնել այնքան միջոց, որքան անհրաժեշտ է դատական իշխանությանը՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրով (կոնվենցիա) սահմանված արդար դատաքննության իրավունքի երաշխիքների ապահովման համար [8, էջ 2]:

Ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ կիսանախագահական կառավարման համակարգի փոխարինումը խորհրդարանական կառավար-

ման ձևով ինքնին բավական լայն հնարավորություններ է ստեղծել ՀՀ դատական իշխանության գործառույթյան օբյեկտիվության, արդյունավետության և իշխանության այդ թևի անկախության մակարդակի որակական բարձրացման համար: Սահմանադրությամբ ապահովվել է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների հավասարակշռված մասնակցությունը դատավորների նշանակման գործընթացին՝ դատավորների ընտրության հարցում առանցքային դերակատարումը վերապահելով անկախ ԲԴԽ-ին, որի սահմանադրական առաքելությունն էլ հենց դատական իշխանության անկախության երաշխավորումն է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

1. [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)015rev-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)015rev-e):

2. Содействие правовой реформе в странах Восточного партнерства, Рабочая группа «Независимые судебные системы», Доклад Органы судейского самоуправления. Карьера судей, Страсбург, Сентябрь 2011:

3. Case of Findlay v. United Kingdom (App 22107/93), 25 of February, 1997:

4. http://www.yso.am/files/04G_Ghazinyan.pdf:

5. https://www.e-draft.am/projects/136/justification#_ftn1

6. [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2007\)028-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2007)028-e): CDL-AD(2007)028, JUDICIAL APPOINTMENTS // Report adopted by the Venice Commission at its 70th Plenary Session (Venice, 16-17 March 2007),

7. <http://www.court.am/index.php?link=news/21-5-18/21-05-18.htm>

8. Opinion no 2 (2001) of the Consultative Council of European Judges (CCJE) for the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the funding and management of courts with reference to the efficiency of the judiciary and to article 6 of the European Convention on Human Rights, CCJE (2001) OP N 2, Strasbourg, 23 November 2001,:

РОЛЬ ВЫСШЕГО СУДЕБНОГО СОВЕТА В ДЕЛЕ ОБЕСПЕЧЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ СУДЕБНОЙ ВЛАСТИ

АСМИК СТЕПАНЯН¹

¹ *Академия государственного управления Республики Армения*

Замена полупрезидентской системы управления моделью парламентского управления сама по себе создала значительно широкие возможности для объективности, эффективности и качественного повышения уровня независимости этого крыла власти в Республике Армения.

В статье отражена роль Высшего судебного совета в деле обеспечения независимости судебной власти, представлены порядок формирования и полномочия Высшего судебного совета, и утверждается та позиция, что для исключения корпоративных интересов в процессе принятия решений Высшим судебным советом, необходимо законным образом установить приостановление полномочий судей-членов Высшего судебного совета, тогда как конституционный закон РА «Судебный кодекс РА» предусматривает приостановление полномочий только для судьи, который избран председателем Высшего судебного совета.

Ключевые слова: судья, судебная власть, обеспечение независимости, Высший судебный совет, полномочие.

ROLE OF HIGHEST JURISDICTION COUNCIL IN SECURING INDEPENDENCE OF JUDICIAL AUTHORITY

HASMIK STEPANYAN ¹

¹ *Public Administration Academy of the Republic of Armenia*

Substitution of the semi-presidential system of government with the parliamentary model of government has opened wide opportunities for functional impartiality and efficiency of the judicial authority of RA, as well as for increase in independence quality of that branch of authority.

The article touches upon the role of the Higher Jurisdiction Council in securing independence of judicial authority. It also presents the order and competence of the Higher Jurisdiction Council, and approves the policy that in order to exclude corporative interests in decision-making process in the Higher Jurisdiction Council, it requires suspension of competences of judicial members of the Higher Jurisdiction Council by law. Yet Constitutional Law of RA “Judicial Code of RA” provides suspension of competences only for the judge elected as the Chairman of the Higher Jurisdiction Council.

Keywords: judge, judicial power, securing independence, Supreme Judicial Council, competence.

*Ներկայացվել է խմբագրություն 28.02.2019
Երաշխավորվել է տպագրության 26.04.2019*

УДК 341.9

ФОРМЫ ПРИКРЕПЛЕНИЯ ПРИНЦИПА НАИБОЛЕЕ ТЕСНОЙ СВЯЗИ

ЛИЛИТ ХАЧАТРЯН¹

¹ *Российско-Армянский университет,*

В данной работе автором были изучены способы прикрепления принципа наиболее тесной связи, проведен сравнительный анализ законодательства зарубежных стран относительно способов и методов прикрепления принципа наиболее тесной связи. Была рассмотрена роль принципа наиболее тесной связи в качестве основополагающего принципа и субсидиарной коллизионной нормы.

Ключевые слова: принцип наиболее тесной связи, коллизионные нормы, форма прикрепления, выбор права.

Принцип наиболее тесной связи закрепляет за собой роль основного и фундаментального начала в международном частном праве. Как отмечает Садиков О.Н. формула, отсылающая к праву, с которым правоотношение имеет наиболее тесную связь, обладает определенными юридико-техническими преимуществами, носит универсальный характер и способна в принципе обслуживать все вообще правоотношения с иностранным элементом [1]. В свою очередь Кабатова Е.В. отмечает, что отыскание тесной связи является результатом применения общего принципа, широко используемого в современном международном частном праве для определения применимого права [2].

Подобная формулировка закона в полной мере будет отражать суть международного частного права и исходя из этого подхода данное будет самым точным форматом закрепления принципа наиболее тесной связи. Т.е. при таком закреплении не только коллизионные, но и материальные нормы МЧП будут служить одной цели – определению права, наиболее тесно связанного с правоотношением.

Идея закрепления принципа наиболее тесной связи в качестве основополагающего была предложена еще 14 вв. родоначальником науки международного частного права, постгlossатора Бартоло да Сассоферрато (Бартол либо Бартолус). В своих трудах Бартоло включил в состав принципа наиболее тесной связи как коллизионный, так и материальный способы регуляции. Коллизионный способ регуляции он использовал для определения наиболее тесной связи к территории для каждого из составных элементов правоотношений и соответственно разработке формулы прикрепления. Материальный способ Бартоло предлагал использовать для определения персональной и территориальной сферы действия применимых национальных правил поведения [3].

Таким образом, ученый определил рамки и состав науки международного частного права, которое включает не только коллизионные, но и материально-правовые нормы, регулирующие гражданские правоотношения, отягощенные иностранным элементом. Данный подход используется и в современной отечественной и иностранной доктрине.

Согласно мнению О.Н. Садикова, принцип наиболее тесной связи в законодательстве также может быть закреплен в двух формах [1]. В форме фундаментального принципа из, которого исходят коллизионные нормы. В законе Австрии о МЧП используется именно такой подход. Второй формой закрепления является его установление в качестве второстепенного предписания, которое подлежит применению только в том случае, если основные коллизионные привязки не могут определить право. Такой подход закреплен в законодательствах РА и РФ. Таким образом, в случае установления рассматриваемого принципа в качестве главного, законодатель рассматривает все нормы в качестве проявления принципа наиболее тесной связи и это не просто вытекает из правовой природы коллизионных норм, а прямо предписано, что все коллизионные нормы являются выражением принципа наиболее тесной связи (Гражданский кодекс Луизианы, Закон Австрии о МЧП) [4].

Необходимо заметить, что перечисленные выше способы прикрепления принципа наиболее тесной связи в роли основополагающего начала подразумевают, что как законодатель, который закрепляет жесткие коллизионные нормы, так и правоприменитель, который при необходимости отвергает коллизионные нормы, во всяком случае, руководствуются принципом наиболее тесной связи.

А при изложении в законодательстве коллизионных норм, без указания на то, что все они являются выражением принципа наиболее тесной связи, свидетельствует о том, что принцип выполняет роль субсидиарной презумпции. И при таком способе выражения принципа наиболее тесной связи существует несколько вариаций законодательного закрепления.

Так, например, в Республики Армения сохранилась преемственность положений национального законодательства с положениями Основ гражданского законодательства СССР 1991 г., в которых принцип наиболее тесной связи не был закреплен (длительное время применение права, с которым договор тесно связан, отвергалось отечественными учеными, так как, по их мнению, это могло привести к субъективизму правоприменительных органов) [5]. Соответственно, принцип наиболее тесной связи получил лишь фрагментарное, непоследовательное закрепление.

Что касается правового регулирования принципа наиболее тесной связи в РФ, то законодатель пошел по другому пути, здесь применяется смешанная система закрепления. Общие положения раздела VI «Международное частное право» Гражданского кодекса РФ (ГК РФ) устанавливают субсидиарное (резервное) его применение, а для договорных отношений этот принцип закреплен в качестве главного

коллизийного начала. Вслед за Римской конвенцией 1980 г., отходя от регулирования, содержавшегося в ст. 166 Основ гражданского законодательства (в которых содержались жесткие коллизийные привязки относительно 13 договоров), ГК РФ в качестве дополнительного по сравнению с законом автономией воли устанавливает закон наиболее тесной связи. В отличие от ГК Армении данный принцип в российском законодательстве тесно увязан с доктриной характерного исполнения, в соответствии с которой, к договору применяется право страны местожительства или основного места деятельности стороны, осуществляющей характерное исполнение [6].

Например, в Республике Армения принцип наиболее тесной связи закреплен в качестве резервного регулирования и применяется только в том случае если зафиксированные коллизийные нормы не дают возможности определить применимое право к гражданским правоотношениям, отягощенным иностранным элементом. Используется следующая формулировка: «Если в соответствии с пунктом 1 настоящей статьи невозможно определить право, подлежащее применению, применяется право наиболее тесно связанное с гражданско-правовыми отношениями, осложненными иностранным элементом» [7]. Принцип наиболее тесной связи таким же образом закреплен и в Республике Казахстан, Республике Беларуси и т.д. Помимо стран СНГ в Тунисе и в Венесуэле принцип наиболее тесной связи также носит субсидиарный характер.

Но необходимо отметить, что не во всех странах, где принцип наиболее тесной связи, закреплен в качестве вспомогательного применяется к любым гражданским правоотношениям, отягощенным иностранным элементом. Например, в Венесуэле в качестве вспомогательного принципа применяется только к договорным правоотношениям.

Гражданский кодекс Российской Федерации также закрепляет принцип наиболее тесной связи в качестве субсидиарного, однако в Российской Федерации законодательство скорее стремится к смешанному подходу, именно в этом состоит отличие способа закрепления принципа наиболее тесной связи от других стран СНГ, заимствовавших нормы Модельного Гражданского кодекса для стран-участников СНГ.

Так, профессор В.П. Звеков отмечает, что коллизийная норма с весьма сходной по значению привязкой (право страны, с которой договор наиболее тесно связан) установлена также в п. 1 статьи 1211 (Право, подлежащее применению к договору при отсутствии соглашения сторон о выборе права) и в п.1 статьи 1213 (Право, подлежащее применению к договору в отношении недвижимого имущества). Но конструкция этой нормы в статье 1211 и 1213 существенно отличается от конструкции правила пункта 2 статьи 1186. В первых двух статьях коллизийная норма установлена для договорных отношений и, главное, подлежит применению в сочетании с правилами, поясняющими, какое право понимается под правом страны, с которой договор наиболее тесно связан [8].

Таким образом, для коллизионных норм в статьях 1211 и 1213 гражданского кодекса РФ принцип наиболее тесной связи закреплен не в качестве субсидиарного принципа по отношению к императивным коллизионным нормам, в качестве их непосредственного выражения.

Такое закрепление принципа наиболее тесной связи не является редкостью. Получается, что принцип наиболее тесной связи не имеет каких либо ориентиров, исходящих из императивных коллизионных норм, судьями применяются на их внутреннем убеждении исходя из субъективных соображений, что, по мнению автора потенциально является способом злоупотребления права со стороны судей. Такого же мнения придерживается и Лебедев С.Н.

По мнению Звекова В.П., «усиление регулятивной функции коллизионной нормы все чаще проявляется в утверждающейся практике предварительного (предшествующего решению коллизионной проблемы) сопоставления материально-правовых норм, принадлежащих к коллидирующим правовым порядкам, которому продается значение необходимого условия преодоления коллизии законов. Все изложенное позволяет сделать следующий вывод: регулятивная функция коллизионной нормы становится все более активной, несущей в себе определенный «социальный заряд», «социальный эффект»». [8]

Данная точка зрения вполне оправдана, так как не только коллизионные, но и материально-правовые нормы вообще должны исходить из интересов публичного порядка.

В силу того что принцип тесной связи отражает закономерности функционирования (взаимодействия) систем внутригосударственных отношений и правового опосредования взаимодействия национальных правовых систем, исследуя эволюцию международного частного права, можно говорить о противоречии между содержанием такого правового опосредования, т.е. тесной связи применимого права с существом регулируемых отношений, и правовой формой такого опосредования, т.е. использованием традиционных жестких коллизионных привязок, отличающихся однозначностью и определенностью. [9]

Так оговорка о публичном порядке служит в качестве защитных/оборонительных оговорок национального правового порядка, поскольку в основу обеих оговорок легли публичные принципы.

ИСПОЛЬЗОВАННЫЕ ИСТОЧНИКИ

1. **Садиков О. Н., Коллизионные нормы в современном международном частном праве** // Советский ежегодник международного права 1982. М., 1983. С. 219.
2. **Кабатова Е.В., Изменение роли коллизионных норм в международном частном праве** // Международное частное право: современная практика / Под ред. М.М. Богуславского, А.Г. Светланова. М.: ТОН-Остожье, 2009, с. 9.
3. **Гетман-Павлова И.В., Становление науки международного частного права: Бароло де Сассоферрато** // Международное публичное и частное право. 2008. Номер 2.
4. Гражданский кодекс Луизианы в редакции 1991 года.
5. **Канашевский В. А., Внешнеэкономические сделки. Правовое регулирование** / В. А. Канашевский. – М.: Международные отношения, 2005. – С. 72.
6. **Ходыкин Р. М., Критерий наиболее тесной связи в международном частном праве** / Р. М. Ходыкин // ИПС «Консультант Плюс».
7. Гражданский кодекс Республики Армения 1998 года в редакции 2018 года.
8. **Звекон В. П., Международное частное право: учебник** М.2004. С. 160.
9. **Шулаков А. А., Принцип наиболее тесной связи в международном частном праве** : диссертация ... кандидата юридических наук : 12.00.03 / Шулаков Андрей Анатольевич; [Место защиты: Моск. гос. юрид. акад. им. О.Е. Кутафина].- Москва, 2013.- 206 с.: ил. РГБ ОД, 61 13-12/452.

**ԱՌԱՎԵԼ ՍԵՐՏ ԿԱՊԻ ՍԿՋՐՈՒՆՔԻ ԱՄՐԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ
ԼԻԼԻԹ ԽԱՉԱՏՐՅԱՆ¹**

¹ Հայ-ռուսական համալսարան

Հոդվածում հեղինակի կողմից ուսումնասիրվել է առավել սերտ կապի սկզբունքի ամրացման եղանակները, ինչպես նաև անցկացվել է նշված սկզբունքի ամրացման տեսակների և մեթոդների համեմատական վերլուծություն տարբեր իրավական համակարգերում: Ուսումնասիրվել է նաև առավել սերտ կապի սկզբունքի դերը, որպես հիմնարար սկզբունք և կոլիզիոն նորմ:

Բանալի բառեր. առավել սերտ կապի սկզբունք, կոլիզիոն նորմեր, ամրացման տեսակներ, իրավունքի ընտրություն:

FORMS OF ATTACHMENT OF PROPER LAW PRINCIPLE

LILIT KHACHATRYAN¹

¹ *Russian-Armenian University*

The paper examines the methods of attachment of Proper Law Principle. Furthermore, the author has conducted a comparative analysis of forms and methods of attachment of Proper Law Principle in different legal systems. Also Proper Law Principle was considered as a fundamental principle and conflict rule.

Keywords: the Proper Law Principle, conflict rules, forms of attachment, choice of applicable law.

*Ներկայացվել է խմբագրություն 04.03.2019
Երաշխավորվել է տպագրության 12.04.2019*

ՀՏԴ 323.2

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ. ԸՆՏՐԱՆԻ -
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՄԱՐԻԱՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ¹, ՍՈՒՐԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ¹**

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում համակարգված ներկայացված է քաղաքական արդիականացման տեսության արժեքային համակարգի կերպափոխումը, ապա շեշտադրված է քաղաքական շուկայի արդիականացման հրամայականները: Այս գործընթացում **պետությունը ներկայացված է որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ, այլ ոչ թե մակրոտնտեսական կարգավորման կամ վարչարարության գործիք: Որպես այդպիսին՝ սոցիալ-քաղաքական արդիականացման գործընթացում պետությունն առաջին հերթին շահագրգռված պետք է լինի ժողովրդավարության որակի բարձրացման մեջ:**

Բանալի բառեր. քաղաքական արդիականացում, հասարակություն, ընտրանի, քաղաքական շուկա, մարզինալություն, քաղաքակրթություն, անցում-համախմբում, հայկական արդիականացում, ազգային ինքնություն:

Քաղաքական արդիականացման տեսական հիմքերը

Քաղաքական գիտության մեջ քաղաքական արդիականացման գործընթացը ուսումնասիրում են որպես համալիր ամբողջություն, որը կոչված է ապահովելու քաղաքական համակարգի ժողովրդավարական ինստիտուտների որակական զարգացումը՝ պայմանավորված **ընտրանի-հասարակություն** փոխհարաբերությունների նպատակադրված կամ իրավիճակային փոփոխություններով: Քաղաքական արդիականացման տեսության հիմնադիրներ Գ. Ալմոնդի, Դ. Պաուլի, Դ. Ապտերի, Լ. Պայի, Դ. Ռաստոֆի, Շ. Էյզենշտադի գաղափարներն սկսեցին կիրառվել XX դարի 50-ական թվականներին, երբ գաղութային լծից ազատագրված և նորանկախացած աֆրիկյան երկրների քաղաքական զարգացումներն ենթարկվեցին բազմամակարդակ վերլուծության: Քաղաքական արդիականացման վերոնշյալ տեսաբանները, ելակետ ընդունելով Կ. Մարքսի, Ա. Թոքսֆիլի, Մ. Վեբերի,

Վ. Պարետոյի և Թ. Պարսոնսի կողմից մշակված սկզբունքները, հասարակությունները պայմանականորեն բաժանեցին **ավանդականի և արդիականի**: Արդիականացման գաղափարախոս Շ. Էյզենշտադն անցումն արդիական հասարակությունը համարում է փոփոխության այնպիսի գծային գործընթաց, որն իր հեղափոխականացնող բնույթով հաստատվել են դեռ XVII-XIX դարերում Արևմտյան Եվրոպայում և Հյուսիսային Ամերիկայում, այնուհետև XIX-XX դարերում տարածվել հարավամերիկյան, ասիական, աֆրիկյան մայրցամաքներում [1, էջ 13-14]: Հենց այդ փոփոխություններն էլ դրդում են նորովի ուսումնասիրելու «արդիականացում» եզրույթը՝ արժևորելով արդիականացմամբ պայմանավորված փոփոխությունների տարբեր ձևաչափեր [2, էջ 202-203]:

Այսպիսով, կիրառման վաղ շրջանում արդիականացման տեսությունը ոչ այնքան ակնկալվող բազմաչափ փոփոխությունների կանխատեսման ու մեկնաբանության այսպես կոչված «մաքուր» գիտական տեսություն էր, որքան Արևմուտքի գաղափարախոսական նկրտումները բացահայտ ներկայացնող ռազմավարական նախագիծ: Ավելին, հետահայաց վերլուծությունը թույլ է տալիս արդիականացումը դիտարկել որպես «սառը պատերազմի» ժամանակ ԱՄՆ-ի կողմից լայնորեն կիրառվող քաղաքական համակարգն ապակայունացնող խաղային գործողությունների **կառուցվածքային-գործառնական ամբողջություն**: Այս նկատառումներով Շ. Էյզենշտադնն արդիականացող հասարակությունների որակական բնութագրիչների ուսումնասիրության համար բացի ավանդականի և արդիականի դիֆուզիայից հիմնավորեց մեթոդաբանական հիմք հանդիսացող երկնյուղումների հետևյալ շարքը՝ **ազատությունն ընդդեմ ավտորիտարության, կայունությունն ու ժառանգորդությունը՝ ընդդեմ հեղափոխական փոփոխությունների, ժամանակակից սոցիալական ռացիոնալությունը՝ ընդդեմ մշակութային կողմնորոշումների կամ արժեքների, որոնք մարմնավորված էին ավանդույթների, կրոնական կամ միստիկական փորձի մեջ** [1, էջ 339-340]: Այս ամենից էլ ածանցվում է արդիականացումը որպես սոցիալ-հոգեբանական, քաղաքական և քաղաքակրթական գործընթաց դիտարկելու անհրաժեշտություն, քանի որ զարգացումը կաշկանդող «հնացած» երևույթներին կարելի է հաղթել, եթե համարժեք գործառվեն վերափոխման դերակատարները՝ երկրի կառավարող վերնախավը, միջին խավի մրցունակ կրթություն ստացած ու նորարարության ջատագով հատվածը, ինչպես նաև երիտասարդությունը և բյուրոկրատիան:

Սակայն, մեր ուսումնասիրման շրջանակներում փաստենք, որ բացարձակ մաքուր, ավանդական և բացարձակ մաքուր այժմեական քաղաքական համակարգ գոյություն չունի: Ավելին, յուրաքանչյուր քաղաքական համակարգ ունի իր պատմական հիշողությունը և ըստ էության՝ լինելով

այդ հիշողության արդյունք, իշխանության իրականացման մշակույթի առումով խառը կառուցվածք ունի: Ուստի, ճիշտ կլիներ ուսումնասիրել քաղաքական արդիականացման այս կամ այն միտումը՝ պայմանավորված քաղաքական ժամանակի հրամայականներով և պատմական հոլովությամբ ձևավորված, բայց իրենց այժմեականությունը պահպանող կառուցվածքները ու նրանց գոյության նպատակահարմարությունը:

Վերոշարադրյալը հնարավորություն է ընձեռնում հիմնավորել այն, որ քաղաքական արդիականացումը, հատկապես ժողովրդավարական անցման գործընթացում ենթադրում է ընտրանու բաց հավաքագրում և ոչ թե խմբային շահերի պաշտպանման նկատառումներով պայմանավորված նեպոտիստական փակ սելեկցիա: Վերջինս խորացնումը նկատի ունենալով՝ քաղաքագետ Ֆ.Ֆուկույաման առաջարկեց **«հարկադրված արդիականացում» եզրույթը, որը** ենթադրում է զարգացած արևմտյան երկրների համեմատ իրենց հետամնացությունը նվազեցնելու նպատակով ոչ արևմտյան երկրներում հարկադիր (ստիպողական) փոփոխություն [3, c. 128]: Ըստ Ֆ.Ֆուկույամայի՝ «վազող/հասնող» երկրներում առկա է գաղափարների ու արժեքների ճգնաժամ, որի վրա էլ այդ երկրները կառուցելով իրենց սոցիալ-քաղաքական հարաբերությունները՝ տառապում են քաղաքական զարգացման ճգնաժամերով: Մինչդեռ հենց ազատական ժողովրդավարությունն է անսպառ վստահություն տալիս քաղաքական համակարգին, իսկ ժողովրդավարական ինստիտուտները ցանկացած արդիականացման երաշխիքն են: Դրա դիմաց հետազոտող Շ. Էյզենշտադը (1923–2010) գիտական շրջանառության մեջ դրեց **«բազմակի արդիություններ»** [1, c. 14]՝ հիմնավորելով ոչ արևմտյան երկրների արդիականացման սեփական մոդել ունենալու իրավունքը: Այսօր այդ ուղղության կողմնակիցները հաստատում են, որ կարևոր է ոչ միայն աշխարհում բազմակի մոդելների առկայության ընդունումը, այլև ակնհայտ է Եվրոպական միասնական մոդելի բացակայության և Եվրոպայում արդիականացման տարբեր մոդելների գոյության փաստը [4, c. 60–66]: **Ռեֆլեքսային** արդիականացման հայեցակարգի համար ելակետային է այն, որ «ինչքան շատ է հասարակությունն արդիականանում, այնքան շատ ակտորներ են հնարավորություն ստանում մտածել իրենց գոյության սոցիալական պայմանների և դրանց փոփոխության մասին: Այսպիսով, ռեֆլեքսային արդիականացման հետևանքներից է «տարբեր ձևերի գիտելիքի գիտականի, փորձարարականի, առօրեականի արդյունավետ կիրառումը» [5, c. 276]: Ըստ Ու. Բեկի՝ ժամանակակից հասարակությունը դիսկի հասարակություն է, իսկ համընդհանուր բնույթ կրելով հաճախ անկանխատեսելի են: Այս մոտեցումն ավելի օբյեկտիվ և ճկուն է [6, c. 104]: Իսկ Է. Գիդդենսի ռեֆլեքսային արդիականացման հայեցակարգը հիմնված է արդի բոլոր

ինստիտուտների մշտական **վերաբժնորման, վերանայման և կերպափոխման** վրա [7, c. 40–102]: Ս. Հանթինգթոնը գտնում է, որ արդիակա- նացման գործընթացը կարիք ունի գիտակցված կառավարման, քանի որ չի կարելի ղեկավարվել ազատ շուկայի օրենքներով որպես տրված մե- ծություն [8, cc. 24–25, 32]: Ռեֆլեքսային արդիականացումը դիտարկվում է որպես հասարակության մասին տեղեկատվության որակի աճ, որի մի- ջոցով հասարակության զարգացման հիմնական արժեքը դառնում է գի- տելիքը՝ հատկապես գիտելիքահենք: Այս համատեքստում գիտական իմացության ներդրումը պրակտիկա արդյունավետ արդիականացման հիմնական պայմանն է: Վերջինն տարիներին արևմտյան տեսաբաններն սկսել են քննադատել պոստմոդեռնիզմը՝ կասկածելով եվրոպական գծա- յին մտածողության և բացառիկության նպատակահարմարության վրա [9, c. 101–122]: Այսօր քաղաքական արդիականացումը հնարավոր չէ ուսումնասիրել առանց կարևորելու այնպիսի գերակա հասկացություն, ինչպիսին է քաղաքական գործընթացի «որակը»: Այդ համատեքստում անցումագիտության հիմնադիրներից Դ. Ռաստոուն վերլուծելով և մոդե- լավորելով դիկտատուրայից դեպի ժողովրդավարություն անցումը հաջող- ված է համարում, երբ այդ գործընթացում առաջանում են նոր սոցիալա- կան խմբեր՝ ձևավորվում են նոր վարքաբանություն [10, c. 5]: Ըստ Դ. Ռաստոուի՝ անցման մոդելը բաղկացած է մի քանի փուլերից. **1) նախնա- կան պայմաններ** – ազգային միասնության առկայություն, **2) նախա- պատրաստական** – ժողովրդավարացման դինամիկ գործընթաց՝ ձևա- վորված նոր քաղաքական ընտրանին հետամուտ է լինում, որ գրավի հե- ռացող ընտրանու սոցիալական տարածությունը, **3) որոշումների ընդուն- ման** – ավարտվում է քաղաքական լիդերների կողմից միասնության մեջ բազմակիության ընդունման և ժողովրդավարացման հիմնական կառուցա- կարգերի ինստիտուցիոնալացման գործընթացը, **4) հարմարվելու** – ժո- ղովրդավարությունը գործողությունների ամբողջությունն է, որտեղ առավե- լություն են ստանում նրանք, ովքեր հետևողական ցուցադրում են իրենց նվիրվածությունը նոր արժեշահային համակարգին, **5) կայունացման** – քա- ղաքացիական համախմբման դաստիարակություն՝ հարատև սոցիալա- կանացման և համագործակցության մշակույթի ստեղծման միջոցով [10, c. 5-15]: Ակնհայտ է, որ հենց այդ փուլերի հետևողական իրականացման պայմաններում է առաջանում ժողովրդավարական արարողակարգերի գիտակցված ընտրության անհրաժեշտությունը՝ պայքարի, փոխհամա- ձայնության (կոմպրոմիսի), քաղաքական խոսույթի (դիսկուրսի) և ժո- ղովրդավարական ինստիտուտներին ընտելանալով հաղթահարել ժողովր- դավարական անցումը՝ հանուն ազգային համախմբման: Այս բարդ գործըն- թացում Ս. Հանթինգթոնը տնտեսական զարգացման մակարդակը և քաղա-

քական ղեկավարումն առանցքային գործոն համարելով՝ գրում է. «քաղաքական արդիականացումը որպես քաղաքական գործընթաց արարողակարգերի ինստիտուցիոնալացում է, քանի որ միայն ուժեղ և կայուն պետական ինստիտուտներն ունեն հնարավորություն հարափոփոխ արտաքին միջավայրի և հասարակության պահանջներին հավասարաթեք ստեղծել քաղաքական համակարգի **ադապտացիայի և արձագանքի համար** արդյունավետ պայմաններ: Իրական քաղաքական արդիականացումը երբեք չի ուղեկցվում քաղաքական կառույցների մեխանիկական կայունությամբ, քանի որ արդիությունը (այժմեականությունը) կարիք ունի կայունության, բայց արդիականացումը ծնում է անկայունություն» [8, p. 144]:

Վերոշարադրյալից ելնելով՝ քաղաքական արդիականացումը, որպես գործընթաց, նպատակադրված փոխում է անհատի՝ տալով նրան կատարելագործման և ինքնադրսևորման համար ինքնիրեն մարտահրավեր նետելու հնարավորություն: Փաստորեն, քաղաքական արդիականացման գործընթացի դերակատարները, որպես հասարակության սոցիալական արդիականացման քաղաքականության մշակման և իրականացման պատասխանատուներ, պարտավոր են՝ 1) խրախուսել նոր տեխնոլոգիաների ներդրումը, 2) զարգացնել տնտեսության նոր ճյուղեր՝ վերամշակման և ծառայության մատուցման ոլորտում, 3) խրախուսել անհատի սոցիալական ինքնորոշման և շարժունակության աճը, 4) բարձրացնել և կատարելագործել ՋՏՄ-ի նշանակությունը, 5) ներկայացնել գաղափարական և արժեքային գունապնակի այլընտրանքներից օգտվելու հնարավորությունը: Այս շրջանակներում հետխորային նորանկախացած երկրների, ինչպես նաև ՀՀ-ի արդիականացումն անհրաժեշտ է ուսումնասիրել, որպես ժամանակի հրամայականով պայմանավորված քաղաքական, տնտեսական և սոցիալական նորացման գործընթաց, և ոչ թե միայն ավանդականից արդիական արժեքների երկվության կոշտ հակադրում: Այս համատեքստում մեզ իրավունք ենք վերապահում հիմնավորելու, որ քաղաքական արդիականացման գործընթացի որակը որոշվում է **ընտրանի-հասարակություն, ընտրանի-հակաընտրանի (կոնտրէլիտա) փոխհարաբերությունների երկխոսության որակով**: Փաստորեն, ՀՀ-ի քաղաքական ընտրանու առջև պատմական խնդիր է ծառայել՝ հղկել քաղաքական արդիականացման «քառանկյուն անիվի» եզրագծերը և անցնել բնականոն զարգացման: Ակնհայտորեն այս զարգացման ձևը (մոդելը) չի լինի ամբողջությամբ ո՛չ արևմտյան՝ ազատական, ո՛չ արևելյան՝ կորպորատիվ-պատերնալիստական: Այն իր արհեստական (սինթետիկ) բնույթով հնարավորություն կտա բնականոն արդիականացնելու ազգային ինքնությունը՝ հաղթահարելով քաղաքական զարգացման ճգնաժամերը: Արդի քաղաքական զարգացման գործընթացների մարտահրավերներն ստիպում է ՀՀ քաղաքական

ընտրանուն ժողովրդավարացնել իշխանության իրականացման մշակույթը՝ իրականացնելով ռազմավարական կառավարում: Ակնհայտ է, որ ՀՀ ժողովրդավարական բարեփոխումների այս փուլում անհրաժեշտ է ընտրանու արժեքային կողմնորոշիչներում գրանցել այնպիսի որակական փոփոխություններ, որոնք որոշում են ապագայի ռազմավարական կառավարման հեռանկարները ՀՀ-ում:

Հայաստանի Հանրապետության կառավարող ընտրանու արժեքային կողմնորոշիչներ

ՀՀ-ում «**ընտրանի-հասարակություն**» փոխհարաբերությունների ժողովրդավարացումը հիմնված պետք է լինի հանրային շահի գերակայության վրա: **Այդ պատճառով պետությունը՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ, այլ ոչ թե մակրոտնտեսական կարգավորման կամ վարչարարության գործիք, արդիականացման ժամանակ առաջին հերթին շահագրգռված պետք է լինի հասարակությունում իշխանական հարաբերությունները վերահսկող, գործող վարչակարգի դիրքերի ամրապնդմամբ:** Զարգացող երկրները, որպեսզի հաղթահարեն քաղաքական զարգացման ճգնաժամերն և կարողանան պատասխանել առկա մարտահրավերներին, պետք է համադրեն «**governance**» և «**management**» եզրույթների արժեքային համակարգերը: ՀՀ-ում առկա տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ հիմնախնդիրների լուծման նշանակությունն անհրաժեշտ է դիտարկել այդ առաջնայնության վրա ազդեցության տեսանկյունից: Միաժամանակ քաղաքականության և իրավունքի հարաբերակցությունը կարևորելիս որոշիչ է այն, որ ՀՀ-ում ընտրանին իշխանության վերաբաշխման տեսանկյունից քաղաքական մեթոդներով պետք է մանիպուլացնի ոչ թե ողջ սոցիալական տարածությունը, այլ լեգալ և լեգիտիմ կառավարի իշխանությանը մասնակից ուժերի հարաբերակցության փոփոխման վրա ազդող վիճահարույց խնդիրներն և բախումները: Սակայն ՀՀ քաղաքական գործընթացում **տարբեր գաղափարախոսական դիրքորոշումների գնահատման չափանիշների հիմքով զուգամիտված գոյակցում են** իշխանության նկատմամբ որոշակի խմբերի հավակնություններն արդարացնող հասարակական հիմնախնդիրները: Այդ պատճառով քաղաքական տարածությունում առկա է իշխանական փոխգործակցության բազում տրամաբանություններ, որոնք իշխանության համար մղվող պայքարի կենտրոնական դաշտի հետ համատեղ ենթադրում են **քաղաքական գործընթացի մարզինալություն: Դա էլ չի նպաստում ՀՀ-ում պոլիարխիկ ընտրանու, հատկապես ռազմավարական ընտրանու զարգացմանը և արդյունավետ գործառնմանը:** Այդ դիտանկյունից ՀՀ կառավարող ընտրանին

պետք է հաղթահարի մասնավոր շահերի իրականացմանը ուղղված **մեկուսախմբային** գիտակցության կողմնորոշումները: Ինչպես հայտնի է, պատմականորեն հայ իրականության մեջ լուրջ նշանակություն չի տրվել **իրավունքի ծածկագրված (կողիֆիկացված) նորմերին**: Այնպես որ հիմնարար արժեքաիրավական կողմնորոշիչների անլիարժեքությունը ոչ միայն այսօրվա կառավարող ընտրանու իրավիճակային գործառության, այլև խոր ավանդույթների հետևանք է: Վերջիններիս ազդեցությունն ավելի զգալի է դառնում այն առումով, որ իրավունքի գերակայության արժեքի հանրային ընկալման թույլ մակարդակը պայմանավորված է ՀՀ իշխանական հարաբերությունների կառուցվածքում պատասխանատվության երկակի չափանիշների մշտական ամրապնդմամբ:

Փաստորեն, ինչպես վկայում է Պ. Սարոկինը, իշխանական հարաբերություններում պայմանագրային իրավունքի ձևավորման գործընթացով են պայմանավորված քաղաքակրթական առանձնահատկությունները: Ավանդական հասարակություններում պայմանագրային հարաբերությունները մշտապես հակադրվում են «օրգանական» սոցիալական կապերին, որոնց համար ոչ մի իրավական երաշխիք պետք չէ [11, c. 427.]: Նկատի պետք է ունենալ, որ համակրանքի, ընկերության, բայց ոչ բանականության վրա հիմնված իրավական նորմերի նկատմամբ կամայականությունը ՀՀ-ում գրեթե ինստիտուցիոնալացրել է **հովանավորչական** իշխանությունը: Կարևորելով ՀՀ արդիականացման գործընթացը՝ կարծում ենք, որ մինչ այժմ ընտրանիները իրականացրել են այնպիսի արդիականացում, որը քաղաքական համակարգ է ներմուծել կառավարման ավատատիրական սկզբունքներ՝ հատկապես քաղաքական իշխանության և իշխանական հարաբերությունների իրականացման գործընթացում: Այսպես տեղի է ունեցել իշխանության մենաշնորհում, չիմնավորված նկրտումներ ունեցող մարդկանց կողմից ժողովրդավարությունը ընկալվել է որպես տեխնոլոգիա և ոչ թե արժեք, օրենսդիր իշխանությունը դարձել է գործող իշխանության կցորդը, ինչն էլ հնարավորություն է տվել առաջ մղել կորպորատիվ շահեր և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ գաղափարական գործընթացներում: Արգելակելով շուկայի բնականոն ազատականացման գործընթացները՝ քաղաքական իշխանությունը վերարտադրվել է փոխհամաձայնեցված խմբիշխանության հիմքի վրա: Մինչդեռ քաղաքական շուկայի արդիականացումն անհրաժեշտ էր, քանի միայն այդ պայմաններում հայ հասարակությունում տեղի կունենար ներքին և արտաքին աճ, որը փոխելով սոցիալական հարաբերությունները հնարավորություն կտար արդյունավետ կառավարել մարդկային ռեսուրսը և հայ հասարակությանը դուրս բերել քաղաքական զարգացման ճգնաժամերից: Ցավոք, Հայաստանն ունի կերպափոխման տխուր փորձ. առաջին հերթին ՀՀ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի

գծային ազատականացման հետևանքով նրա լեգիտիմության ճգնաժամն էր, նրա հեղինակության բացարձակ փլուզումը, որը հանգեցրեց հայ հասարակության և իշխանության միջև վստահության կորուստի: Քաղաքական հավասարակշռությունը վերականգնելու, հասարակության վստահությունը պետական ինստիտուտների նկատմամբ բարձրացնելու համար պետությունը պետք է մշակի սոցիալ-քաղաքական համակարգի ժողովրդավարական արդիականացման ընդհանուր ռազմավարություն: Այս գործընթացում որոշիչ է քաղաքական ընտրանու դերը: Սակայն, մեր կարծիքով, 2000 -2008 թվականներին պետության և հասարակության փոխազդեցության ուղղակի խախտման հետևանքով հայ հասարակությունը ոչ միայն օտարվեց, հիվանդացավ ջղախտով, այլև վերաձվեց մարգինալ զանգվածի: Հասարակական շարժումները, քաղաքական կուսակցությունները, ՉՏՄ-ները և այլ կառույցներ վերաճվեցին իշխանության վերարտադրման գործիքների, և ոչ թե հանրային շահն արդիականացնող դերակատարների: Այդ առումով նշենք, որ գործադիր և օրենսդիր իշխանությունը իրականացնելով ներքին և արտաքին մարտահրավերների վերլուծություն քաղաքական գործընթացներում կանխում է շիթային արդիականացման դրսևորումները: Նմանօրինակ գործընթացներն ապահովում են արդյունավետ կառավարող դասի հավաքագրում, որն իր առջև դրված նպատակների կատարմանը հետամուտ ապահովում է ոչ միայն մասնագիտական նորացում, այլև համարժեք «վերևից» արձագանքում է ժողովրդավարացման պահանջներին՝ ծավալելով հանրային դիրսկուրս: Եթե քաղաքական հավաքագրումը ենթադրում է քաղաքացիական և քաղաքական ակտիվություն, ապա քաղաքական ընտրանու բաց հավաքագրման գործընթացը պետության օրենսդրական և գործադիր կառույցների, բարձրաստիճան պաշտոնյաների թափանցիկ աշխատելու երաշխիք է: Այս գործընթացի ուսումնասիրումը հնարավորություն կտա վերլուծել, թե մարդը ինչպես է հայտնվել քաղաքականության մեջ, ինչպես է հավաքագրվել ընտրանի կամ դարձել լիդեր, հաղորդակցման ինչպիս հմտությունների է տիրապետում և ինչ ներուժ ունի շարունակելու իր քաղաքական կարիերան: Քաղաքական ընտրանու վերլուծությունը գերական նշանակություն ունի ՀՀ քաղաքական գործընթացի արժեքային և գաղափարական հիմքերը որոշելու համար: Այս դիտանկյունից ՀՀ-ում այսուհետ ընտրանու հավաքագրման կառուցակարգերում պետք է կարևորվի **գործառույթային** մոտեցումը: Դրանով է պայմանավորված սոցիալականի և ազգայինի փոխհարաբերությունների համախմբումը, ընտրանիների և լիդերների գերակայող կառավարման ոճի վերլուծությունը և կերպափոխման անհրաժեշտության հիմնավորումը: Քաղաքական ընտրանիների գործունեության վերլուծությունը գերակա նշանակություն ունի հայ իրականության քաղաքական գործընթացների արդիականացման համար:

Այս համատեքստում կարելի է, հայ քաղաքական ընտրանու զարգացումը բաժանել **տեր-պետրոսյանական, քոչարյանական, սարգսյանական փուլերի**: Այս ընտրանիներից յուրաքանչյուրը յուրովի է լուծել ազատական գծային պայմաններում արդիականացման հիմնախնդիրները: Այսպես, տերպետրոսյանական ընտրանու արդիականացման էությունը հանգեցրեց ազատական բարեփոխումների և ազատ շուկայի զարգացման՝ ծնելով օլիգարխիկ համակարգ: Քոչարյանական ընտրանին ամրապնդեց իշխանության ուղղահայացը և ամրապնդելով մինչ այդ գծային ազատականացման հետևանով առաջացած օլիգարխիկ համակարգը՝ ծնեց նոր խմբեր, սարգսյանական ընտրանին բացարձակ գործում էր փոխհամաձայնեցված խմբիշխանության հզորացման տրամաբանության մեջ: Կարծում ենք, որ եթե տերպետրոսյանական փուլում առկա էր որոշակի հորիզոնական պատասխանատվության ոչ ինստիտուցիոնալ կառուցակարգեր, ապա քոչարյանական և սարգսյանական փուլերում այն իսպառ բացակայել է: Թեպետ արդարության համար պետք է նշել, որ տերպետրոսյանական հորիզոնական պատասխանատվությունը պայմանավորված է եղել է ոչ թե քաղաքական ընտրանու կողմից ժողովրդավարացմանն ուղղված նպատակամետ քայլերի ամբողջությամբ, այլ հետպատերազմական իրողությամբ պայմանավորված ինքնավար դերակատարների առկայությամբ: «Թավշյա հեղափոխությունից» հետո քաղաքական տարածությունում տեղի է ունենում ընտրանու տեղի և դերի վերարժևորում: Որպես ժողովրդավարական հասարակության կառուցման պայման՝ Հայաստանում առաջին հերթին անհրաժեշտ է վերացնել ոչ լեգիտիմ և ոչ լեգալ առավելությունները: Բացի դրանից բարձրատիճան պաշտոնյաներին տրվող առավելություններն անհրաժեշտ է նորմատիվ ակտերի միջոցով հստակ կանոնակարգել՝ ըստ գրաված պաշտոնի և ծառայության արդյունքի: Որպեսզի ընտրանին չվերածվի առավելություններ ունեցող պաշտոնյաների փակ, կարծրացած տիրող կաստայի անհրաժեշտ է ընտրությունների ինստիտուտի, հանրաքվեի, հաշվետվությունների, ՋՏՄ-ների, հասարակական կարծիքի հարցումների և այլ հաղորդակցական խողովակների միջոցով վերահսկել նրանց գործունեությունը: Իրականում ժողովրդավարական է այն քաղաքական համակարգը, որի իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իսկ հանրային շահերից բխող քաղաքականությունն որոշիչ է, երբ ընտրանու ազդեցությունը սահմանափակ է և կարգավորված օրենքով, իսկ ընտրանին հաշվետու է ժողովրդին: Արդի ժողովրդավարացման գործընթացը ներառում է մի շարք գործոններ՝ ժողովրդավարացման երաշխիք, ժողովրդի մշտական վերահսկողությունը ընտրանու գործունեության վրա, ընդդիմության առկայություն, ինչպես նաև քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ընտրանիներին քննադատելու հնարավորություն: Հայաստանի համար

գերխնդիր է, որ ընտրանիները կամք ցուցաբերեն և գիտակցորեն սահմանակարգեն իրենց հնարավորությունները և ,ամենակարևորը, վայելեն քաղաքացիների վստահությունը, իրականացնեն շարունակական բարեփոխումներ՝ սոցիալական երկխոսության և մարդասիրական բովանդակությամբ: ՀՀ-ի փլուզումից, «Թավշյա հեղափոխությունից» հետո ակնհայտ է, որ հայ քաղաքական կառավարմանն անհրաժեշտ է նոր որակի ընտրանի՝ կրթված և մրցունակ, որը կարողանում է իր գիտելիքները օգտագործել պրակտիկայում, պատասխանատու է իր աշխատանքի համար, գիտակցում է իր առաքելությունը, արձագանքում է հասարակությանը, ազգին, պետությանը նետված մարտահրավերներին: Նոր ընտրանին մարզային, համայնքային և հանրապետական մակարդակներում իր առջև խնդիր պետք է դնի՝ ձևավորել դրական կերպար: Դա կօգնի ոչ միայն ապահովել քաղաքական կայունության և կայուն զարգացման փոխհարաբերությունները, այլև բնականոն արդիականացնել քաղաքական համակարգը: Ուստի վերլուծելով հայկական արդիականացումը՝ նշենք, որ քաղաքական արդիականացումն ունի երկու մակարդակ՝ **հորիզոնական** (տեղական ինքնակառավարում, քաղաքացիական հասարակության համակարգ), և **ուղղահայաց** (պետական իշխանության համակարգ, խորհրդարան): Նկատի ունենալով Հայաստանի ներկա հիմնախնդիրները՝ համարձակորեն կարելի է փաստել, որ բարեփոխումները մինչ այժմ հիմնականում կրել են ֆորմալ բնույթ և ոչ արդյունավետ են եղել մարզերի, համայնքների և ՀԿ-ների հետ ունեցած կապի զարգացման համար: Այդ իմաստով հետաքրքիր է փաստել, որ արդիականացումն ոչ միայն տեխնիկական այլ նաև հոգեբանական նորացում է. երևույթ, որը ենթադրում է հասարակության բացությունը փոփոխություններին, ինչ - որ չափով սովորույթի վերարժևորում և կողմնորոշում դեպի ապագա: Փաստորեն, արդիականանալու ճգնումը ծնում է նորարական այնպիսի մշակույթ, որն անվտանգ ապագա ունենալու հրամայականի թելադրանքով պետք է փոխի ընտրանու պատկերացումները զարգացման նկատմամբ: Ընտրանիների կողմից իրենց գործառույթների կատարման պատասխանատվությունը պայմանավորված է նրանից, թե ինչպիսի արժեքային մակարդակում է նրանց **քաղաքական ինքնությունը**: Այս դիտանկյունից ընտրանիները իրենց սահանադրաիրավական գործառույթների հետևողական կատարմամբ հետամուտ են կանխելու անորոշությունները հասարակությունում՝ բարձրացնելով քաղաքական կայունության և ինտեգրման մակարդակը:

Վերոշարադրյալը թույլ է տալիս հանրագումարել. ՀՀ քաղաքական արդիականացման ներկայիս առանձնահատկությունն այն է, որ սահմանադրականության՝ որպես գերակա արժեքի նկատմամբ վերաբերմունքը, թելադրված է հենց այսօրվա քաղաքական իրողություններով: Մինչդեռ

պայմանավորված ժողովրդավարական անցման անորոշության բաղադրիչով՝ հասարակության քաղաքական արդիականացման ուղիների վերաբերյալ ընթացող քննարկումները չեն ստացել այնպիսի կարգավիճակ, որի դեպքում կգերիշխի իրավունքի գերակայությունը և ազգային ինքնության բնականոն արդիականացումը, որպես իշխանության իրականացման մշակույթի բարձրացման մեթոդ: Եվ հենց դրա բացակայությունն էլ ՀՀ-ում երկարաձգել է անորոշություններով հղի քաղաքական զարգացման ճգնաժամերի հաղթահարումը՝ նպաստելով **աղքատության, արտագաղթի, օտարման, մարգինալության և ժողովրդահաճության երկարակեցությանը**: Փաստորեն, ընտրանու եսակենտրոնությունը և, հետևաբար, հանրային շահի նկատմամբ անտարբերությունը չէզոքացնում են քաղաքացիական միջոցներով նշված միտումներին դիմադրելու հնարավորությունները: Այս նկատառումներով նախևառաջ պետք է հրաժարվել այն քաղաքական գործիչներին նոր պաշտոնների նշակակելուց, որոնք, առաջնորդվելով նեղ խմբային շահերով, իրենց քաղաքական գործունեությամբ ապակառուցողականություն են ներմուծում քաղաքական տարածություն: Ուստի արդյունքի կառավարմանն ուղղված միջոցների շարքում անհրաժեշտ է ապահովել **քաղաքական խոսույթի (դիսկուրսի) ինստիտուցիոնալ տարածությունը** կառուցող քաղաքական ընտրանու տեղեկատվահաղորդակցական ընթացակարգերի թափանցիկություն, **պետական կառավարման բոլոր այն ոլորտներում, որոնք պետական գաղտնիք չեն պարունակում**: Անհրաժեշտ է դաստիարակել նոր ընտրանի, որը չի գայթակղվի իշխանության թաքնահարույց պերճանքով, ընտրանի, որն ի վիճակի կլինի բարձր արհեստավարժություն և մարդասիրություն ցուցաբերել՝ չմոռանալով նրանց մասին, որոնց օգնությամբ իրենք «թագադրվել» են [11]: Հարցադրումը, իհարկե, հռետորական է, սակայն պատասխանները՝ զուտ արժեքաբանական, և դրանից է ուղղակիորեն կախված և՛ մեզանից յուրաքանչյուրի, և՛ մեր հայրենիքի, և՛ հայկական քաղաքակրթության ապագան, և՛ ժողովրդավարական ուժեղ պետության կերպարի ձևավորումը: Նկատի ունենալով առկա մարտահրավերներին պատասխանելու հրամայականները՝ այսուհետև ՀՀ քաղաքական արդիականացման գործընթացն անհրաժեշտ է իրականացնել գիտավերլուծական կառավարման սկզբունքների հիման վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Эйзенштадт Ш.**, Революция и преобразование обществ. Сравнительное изучение цивилизаций / Пер. с англ. А.В.Гордона под ред. Б.С. Ерасова. – М.: Аспект Пресс, 1999. – 416с с. 13-14
2. **Иноземцев В.**, Демократия и модернизация: к дискуссии о вызовах XXI века/ Центр исследований постиндустриального общества. -М.: Изд. «Европа», 2010, 318 с. с. 202-203
3. **Фукуяма Ф.**, Конец истории и последний человек / Френсис Фукуяма; пер. с англ. М.Б.Левина. - М.: АСТ, 2007 с. 128.
4. **Аллард Э.**, Сомнительные достоинства концепции модернизации // Социологические исследования. 2002. № 9. с. 60–66.
5. **Бек У.**, Общество риска: На пути к другому модерну / Пер. с нем. В. Седельника, Н.Федоровой; посл. А. Филипова. - М.: Прогресс-Традиция, 2000, с. 276.
6. **Бек У.**, Что такое глобализация? Пер. с нем. А. Григорьева и В. Седельника. - М. : Прогресс-традиция, 2001., с. 276.
7. **Гидденс Э.**, Судьба, риск и безопасность // THESIS. 1994. Вып. 5. с. 40–102.
8. **Хантингтон С.**, Политический порядок в меняющихся обществах. Политический порядок в меняющихся обществах / Сэмюэл Хантингтон; пер. с англ. В.Р. Рокитянского. - М. : Прогресс-Традиция, 2004М., 2004. с. 24–25, 32.
9. **Гидденс Э.**, Последствия современности // Новая постиндустриальная волна на Западе: антология / под ред. В.Л. Иноземцева. М., 1999. С. 101–122.
10. **Растой Д.А.**, Переходы к демократии: попытка динамической модели // Полис. Политические исследования, 1996. № 5.
11. **Сорокин Питурич**, Человек. Цивилизация. Общество.-Общ. ред., сост. и пред. А. Ю. Согомонова], М.: Политиздат, 1992.
12. **Margaryan M.**, Political elites and problems of democratic transition in the Republic of Armenia
<https://mmmargaryan.wordpress.com/2016/10/18/political-elites-and-problems-of-democratic-transition-in-the-republic-of-armenia/>

ПОЛИТИЧЕСКАЯ МОДЕРНИЗАЦИЯ: ПРОБЛЕМЫ ВЗАИМООТНОШЕНИЙ ОБЩЕСТВА И ЭЛИТЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

МАРИАМ МАРГАРЯН¹, СУРЕН ПЕТРОСЯН¹

¹ Академия государственного управления Республики Армения

В статье комплексно представлена эволюция системы ценностей политической теории модернизации, после чего подчеркивается необходимость модернизации политического рынка. В этом процессе **государство представлено как основной институт политической системы, а не как инструмент макроэкономического урегулирования или управления. В процессе социал-политической модернизации государство в первую очередь должно быть заинтересовано в повышении качества демократии.**

Ключевые слова: политическая модернизация, общество, элита, политический рынок, маргинализация, цивилизация, переход-консолидация, армянская модернизация, национальная идентичность.

POLITICAL MODERNIZATION: PROBLEMS OF RELATIONSHIP BETWEEN SOCIETY AND ELITE IN THE REPUBLIC OF ARMENIA

MARIAM MARGARYAN¹, SUREN PETROSYAN¹

¹ Public Administration Academy of the Republic of Armenia

In the article systematically presented the evolution of the value system of the political theory of modernization, then is emphasized the imperative of modernization of the political market. In this process, **the state is represented as a supra-institutional institution of the political system, rather than a tool for macroeconomic management or administration. In the process of socio-political modernization, the state should be first of all interested in raising the quality of democracy.**

Keywords: political modernization, society, elite, political market, civilization, transition-consolidation, Armenian modernization, national identity.

Ներկայացվել է խմբագրություն 16.01.2019
Երաշխավորվել է փաթագրության 20.03.2019

ՀՏԴ 32

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՈԱԶԱՏԱԿԱՆ
ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԻ ԴԵՐԸ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ
ԼԵՎՈՆ ՌՈՒԽԿՅԱՆ¹**

¹ Հայ-ռուսական համալսարան

Հայաստանում հակակոռուպցիոն պայքարում նախորդ տարիների համեմատությամբ գրանցվել է որոշակի դրական տեղաշարժ, ինչը սակայն չի կարող հիմք հանդիսանալ լուրջ առաջընթացի համար: Առաջընթացը, կարելի է ասել, փոքր է, բայց վատագույն դեպքում սա միայն լճացման իրավիճակ է: Հարկավոր է կիրառել արդյունավետ կառավարման սկզբունքներ, որոնք թույլ կտան զարգացնել հասարակական-քաղաքական երկխոսությունը՝ նվազեցնելով աղքատությունն ու կոռուպցիան:

Բանալի բառեր. նեոազատականություն, հակակոռուպցիոն պայքար, ռազմավարություն, հանրության բևեռացում, հեղափոխություն:

Գիտական նորույթը: Հայաստանյան հասարակությունն օտարվել է սոցիալական իրականությունից՝ աղքատության և կոռուպցիայի բացասական ներազդման հետևանքով, ինչին հակազդելու բարոյահոգեբանական ռեսուրսների ՀՀ-ն չի տիրապետում: Հիմնախնդրի լուծումը պահանջում է հասարակության քաղաքական զարգացման ուղիների վերաբերյալ ընթացող քննարկումների որոշակիացում՝ ՀՀ-ում աղքատության և կոռուպցիայի ընդլայնումը կանխելու նպատակին հետամուտ լինելով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը կոռուպցիան է, իսկ առարկան՝ նեոազատականության՝ կոռուպցիայի նվազեցման վրա ներազդելու գործընթացում ծագող հարաբերությունները:

Ավանդական ազատականության վրա պետական գաղափարախոսության և սոցիալական նպատակների ազդեցության ուժեղացումը և ազդեցությունը տնտեսական և քաղաքական իրողությունների վրա XX դարում առաջ բերեցին դրա պատմական մեկ այլ ձևի առաջացումը՝ նեոազատականությունը: Քաղաքական համակարգի կարևորագույն արժանիքն այստեղ արդարությունն էր, իսկ կառավարությանը՝ կենտրոնացումը բարոյական սկզբունքների և արժեքների վրա: Նեոազատականների քաղաքական ծրագրի հիմքում ընկած էին կառավարողների և կառավար-

վողների հայեցակարգերը, քաղաքական գործընթացներում զանգվածների մասնակցության անհրաժեշտությունը, կառավարչական որոշումների ընդունման գործընթացների ժողովրդավարացումը:

Եթե նախկինում առկա էր հակվածությունը ժողովրդավարությունը մեխանիկորեն ժողովրդավարացնելու ուղղությամբ, ապա ներկայում առավել կարևորություն էր տրվում քաղաքական իշխանության կազմակերպման հոգնականության ձևերին: Ընդ որում՝ Ռ.Դալը և մի շարք այլ նեոհոգնականներ գտնում էին, որ որքան թույլ է հասարակության լայն շերտերի կառավարումը, այնքան մեծ է դրա համապատասխանությունն ազատականության սկզբունքներին [1, p. 68-69]: Աջ ազատականները (Ֆ. Հայեկ, Դ. Էշեր, Գ. Օլսոն) գտնում են, որ բազմակարծության դեպքում կարող է ձևավորվել հասարակության հարստության բռնագրավում հարուստների ձեռքով, ինչը սպառնալիքի տակ կոնի ազատականության հիմնարար սկզբունքները [2], [3]:

Միևնույն ժամանակ նեոազատականության մեջ պահպանված մի շարք սկզբունքներ՝ մարդկային կենսագործունեության հանրային ձևերը՝ քաղաքական ակտիվություն, ազատություն և այլն, անհատի անձնական կյանքի հանդեպ վերաբերմունքը սահմանափակում են ժամանակակից պայմաններում նշվածների հանդեպ ընտրողական մոտեցումը:

Նեոազատականության վերաբերյալ ժամանակակից գաղափարական-քաղաքական պատկերացումներն առանձնացվում են ըստ հայեցակարգային տեսական դրույթների և մեկնաբանությունների միանգամայն լայն շրջանակով: «Նեոազատականություն» հասկացությունն ուսումնասիրող հեղինակների մի խումբ՝ Ս. Պ. Ջոլոտարևը, Ա. Վ. Պոպովան, Վ. Վ. Շաբելնիկը և այլք գտնում են, որ նեոազատականությունը XVII-XIX դարերի դասական ազատականության էվոյուցիոն ժամանակակից մակարդակն է [4], [5], [6]: Նշված հեղինակներն իրենց տեսակետը մեկնաբանում են այն հանգամանքով, որ XX դարավերջին և XXI դարասկզբին առաջ եկան տարբեր գաղափարական հոսանքներ, որոնց համար որպես գաղափարական հիմք ծառայում էին ազատական մտքի ամեն հնարավոր մոդիֆիկացիաները՝ սկսած սոցիալ ազատականությունից, քեյնսականությունից մինչև նեոպահպանողականություն:

Ուսումնասիրելով տարբեր հեղինակների մեկնաբանությունները, առաջադրելով սեփական կարծիք՝ վերադառնանք հիմնախնդրին՝ ներկայացնենք նեոազատականության գաղափարախոսության դերը հակակոռուպցիոն ռազմավարության կայացման գործում:

Ազգային անվտանգության ապահովման գործում կարևոր դերակատարում ունի հասարակական-քաղաքական երկխոսությունը: Հայաստանի

Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգ է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական քաղաքականության մշակման և իրագործման միջոցով: Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը ենթակա է ճշգրտումների՝ ըստ ներպետական և միջազգային իրադրության, սպառնալիքների ու մարտահրավերների փոփոխման: Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի պահպանմանն ուղղված քայլերի ձեռնարկում: Դրա անհրաժեշտության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը: Բարեփոխումներն իրականացվում են ազգային ինքնության պահպանման պայմանով՝ հենվելով առավելապես ազգային ներուժի վրա, օգտագործելով միջազգային հանրության փորձն ու աջակցությունը: Բարեփոխումների ձգձգումը կամ ձախողումն անմիջական սպառնալիքներ են ազգային անվտանգության համար: Բարեփոխումների իրագործումն ապահովվում է միասնական պետական քաղաքականության իրականացմամբ: Այն արտահայտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության դրույթների, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների, օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների և դրանցից բխող նորմատիվ ակտերի համալիրի միջոցով:

Տնտեսության զարգացման արդի շրջանում աղքատությունը և կոռուպցիան հանդիսանում են լուրջ մարտահրավերներ: ՀՀ-ում առկա կոռուպցիան և աղքատությունը բերում է մարգինալացման, որը բացառում է սոցիալական երկդոսությունը:

Հայաստանի Հանրապետության մեջ առկա աղքատության և կոռուպցիայի բարձր մակարդակը, ոչ միայն խոչընդոտ է հանդիսանում հասարակական-քաղաքական երկխոսության արդյունավետության ապահովմանը, այլ նաև խթան է երկրում հասարակական-քաղաքական երկխոսության իսպառ վերացմանը: Հասարկությունը դառնում է մարգինալ, որը տեղի է տալիս «գունավոր հեղափոխությանը»:

Քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ՀՀ-ում ընթանում է հասարակության արմատական կերպափոխումների պայմաններում, որը ենթադրում է շարունակական բարեփոխումներ, էթնիկ ինքնության

բնականոն արդիականացում և համագործակցության մշակույթի հաստատում՝ հանուն հասարակական-քաղաքական երկխոսության և սերունդների համերաշխության: Այս նպատակով ՀՀ-ում ընտրական գործընթացներն անհրաժեշտ է կազմակերպել «անցում-համախմբում» գիտավերլուծական պարադիգմի օգնությամբ, որը բարձրացնելով ժողովրդավարության որակը՝ մի կողմից կկանխի հասարակության մարգինալությունը, մյուս կողմից՝ կմեկնարկի ժողովրդավարական համախմբման գործընթացը:

Ինչ վերաբերում է կոռուպցիայի դեմ պայքարին, նշենք, որ կոռուպցիայի դեմ պայքարի ծրագրերը պարբերաբար թարմացվում են, քանի որ նախկին մեթոդներից և ոչ մեկն իրեն այնպես էլ չի արդարացրել, և անհրաժեշտություն է առաջանում կազմել կոռուպցիան արմատախիլ անելու հերթական ծրագիրը: Կոռուպցիան, ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տնտեսական և սոցիալական զարգացման ամենամեծ խոչընդոտն է: Կոռուպցիայի դեմ պայքարելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ՝ ի վերջո, ի՞նչ է կոռուպցիան: Կոռուպցիայի սահմանումը հայտնի է՝ իշխանության չարաշահում՝ անձնական օգուտ ստանալու նպատակով: Սակայն՝ սա շատ տարողունակ հասկացություն է: Օքսֆորդյան մեծ հանրագիտարանում, օրինակ, կոռուպցիայի դրսևորման հերթականությունը բավական հետաքրքիր է: Որպես կոռուպցիայի ամենացայտուն օրինակ, նշված է ընտրությունների կեղծումը: Հափշտակելով պետության ողջ հարստությունը՝ իշխանություններն ու օլիգարխները «ժողովրդական զանգվածներին» չեն կարող հնարավորություն տալ արդար, ազատ ընտրություն կատարել և կիրառում են կառավարելի ժողովրդավարության հնարները:

Ըստ քաղաքագետ Մ. Մարգարյանի՝ քաղաքական համակարգի ժողովրդավարացումը ՀՀ-ում ընթանում է հասարակության արմատական կերպափոխումների պայմաններում, որը ենթադրում է շարունակական բարեփոխումներ, էթնիկ ինքնության բնականոն արդիականացում և համագործակցության մշակույթի հաստատում՝ հանուն հասարակական-քաղաքական երկխոսության և սերունդների համերաշխության: Այս նպատակով ՀՀ-ում ընտրական գործընթացներն անհրաժեշտ է կազմակերպել «անցում-համախմբում» գիտավերլուծական պարադիգմի օգնությամբ, որը բարձրացնելով ժողովրդավարության որակը՝ մի կողմից կկանխի հասարակության մարգինալությունը, մյուս կողմից՝ կմեկնարկի ժողովրդավարական համախմբման գործընթացը [7]:

Բազրատ Հարությունյանը ժամանակակից հայ հասարակության մեջ կոռուպցիայի դրսևորումների սոցիոլոգիական վերլուծության մեջ ներկայացնում է երևույթի սոցիոլոգիական ընկալումը. կոռուպցիան շեղվող

վարքի տարատեսակ է՝ ուղղված անձնական նպատակների իրագործմանը՝ ի վնաս պետական շահերի: Նաև՝ սոցիումի անդամների դերային գործառույթների խախտումն է՝ մասնավոր շահերի անմիջական ազդեցությամբ: Նույն հետազոտության մեջ տրված է նաև կոռուպցիայի մշակութաբանական ընկալումը. կոռուպցիան յուրահատուկ սոցիալական պրակտիկա է՝ հիմնված յուրահատուկ մշակույթի (ենթամշակույթի) վրա, որն ունի իր յուրահատուկ լեզուն, խորհրդանշանների համակարգը, էթիկան ու փիլիսոփայությունը: Առավել տարածված տեսակետի համաձայն, կոռուպցիան լատիներեն *corruptio* բառից է ծագում, ինչը նշանակում է փչացում, քայքայում, այլասերում: «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2003թ. որոշման համաձայն. «Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ) ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան, որպես վստահված իշխանության չարաշահում ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները»:

Կոռուպցիայի սահմանումների թվարկումը կարելի է շարունակել, սակայն վերը բերվածն էլ բավարար է՝ այս հետազոտության շրջանակներում հասկացությունը որոշակի բովանդակությամբ կիրառելու համար: Որքան էլ կոռուպցիայի սահմանումները նեղ կամ լայն լինեն, դրանցում առանցքային նշանակություն ունեն երկու տարրեր՝

1. դիրքի չարաշահում,
2. անձնական օգուտի ստացում:

Ընդ որում՝ դիրքը կարող է լինել ինչպես ֆորմալ ամրագրված՝ պաշտոն, այնպես էլ՝ ոչ ֆորմալ՝ բարոյական հեղինակությամբ կամ դերային սպասումներով արտահայտվող: Մեր առանձնացրած մյուս տարրը նույնպես բազմաթիվ դրսևորումներ կարող է ունենալ: Անձնական օգուտը միայն նյութական արտահայտում չունի: Այն կարող է բարոյական ու սոցիալական չափումներ ունենալ՝ հեղինակության ու համբավի բարելավում, սոցիալական կապիտալի ձեռքբերում, և այլն:

ՀՀ կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարը ճանաչել է իր գործունեության առանցքային հիմնահարցերից մեկը: Վերջին տարիներին

«Կառավարությունը ընդունելով կոռուպցիայի հետևանքով առաջացող վտանգները՝ կոռուպցիայի դեմ պայքարելու մի շարք քայլեր է ձեռնարկել:

Արդյունավետ պետական կառավարումը, մասնավորապես պայքարը կոռուպցիայի դեմ, ճանաչվել է « ազգային անվտանգության ռազմավարության գերակա ուղղություններից մեկը: « Ազգային անվտանգության ռազմավարությունն ամրագրել է, որ ինստիտուցիոնալ բարեփոխումները մասնավորապես միտված են ժողովրդավարական պետության հզորացմանը, պետական կառավարման մարմինների արդյունավետ գործունեության, դատական իշխանության անկախությանն անաչառության ապահովմանը, որոշումների նախապատրաստման և դրանց կատարման նկատմամբ վերահսկողության գործընթացներում քաղաքացիական հասարակության դերի բարձրացմանը, կոռուպցիայի, մասնավորապես կաշառակերության դեմ պայքարի ուժեղացմանը:

Կոռուպցիոն երևույթների բացահայտումն ու համապատասխան պատասխանատվության ենթարկելը էական են հակակոռուպցիոն ռազմավարության հաջողության համար: Կառավարության ու նրա կողմից կոռուպցիան հաղթահարելու կարողության հանդեպ հասարակության հավատը միշտ էլ կախված կլինի այն հանգամանքից, թե ինչ չափով են պարտադրվում օրենքները և պատասխանատվության անխուսափելիությունը: Կոռուպցիոն երևույթների հաղթահարմանն ուղղված պատասխանատվության կառուցակարգերի կիրառումը ենթադրում է իրավապահ մարմինների համատեղ և ներդաշնակ աշխատանք՝ միտված մեկ ընդհանուր նպատակի՝ կոռուպցիոն երևույթների բացահայտմանն ու դատապարտմանը:

Հանրային իրազեկությունը կոռուպցիայի դեմ պայքարի կարևորագույն տարրերից է: Արդյունավետ հակակոռուպցիոն ռազմավարություն իրականացնելու տեսանկյունից շատ կարևոր է, որպեսզի հասարակությունն իր մասնակցությունը բերի կոռուպցիայի հաղթահարման գործում: Կոռուպցիան հաղթահարելու համար կառավարության կողմից իրականացվող միջոցառումներին անպայման մասնակից կդառնա քաղաքացիական հասարակությունը, նրանք կիրազեկվեն, կփոխվի պետության հանդեպ հասարակության վերաբերմունքը, պետական ծառայություններից օգտվելու մեթոդները:

Հակակոռուպցիոն ցանկացած գործունեության շեշտադրումն առաջին հերթին պետք է լինի անձնական կամ այլ շահադիտական նպատակով պաշտոնական դիրքի որևէ չարաշահում թույլ չտալը կամ այն կանխարգելելը: Այս ամենին հասնելու արդյունավետ միջոցներ են պետական պաշտոնյաների համար նախատեսված կանոնակարգերը, էթիկայի նորմերը և վարվելակերպի հրահանգները:

Կոռուպցիոն երևույթների հաղթահարման գործոն է նաև պետական ծառայողներին բաց գործընթացով պատասխանատվության ենթարկման հրապարակայնությունը և պատասխանատվության ենթարկելու փաստերի մասին հանրությանը իրազեկելը: Քաղաքականության մշակման հարցերի շուրջ հանրային քննարկումներ չանցկացնելը և որոշումների կայացման ոչ թափանցիկ ընթացակարգերը հանգեցնում են նրան, որ հասարակությունն օտարվում է կառավարման գործընթացից: Հանրությանը հանրաժողովների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով պետք է կանոնավոր ներգրավել քաղաքականության մշակման գործընթացում՝ դրան ծառայեցնելով նաև ինչպես ներկայացուցչական խմբերի հետ ուղղակի հանդիպումները, այնպես էլ տեխնիկական միջոցները: Սրանով ոչ միայն կնվազի կոռուպցիան քաղաքականության մշակման ասպարեզում, այլ նաև կբարձրանա քաղաքականության արդյունավետությունն ու որակը [8, էջ 5-7]:

Կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական երաշխիքներից մեկը հակակոռուպցիոն քաղաքականության արդյունավետ իրականացումն ապահովող ինստիտուցիոնալ համակարգն է: Այդ նպատակով ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 165-Ն որոշմամբ ստեղծվել է Կոռուպցիայի դեմ պայքարի խորհուրդը: Խորհուրդն իրականացնում է հակակոռուպցիոն բարեփոխումների համակարգումն ու դրանց կատարման նկատմամբ հսկողությունը Հայաստանում ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվել է հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2015-2018 թթ. միջոցառումների ծրագիրը [9]:

Հակակոռուպցիոն ռազմավարության գլխավոր նպատակը Հայաստանում կոռուպցիայի պրոգրեսիվ և հետևողական նվազեցմանը նպաստելն է, պետական կառավարման մարմինների նկատմամբ քաղաքացիների վստահության ամրապնդումն ու կոռուպցիայի նկատմամբ զրոյական հանդուրժողականության սկզբունքի խթանումը՝ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային չափանիշներն իրագործելու միջոցով:

Ռազմավարությունն օգնելու է պետական կառավարման կառույցներին փոխել իրենց ինստիտուցիոնալ հակակոռուպցիոն մշակույթն ու հետևանքների առումով որդեգրել արդյունքին ուղղված մոտեցում: Ռազմավարությունը պահանջում է ակտիվ մասնակցություն բոլոր պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության կողմից:

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունն ուղղված է բարեխիղճ և պատասխանատու պաշտոնյաների միջոցով կոռուպցիայի մակարդակի և տարածվածության նվազեցմանը, կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված գործընթացների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը,

հակակոռուպցիոն միջոցառումների իրականացման ընթացքում հանրության աջակցության ընդլայնմանը, ինչպես նաև կոռուպցիայի կանխարգելման առավել արդյունավետ և գործուն միջոցների կիրառմանը: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության հիմնական խնդիրը հանրային ծառայության ոլորտում կոռուպցիայի կանխարգելմանը, կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանմանը, կոռուպցիոն վարքագծի դրսևորումների արդյունավետ քննությանը և հանրային վստահության բարձրացմանն ուղղված միջոցների համալիր կիրառումն է: ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը տվյալ խնդիրն իրականացնելու է թիրախային չորս ոլորտներում՝ առողջապահության, կրթության, պետական եկամուտների հավաքագրման, ոստիկանության կողմից քաղաքացիներին մատուցված ծառայությունների մատուցման:

Կոռուպցիայի դեմ պայքարի կարևոր բաղադրատարրերից է հանդիսանում քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը կոռուպցիայի դեմ պայքարին: Այս առումով կարևորվում է հակակոռուպցիոն պայքարի միջոցների և կառուցակարգերի մասին հասարակության պատշաճ իրազեկումը: Վերջինիս հետ սերտորեն կապված է նաև հանրային ծառայողների, պատասխանատուների, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի համակարգային և պարբերական հակակոռուպցիոն կրթությունը: Այդուհանդերձ, այս բնագավառում մինչ օրս պետական մակարդակով էական քայլեր չեն ձեռնարկվել, հասարակությունը լիարժեք չի ընդգրկվել կոռուպցիայի դեմ տարվող պայքարին և օբյեկտիվորեն զրկված է եղել այդ գործընթացի վրա ներազդելու հնարավորությունից: Քանի որ հակակոռուպցիոն ռազմավարությունն ու դրա միջոցառումների ծրագիրը չեն բացառում կոռուպցիոն ռիսկերը, հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի ռազմավարության և ոլորտային ծրագրերի իրականացումն ապահովվելու է մոնիթորինգի և գնահատման համակարգի ներդրմամբ [10, էջ 41]: Հակակոռուպցիոն ռազմավարության մշտադիտարկման մոտեցումներն ու նպատակներն են լինելու՝

- 1) հակակոռուպցիոն կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը,
- 2) հակակոռուպցիոն ռազմավարության պարբերական մշտադիտարկումն ու գնահատումը՝ գործնական խնդիրները վեր հանելու նպատակով,
- 3) հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործընթացի (առաջընթացի) ուսումնասիրությունը,
- 4) հակակոռուպցիոն ռազմավարության ընթացքում բացահայտված գործնական խնդիրների լուծումը,
- 5) մասնավոր և հանրային հատվածում հակակոռուպցիոն իրազեկության բարձրացումը [11, էջ 113]:

Հակակոռուպցիոն ռազմավարության մշտադիտարկման ակնկալվող արդյունքներն են լինելու՝ հանրային կառավարման ոլորտում կոռուպցիայի ընդհանուր իրավիճակի և ռիսկերի բացահայտումը, կոռուպցիայի վերաբերյալ գիտելիքի ավելացումը կոռուպցիայի հակված հանրային կառավարման որոշակի թիրախային ոլորտներում, ինչպես նաև հանրային կառավարման ոլորտները մշտադիտարկման ենթարկելու, թափանցիկություն պահանջելու և հաշվետու պահելու քաղաքացիական հասարակության դերակատարների կարողության ավելացումը:

Կոռուպցիայի հասարակական վտանգավորությունը չափազանց մեծ է: Նկատի ունենալով, որ կոռուպցիան սպառնում է ներխուժել կյանքի գրեթե բոլոր ոլորտները, դրանով իսկ վտանգելով պետական մարմինների բնականոն գործունեությունը և պետության հեղինակությունը, դրա դեմ պայքարում պետք է համախմբվեն իշխանությունները, ոչ պետական հատվածը և քաղաքացիական հասարակությունը: Կոռուպցիայի դեմ պայքարն իր մեջ ներառում է երեք հիմնական ուղղություն.

1. հասարակության կողմից կոռուպցիայի և դրա հետևանքների հասարակական վտանգավորության աստիճանի գիտակցման արմատավորում.

2. կոռուպցիայի կանխարգելում.

3. օրենքի գերակայության ապահովում՝ ուղղված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Առաջին ուղղության մեջ կարևորվում են հակակոռուպցիոն ռազմավարության մշակման, հանրության կրթության, հակակոռուպցիոն պայքարում քաղաքացիական ինստիտուտների համախմբման, անկախ ՋՏՄ-ների դերը.

Երկրորդում՝ իշխանությունների քաղաքական կամքի, պետական կառավարման համակարգի կատարելագործման, պետական կառավարմանը հասարակության մասնակցության, հասարակական գործընթացներին պետության միջամտության, պետական պաշտոնյաների կողմից վարքագծի կանոնների պահպանման դերը.

Երրորդում՝ ուժեղ ու անկախ դատական իշխանության, օրենսդրական դաշտի հստակեցման և կարգավորման, օրենքների պարտադիր կատարման ապահովման, անձանց իրավունքների պաշտպանության և մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի դերը [12, էջ 21]:

Քաղաքական կոռուպցիան ամենափայլուն կերպով դրսևորվում է ընտրություններում, այդ թվում՝ վերջին հանրաքվեի ժամանակ: Դիտորդներն արձանագրում էին ընտրախախտումների և ընտրակեղծիքների բազում դեպքեր: Սրանք քաղաքական կոռուպցիայի դրսևորումներ են: Այդ պատճառով կարող է վարկաբեկվի հակակոռուպցիոն ռազմավարությունը: Ուստի, մարտահրավեր է նոր ընտրական օրենսգրքի մշակումը և պրակտիկայի փոխելը: Այսպիսի հանրաքվեի արդյունքում հասարակության

աջակցությունը ռազմավարությանը կվերանա, եթե չտրվի հստակ գնահատական և համապատասխան պատժամիջոցներ չկիրառվեն, հասարակությունը լուրջ չի ընկալի հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման հետ կապված ցանկացած քայլ:

2018 թվականը Հայաստանում նշանավորվեց լրիվ նոր ու աննախադեպ քաղաքական իրավիճակի ստեղծմամբ: 2018 թվականի ապրիլյան առաջին տասնօրյակից հետո Հայաստանում սկսվեցին խաղաղ գործողություններով ուղեկցված ցույցեր, երթեր, քաղաքացիական անհնազանդության զանգվածային դրսևորումներ: Ցույցերն ու խաղաղ անհնազանդությունները բերեցին նրան, որ ապրիլի 23-ին երկիրը մեկ տասնամյակ նախագահի պաշտոնում ղեկավարած, այնուհետև վարչապետի պաշտոնը զբաղեցրած Սերժ Սարգսյանը հրաժարական տվեց, իսկ հետո՝ մայիսի 8-ին, Ազգային ժողովի կողմից «ժողովրդի թեկնածու» Նիկոլ Փաշինյանը նշանակվեց ՀՀ վարչապետի պաշտոնում:

Հայաստանում ոչ բռնի թավշյա հեղափոխությունը հնարավոր չէր լինի, եթե նախորդ իշխանության գործունեությունը չլիներ այսչափ անարդյունավետ, եթե չլիներ տարիներ շարունակ սոցիալ-տնտեսական, քաղաքական և արտաքին քաղաքական ոլորտներում տեղում դոփելու և լճանալու համընդհանուր դեպլիվացիան: Հասարակական-քաղաքական երկխոսության արդունավետության ապահովման համատեքստում սոցիալական պաշտպանությունը՝ աղքատության և կոռուպցիայի կրճատումը պետք է լինի ՀՀ պետական քաղաքականության գերակա խնդիրներից մեկը, որն էլ իր հերթին կբերի ժողովրդավարական համախմբմանը: Այն հնարավորություն կտա հաղթահարել և կառավարելի դարձնել համադրական մարզինալությունը, որի նպատակով քաղաքական համակարգի բոլոր ֆորմալ և ոչ ֆորմալ ինստիտուտները, «գունավոր հեղափոխությունները» բացառելու նկատառումներով, պետք է իրականացնեն հասարակական-քաղաքական երկխոսության, սերունդների համերաշխության, ժողովրդավարական կայունության քաղաքականություն՝ իրականացնելով շարունակական բարեփոխումներ:

Այսպիսով՝ արդունավետ կառավարման սկզբունքների ներդրումը թույլ կտա զարգացնել հասարակական-քաղաքական երկխոսությունը՝ նվազեցնելով աղքատությունն ու կոռուպցիան: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կանխել աղքատության վերարտադրումը՝ նվազեցնելով՝ հասարակության բևեռացման աճը: Բարձրացնել հանրային իրազեկության մակարդակը, հրապարականացնել պետական ծառայողներին բաց գործընթացով պատասխանատվության ենթարկելը, որը թույլ կտա կրճատել կոռուպցիայի մակարդակը, ինչպես նաև՝ չեզոքացնել տնտեսական հեռանկարային զարգացման տեմպերին խոչընդոտելու վտանգ առաջացնող երևույթները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Dahl R. A.**, Preface to Democratic Theory. Chicago/L., 1973,.
2. **Хайек Ф. А.**, Использование знания в обществе // American Economic Review, XXXV, No. 4 (September, 1945), pp. 519-30.
3. **Зуляр Ю. А.**, Политология Том II Учебное пособие. 2011 <http://lib.sale/politologii-kurs-obschiy/politologiyatom-iiuchebnoe-posobie.html>
4. **Золотарев С. П.** Идеология либерализма как фактор трансформаций российской государственности: теория и практика: автореф. дис. ... д-ра филос. Наук: 09.00.11 / Золотарев Сергей Петрович. – Краснодар, 2012. – 42 с.
5. **Попова А. В.**, Теоретико-правовое исследование неолиберальной политико-правовой доктрины в России (конец XIX - начало XX вв.): автореф. дис. ... д-ра юрид. наук: 12.00.01 / Попова Анна Владиславовна – М., 2014. - 48 с.
6. **Шабельник В. В.**, Неолиберализм и неоконсерватизм в российском и зарубежном политическом дискурсе: автореф. дис. ... канд. полит. наук: 23.00.02 / Шабельник Виктор Владимирович. – СПб., 2006. - 184 с.
7. **Մարգարյան Մ.**, Մարզինալությունը քաղաքական համակարգի ժողովրդավարացման գործընթացում. «գունավոր հեղափոխություններ». «21-րդ ԴԱԸ», թիվ 3 (21), 2008 թ. էջ 137:
8. **Մեջլումյան Ա.**, 2015-2018թթ. ՀՀ հակակոռուպցիոն ոազմավարության և միջոցառումների ծրագրի վերլուծություն., Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան, 2015:
9. ՀՀ կառավարության 2015 թ. փետրվարի 19-ի, 165-Ն որոշում:
10. **Ծաղիկյան Ա.**, Կոռուպցիա, Երևան 2003:
11. **Խուրշուդյան Ա.**, Հասարակական կառավարման համակարգի բարեփոխումների ոազմավարությունը ՀՀ-ում, Երևան 2000:
12. **Տոնապետյան Ա., Ալումյան Հ., Գրիգորյան Հ.**, ՀՀ գործող օրենքներում կոռուպցիա ծնող նորմերի վերլուծություն, Երևան 2005:

**РОЛЬ ЭЛЕМЕНТОВ НЕОЛИБЕРАЛЬНОЙ ИДЕОЛОГИИ В
СОКРАЩЕНИИ КОРРУПЦИИ В РА
ЛЕВОН РУХКЯН¹**

¹ *Российско-Армянский университет*

Таким образом, по сравнению с предыдущими годами в Армении наблюдается некоторый позитивный сдвиг в борьбе с коррупцией, что не может служить основанием для серьезного прогресса. Прогресс невелик, но в худшем случае, это застойная ситуация. Необходимо внедрить принципы эффективного управления, которые позволят развивать общественно-политический диалог, снижая уровень бедности и коррупции.

Ключевые слова: неолиберализм, борьба с коррупцией, стратегия, общественная поляризация, революция.

**THE ROLE OF NEO-LIBERAL IDEOLOGICAL ELEMENTS IN ARMENIA IN
REDUCTION OF CORRUPTION**

LEVON RUKHKYAN¹

¹ *Russian-Armenian University*

Compared with previous years, there has been some positive progress in the fight against corruption in Armenia, which cannot serve as a basis for serious progress. Progress is small, but in the worst case, it is a stagnant situation. It is necessary to apply effective governance principles allowing to develop public and political dialogue, reducing poverty and corruption.

Keywords: Neo-liberalism, anticorruption fight, strategy, public polarization, revolution.

*Ներկայացվել է խմբագրություն 25.01.2019
Երաշխավորվել է տպագրության 15.05.2019*

УДК 327.3

ВЛИЯНИЕ ПАЦИФИЗМА И АНТИТРАДИЦИОНАЛИЗМА В ЯПОНИИ В ПЕРИОД «ХОЛОДНОЙ ВОЙНЫ»*

ГОР БАДОЯН¹

¹ *Российско-армянский университет*

В данной статье автор раскрывает основные подходы, которые сложились в западном и японском академическом сообществе к оценке политики безопасности Токио в период «холодной войны». Выявлены основные трактовки принятого курса пацифизма и проанализирована разница подходов и отличительных особенностей историографии. Также проводится анализ влияния таких факторов как пацифизм, антитрадиционализм и «страх быть пойманным в ловушку» в политике безопасности Японии в указанном периоде. В методологии исследования используется гибридная модель трех факторов для получения более подробного объяснения политики безопасности Токио. В то же время подчеркивается актуальность нормативных факторов в политике безопасности. Это показывает, что не только нормы безопасности, но и нормы, не относящиеся к вопросам безопасности, влияют на внешнее поведение государства.

Ключевые слова: Япония, пацифизм, антитрадиционализм, «холодная война», политика безопасности, американо-японский союз.

Введение. После окончания Второй мировой войны Япония в течение длительного времени оставалась приверженной ценностям Конституции 1947 г., по которой отказалась от суверенного права нации на ведение войны. Вопрос обеспечения безопасности островов по большей части перекладывался на плечи главного союзника Токио – Соединённые Штаты. В течение длительного времени такое положение дел устраивало обе стороны. Однако с распадом СССР и завершением эпохи «холодной войны» международная обстановка поменялась, и Япония начала пересматривать свою политику безопасности. В этом процессе можно выделить несколько важнейших реперных точек. Прежде всего, знаковым стал январь 2007 г., когда Агентство Обороны Японии было преобразовано в Министерство обороны. В это же время Силы Самообороны Японии в качестве одной из своих основных миссий определили участие в военных операциях за рубежом. Следующим важным свидетельством изменений подхода Токио к вопросам безопасности стал приход в 2012 г. к власти премьер-министра Абэ

* Статья подготовлена в рамках работы над диссертационным исследованием на тему: «История становления пацифизма в Японии в 1945-1996 гг.», при финансовой поддержке Японского Фонда (программа KC-G). “Japanese-language program for specialists (specialists in cultural and academic fields)”.

Синдзо, который, во-первых, провозгласил курс на пересмотр пацифистской Конституции Японии, во-вторых, увеличил бюджет на военные расходы. 7 июня 2013 г. был создан Совет национальной безопасности, призванный стать опорой японской политики, направленной на поддержание, как внутренней безопасности, так и на мировой арене [1, р. 105].

Новый подход японского руководства не может не вызывать вопросов. Например, почему Токио решает изменить траекторию политики безопасности, и почему этого не произошло раньше? Какие препятствия существовали в эпоху «холодной войны»? Чтобы понять генезис современных трансформаций политики Японии обратимся к её истокам. Многие особенности, присущие стратегии безопасности, Токио берут своё начало в послевоенный период.

Задачи. Для того чтобы понять, в чем кроются причины осмотри-тельной политики Токио в области безопасности в период «холодной войны», проанализируем несколько подходов, которые сложились среди экспертов, изучающих послевоенную Японию.

Обсуждение. Представители школы политического реализма с лёгкостью дают ответ, почему происходят трансформации, которые активно претворяются в жизнь кабинетом премьер-министра С. Абэ. Рост мощи КНР и обострение ядерной проблемы на Корейском полуострове, являя собой, источник беспокойства, подстегнули Японию и к формированию новых институтов, отвечающих за национальную безопасность и наращиванию военного бюджета. Таким образом, Кристофер Хьюз объясняет действия японского руководства как закономерную реакцию на рост региональной напряжённости [2]. Тем не менее, реалисты не дают ответа, почему политика Токио в области безопасности в годы «холодной войны» шла в фарватере пацифизма. Более того, с позиции политического реализма она является парадоксальной.

Пол Мидфорд [3, р. 2-42] и Кристофер Твоми [4, р. 167-205.] трактовали японскую политику в области безопасности, как основанную на оборонительном реализме. Согласно этому подходу Токио прекрасно понимал, что наращивание военного потенциала неизбежно подтолкнет соседей к ответным действиям, что приведёт к гонке вооружений и росту напряжённости в регионе. Поэтому можно сказать, что японское правительство поступило весьма дальновидно. Ричард Сэмюэлс [5] и Эрик Хегинбтом [6, р. 171-203] оценивают Японию, как следующее принципам политического реализма государство. В частности, политике Токио приписывают черты "техно-национализма". Этот принцип воплощается в стремлении к самодостаточности и передовому опыту в области технологий в целях укрепления национальной безопасности.

Ответить на вопросы, связанные с такой позицией Японии в послевоенное время, отчасти получается у конструктивистов. Томас Бергер и Питер Катценштайн предложили свою трактовку: в период «холодной войны» политика безопасности Токио была продиктована новой нормой безопасности. После поражения во Второй мировой

войне японцы стремились всеми путями избежать возрождения милитаризма. Вследствие этого была сформирована антимилитаристская норма, которая объясняет отказ Японии от участия в военных операциях за рубежом [7].

Конструктивисты отмечают проявление антимилитаристской нормы в двух измерениях: концентрация внимания на развитии экономического потенциала Японии и делегирование вопросов безопасности США, как стратегическому союзнику, и институциональными особенностями японской политики. В первом случае речь идёт о Доктрине Ёсида. Именно в соответствии с этой доктриной правительство Японии приняло решение концентрации ресурсов на экономике. Прочным фундаментом для укрепления доктрины стал процесс пересмотра положений Договора безопасности, вокруг которого в 1960 г. возникла широкая дискуссия. Т. Бергер оценивает те массовые протесты, которые поднялись против японского правительства, в связи с пересмотром ряда положений Договора безопасности, как исторический момент, определивший дальнейшее развитие военно-политической культуры Японии [8 р. 248-251.]. Действующее правительство Киси Нобусукэ не могло не считаться с общественным мнением. В результате, в вопросах национальной безопасности чаша весов склонилась в сторону пацифизма. Премьер-министру Н. Киси, не сумевшему правильно оценить общественные настроения, пришлось уйти в отставку.

Второе измерение связано с пацифистской Конституцией Японии. Прежде всего, речь идёт о 9 статье. Японским правительством толкование данной статьи сводится к тому, что Япония обладает правом на коллективную самооборону, не имеет права его реализовать. Подобная трактовка представляется парадоксальной, поскольку на основании статьи 51 Устава Организации Объединенных Наций правом на коллективную самооборону обладает каждое государство. Объяснить сложившийся парадокс довольно удачно получилось у Т. Бергера. Как представитель конструктивистского подхода, он в качестве первопричины добровольных институциональных ограничений Токио в области обеспечения национальной безопасности, называет страх японского народа перед возрождением милитаризма. Следствием чего и стало довольно жёсткое самоограничение Японии в вопросах обороны, прочно укоренившееся в её политической жизни. Антимилитаристская норма органично дополняется тремя неядерными принципами Хикаку сан гэнсёку (非核三原則): отказ от владения, производства или ввоза ядерного оружия на территорию Японии.

Несмотря на то, что конструктивисты дают достаточно полное объяснение того, почему Япония не стала занимать активную позицию в вопросе обеспечения собственной национальной безопасности в период «холодной войны» критика такого подхода тоже существует. С позиции политических реалистов влияние антимилитаристской нормы в японском обществе явно преувеличено. Так, например, Дженнифер

Линд придерживается мнения о том, что Токио сознательно отказывается от обеспечения собственной безопасности, с расчётом на поддержку США [9, p. 92-121].

Если представители западной науки объясняют политику безопасности Японии в период «холодной войны» с позиции двух фундаментальных теорий международных отношений: реализма и конструктивизма, то японские исследователи предлагают несколько отличную трактовку. Особого внимания заслуживает анализ, основанный на таких идеологиях как пацифизм и антитрадиционализм.

Рассматривая политику безопасности Японии, в ракурсе пацифизма, стоит отметить, что после окончания Второй мировой войны, сторонники пацифистских идей активно выступали за полное разоружение государства, отказ от военных альянсов и всесторонне поддерживали институциональные ограничения на применение военной силы, налагаемые Конституцией 1947 года.

Пацифизм. В японском пацифизме можно выделить два течения. Первое – организованная группа, объединившая в себе членов Социалистической партии Японии, Коммунистической партии Японии, а также профсоюзных организаций. Это течение, занявшее проактивную позицию, сыграло лидирующую роль в противостоянии активной политики безопасности Токио. Второе – представляет собой объединение интеллектуалов, сторонников философии пацифизма. Среди них можно назвать ряд известных деятелей: активиста и ученого Икутаро Симидзу, либерального ученого международной политики Ёсикадзу Сакамото и писателя Макото Ода. Примечательно, что несмотря на разницу основ двух течений, они единодушно придерживались мнения относительно толкования 9 статьи Конституции, согласно которой Япония отказывалась от права на коллективную самооборону. Также их последователи единым фронтом выступали против любой инициативы, которая могла привести к пусть и незначительному, но увеличению военного потенциала японского государства.

Таким образом, сила пацифистских убеждений как философии, идеологии и в то же время общественного движения, которое способно влиять на процесс принятия политических решений как раз и задавала вектор развития системы безопасности Токио, сложившейся в период «холодной войны». Результатом этой политики стал добровольный отказ Японии от активных действий в процессе поддержания собственной обороноспособности.

Антитрадиционализм. Другая, не менее значимая идеология – антитрадиционализм. Как отмечал Ёдзи Ватануки, политика безопасности, реализуемая Токио в период «холодной войны», представляет собой результат противостояния традиционалистов и антитрадиционалистов [10, с. 181-211.]. Традиционалисты были убеждены, что Япония обладает такими важными фундаментальными ценностями, как уважение к властям, коллективизм, самопожертвование, настойчивость. В

противовес традиционалистам, полагавшим, что внедрение американской демократии посредством политических и социальных реформ, проводимых оккупационным правительством США, наносит ущерб исконно-японской системе ценностей, антитрадиционалисты были сторонниками демократических реформ. Что касается вопросов безопасности, то в этой области антитрадиционалисты довольно часто сотрудничали с пацифистами. Позиции этих двух течений нередко совпадали. Однако если пацифисты чётко следовали принципам антимилитаризма в силу своих идеологических убеждений, антитрадиционалисты основной своей целью видели защиту японской демократии.

Ё. Ватануки в качестве одной из важнейших особенностей антитрадиционализма отмечал следующее. Сторонники данного течения рассматривают политику безопасности преимущественно с точки зрения внутривнутриполитических процессов, происходящих в Японии, точнее в привязке к сохранению системы демократических ценностей. Примечательно, что даже когда речь идёт втягивании Японии во Вторую мировую войну, антитрадиционалисты не обвиняют в этом милитаристски настроенную политическую элиту. По их мнению, интенсивное военное развитие Японии кроется в природе японского общества. Один из наиболее влиятельных теоретиков политической науки Японии Масао Маруяма объяснял, что именно повинование и почтение японского народа в отношении власти привели к подъёму милитаризма, который попросту не встретил сопротивления [11, с. 325].

Фактически эти отличия делают антитрадиционалистов более гибкими и дают больше пространства для манёвра. Если пацифисты при любых обстоятельствах выступают против активизации политики безопасности Японии, то для антитрадиционалистов существует два условия, когда они готовы поддержать пацифистов. Во-первых, это может произойти в том случае, если политики действуют в ущерб интересам Японской демократии. Во-вторых, когда политики, которые стремятся пересмотреть и вопросы безопасности в сторону расширения, являются традиционалистами. В двух обозначенных областях позиции пацифистов и антитрадиционалистов нередко совпадали, хотя справедливо отметить, что убеждения антитрадиционалистов имели более узкую направленность.

Отдельно стоит отметить ещё одну трактовку политики безопасности Японии в годы «холодной войны»: «страх быть пойманным в ловушку». Эта трактовка зиждется на классической дилемме безопасности. Один из представителей японской школы международных отношений Дицуо Цутияма обозначил «страх быть пойманным в ловушку» как определяющий фактор японской политики в области безопасности.

«Страх быть пойманным в ловушку». Третий элемент гибридной модели – «страх быть пойманным в ловушку», реалистический фактор, отражающий озабоченность дилеммой безопасности союза [12, р.181-183]. Японский ученый по международным отношениям Дицуо Цутияма

так и конструктивистские факторы, и анализ конкретных случаев показывает, что она может дать ясное и более подробное объяснение японской политики безопасности, чем реалистическое или конструктивистское объяснения. Некоторые могут поставить под сомнение взаимодополняемость мировоззренческих основ, на которых базируются различные факторы. Однако, Питер Катценштейн и Рудра Сил утверждают, что различные факторы и их причинно-следственные механизмы могут быть эффективно сгруппированы, несмотря на значительные различия в их философских или методологических основаниях [14, p. 263.]. На самом деле, даже в рамках одной парадигмы существуют значительные различия между предметным объяснением, поэтому стоит попытаться объединить объяснения, которые разделяют схожие между парадигмами результаты.

В то же время в настоящем исследовании подчеркивается актуальность нормативных факторов в политике безопасности в Японии в эпоху «холодной войны». Это показывает, что не только нормы безопасности, но и нормы, не относящиеся к вопросам безопасности, влияют на внешнее поведение государства. Как уже говорилось, антитрадиционализм является нормой, прежде всего, внутренней политики Японии, но его влияние на политику безопасности значительно. Существующие конструктивистские исследования сосредоточены главным образом на внешних правилах поведения государств, и основное предположение, очевидно, состоит в том, что нормы, влияющие на политику безопасности государств, должны быть, в первую очередь, нормами безопасности. Однако данное исследование показывает, что это не всегда так. Тем самым открывается новый горизонт для исследований отношений между типами норм и поведением государств.

Второй более широкий теоретический вывод этого исследования заключается в том, что оно показывает плодотворность рассмотрения кажущейся единой политической культуры, сформировавшийся в Японии в период «холодной войны» как группы идей. По этой причине, в обозначенный период мероприятия, не относящиеся к безопасности, оказали влияние на процесс принятия решений Токио [15, p. 451– 497].

В случае с Японией пацифисты использовали стратегию создания проблем и вопросов для того, чтобы пробудить страх попасть в ловушку и антитрадиционалистские настроения. Этот вывод проливает свет на стратегическое поведение нормативных агентов. То есть, это исследование показывают, что нормативные субъекты стратегически используют реалистические факторы для максимального влияния. Этот вывод подтверждает утверждение Джеймса Ферона и Александра Вендта о том, что "наиболее интересным исследованием, скорее всего, будет работа..., находящаяся на пересечении рационализма и конструктивизма" [16, p. 52]. Следует признать, что аналитический эклектизм может стать сильным инструментом осмысления международной политики, на которую всегда оказывают влияние многочисленные материальные и нормативные факторы.

ИСПОЛЬЗОВАННЫЕ ИСТОЧНИКИ

1. Defense of Japan 2013. P. 105. URL: https://www.mod.go.jp/e/publ/w_paper/pdf/2013/24_Part2_Chapter1_Sec4.pdf
2. **Hughes C.W.** Japan's Re-emergence as a "Normal" Military Power, Adelphi Papers, No. 368-9. London: International Institute for Strategic Studies, 2004.
3. **Midford P.** The Logic of Reassurance and Japan's Grand Strategy, Security Studies, Vol. 11, No. 3, 2002. P. 2-42.
4. **Twomey C. P.** Japan, a Circumscribed Balancer: Building on Defensive Realism to Make Predictions about East Asian Security. Security Studies, Vol. 9, No. 4. 2000. P. 167-205.
5. Samuels R. J. Rich Nation, Strong Army: National Security and the Technological Transformation of Japan Ithaca, N.Y.: Cornell University Press, 1994.
6. **Heginbotham E., Samuels R.,** Mercantile Realism and Japanese Foreign Policy. International Security, Vol. 22, No. 4. Spring 1998. P. 171-203.
7. **Berger T.** Cultures of Antimilitarism: National Security in Germany and Japan. Baltimore: Johns Hopkins University Press, 1998 и Katzenstein P. J. Cultural Norms and National Security: Police and Military in Postwar Japan. Ithaca, N.Y.: Cornell University Press, 1998.
8. **Berger T.** Cultures of Antimilitarism. P. 48-51.
9. **Lind J. M.** Pacifism or Passing the Buck? Testing Theories of Japanese Security Policy. International Security, Vol. 29, No. 1, 2004. P. 92-121.
10. **Ватануки Д.** Нихон сэйдзи но бунсэки сикаку. (Анализ японской политики). Токио: Тюо Коронсинся, 1976. С. 181-211. (на яп. языке).
11. **Маруяма М.** Гункокуси хаися но сэйсин кэйтай (Психология милитаристов). Полная работа Масао Маруямы, изд. 4, Токио: Иванами Сэтэн, 1995. С. 325. (на яп. языке).
12. **Snyder G.H.,** The Security Dilemma in Alliance Politics; World Politics vol.36 no. 4, 1984. P.181-183.
13. **Цутияма Д.** Араянсу дзиремма то нихон домэйгаку (Дилемма альянса и политика Японии), Левиафан, изд. 13, 1993. С. 50-75. (на яп. языке).
14. **Katzenstein P.J., Sil R.** Rethinking Asian Security: A Case for Analytical Eclecticism, Stanford University Press, Stanford. P. 263.
15. **Kowert P., Jeffrey L.** 1996. "Norms, Identity, and Their Limits: A Theoretical Reprise." In The Culture of National Security: Norms and Identity in World Politics, ed. Peter J. Katzenstein. New York: Columbia University Press. P. 451– 97.
16. **Fearon J. W.** Rationalism v. Constructivism: A Skeptical View. Walter Carlsnaes, Thomas Risse, and Beth A. Simmons, eds., Handbook of International Relations. London: Sage, 2002. P. 52.

**ՊԱՑԻՖԻԶՄԻ ԵՎ ՀԱԿԱՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՊՈՆԻԱՅՈՒՄ ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
ԳՈՒ ԲԱԴՅԱՆ¹**

¹Հայ-ռուսական համալսարան

Հոդվածում բացահայտվում է սառը պատերազմի ընթացքում Տոկիոյի անվտանգության քաղաքականության հիմնական մոտեցումները, որոնք ձևավորվել են արևմտյան և ճապոնական ակադեմիական շրջանակներում: Ի հայտ են բերվում պացիֆիստական ուղղվածության գնահատականները, վերլուծվում է մոտեցումների տարբերությունը և պատմագրության առանձնահատկությունները: Վերլուծում է նաև Ճապոնիայի անվտանգության քաղաքականության մեջ այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են՝ պացիֆիզմը, հակաավանդականությունը և «թակարդը ընկնելու վախը»: Հետազոտության մեթոդաբանությունն օգտագործում է վերոնշյալ երեք գործոնների հիբրիդ մոդել, Տոկիոյի անվտանգության քաղաքականության ավելի մանրամասն բացատրության համար: Մինևույն ժամանակ կարելի է անվտանգության քաղաքականության մեջ նորմատիվ գործոնների կարևորությունը: Սա վկայում է, որ ոչ միայն անվտանգության չափանիշները, այլև անվտանգության հարցերի հետ կապ չունեցող չափանիշներն ազդում են պետության արտաքին վարքագծի վրա:

Բանալի բառեր. Ճապոնիա, պացիֆիզմ, հակաավանդականություն, սառը պատերազմ, անվտանգության քաղաքականություն, ԱՄՆ-Ճապոնիա դաշինք:

**THE IMPACT OF PACIFISM AND ANTI-TRADITIONALISM IN
JAPAN DURING THE COLD WAR**

GOR BADOYAN¹

¹ Russian-Armenian University

The author reveals the main approaches developed in the Western and Japanese academic community about security policy of Tokyo during the Cold War. Interpretations pacifism are produced, and the difference of approaches and distinctive features of historiography are analyzed. The article analyzes the impact of factors in security policy of Japan such as pacifism, anti-traditionalism and "fear of being trapped". Methodology of the research uses the hybrid model of the above mentioned factors to give more detailed explanation of the security policy of Tokyo. At the same time, the relevance of regulatory factors in security policy is emphasized. This shows that not only security standards but also non-security norms influence the external behavior of a state.

Keywords: Japan, pacifism, anti-traditionalism, Cold War, security policy, the US-Japan alliance.

*Ներկայացվել է խմբագրություն 09.04.2019
Երաշխավորվել է տպագրության 03.05.2019*

ՀՏԴ 351 (479.25)

«ՓԱՓՈՒԿ» ԵՎ «ԿՈՇՏ» ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԴՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

ՄԱՄԻԿՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ¹, ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ²,
ԱՆԺԵԼԱ ԷԼԻԲԵԿՈՎԱԿ

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

² Հայ-ռուսական համալսարան

Հայաստանի Հանրապետությունում ազգային անվտանգության ապահովման կառուցակարգերը ձևավորվել և շարունակում են արդիականանալ բախումների և համագործակցության տիրույթներում: Այդ համատեքստում ուսումնասիրված է «փափուկ» և «կոշտ» անվտանգության համադրման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ որպես ժողովրդավարական քաղաքական կայունության հաստատման, ինչպես նաև համագործակցության և խաղաղության մշակույթների փոխհարաբերությունների ապահովման հրամայական: Հեղինակները համոզված են, որ որպես պատմականորեն ձևավորված որոշակի նորմերի և արարողակարգերի ամբողջություն՝ համագործակցության ու խաղաղության մշակույթների փոխհարաբերությունները ռացիոնալացնում են անվտանգության համակարգը՝ համադրելով ինչպես քաղաքակրթական, մարդասիրական, էթիկական, սոցիալ-հոգեբանական, այնպես էլ սահմանադրաիրավական նորմերը:

Բանալի բառեր. անվտանգայնացում (securitization), «փափուկ» և «կոշտ» անվտանգություն, խաղաղության մշակույթ, համագործակցության մշակույթ, կոնվերգենցիա:

Սառը պատերազմի ավարտից և նոր աշխարհակարգի ձևավորումից հետո միջազգային հարաբերությունների համակարգում երկրորդ պլան են մղվել գերտերությունների միջև միջուկային պատերազմի, միջպետական ռազմական բախումների առաջացման սպառնալիքները: Այս համատեքստում, գիտատեխնիկական և ռազմաքաղաքական փոփոխությունները նկատի ունենալով, կոպենհագենյան դպրոցի ներկայացուցիչները (Բարի Բուզան, Յոհան Գալտունգ) մշակեցին անվտանգության ընդարձակված օրակարգ: Ներմուծելով «անվտանգայնացում» (securitization) եզրույթը՝ կոպենհագենյան դպրոցի հիմնադիրներն առաջին պլան մղեցին

* Հետազոտությունը իրականացվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ N 16YR-5F040 ծրագրի շրջանակներում:

ներդաշնակ և աններդաշնակ այն սպառնալիքները, որոնք արագ վերակառուցում են ընդարձակված օրակարգով անվտանգության հայեցակարգի դերակատարների կողմից իրականացվող քաղաքականությունը: Այսինքն՝ պետությունը, կախված իշխող քաղաքական ուժի ներքին և արտաքին խնդիրների նկատմամբ վերաբերմունքից, հանրայնացնում է հիմնախնդիրն այնպես, որ այն դարձնում է գոյաբանական (էքզիստենցիալ) վտանգ պետության և հասարակության համար: Իհարկե, այլ քաղաքական ուժեր ևս կարող են օգտվել այս տեխնոլոգիայից, սակայն կանոնակարգից այն փաստը, որ հենց պետական իշխանություններն ունեն տեղեկատվական հոսքերի վրա ազդելու և հանրային օրակարգ ձևավորելու գերակա հնարավորություն: Միջազգային հարաբերությունների համակարգում առաջ եկած նոր միտումները բացատրվում են XX դարի 70-80-ական թվականներին խաղաղության զարգացման կոպենհագենյան ինստիտուտի շրջանակներում գիտական շրջանառության մեջ դրված «փափուկ անվտանգություն» հայեցակարգի միջոցով: Դեռ 1983 թվականին Բ. Բուզանի կողմից պայմանականորեն առանձնացվեցին սերտրեն միմյանց փոխպայմանավորող «փափուկ» անվտանգության հինգ ոլորտներ՝ **ռազմական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և բնապահպանական:** Այդ **համատեքստում** որպես անվտանգության դերակատար կարևորվեց նաև անհատը, այլ ոչ թե միայն պետական շահը. իսկ միջազգային անվտանգության մարտահրավերների շրջանակը ընդլայնվեց ի հաշիվ ներպետական սպառնալիքների [1, p. 19]: Յ. Գալթունգը, Բ. Բուզանը, ինչպես նաև Օ. Վեվերը և Յա դե Վիլդեն՝ շեշտադրելով անվտանգության սոցիալական կողմը, հիմնավորեցին «**անվտանգության ընդարձակված օրակարգը**» որպես նոր հարացույց: Կոպենհագենյան «**խաղաղարար հետազոտություններում**» կարևորագույն տեղ է զբաղեցնում նաև սպառնալիքների նախագծման հիմնախնդիրը և դրանց բազմազանությունը: Հենց այստեղ է ծնվում անվտանգայնացման (սեկյուրիտիզացիայի) հայեցակարգը՝ ինչ-որ երևույթի, որպես սոցիալական և քաղաքական գործընթացի, անվտանգության խնդրի կարգավիճակ տալու անհրաժեշտությունը: Օ. Վեվերը նշում էր, որ սպառնալիքներն որոշվում են հասարակության սուբյեկտիվ ընկալումների միջոցով: Այդ իսկ պատճառով, տարբեր հասարակություններ ոչ միանշանակ են ընկալում անվտանգությունը, ինչպես նաև խիստ տարբեր են մարտահրավերներին արձագանքելու նրանց մեթոդները: ԻՍՀՄ-ի փլուզումից էթնիկական բախումների խաղաղ լուծման ակնկալիքով առաջ եկավ «փափուկ» անվտանգության «պոզիտիվ» մեկնաբանությունները, որոնք հնարավորություն պետք է տային բացահայտել անհատի՝ իր անվտանգությունն ապահովելու բոլոր ստեղծագործական ունակությունները: Սակայն շարունակվող բախումները ցավոք լրկալ մակարդակում սպասվելիք արդյունք չտվեցին: Ավելին «Իսլամական

պետության» կառուցումը «մուսուլմանների հողերում» և իսլամի օրենքներով ղեկավարումը նոր սպառնալիքներ ստեղծեց «փափուկ» անվտանգության համար:

«Փափուկ անվտանգության» ապահովմանը, հակադրվում է «կոշտ անվտանգությանը», որը հիմնված էր ռեալիզմի, քաղաքականության ու պատերազմի փոխկախվածության պետության տիրույթում դրա գերակայության, ազգային շահի և ռազմական սպառնալիքների վրա: Ըստ ռազմարվեստի հայտնի տեսաբան Կարլ Ֆիլիպ Գոտֆրիդ Կլաուզևիցի (1780—1831)՝ «...Պատերազմը քաղաքականության գործիքն է, դրա կոշտ շարունակությունը բռնի միջոցներով (Կլաուզևիցի բանաձև)»: Այստեղից էլ վերլուծելով պատերազմի և քաղաքականության հարաբերակցության հիմնախնդիրը՝ Կլաուզևիցը ձևակերպում է «պատերազմն անխուսափելիորեն գրիչը փոխարինում է սրով, և գործելով սեփական օրենքներով՝ սպառնալիքի վերացման համար հաղթանակի կամ պարտության պայմանագիր է կնքում [2, c. 21-22]»:

Փաստորեն, «փափուկ» և «կոշտ» հայեցակարգերի միջև սահմանազատում անցկացնելու համար կարևորվում էր սպառնալիքների բնույթը. «ոչ ավանդական-ավանդական», «ոչ ռազմական-ռազմական»: Սակայն այդ հարաբերական հավասարակշռությունը խախտվեց 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ահաբեկիչությամբ անվտանգության տարբերակումը «փափուկ» և «կոշտ» ասպեկտների դարձավ պայմանական՝ ակնհայտ դարձավ որ պատերազմի հարացույցը կերպափոխման է երթարկվել: «Փափուկ անվտանգություն» հայեցակարգի շուրջ չկա միանշանակ մոտեցում: Փափուկ անվտանգությունը ներկայանում է որպես ոչ ավանդական (Ա.Ֆատիչ Ս.Դորդժևիչ), ոչ ռազմական (Ու. Ջայլ) կամ անվտանգության սոցիոկոդմորոշված հարացույց (Մ. Ռաֆֆա, Ֆ. Վրեյ): Ըստ Դ. Լինդլի-Ֆրենչի [3, p. 199-200] անվտանգության «փափուկ» մարտահրավերները միջազգային մակարդակում նոր, ոչ պետական դերակատարների երևան գալու հետևանք են: Գոյություն ունի նաև տեսակետ, համաձայն որի անվտանգության բաժանումն անհնարին, անթույլատրելի և անգամ վնասակար է, քանի որ նման մոտեցման կիրառական նշանակությունը ոչ միայն մեծ չէ, այլև խոչընդոտում է անվտանգության արդյունավետ քաղաքականության իրականացմանը (Ա. Միսսիրոլի, Մ. Սելիմ [4]): Այդ համատեքստում «փափուկ անվտանգությունը» կոչված է արդյունավետ պայքար մղել ոչ ռազմական բնույթի այնպիսի սպառնալիքների դեմ, որոնք ունեն սոցիալական կոդմորոշվածություն: Վստահորեն կարելի է եզրակացնել, որ «փափուկ սպառնալիքների» բնույթը և էությունը, յուրահատուկ է յուրաքանչյուր պետության և հասարակության համար: «Փափուկ անվտանգության» սուբյեկտ է համարվում ոչ միայն պետությունը,

այլև՝ քաղաքացիական հասարակությունը և գործարարությունը, իսկ որպես դրա ապահովման կառուցակարգ նրանցից յուրաքանչյուրն ունի **սոցիալական պատասխանատվության** իր քաղաքականությունը:

Այսպիսով, անվտանգայնացման (սեկյուրիտիզացման) ժամանակակից միտվածությունը ենթադրում է պետության և հասարակության միջև գործառությանին տարաբաժանվածություն, ինչն էլ պայմանավորում է անվտանգության քաղաքականության արդյունավետությունը: Բաժանումը կրում է պայմանական և երբեմն էլ մտահայեցողական բնույթ: Սակայն անվտանգության ասպեկտի «փափուկ» և «կոշտ» բնույթի ճանաչումն ունի կարևոր տեսական և քաղաքական նշանակություն: Առաջին դեպքում այն բացահայտում է փոփոխությունների բնույթը, որոնք տեղի են ունենում համաշխարհային համակարգում պետության ունեցած դերի հետ, և երկրորդ՝ հոգուտ անվտանգության ապահովման «փափուկ» և «կոշտ» մեթոդների, հնարավորություն է ընձեռում ազգային պետություններին ճիշտ գնահատել առաջնությունները և կառուցել անվտանգության արդյունավետ հարացույց:

Ավանդական և ոչ ավանդական սպառնալիքների միջև բաժանումը հեռանկարային չէ, քանի որ հարցադրումը, թե ինչն է պետք համարել ավանդական և ինչը՝ նոր, միշտ վիճարկելի կլինի օրինակ, եթե համարենք ծովահենությունը Սոմալիում, որպես նոր երևույթ այն դեպքում, երբ այն գոյություն է ունեցել դեռևս ծովագնացության ժամանակներից կամ ահաբեկչությունը, որն այս կամ այն ձևով իր դրսևորումն է ստացել դեռևս Հռոմեական կայսրության ժամանակ:

Տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների զարգացման ներկա մակարդակը նկատի ունենալով՝ կարող ենք նշել, որ «փափուկ անվտանգություն» հայեցակարգի մոտեցումները միանգամայն ընդունելի են, հատկապես, եթե դա վերաբերում է համաշխարհային քաղաքականությանը: Սակայն, համոզված ենք որ այս հայեցակարգն ունի բազմաթիվ վիճարկելի կողմեր: **Առաջին՝** պետությունը՝ որպես քաղաքական համակարգի գերակա ինստիտուտ և անվտանգության ապահովման ավանդական դերակատար, չի կարող համարվել միայն «փափուկ» բնույթի սպառնալիքների աղբյուր: **Երկրորդ՝** դարձյալ առաջ է գալիս ահաբեկչության հիմնախնդիրը, որը հիշեցնում է պետություն՝ «առանց սահմանների»: ահաբեկիչներին պատերազմ են հայտարարում, իսկ նրանք հարձակում են գործում քաղաքների վրա: Մեր կարծիքով առավել ընդունելի տարբերակ է բաժանումն ըստ օբյեկտի, այսինքն՝ ում դեմ են անմիջականորեն ուղղված սպառնալիքները: «Կոշտ» սպառնալիքները գործում են «վերևից-ներքև, այսինքն՝ նախևառաջ պետության համար են վտանգ ներկայացնում՝ համապատասխանաբար շոշափելով յուրաքանչյուր անհատի անվտանգությունը:

«Փափուկ» մարտահրավերները գործում են ուղղակի՝ մի կողմ թողնելով ֆորմալ աշխարհաքաղաքական տեսանկյունից տեղակայված անվտանգության կառուցվածքը. **կիբեռ-ահաբեկչություն, ոչ լեզալ միգրացիա, բնապահպանական աղետներ, թմրամոլություն, թրաֆիքինգ, սով և այլն**, որոնք սկզբում սպառնում են անհատի շահերին և պահանջմունքներին՝ արդյունքում հանգեցնելով հասարակության, պետության և միջազգային իրադրության անկայունությանը: Այսպիսով, «փափուկ» սպառնալիքները կապված չեն պետությունների բաց ռազմական դիմակայության հետ և կողմնորոշված են դեպի հասարակություն և անհատ: Բացի այդ, «փափուկ» անվտագությունն իրենից ներկայացնում է ոչ միայն արտաքին, այլև՝ ներքաղաքական, ազգային և վերազգային մակարդակում գտնվող հայեցակարգ: Տարբերակվում են նաև մեթոդները. «փափուկ անվտագություն» հարացույցը կրում է ցանցային բնույթ, և հետևաբար արձագանքը նման մարտահրավերներին ճիշտ է չունի ռազմական բնույթ, բայց դա ռեալ հնարավորություն է պատրաստ լինել դիմակայելու «կոշտ» մարտահրավերներին: Ակնհայտ է, որ միակ ելքը ժամանակի և տարածության ճիշտ ընկալմամբ «փափուկ» և «կոշտ» սպառնալիքների բնույթի համակողմանի ուսումնասիրությունն է ՀՀ-ում:

Վերշարադրյալը հնարավորություն է տալիս ՀՀ-ում բնորոշել «փափուկ անվտանգությունը»՝ որպես վիճակ, որի պարագայում պետական ներքին ու արտաքին քաղաքականությունն ունի սոցիալական կողմնորոշում, ուղղված է երևան եկած ռիսկերից և ոչ ռազմական բնույթի մարտահրավերներից անհատի և հասարակության պաշտպանության ապահովմանը, որոնք ուղղակիորեն սպառնում են անհատական, հասարակական շահերին, պահանջներին և արժեքներին, ինչպես նաև պետության անկայունությանը: Մինևույն ժամանակ, «փափուկ» անվտանգության հայեցակարգը ոչ միայն բացատրում է անվտանգության արմատական կերպափոխությունները, այլ նաև իրենից ներկայացնում է միջպետական փոխազդեցության, ներքին և արտաքին քաղաքականության այնպիսի մանրակերտ (մոդել), որը օբյեկտիվորեն պետական քաղաքականության մեջ մեծացնում է «փափուկ» անվտանգության հաղթահարման արդյունավետ միջոցների մշակումը: ՀՀ ազգային անվտանգության ապահովման համակարգում «փափուկ» բաղադրատարրի զարգացումը պետական ներքին և արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից է, ինչը հանգեցնում է, ինչպես քաղաքացիների արդյունավետ պաշտպանությանը, այլև ԵՄ անվտանգության կառուցման գործում կարգավիճակ ունենալը, որն որոշվում է մի քանի գործոններով: Դա հնարավորություն կընձեռի գործընկերների հետ խոսել **քաղաքական ինքնության լեզվով**: ԵՄ-ն հետամուտ լինելով **«կայուն զարգացման»** քաղաքականությանը՝ առավել մեծ ուշադրություն է դարձնում էներգետիկ և բնական մարտահրավերներին:

րին, ոչ լեգալ միգրացիայի դեմ պայքարի և այլ հումանիտար բնույթի հիմնախնդիրների լուծմանը: Միաժամանակ, կարևոր է այն, որ ԱՄՆ-ն լրջորեն զբաղվում է ամերիկյան «փափուկ անվտանգության» հարացույցի կառուցմամբ՝ ծավալելով համակարգային պայքար կիբեռ-ահաբեկչության դեմ: Իսկ 2010 թվականից ՆԱՏՕ-ն, իր ռազմավարական հայեցակարգում, ներառեց ոչ ռազմական բնույթ ունեցող սպառնալիքի՝ կիբեռ-ահաբեկչության [5] դեմ պայքարը: XXI դարի սկզբին ԵԱՀԿ-ն նույնպես հանդես եկավ որպես «փափուկ անվտանգության» կողմնակից՝ օրակարգում ներառելով այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են մարդու իրավունքների ոտնահարումը, էթնիկական լարվածությունը, կազմակերպված հանցագործությունները, թմրադեղերի և զենքի շրջանառությունը, անվերահսկելի միգրացիոն հոսքն ու շրջակա միջավայրի հիմնախնդիրները [6, c 341-342]: Հարկ է նշել, որ Եվրոպայում և ԱՄՆ-ում արդեն վաղուց օգտագործում են անվտանգության ընկալման համակարգային մոտեցում (comprehensive approach). երկու ասպեկտները զարգանում են միասին՝ ունենալով բազմաթիվ շփման կետեր, «փափուկ» մարտահրավերները դիտվում են որպես պոտենցիալ «կոշտ» մարտահրավերներ և հակառակը: Վերոշարադրյալի շրջանակներում կարելի է ենթադրել, որ անվտանգության, «փափուկ» հարացույցի արժեքաբանության հստակեցումը և «**փափուկ**» և «**կոշտ**» **անվտանգության համադրման հիմնախնդիրները** կարևորագույն նշանակություն ունեն ՀՀ-ի համար, որը ձգտում է միջազգային քաղաքականությունում իրեն տեղ ու դեր, ինքնություն և ինքնիշխանություն ապահովել: ՀՀ-ի համար «փափուկ անվտանգության» մեկ այլ կարևոր ցուցանիշ է ներքաղաքական և աշխարհաքաղաքական իրողությունների մարտահրավերների ազդեցությունը ի հաշիվ, ինչպես նաև ուժի կենտրոնների հետ համագործության քաղաքականության մշակումը: ՀՀ-ի «փափուկ սպառնալիքները» ի հաշիվ անդրսահմանային բնույթի, իրենցից վտանգ են ներկայացնում Եվրոպական հարևանների համար, հատկապես՝ ինչ վերաբերում է թմրանյութերի թրաֆիքինգին և կազմակերպված հանցագործություններին: Այսպիսով, ՀՀ-ում արդյունավետ «փափուկ անվտանգությունը» անհրաժեշտ է ոչ միայն ազգային, այլև անդրտարածաշրջանային և գլոբալ մակարդակում: Բացի նոր սպառնալիքներից և դրանց արձագանքելու մեթոդներից, «փափուկ անվտանգությունը» թույլ է տալիս կենտրոնացնել ուշադրությունն անհատի և հասարակության շահերը շոշափող հիմնախնդիրների վրա: «Փափուկ» անվտանգության ապահովման տիրույթում գործառույթների մի մասը պատմիրակվում է հասարակությանը, որի միջոցով ձևավորվում է քաղաքացիական հասարակությունը, միջտարածաշրջանային համագործակցությունը, քաղաքացիների պատասխանատու և նախաձեռնողական քաղաքական վարքը, և վերջապես խաղաղության մշակույթը:

Ներկայում, ՀՀ-ում «փափուկ» անվտանգության զարգացումը հենվում է անվտանգայնացման վրա՝ արտաքին քաղաքականության հիմնարար փաստաթղթերում սպառնալիքների տիրույթի ընդլայնմամբ: Այս համատեքստում անհրաժեշտ է վերանայել ազգային անվտանգության ռազմավարությունը, ինչպես նաև մշակել և ընդունել այնպիսի փաստաթղթեր, որոնք վերաբերում են «փափուկ» անվտանգության առաձին ասպեկտներին՝ պարենավորման անվտանգությունը, թմրադեղերի, թրաֆիքինգի և կոռուպցիայի դեմ պայքարը և այլն: Այս գործընթացը պետք է խորացնել՝ կարևորելով **«փափուկ» և «կոշտ» անվտանգության համադրման հիմնախնդիրներն: Այս մոտեցումը** խաղաղության մշակույթի հաստատման լավագույն տարբերակն է: Խաղաղության մշակույթը բազմաչափ հարաբերությունների համակարգ է, որը ներառում է քաղաքացիական համաձայնության, սոցիալական երկխոսության, սերունդների համերաշխության և ազգային անվտանգության բնականոն արդիականացման ապահովման գործընթացներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Buzan B., People, States and Fear: An Agenda for International Security Studies in the Post-Cold War Era. 1991. P. 19.
2. Карл фон Клаузевиц, О войне. http://hrquru.ucoz.ru/Id/0/9_2Aw.pdf
3. Lindley-French J., The Revolution in Security Affairs: Hard and Soft Security Dynamics in the 21st Century. // European Security, vol. 13, 2004.
4. Misiroli A., New security challenges and EU responses. 2004. (www.iss.europa.eu/uploads/media/rep04-08.pdf).
5. Selim M., Arab perceptions of Hard and Soft Security Threats (www.afes-press-books.de/pdf/Istanbul/Selim_abs.pdf)
6. Active Engagement, Modern Defence. Strategic Concept for the Defence and Security of the Members of the North Atlantic Treaty Organisation adopted by Heads of State and Government in Lisbon. 2000 г. (http://www.nato.int/cps/en/natolive/official_texts .
7. Лиссабонская Декларация по модели общей и всеобъемлющей безопасности для Европы XXI века. 1996 г. // Внешняя политика и безопасность Современной России 1991–2002. Хрестоматия. Т. IV. М., 2002.

ПРОБЛЕМЫ КОНВЕРГЕНЦИИ БЕЗОПАСНОСТИ "МЯГКОЙ" И "ЖЕСТКОЙ" СИЛ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ*

МАМИКОН МАРГАРЯН¹, СЕРГЕЙ ВАРДАЗАРЯН², АНЖЕЛА ЭЛИБЕГОВА²

¹ Академия государственного управления Республики Армения

² Russian-Armenian University

Механизмы обеспечения национальной безопасности в Республике Армения были разработаны и постоянно обновляются в рамках столкновений и сотрудничества. В этом контексте в статье изучаются проблемы конвергенции "мягкой" и "жесткой" силы в обеспечении безопасности в Республике Армении, как императив для установления демократической политической стабильности, а также для взаимодействия с культурами сотрудничества и мира. Авторы убеждены, что как совокупность исторически установленных норм и протоколов отношения между культурами мира и сотрудничества рационализируют систему безопасности путем объединения как цивилизованных, гуманистических, этических, социально-психологических, также и конституционных норм.

Ключевые слова: секьюритизация, «мягкая» и «жесткая» безопасность, культура мира, культура сотрудничества, конвергенция.

ISSUES OF CONVERGENCE OF "SOFT" AND "ROUGH" SECURITY IN THE REPUBLIC OF ARMENIA[†]

MAMIKON MARGARYAN¹, SERGEY VARDAZARYAN², ANZHELA ELIBEGOVA²

¹ Public Administration Academy of the Republic of Armenia

² Russian-Armenian University

The mechanisms providing national security in the Republic of Armenia have been shaped and still are being modernized in the frames of clashes and cooperation. In that context, the issues of convergence of "soft" and "rough" security in the Republic of Armenia are studied as the challenge of proof of democratic political stability, as well as securing the interrelation of the culture of cooperation and culture of peace as well. The authors believe that, as an entity of historically shaped certain norms and protocols, the interrelation of the culture of cooperation and culture of peace rationalizes the security system by converging the civilizational, humanitarian, ethical, social and psychological as well as constitutional and legal norms.

Keywords: securitization, "soft" and "rough" security, culture of peace, culture of cooperation, convergence.

Ներկայացվել է խմբագրություն 18.04.2019
Երաշխավորվել է փաշարոյթյան 14.05.2019

* Исследование выполнено при финансовой поддержке Государственного комитета по науке МОН РА в рамках научного проекта № 16YR-5F040.

[†] The study was carried out with the financial support of the State Committee on Science of the Ministry of Education and Science of the Republic of Armenia in the framework of a research project № 16YR-5F040

ՀՏԴ 316

**ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՆՆԴԻՐՆԵՐԸ ԳԼՈԿԱԼԱՑՄԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԼՈՒՍԻՆԵ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ¹**

¹Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում ուսումնասիրված է ազգային ինքնության կերպափոխման մշակութային հիմնախնդիրները: Հեղինակն այն կարծիքին է, որ ցանկացած տարածաշրջան պետք է ուսումնասիրել գլոկալացման տիրույթներում: Այդ նպատակով հիմնավորված է գլոբալացման և գլոկալացման համադրելիությունը: Այդ հնարավորությունն կընձեռնի հաղթահարելու անորոշությունները և ազգային ինքնության կերպափոխման գործընթացում հրաժարվել ավանդական և արդիական արժեքների հակադրությունից:

Բանալի բառեր. ազգային ինքնություն, գլոկալացում, համագործակցության մշակույթ, բնիկություն, գլոբալացում, Ռ. Ռոբերթսոն:

Տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների զարգացման արդի պայմաններում հանրային և քաղաքական կերպափոխումների արագացված տեմպերը մեծացրել են քաղաքական գործընթացների անորոշությունները: Քաղաքական գիտությունն այսօր կարևորելով գլոբալ և գլոկալ մակարդակներում անորոշությունների կանխման կառուցակարգերը՝ նպատակադրված ուսումնասիրում է համագործակցության մշակույթի արժեքաբանությունը: Այս բարդ, բազմաչափ գործընթացում, երբ քաղաքական և հասարակական կերպափոխումների ազդեցությամբ ազգային ինքնությունը և ազգային տնտեսությունը կորցնում են իրենց ճանաչողական հատկությունները, անհրաժեշտություն է առաջանում որ քաղաքական համակարգի բոլոր ինստիտուտները՝ պետությունից մինչև քաղաքացիական հասարակության կառույցներ հստակեցնեն իրենց գործառույթ-կառուցվածքային դերակատարումը [1, էջ 66-78]:

Նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում գլոբալ կապիտալը, խաթարելով ազգային պետությունների դիրքերը, ձևավորել է սահմաններ չունեցող ցանցային գլոբալ շուկա: Այս համատեքստում խնդրահարույց է դարձել ինչպես համագործակցության մշակույթի արժեքաբանությունը, այնպես էլ ազգային մշակութային ավանդույթների բնականոն արդիականացման հիմնախնդիրները: Դա առաջին հերթին վերաբերում է արդիա-

կանության այլընտրանքային մոդելների և մշակութային ինքնատիպության պահպանման շրջանակներում ավանդական և արդիական արժեքների փոխհարաբերություններին: Ակնհայտ է, որ այս գործընթացում որոշիչ է մշակութային ինքնատիպությունը և ինքնությունը պահպանելու ձգտման փոխհարաբերակցությունն արևմտյան ունիվերսալ արժեքների և պահանջների հետ, որոնք էլ ձևավորում են և՛ արդի գլոբալացվող աշխարհի, և՛ գլոկալացվող տարածաշրջանների սոցիալական կերպափոխումների բնույթը:

Գլոբալացման ներկա գործընթացում տեղեկատվահաղորդակցական նոր տեխնոլոգիաների մարտահրավերներին պատասխանելու իրական և երևակայական (վիրտուալ) տարածությունները իրենց բազմաչափությամբ այլևս պարփակված չեն պետական սահմաններով: Դա էլ էթնոսներին, ազգերին, ժողովուրդներին, պետություններին, անհատներին և հասարակություններին դրդում է համագործակցության նոր ուղիներ մտածել՝ վերաբժնորելով կամ մերժելով պատմականորեն ձևավորված համակեցության կանոնները: Այդ իմաստով ուշագրավ է Ռ. Ռոբերթսոնի և Ու. Բեկի մոտեցումները, համաձայն որի գլոբալացման գործընթացները ոչ միայն միավորում են, այլև տրոհում՝ ստիպելով որոշակիացված տարածքում ներփակված բնիկ (autohton) էթնոսին, որն իր ծագումնաբանությամբ կապված է տվյալ տարածաշրջանին, խնդիր ունի գլոբալացման գործընթացներին մասնակցել (ներկա գտնվել)՝ բյուրեղացնելով իր «Եսը»: Վերջինս ենթադրում է «Մտածիր գլոբալ, գործիր լոկալ» սկզբունքի հիման վրա ձևավորված գործունեություն, որը հնարավորություն է տալիս էթնոսին մրցունակ ներկայացնել իր արժեշահային համակարգը: Իր այս մոտեցման հիմնավորման համար, Ռ. Ռոբերթսոնն առաջարկեց «գլոկալացում» եզրույթը: Եթե գլոբալացումն արտաքին գործոնների ընդհանրությունն է, ապա գլոկալացումը բնորոշվում է որպես արտաքին գործոնների քննական ազդեցությամբ՝ առանց նրա ավանդական արժեքային համակարգի բացառիկության ընդունումը, ներկայացման խրախուսումն անհատի, էթնոսի վարքաբանությունում: Ընթանում է երկակի գործընթաց. Տեղական (ազգային, էթնոազգային) բաղադրիչների վրա գլոբալացման գործընթացի ճնշման աճին զուգահեռ կերպափոխվում են ոչ միայն ավանդական արժեշահային համակարգերը (ագրարային-մշակութային տիպեր, հասարակական-քաղաքական ինստիտուտներ), այլ ինքնին գլոբալացումը, որն անխուսափելիորեն փոխում է իր ձևը. նրանում արդեն սկսում են ի հայտ գալ տարածաշրջանային «երանգներ»: Գլոբալացումը փոխազդելով տեղային մակարդակի վրա՝ սրում է լոկալ և գլոբալ փոխհարաբերությունները [2, p. 184]:

Այս համատեքստում, վերաիմաստավորելով գլոբալի և լոկալի հարաբերակցությունը Ռ. Ռոբերթսոնն առանձնացնում է երկու ուղղություն՝ կենսական աշխարհի գլոբալ ինստիտուցիոնալացում և գլոբալացման տեղայնացում (և՛ ազգային, և՛ անհատական, և՛ հանրային մակարդակներում): Ըստ Ռ. Ռոբերթսոնի՝ կենսակերպի գլոբալ ինստիտուցիոնալացումը ենթադրում է համաաշխարհային կարգի մակրոկառուցների անմիջական ազդեցությամբ լոկալ փոխհարաբերությունների կազմակերպում և սոցիալականացում: Փաստորեն, դա ներառում է պետությունների և մշակույթների հետ փոխհարաբերություններում նրանց համակեցության և այլ «էկզոտիկ» մշակութային արժեքների «որդեգրման» միջոցով կերպափոխման գործընթացի նպատակամետ կառավարում [3, p.25-44]: Այնուհանդերձ այս բարդ և բազմամակարդակ գործընթացում որոշակիանում է ինքնությունը հստակեցնելու և սեփական «Ես»-ի նախակերպարը պահպանելու «ամբողջատիրական գայթակղությունը» [4, c.672]: Մշակութային գլոբալացման պայմաններում մարդը գիտակցում է իր պատկանելիությունը միաժամանակ մի քանի մշակութային հանրույթների: Տեղի է ունենում հասարակական զարգացման գլոբալ միտումների և բնիկ (autohton) մշակույթի զարգացման առանձնահատկությունների փոխկապակցման բարդ գործընթաց: Գլոբալացման արդյունքում ձևավորվում է անդրմշակութային տարածություն, որի շրջանակներում ներդրվում է համակեցության նոր ձև՝ « դուրս գալ սեփական մշակույթից և հանդիպել այլոց մշակույթների հետ խաչմերուկներում [5]»: Այս գործընթացում գերակա նշանակություն ունի նույնականացման հիմնախնդիրը. գլոբալացման արդի փուլում տեղի է ունենում ինքնության կերպափոխում, որը հանգեցնում է բազմադեմության՝ ձևավորելով «երկդեմ Յանուսի» կերպար ունեցող «Ես»: Այս պարագայում բազմամշակութային տարածաշրջաններում առաջանում է անհատի ազգային, քաղաքական, սոցիալական և մշակութային ինքնությունների հստակեցման հիմնախնդիրը. մի դեպքում ինքնությունը դիտարկվում է նախակերպարային (արքետիպ) արժեքաբանության մեջ, մի այլ դեպքում՝ ժամանակի հրամայականով ձևավորված և կերպափոխվող իշխանական հարաբերությունների արդիականացման արդյունք: Այս համատեքստում մեզ համար ելակետային է Ս. Հանթինգտոնի «Ռ՛վ ենք մենք» հարցադրումը, որի շրջանակներում հեղինակը, ուսումնասիրելով ամերիկյան ազգային ինքնությանն ուղղված մարտահրավերները, ինքնությունը դիտարկում է որպես հասարակության համախմբման ճանապարհին յուրօրինակ բանալի. «Ազգային ինքնության գիտակցումն արտաքին սպառնալիքների ազդեցությամբ կարող է աճել և անկում ապրել, իսկ այդ ինքնության էությունն ավելի քիչ է ենթակա տատանումների. այն ավելի դանդաղ է ձևավորվում...» [6, c. 24]:

Մշակութային տարածության գլոբալացման պայմաններում, էթնոմշակութային ինքնության դինամիկան տեղի է ունենում երեք գործընթացների համադրմամբ՝ **ինտեգրացիա, դիֆերենցացիա և անդեմացում**: Եթե ինտեգրացնող վեկտորը ունի վերազգային կամ քաղաքակրթական ինքնության ձևավորման միտում, ապա դիֆերենցնող վեկտորն արտահայտվում է մշակութային ինքնության լոկալացումը: Այս բարդ և բազմաշերտ գործընթացը հետխորհրդային նորանկախացած երկրներում ուղեկցվում է անդեմությամբ կամ էթնո-մշակութային և քաղաքացիական մարզինալացմամբ: Հետխորհրդային երկրներում քաղաքացիական ինքնության ձևավորումը իր վրա կրում է «Homosovetikus»-ի կնիքը, իսկ վերջինս, ենթադրելով հայրախնամ իշխանություն, դեռևս չի ամրագրել այն ճշմարտությունը, որ ինքնությունը բազմաչափ է և սոցիալական ինքնության հիմքում ընկած են քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Էթնո-մշակութային մարզինալիզացիային բնորոշ է անձի մշակութային կապերի թուլացումը և պատրաստակամությունը ինտեգրվելու ցանկացած մշակութային տարածք՝ անկախ համակեցության ձևերից: Այսինքն «մարզինալ մարդ» հայտնվելով երկու և ավելի տարբեր մշակութայինների, սոցիալական կառուցվածքների սահմանագծում լիարժեք ներառված չէ ոչ մեկի և ոչ էլ մյուսի մեջ: Ուշագրավ է, որ վերլուծելով հեղափոխական, կերպարափոխման և միգրացիոն գործընթացները՝ Ռ. Պարկը վատատեսորեն է վերաբերվում մշակութային խառնածիններին ոչ թե այն պատճառով, որ արժեքային անցման մեջ գտնվող մարզինալը չի կարող կտրվել իր անցյալից և ադապտացվել նոր մշակութային միջավայրում, այլ այն պատճառով, որ հնարավոր չէ միշտ մնալ սահմանագծում. անհրաժեշտ է ինքնորոշվել՝ բարձրացնելով սեփական «Ես»-ի մրցունակությունը: Ռ. Պարկի համար գոյություն չունի երկու կամ ավելի սոցիալականություն, սոցիալականությունը մեկն է [7, p. 881-883]:

Այս համատեքստում մեծանում է վերազգային տարածությունների դերը, որտեղ ոչ միայն մարդկանց չեն զրկում ազգային և մշակութային պատկանելիությունից, այլև նպաստում են ինքնության նոր մակարդակների ձեռքբերմանը: Հենց այս տիրույթներում էլ զարգանում և գործառվում է ոչ թե «մարզինալ» այլ նոր մարդու կերպարը որպես « ոսկե միլիարդի» գաղափարակիր: Ավելին՝ առաջանում է «գլոբալ թափանցիկ ինքնություն», ունեցող մարդկանց պահանջ, որոնք կողմնորոշում են դեպի «քաղաքակիրթ արևմուտք» զարգացման ուղղությունը: Այսպիսի ինքնության կրողները ընդունակ են արագ և անցավ փոխել վայրը, սովորույթները, մայրցամաքները և մշակույթները, ամենուրեք իրենց «զգալով ինչպես տանը»: Այդուհանդերձ, անտարբեր մնալով սեփական ինքնության տրոհմանը նա չի կրում դիմակներ, չի խախտում ուրիշի դերը, այլ միայն ներգրավվում է իրականություն, դառնում է դրա մի մասը. «... մենք դառնում

ենք ներքուստ հակասական, կորցնում ենք միօրինակությունը, սովորում ենք այդպես ապրել՝ գլոկալացվում ենք: Մշակույթը դառնում է *perpetuum mobile*» [8, շ. 41-46]: Համաձայնելով այս մոտեցմանը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է ինքնության արդիականացման գործընթացում համադրել գլոբալ և գլոկալ արժեքաբանությունը: Այս գործընթացը, որպես կանոն, իրականացվում է նեքևից, այլ ոչ թե վերևից, բացի տնտեսական հարցերից ներառում է բնապահպանությանը և անվտանգությանը վերաբերող հարցեր, իսկ որպես ակտորներ, պետություններին հավասար, հանդես են գալիս բազմաթիվ սոցիալական և մշակութային ինստիտուտներ:

Վերոշարադրյալից ակնհայտ է, որ էթնիկ ինքնատիպությունը նմանատիկ մոտեցման պայմաններում յուրահատուկ բրենդ (համբավանիշ) է: Որպես այդպիսին, այն կարող է ներկայացվել և՛ էլիտար, և՛ միջինզանգվածային մշակույթում: Ավելին, տեղեկատվահաղորդակցական արդի տեխնոլոգիաների պայմաններում էթնիկ ինքնությունը կարող է լրացնել և դառնալ էլիտար «բրենդ» ունեցող քաղաքիչ: Արևմտյան Եվրոպայում զարգանում է երկու և ավելի պետությունների սահմաններին գտնվող մշակութային ընդհանրություններ ունեցող «Եվրաշրջանների» համակարգը. նրանց գոյության առանձնահատկությունը մետրոպոլիայից և դրա բյուրոկրատական համակարգից անկախ լինելն է: Ենթադրվում է, որ գլոկալացման հետագա գործընթացներում ողջ համաշխարհային քաղաքականությունը պետք է կերպափոխվի՝ վերածվելով միջպետականից ներպետականի, ինչն էլ ամենայն հավանականությամբ պետական բյուրոկրատական ապարատը կդարձնի ավելորդ:

Առաջին հայացքից գլոկալացումը հավակնում է դառնալ համաշխարհային ունիֆիկացված մենաշնորհի այլընտրանք: Հարց է առաջանում թե ի՞նչ նպատակներ է հետապնդում գլոկալացումը: Բրենդինգի ռազմավարության փոփոխության միջոցով շուկայի աշխուժացում, այսինքն շահույթի ավելացում: Ի՞նչ տեղ է հատկացվում մշակութային բազմազանությանն այս գործընթացում: Էթնիկ առանձնահատկության «դիմակով» ապրանքանիշը քարոզում է նույն միասնական ստանդարտ գլոբալացումը որպես կենսակերպ: Այսինքն՝ էթնո-մշակութային բազմազանությունը դառնում է «ապրանք». «Այս գործընթացը մշակութային իմիտացիա է, որը կոչված է չեզոքացնելու գլոբալացման շուկր: Սա գլոբալացման պոստմոդեռնիստական զենքն է [9]»:

Գլոկալացումը կարող է նպաստել ռեգիոնալիզացման գործընթացին, եթե տարածաշրջանում երկրները նպատակամետորեն զարգացնում են համագործակցության մշակույթը՝ իրականացնելով քաղաքակրթական երկխոսություն, ինչպես նաև մշակելով աշխատանքի բաժանման քաղաքականություն: Տվյալ գործընթացում ամբողջական տարածաշրջանի ձևավորումը լինում է միմյանց մոտ գտնվող տարածքների տարրաբնույթ

միավորման արդյունքում, որոնց միասնությունը մի կողմից ապահովվում է ընդհանուր պատմական, տնտեսական, աշխարհագրական, սոցիոմշակութային և աշխարհաքաղաքական գործոնների շնորհիվ, մյուս կողմից՝ ամբողջ տիրույթում գլոկալ բնույթի երևույթներով: Պետք է նշենք, որ գլոկալացումը չի նշանակում նախկին, ավանդական առանձնահատկությունների ամբողջական վերադարձ: Գլոկալացումը տվյալ էթնիկ, էթնոմշակութային առանձնահատկությունները վերհանում է ազգային սահմաններից դուրս՝ դեպի գլոբալ աշխարհ, որտեղ նրանք, իրենց հերթին, ռեգիոնալացման գործընթացին հաղորդում են նոր նշանակություն:

Տարածաշրջանը բազմազանության արտահայտումն է, սակայն հենց այն կարող է դառնալ կապող օղակ տրանսմշակութային տարածության ձևավորման և էթնիկ ինտեգրման գործընթացների միջև:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Մարգարյան Մ. Մ.**, Երիտասարդության քաղաքական սոցիալականացումը՝ որպես ազգային ինքնության արդիականացման գործընթաց. հոգևոր անվտանգություն. – «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 3(97), 2018:

2. **Giulianotti R., Robertson R.**, Glocalization, Globalization and Migration: The Case of Scottish Football Supporters in North America//Intern. Sociology, 2006. Vol.21, N2, P. 184.

3. **Robertson R.**, Globalization: Time-Space and Homogeneity-Heterogeneity//Global Modernities/M. Featherstone, S. Lash, R. Robertson, London, 1995, P.25-44.

4. **Арендт Х.**, Истоки тоталитаризма. Пер. С английского И.В.Борисовой и др., под редакцией М.С.Ковалевой, Д.М.Носова, М.ЦентрКом. 1996, стр. 672.

5. **Эпштейн М.**, Новый вид свободы – транскультура. URL:www.emory.edu

6. **С. Хантингтон**, “Кто мы.Вызовы американской национальной идентичности”. М.: Изд. АСТ, 2018, с. 544.

7. **Park R.**, Race of culture. Glance, Free press, 1950, part 26.

8. **Одегова О.В.**, Многоликость персональной и этнокультурной идентичности в условиях глобализации культуры., Вестник Томского государственного университета, Культурология и искусствоведение, 2011, Н. 3, с. 41-46.

9. **Юркин А.**, Глокализация как ошибка.-Электронный ресурс.-Режим доступа: polygamist.narod.ru, 2006.

**КУЛЬТУРНЫЕ ПРОБЛЕМЫ ТРАНСФОРМАЦИИ НАЦИОНАЛЬНОЙ
ИДЕНТИЧНОСТИ В УСЛОВИЯХ ГЛОКАЛИЗАЦИИ**

ЛУСИНЕ НИКОГОСЯН¹

¹ *Академия государственного управления Республики Армения*

В статье изучены культурные проблемы трансформации национальной идентичности. Автор статьи считает, что любой регион надлежит изучить в контексте глокализации. С этой целью в статье обоснованы совместимость понятий глобализация и глокализация. Это даст возможность преодолеть неопределенности и в процессах трансформации национальной идентичности отказаться от противостояния традиционных и современных ценностей.

Ключевые слова: национальная идентичность, глокализация, культура сотрудничества, авторхон, глобализация, Р. Робертсон.

**CULTURAL PROBLEMS OF NATIONAL IDENTITY TRANSFORMATION
IN THE CONTEXT OF GLOCALIZATION**

LUSINE NIKOGHOSYAN¹

¹ *Public Administration Academy of the Republic of Armenia*

The article studies cultural problems of national identity transformation. The author of the article believes that any region should be studied within the frames of glocalization. With this purpose, the article substantiates the compability of concepts of globalization and glocalization. It will provide an opportunity to overcome uncertainties and in the processes of national identity transformation will abandon the confrontation of traditional and modern values.

Keywords: national identity, glocalization, culture of cooperation, autohton, globalization, R. Robertson.

*Ներկայացվել է խմբագրություն 22.03.2019
Երաշխավորվել է տպագրության 10.05.2019*

ՀՏԴ 159.98

**ԱՆՁԻ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԿՅԱՆՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ՓՈԽՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ
ՊԱՏԵՐԱԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ՆԱՆԵ ԶԵՅՆԱԼՅԱՆ¹**

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Անձնային առանձնահատկությունների և արժեհամակարգի փոխապայմանավորվածության վերլուծության արդյունքում բացահայտվել են համահարաբերակցային կապեր կյանքի նպատակների և ինքնատրանսցենդենտության, կյանքի հուզական հագեցվածության, կյանքի արդյունավետության, ազատության, պատասխանատվության, անհատականության, էքզիստենցիալության ցուցանիշների միջև: Այս կապերի առկայությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ անձի արժեհամակարգի ձևախախտման հնարավորությունը նվազում է, եթե հստակ են կյանքի նպատակները և կյանքի իմաստավորվածության գիտակցումը:

Բանալի բառեր կյանքի նպատակներ, արժեհամակարգ, անձնային առանձնահատկություններ:

Վերջին տարիներին աճել է անձի արժեհամակարգի նկատմամբ գիտական հետաքրքրությունը տարբեր բնագավառներում, ինչը պայմանավորված է տարաբնույթ տեղական ու համաշխարհային գործընթացներով: Խոսքը վերաբերում է հասարակության կենսագործունեության ոլորտներում համընդհանրացմամբ պայմանավորված զարգացումներին, որոնք հանգեցնում են ազգային սոցիալական և մշակութային համակարգերի ձևախախտմանը, ներքին հասարակական խնդիրներին, ինչպես նաև տարբեր տեղեկության ներգործություններին, որոնք հանգեցնում են միևնույն հասարակության ներսում անհամաչափ և տարամետ զարգացումների: Ներկայում անձի արժեհամակարգի ձևավորման վրա ազդող գործոնների ուսումնասիրությունը կարևորվում է հոգեբանական պատերազմի ներգործության բացասական հետևանքները կանխատեսելու և կանխելու տեսանկյունից:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել անձնային առանձնահատկությունների և արժեհամակարգի փոխապայմանավորվածությունը հոգեբանական պատերազմի պայմաններում: Ելնելով առաջադրված

նպատակից՝ ուսումնասիրել ենք անձի արժեքների և կյանքի նպատակների ձևավորման փոխապայմանավորվածությունը:

Հետազոտության իրականացման նպատակով կիրառել ենք Դ. Ա. Լեոնտևի «Կենսիմաստային կողմնորոշումների թեստը» [3]: Վերջինս Ջ. Կրամբոյի և Լ. Մահոլիկի «Կյանքի նպատակը» (Purpose-in-Life Test, PIL) թեստի հարմարեցված տարբերակն է, որը մշակվել է Վ. Ֆրանկի իմաստի որոնման և լոգոթերապիայի տեսության հիման վրա և նպատակ է հետապնդում ապացուցել այդ տեսության որոշ դրույթների վալիդությունը [4]: Կյանքի իմաստն անձը կարող է գտնել անցյալում (նպատակներ), ներկայում (գործընթաց), ապագայում (արդյունք), կամ կյանքի երեք բաղկացուցիչներում միաժամանակ: Մեթոդիկայի համար հիմք է ընդունվում, որ կյանքը իմաստավորված է, երբ առկա են նպատակներ, դրանց հասնելիս բավարարվածություն, նպատակներ սահմանելու ընդունակություն, խնդիրներ ընտրելու և արդյունքների հասնելու հնարավորություն:

Թեստի ենթասանդակներն առանձնացնելիս հեղինակը հիմք է ընդունել կյանքի իմաստը ձևավորող գործոնների սեփական դասակարգման վրա: Առաջին խմբում նա ներառում է հենց կենսիմաստային կողմնորոշումները՝ կյանքի նպատակներ, կյանքի հազեցվածություն և բավարարվածությունն ինքնիրացումով: Երկրորդ խումբը ներառում է աշխարհայացքային համոզմունք, որ վերահսկողություն հնարավոր է և հավատ այդ վերահսկողությունն իրականացնելու սեփական ընդունակության մեջ [3]:

Դ. Ա. Լեոնտևի մեթոդիկայի միջոցով պարզել ենք հետևյալ գործոնների դրսևորումները՝ կյանքի նպատակներ, կյանքի հուզական հազեցվածություն, կյանքի արդյունավետություն, վերահսկողության լոկուս՝ Ես, վերահսկողության լոկուս՝ կյանքի կառավարելիություն: Հետազոտության արդյունքում վերոնշյալ գործոնների դրսևորման ցուցանիշները ներկայացված են **Աղյուսակ 1**-ում:

Մեր կողմից կատարված հետազոտության ընտրանքը կազմել են 18-25 տարեկան 200 երիտասարդ: Հետազոտությունը կազմակերպվել է Երևանի և Ստեփանակերտի բնակիչների շրջանում: Ընդ որում՝ ըստ Սոյուդենտի t չափանիշի՝ Երևանի և Ստեփանակերտի հետազոտական խմբերում էական տարբերություններ գրանցվել են «կյանքի նպատակներ» ($t=2.397$, $p<0.01$), «կյանքի արդյունավետություն» ($t=2.053$, $p<0.01$), «վերահսկողության լոկուս՝ Ես» ($t=2.537$, $p<0.01$), «վերահսկողության լոկուս՝ կյանքի կառավարելիություն» ($t=2.506$, $p<0.01$) ենթագործոնների դեպքում:

«Կյանքի նպատակները» (Երևանի հետազոտական խմբում՝ M-32.79, Ստեփանակերտ՝ M-35.26) բնութագրում է նպատակաուղղվածությունը, անձի մոտ ապագայի նպատակների առկայությունը, որոնք կյանքին հարողում են իմաստ, ուղղվածություն և ժամանակային հեռանկար:

Դ. Ա. Լեոնտևի կենսիմաստային կողմնորոշումների թեստի տվյալները հետազոտական երկու խմբերում

Սանդղակը	Երևան		Ստեփանակերտ		Ստյուդենտի է չափանիշի նշանակությունը
	Միջին	Ստ. Շեղում	Միջին	Ստ. Շեղում	
Կյանքի նպատակներ	32.79	6.16	35.26	8.26	2.397
Կյանքի հուզական հագեցվածություն	30.94	7.37	31.77	6.21	0.861
Կյանքի արդյունավետություն	26.34	4.74	27.69	4.56	2.053
Վերահսկողության լրկուս՝ Ես	20.87	4.22	22.35	4.03	2.537
Վերահսկողության լրկուս՝ կյանքի կառավարելիություն	31.48	5.67	33.59	6.22	2.506
Ընդհանուր ցուցանիշ	106.08	18.05	113.43	15.99	3.048

«Կյանքի ընթացք կամ կյանքի հետաքրքրությունն ու հուզական հագեցվածություն» ցուցանիշը նույնպես բարձր է (Երևանի հետազոտական խմբում՝ M-30.94, Ստեփանակերտ՝ M-31.77), ինչը նշանակում է, որ անձին բնորոշ է սեփական կյանքով բավարարվածությունը, սեփական կյանքի ընկալումը որպես հետաքրքիր, հուզականորեն հագեցած և իմաստով լեցուն: Այս սանդղակի բովանդակությունը համընկնում է այն պատկերացման հետ, որ կյանքի միակ իմաստն ապրելն է:

«Կյանքի արդյունավետություն կամ բավարարվածություն ինքնիրացումով» գործոնը նույնպես բարձր է դրսևորված (Երևանի հետազոտական խմբում՝ M-26.34, Ստեփանակերտ՝ M-27.69): Այս ցուցանիշը գնահատում է ապրած կյանքից բավարարվածությունը, գնահատականը: Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հետազոտության մասնակիցների շրջանում սեփական կյանքի արդյունավետության և իմաստավորվածության զգացողությունը բարձր է:

Անձնային արժեքները դրսևորվում են ոչ միայն որևէ գործունեությունն իրականացնելիս, այլև որոշակի իրավիճակներում կոնկրետ մոտիվների առաջացմամբ պայմանավորված [1]: Դ. Ա. Լեոնտևն այս առնչությամբ նշում է, որ անձնային արժեքների հիերարխիան անփոփոխ է, մինչդեռ պահանջումների դրդող ուժը մշտապես փոփոխվում է, դրանց համակարգը բնութագրվում է «դինամիկ հիերարխիայով», իսկ անձնային արժեքների փոփոխությունը իրենից ներկայացնում է անձի զարգացման ճգնաժամ: Անձնային արժեքները՝ ի տարբերություն մոտիվներին իմաստաստեղծ են [1]:

«Վերահսկողության լոկուս՝ Ես» սանդղակի ցուցանիշները բարձր են դրսևորված երկու խմբերում (Երևանի հետազոտական խմբում՝ M-20.87, Ստեփանակերտի հետազոտական խմբում՝ M-22.35), ինչը բնութագրում է սեփական անձի մասին պատկերացումը՝ որպես ուժեղ անձի, ով ունի բավարար ընտրության ազատություն, որպեսզի կառուցի իր կյանքը սեփական նպատակներին և իմաստի մասին պատկերացումներին համապատասխան: Այս գործոնն արտահայտում է սեփական կյանքը վերահսկելու մեջ վստահությունը:

Դ. Ա. Լեոնտևը համարում է, որ սոցիալական արժեքների յուրացումը միշտ միջնորդավորված է անհատի համար ռեֆերենտային փոքր խմբերի արժեքներով: Անհատական զարգացման նախնական փուլերում այդպիսի խումբ է ընտանիքը, իսկ դեռահասության տարիքում՝ հասակակիցների խումբը [2]: Նշված գործոնը կարող է էական ազդեցություն ունենալ կյանքի նպատակների ընտրության հարցում, սակայն կատարված հետազոտության արդյունքում պարզ է դառնում, որ «վերահսկողության լոկուս՝ կյանք կամ կյանքի կառավարելիություն» ցուցանիշը բարձր է (Երևանի հետազոտական խմբում՝ M-31.48, Ստեփանակերտ՝ M-33.59), ինչը նշանակում է, որ անձն ունակ է վերահսկել իր կյանքը, ազատ որոշումներ ընդունել և դրանք կյանքի կոչել: Անձն ունի հստակ համոզմունք, որ իր կյանքը ենթարկվում է գիտակցական վերահսկման:

Այսպիսով, ամփոփելով կյանքի իմաստային կողմնորոշումների թեստի արդյունքները հարկ է նշել, որ հետազոտական խմբերում ձևավորված է այն համոզմունքը, որ անձը հնարավորություն ունի և կարող է վերահսկել իր կյանքը: Առկա է բավարարվածություն կյանքից, անցյալում ունեցած ձեռքբերումներից, ներկայում կյանքի հագեցվածության սուբյեկտիվ ընկալումը նույնպես դրական է, անձը բավարարված է առօրյա գործունեությունից և իր առջև դրված խնդիրներից, ինչպես նաև ունի ապագայի հստակ նպատակներ, գտել է կյանքում իր կոչումն ու դերը: Այս երեք գործոնները ձևավորում են կյանքի իմաստային կողմնորոշումները:

Սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է նաև կյանքի նպատակների, անձնային հասունության և անձնային առանձնահատկությունների հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդյունքների համահարաբերակցային վերլուծություն: Ստորև ներկայացված են բացահայտված նշանակալի համահարաբերակցային փոխկապվածությունների վերլուծությունը: Վերլուծության ենթարկվել են երկու հետազոտական խմբերի տվյալներն առանձին-առանձին (n=100 յուրաքանչյուր խմբի համար):

Երևան քաղաքի հետազոտական խմբում բացահայտվել է նշանակալի համահարաբերակցային կապ ինքնատրանսցենդենտության և կյանքի նպատակների (r=0,404), կյանքի հուզական հագեցվածության (r=0,383), կյանքի արդյունավետության (r=0,304), վերահսկողության լոկուս՝ Ես

($r=0,344$) և վերահսկողության լոկուս՝ կյանքի կառավարելիություն ($r=0,330$) ցուցանիշների միջև: Այս կապերը կարելի է մեկնաբանել որպես ներքին խորը հարաբերությունները ընկալելու, իրադարձությունների էքզիստենցիալ նշանակալիությունը զգալու անձի ընդունակություն, անձը կարող է բացահայտել և ապրել սուբյեկտիվ արժեքներ: Այստեղ գործ ունենք անդամակցային կեցության հետ, կյանք հանուն ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի, այսինքն՝ առկա է ներքին և արտաքին իմաստավորվածության սուբյեկտիվ ընկալում:

Վերլուծելով Ստեփանակերտի ընտրանքից ստացված հետազոտական արդյունքները՝ ներկայացնենք բացահայտված համահարաբերակցային կապերը: Հետազոտական այս խմբում բացահայտվել է նշանակալի դրական համահարաբերակցային կապ կյանքի հուզական հագեցվածության և ինքնատրանսցենդենտություն ($r=0,380$), ազատություն ($r=0,355$), պատասխանատվություն ($r=0,418$), անհատականություն ($r=0,371$), էքզիստենցիալություն ($r=0,415$) ցուցանիշների միջև:

Ընտրանքի երկու խմբերում ստացված ցուցանիշները համանման են: Կյանքի հուզական հագեցվածությունը բացասական համահարաբերակցային կապվածություն ունի տազնապալիության ($r=-0,301$) ցուցանիշի հետ, ինչը նշանակում է, որ տազնապալիությունը խոչընդոտում է կյանքի իմաստի լիարժեք ապրմանը:

Կյանքի արդյունավետության ցուցանիշը դրական համահարաբերակցային փոխկապվածություն ունի ինքնատրանսցենդենտություն ($r=0,332$), ազատություն ($r=0,332$), պատասխանատվություն ($r=0,385$) ցուցանիշների հետ: Այսինքն՝ անձի ազատության գիտակցման, հեշտությամբ միջանձնային հարաբերություններ հաստատելու, հարմարվողականության աճին զուգընթաց կյանքի արդյունավետության սուբյեկտիվ ընկալումը մեծանում է:

Առկա է դրական համահարաբերակցային կապ վերահսկողության լոկուս՝ Ես և ազատություն ($r=0,326$), էքզիստենցիալություն ($r=0,280$) ցուցանիշների միջև: Որքան անձն ավելի մեծ պատասխանատվություն է զգում իր գործողությունների և կյանքի համար, այնքան մեծանում է քննադատական մտածողության կարողությունը, դատողություններում նվազում են կարծրատիպային ձևերը, հեշտությամբ չի վստահում հեղինակություններին: Անձն այս դեպքում առավել ինֆորմացված է դառնում, ընդլայնվում է ինտելեկտուալ հետաքրքրությունների շրջանակը:

Բացահայտվել է նաև նշանակալի դրական համահարաբերակցային կապ վերահսկողության լոկուս՝ կյանքի կառավարելիություն և ազատություն ($r=0,289$), պատասխանատվություն ($r=0,268$), էքզիստենցիալություն ($r=0,297$) ցուցանիշների միջև: Բացասական համահարաբերակցային կապ առկա է վերահսկողության լոկուս՝ կյանքի կառավարելիություն և ունիվերսալիզմ արժեքի միջև ($r=-0,259$): Սա նշանակում է, որ մարդկանց

գնահատելու և հասկանալու, հանդուրժողականության, մարդկանց բարո-
րությունն ու բնությունը պահպանելու ցանկությունը փոխկապակցված չէ
վերահսկողության լոկուսի հետ:

Դրական նշանակալի համահարաբերակցային կապ բացահայտվել է
նաև հուզական կայունության և ազատություն ($r=0,292$), էքզիստենցիա-
լություն ($r=0,279$) ցուցանիշների միջև, ինչը փաստում է, որ անձի իմաս-
տային ոլորտի հագեցվածությունը հանգեցնում է անձի հուզական հասու-
նությանը:

Բարեխղճության ցուցանիշը դրական համահարաբերակցային կապ-
վածություն ունի ինքնատրանսցենդենտություն ($r=0,277$), ազատության
($r=0,259$) ցուցանիշների հետ, անձնային պրոֆիլի ինքնուրույնություն ար-
ժեքի ($r=0,283$): Պարտքի ու պատասխանատվության զգացումը, նպա-
տակներին հասնելու հարցում հաստատականությունն անձին դարձնում է
առավել ինքնուրույն, նա կարողանում է ընտրողական վերաբերմունք
դրսևորել արժեքների ընտրության հարցում:

Այսպիսով՝ հետազոտական տվյալների մշակմամբ ստացված արդ-
յունքները ցույց են տալիս կյանքի նպատակների և անձի էքզիստենցիա-
լության միջև առկա արտահայտված նշանակալի կապը հնարավորություն
է տալիս եզրակացնելու, որ որքան հստակ են անձի ապագայի նպատակ-
ները, այնքան մեծանում է նրա կողմից կյանքի հագեցվածության ապրումը,
ինչն էլ իր հերթին կյանքին իմաստ և ուղղվածություն է հաղորդում: Մեր
կողմից կատարված հետազոտության տվյալները հնարավորություն են
տալիս հետազոտության հաջորդ փուլերում պարզելու կյանքի նպատակ-
ների դերակատարությունն անձի արժեհամակարգի ձևավորման վրա հո-
գեբանական պատերազմի պայմաններում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. **Леонтьев Д. А.**, Психология смысла: природа, строение и дина-
мика смысловой реальности. 2-е, испр. изд. - М.: Смысл, 2003. - 487 с.

2. **Леонтьев Д. А.**, Развитие личностных ценностей в
общественном контексте, Вестник Московского Университета. Сер. 14.
Психология. 1997. №1. сс. 20-27.

3. **Леонтьев Д. А.**, Тест смысложизненных ориентаций (СЖО). 2-е
изд. - М.: Смысл, 2000. - 18 с.

4. **Франкл В.**, Человек в поисках смысла: Пер. с англ. и нем. - М.:
Прогресс, 1990. -368 с.

ВЗАИМОСВЯЗЬ ЦЕННОСТНОЙ СИСТЕМЫ И ЖИЗНЕННЫХ ЦЕЛЕЙ В КОНТЕКСТЕ ПСИХОЛОГИЧЕСКОЙ ВОЙНЫ

НАНЕ ЗЕЙНАЛЯН¹

¹ *Академия государственного управления Республики Армения*

В результате анализа взаимосвязи между ценностной системы личности и особенностями личности выявлены корреляционные связи между жизненными целями и самотрансценденцией, эмоциональной насыщенностью, жизненной эффективностью, свободой, ответственностью, индивидуальностью и экзистенциальность. Полученные данные позволяют сделать вывод, что вероятность деформации системы личностных ценностей уменьшается, если цель жизни и ощущения смысла ясны.

Ключевые слова: жизненные цели, ценностная система, особенности личности.

INTERCONNECTION OF PERSONAL VALUE SYSTEM AND PURPOSE IN LIFE IN THE CONTEXT OF PSYCHOLOGICAL WARFARE

NANE ZEYNALYAN¹

¹ *Public Administration Academy of the Republic of Armenia*

Results of the analysis of interconnection between personal value system and personality features, correlations between life goals and self-transcendancy, emotional intensity, life efficiency, freedom, responsibility, individuality, and existence were revealed. The data obtained allow us to conclude that the possibility of deformation of a personal value system is decreases if the purpose of life and the sense of meaning are clear.

Keywords: purpose in life, personal values, personality features.

*Ներկայացվել է խմբագրություն 18.01.2019
Երաշխավորվել է տպագրության 20.02.2019*

ՀՏԴ 159.944

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾԱՆՐԱԲԵՌՆԿԱԾՈՒԹՅԱՆ
ՄԻՕՐԻՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ
ԱՐՍԵՆ ԼՈՔՅԱՆ¹, ՎԻԼՅԱՄ ՀԱԼԱՋՅԱՆ¹**

¹ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա

Հոդվածում ներկայացվում է մասնագիտական գործունեության ընթացքում բեռնվածության միապաղաղության հաղթահարման հիմնական հոգեբանական միջոցների վերլուծությունը: Վերջին տարիներին, հաղորդակցման համակարգչային բնույթով պայմանավորված, այս խնդիրը դարձել է հրատապ և ունի գիտակիրառական հետազոտությունների պահանջ: Ուսումնասիրվել են հուզական և ֆիզիկական ծանրաբեռնվածության հոգեբանական դրսևորումները, որոնք կապված են աշխատավայրում միանմանության հետ: Կարևորվում է գրասենյակային պայմաններում երաժշտական թերապիայի և հատուկ երաժշտական դադարների հոգեբանական կարգավորիչ գործառույթի անհրաժեշտությունը:

Բանալի բառեր. աշխատանքային ծանրաբեռնվածություն, ֆիզիկական և մտավոր հոգնածություն, միապաղաղություն, հոգեկարգավորում, երաժշտաթերապիա:

Ժամանակակից աշխարհի տեղեկատվական հոսքի ծանրաբեռնվածության, տեղեկատվության որակի և թվային տեխնոլոգիաների հագեցվածության հետևանքով այսօր մարդկանց մոտ նկատելի է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեկան գերծանրաբեռնվածության աճի հստակ միտում: Այս հիմնախնդիրն արդիական է մարդու աշխատանքային գործունեության ոլորտում, քանզի դրանով է պայմանավորված նաև ընդհանուր կենսագործունեության արդյունավետությունը: Այսօր ցանկացած բնույթի աշխատանքային գործունեություն մարդուց պահանջում է ոչ միայն մասնագիտական որակների և անձնային առանձնահատկությունների առկայություն, այլ նաև հոգեվիճակների համապատասխան կարգավորումներ, ինչի մասին փաստում են աշխատանքի հոգեբանության ոլորտի մասնագետները [1], [2]: Այս խնդիրը միշտ էլ եղել է հոգեբանության գիտության ուշադրության կենտրոնում, բայց վերջին կես դարում գիտահետազոտական և գիտագործնական առումներով այն դարձել է հրատապ: Վերջին տարիներին նույնիսկ ձևավորվում են միջբնագավառային և միջգիտական մոտեցումներ, որոնց նպատակն է համակարգել բոլոր այն միջոցները, որոնք կարող են օգնել մարդկանց՝ հաղթահարելու աշխատանքային ծան-

րաբեռնվածությունն ու լարվածությունը [3], [4], [5]: Այդպիսի միջամտություններից են երաժշտաթերապիան, աուտոգեն մարզումները, շարժողական թերապիան և այլն, որոնցից յուրաքանչյուրը յուրովի ներգործություն է ունենում հոգեկան գործընթացների և վիճակների վրա: Հատկապես աշխատանքային գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով իրականացվող հոգեբանական վարժանքները կարգավորում են ուշադրությունը, զարգացնում են վերջինիս առանձնահատկությունները՝ կենտրոնացումը, բաշխումը, տեղափոխելիությունը և այլն: Մարդու գործունեության հուսալիության տեսակետից ուշադրությունը հենց այն առանցքային հոգեկան գործընթացն է, որի կայունությունից է կախված նաև ակտիվության մյուս տեսակների արդյունավետությունը [6]: Ա. Կարպովն իր «Աշխատանքի հոգեբանություն» գրքում առանձնակի կարևորում է ուշադրության դերը՝ նշելով, որ հոգեկան գործընթացներից հենց ուշադրության կենտրոնացվածության և կայունության խնդիրներն են առաջ բերում հոգնածություն, հյուծվածություն, սթրես, միապաղաղություն [2]: Մասնագիտական գործունեության մեջ ուշադրության կարգավորման դերի մասին խոսել է նաև Ե. Պ. Իլյինը, ով փորձարարական ճանապարհով ցույց է տվել, որ հատկապես մասնագիտական ակտիվության ապահովման համար անհրաժեշտ են հոգեկան գործընթացների կարգավորման միջամտություններ [1]:

Մեր երկրում վերջին տարիներին նույնպես կատարվել են բազմաթիվ հետազոտություններ գործունեության հուսալիության [7], աշխատանքային ծանրաբեռնվածության, հուզական այրման [8], մասնագիտական գործունեության մոտիվացվածության և աշխատունակության ակտիվության [9] հիմնախնդիրների շուրջ: Հատկանշական է Ա. Լոքյանի կողմից կատարված հետազոտությունը բուհական և կրթական ոլորտի կառավարիչների շրջանում, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում ֆիզիկական և հուզական ծանրաբեռնվածությանը՝ որպես հուզական այրման նախապայման [8, էջ 83]: Կիրառական հոգեբանության ոլորտում բազմաթիվ են հոգեկան գործընթացների և վիճակների կարգավորմանն ուղղված վարժությունները, որոնց համալիր կիրառությունը բարձրացնում է ֆիզիկական և մտավոր աշխատանքի որակը: Մի խումբ հետազոտողներ փաստում են, որ հատկապես մտավոր աշխատանքի դեպքում արդյունավետ են տևական դադարներով իրականացված հոգեբանական և կարգավորիչ վարժությունները, որոնք նպատակ ունեն թուլացնել ֆիզիոլոգիական ծանրաբեռնվածությունը և պատրաստել օրգանիզմը հետագա ակտիվությանը: Այդ վարժությունները բաղկացած են ձեռքերի, ոտքերի, իրանի շարժողական ակտերից, ուղեկցվում են համապատասխան շնչառական ռիթմով, կենտրոնացվածությամբ և այլն [5]: Նմանատիպ շարժողական վարժություններն երբեմն ուղեկցվում են ակտիվացնող կամ հանգստացնող երաժշտությամբ:

Սակայն միշտ չէ, որ աշխատավայրն ունենում է համապատասխան տարածք և պայմաններ, կամ համապատասխան մասնագետներ՝ աշխատանքային օրվա (8-10 ժամյա) ծանրաբեռնվածության ընթացքում վերականգնողական և կարգավորիչ վարժանքներն իրականացնելու համար. դրանք սովորաբար կազմակերպվում են աշխատանքից հետո: Որպես աշխատանքային գերծանրաբեռնվածության նվազեցման միջոց՝ կարևորվում է նաև երաժշտությունը [4], ինչն ունի ֆիզիկական վարժանքներին համազոր արդյունք: Հատկապես մտավոր, գրասենյակային աշխատանքների դեպքում, երբ ֆիզիկապես հնարավոր չէ աշխատանքային գործունեությունն ընդհատել վարժություններ կատարելու նպատակով, անշուշտ, երաժշտությունը լիարժեք կարող է կիրառվել որպես աշխատանքային գերծանրաբեռնվածության և միօրինակության հաղթահարման միջոց: Նմանատիպ աշխատավայրերում մարդկանց հաճախ կարելի է տեսնել ականջակալներով, ինչն օգնում է նրանց մեկուսանալ կամ կենտրոնացնել ուշադրությունը:

Նկատենք՝ երաժշտության՝ որպես մարդու վրա ներազդելու միջոցի առաջին գրառումները պատկանում են դեռևս Միջագետքի և Հին Արևելյան քաղաքակրթություններին, իսկ արդեն XIX դարի կեսերին այն ուսումնասիրվել է որպես հոգեբանության գիտության հիմնախնդիր [3, էջ 114]: Նշվում է, որ XX դարի 50-70-ականներին երաժշտաթերապիան մեծ տարածում է ստացել հատկապես ԱՄՆ-ում, զարգացել է վարքաբանական ուղղության շրջանակներում, որտեղ ուսումնասիրվել է երաժշտության ներգործությունը վարքի վրա: Ավելի ուշ երաժշտաթերապիան սկսել է զարգանալ հումանիստական հոգեբանության շրջանակներում, ընդգծելով, որ զանազան էքսպրեսիվ արվեստները, այդ թվում և երաժշտությունը, նպաստում են անհատի ներուժի ակտիվացմանը [3]: Այսօր երաժշտական թերապիայի բազում տարատեսակներ լայնորեն տարածում են ստացել կազմակերպչական հոգեբանության, շուկայագիտության և գովազդի ոլորտներում:

